

ՍՄԲԱՏ ՀՈԿՅԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ

ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԵՐԸ



ՍՄԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ

ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԵՐԸ



ՄԱՐԴԻՍ ԻԱՅԵԼԵ • ՕՊԻԼԵՅԻՆՈՎ

'ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ' ԳՐԱԴԱՐԱՆ

պատմագիտություն

ՀԱՅԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
AND THE WAYS OF WRITING HISTORY



Փոխիմպն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿՈՒՅՑՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

SMBAT KH. HOVHANNISYAN

THE ANNALES SCHOOL

AND THE WAYS OF WRITING HISTORY

SARGIS KHACHENTS • PRINTINFO
YEREVAN 2022

9(47.925)
7-54


հշ

ՍՄԲԱՏ Խ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՅԸ

ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՐԴԵՐԸ

8x19
64x8

Ստացված է
22 922 2022 թվականին
Հայաստանի Գրականության
Ազգային Կենտրոնի կողմից
Ստացված է
02.12.2022


ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՏ • ՓՐԻՆՏԻՆՖՈ
ԵՐԵՎԱՆ 2022



Հրատարակվում է
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝
ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գրական խմբագիր՝
ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գրախոսներ՝
ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՓՐԵՄՅԱՆ

Գիրքը լույս է տեսել
Գալուստ Կիլիկյենեան Հիմնարկության աջակցությամբ



CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION
ARMENIAN COMMUNITIES

ISBN 978-9939-872-63-6

© Սմբատ Հովհաննիսյան, 2022
© Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, 'Իմացություն' գրադարան, 2022

**ANNALES
D'HISTOIRE ÉCONOMIQUE
ET SOCIALE**

Revue trimestrielle

Directeurs :

Marc Bloch — Lucien Febvre

TOME PREMIER

Année 1929



LIBRAIRIE ARMAND COLIN

103, Boulevard Saint-Michel, PARIS

1929

**Ուսուցիչ
Ալբերտ Ստեփանյանին**

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Ինձ Համար շատ Հաճելի է Հնարավորութիւնը՝ երախտագիտութիւննս Հայտնելու մարդկանց, որոնք օգնել են ավարտին Հասցնել սույն մենագրութիւնը:

Նախ և առաջ երախտագիտութիւննս եմ Հայտնում ուսուցչիս՝ պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանին, որը դեռ ուսանող տարիներիցս Հավատաց ինձ և վստահեց մի թեմա, որը ենթադրում էր Հայացքների արմատական վերանայում, տարբերութիւններ ճաշակելու պատրաստ քիմք և, իհարկե, շատ բավականին շատ Համբերութիւն և եռանդ: Ինձ Համար կարևոր էին գրքում որոշ Հասկացութիւնների քննարկման, գրքի Հարստացման օգտին պրոֆեսոր Ստեփանյանի արժեքավոր դիտարկումներն ու խորհուրդները: Բացի դրանից, շատ ուսանելի էր ուսուցիչ - աշակերտ Հարաբերութիւններում առկա սահմանի նրբանկատ քանդումը նրա կողմից, իսկ իմ կողմից՝ դրա Հետևողական վերականգնումը:

Շնորհակալութիւնս եմ Հայտնում «Վէմ» Համահայկական Հանդեսի գլխավոր խմբագիր, դոկտոր Գևորգ Խուրդինյանին, որի անմիջական և Հետևողական խրախուսանքի արդյունքում սույն Հետազոտութեան մեծ մասը Հրատարակվել է Հանդեսում՝ առանձին Հոդվածների տեսքով:

Առանձնահատուկ շնորհակալութիւն Շուշան Սակարյանին և Գևորգ Ճաղարյանին՝ արժեքավոր քննարկումների և առաջարկների Համար:

Այս Հետազոտութիւնը Հաջողվեց նաև իմ սիրելի ընկերների և բարեկամների աջակցութեամբ՝ Հանձինս Արամ Թոփչյանի, Տիգրան Եփրեմյանի, Սերժիո Լա Պորտայի, Արա

Սանջեանի, Արտակ Նազարյանի, Ռուզաննա Թանթուլյանի, Քրիստինե Անտոնյանի (Սարգսյանի), Արաքս Ալեքսանյանի, Սամվել Խաչատրյանի և Գոհար Խաչատրյանի, որոնք մեծ սիրով և պատրաստակամությամբ այս կամ այլ կերպ էական աջակցություն ցուցաբերեցին սույն հետազոտության կայացման գործին:

Խանդավառության, ջերմության և համերաշխության, ինչպես նաև պրոֆեսիոնալիզմի և հոգատարության համար շնորհակալ եմ նաև իմ լավ բարեկամներ Սերգեյ Խաչիկոզյանին («Սարգիս Խաչենց» հրատարակչության տնօրեն) և Արամ Մեհրաբյանին («Փրինթինֆո» հրատարակչության տնօրեն), որոնք հանձն առան հրատարակել սույն հետազոտությունը:

Գիրքը լույս է տեսել «Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւն»-ի ֆինանսական օժանդակությամբ, որի համար շնորհակալ եմ:

Երախտապարտ եմ ծնողներին՝ Խանամիր Հովհաննիսյանին և Կարինե Աբգարյանին, որդիներին՝ Մեսրոպ և Միհրան Հովհաննիսյաններին, կնոջս՝ Մարիամ Կարապետյանին, ընկերներին և հարազատներին, որոնց այս ընթացքում ավելի քիչ ժամանակ եմ նվիրել, քան անհրաժեշտ էր: Իսկ Մարիամի դեպքում՝ նաև որ եղել է հավատարիմ ընկեր, հիանալի ընթերցող, խմբագիր, քննադատ և մեկնաբան, ինչպես և հետազոտության արդյունքների վերաբերյալ ջերմ խոսքերի ու քաջալերանքի, մենագրության կարևորությունը հավատալու համար:

Եվ այդուամենայնիվ, վրիպումների ու բացթողումների պատասխանատվությունը, հարկավ, իմն է, և ես ողջունում եմ այս փորձի ավելի լայն քննարկումը:

ՆԱԽԱԲԱՆ

«Բայց պատմությունը ո՛չ ժամագործություն է, ո՛չ էլ կահույքագործություն: Այն ավելի լավ ճանաչելուն միտված ջանք է, հետևաբար և շարժման մեջ գտնվող մի բան: Սահմանափակվել որևէ գիտության առկա վիճակի նկարագրությամբ՝ կնշանակի միշտ ինչ-որ չափով դավաճանել նրան: Շատ ավելի կարևոր է ասել, թե ինչպիսին է այն ակնկալում դառնալ աստիճանաբար»¹:

Մարկ ԲԼՈԿ

Մի դարաշրջանում, երբ անտեսված կամ չափազանցված է կասկածի և զգուշության պատշաճ չափը, երբ գերակայում են տեխնիկական տրամասությունը, համակարգչային մոտեցումները, մոդելավորումը և բնական գիտությունների մեթոդները, ակնհայտ է, որ պատմագիտությունը (պատմությունը) փոքր-ինչ հնաոճ է ներկայանում, մասնավանդ որ այլևս բավական չէ դեպքերի և իրադարձությունների աստիճանական առաջացման ու զարգացման դիտարկումը, ինչպես անում էր ավանդական պատմագիտությունը: Ավելին՝ «մեծ պատմամեթոդներ» մերժման² համա-

¹ Բլոկ Մ., Պատմության պաշտպանական, կամ Պատմաբանի արհեստը /Ֆրանս. թարգմ. Շ. Մակարյան, հոգված և ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, Անտարես, 2018, էջ 56:

² Տե՛ս Lyotard J.-F., *La Condition postmoderne: Rapport sur le savoir*, Paris: Minuit, 1979: Հայերեն թարգմանությունը տես Լիոտար ժ.-Ֆ., *Հետադիական կացություն. Ջեկույց գիտելիքի մասին* /Ֆրանս.

տեքստում լրջորեն փոխակերպվել է պատմական հետազոտությունների լանդշաֆտը, և արդյունքում վերջին տարիներին պատմագիտության վերաբերյալ հաճախ կրկնվող մտահոգություններից է պատմության «բեկորացման» և «ճզնաժամի» խնդիրը: Խնդիր, որի հետևանքով որոշ մասնագետներ, ներքաշվելով պատմագիտության վերաբերյալ պարբերական կասկածների մեջ, քննադատական վերաբերմունքն անգամ ծայրահեղացնելով հանգեցրել են գերքննադատության:

Այդուամենայնիվ, բազմաթիվ մտածողներ հաճախ նաև նշում են, որ նոր դարաշրջանի XXI դարի միտումները վճռականորեն շրջվում են դեպի պատմական հետազոտություններ, և որ պատմագիտությանը վիճակված է նոր իմաստ ստանալ շնորհիվ այն ջանքերի, որոնք այժմ ուղղված են պատմագիտության կատարելագործմանը: Մի բան, որը ստիպում է մեզ կենտրոնանալ այն խորքային տեղաշարժերի վրա, որոնք արմատապես փոխեցին պատմագետի աշխատանքը վերջին հարյուրամյակում: Այս համատեքստում Ֆրանսիական Աննալների դպրոցի հետազոտությունն ունի համապատմական կարևորություն: Դա առավել ակներև է դառնում, երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ պատմագիտական միտքը ժամանակ առ ժամանակ կանգնում է հասկացությունների վերաթարմացման, սկզբնաղբյուրների հետազոտության նոր մեթոդների առաջադրման անհրաժեշտության առջև:

Այսու՝ Աննալների դպրոցի ծագման և զարգացման ընթացքի պատկերի միջոցով հնարավոր է հետևել և զննհատել արդի պատմագիտության մի շարք հարացույցների կայացման գործընթացը: Դպրոցի ձևաբերումները կարևոր են ինչպես պատմագիտության նոր հորիզոններ ուրվագծելու, այնպես էլ համաշխարհային և տեղական (մեր դեպ-

թարգմ.՝ Ե. Մակարյան, առաջարան և հիմնական հասկացությունների բառարան՝ Լ. Բայադյան, ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Ակտուալ արվեստ, 2022:

քում՝ հայոց) պատմության գործընթացների լուսաբանման համար: Մանավանդ որ հայ պատմագետների ճնշող մեծամասնությունը համեմատաբար մեկուսացած է մնացել հետարդիական շրջադարձից (tournant postmodern) հետո պատմական գիտելիքների կարգավիճակի շուրջ ծավալված բանավեճերից, որոնք գերակայող են դարձել (համաշխարհային) պատմագիտական ամսագրերում և գիտաժողովներում: Այս առումով ակնհայտ է հետազոտական նոր տարածության (տեսական, մեթոդական և այլ) անհրաժեշտությունը: Վերլուծությունների և համադրությունների այն համալիրը, որ մեզ են ժառանգել աննալականները, շատ արժեքավոր ելակետ է պատմագիտական նոր և բոլորովին այլ հետազոտություններ խթանելու և հարակից գիտակարգերի հետ պատմության կապերը վերանայելու համար: Ինքս հավատացած եմ, որ Աննալների նվաճումների ներբերումը հայ պատմագիտություն արդի հայագիտության կարևոր մարտահրավերներից է, մանավանդ որ հույս կա, թե պատմության քննարկումը չի սահմանափակվի պատմական հետազոտության նոր «օբյեկտների» քննարկմամբ, այլ կներառի նաև պրակտիկայի մասին մտորումները:

Գրքի շարադրանքի կառուցվածքը թե՛ ժամանակագրական է, թե՛ թեմատիկ: Երկու դեպքում էլ ուշադրության կիզակետում են Աննալների դպրոցի պատմական սահքը, սերունդների ձևաբերումների հաստատությունացման և դրանք սեփական ռեսուրսներով փոխանցելու շարունակական և դիմադրական գործընթացը՝ իբրև աննալական հարացույց, ինչպես նաև Դպրոցի տարաբնույթ թեմատիկ և մեթոդական նախասիրությունները: Ուստի գրքում փորձել եմ միահյուսել պատմական անցյալին (որի մասին գրում են պատմագետները) և այդ անցյալի ուսումնասիրությանը, պատմաբանների պրակտիկային ու գրություններին վերաբերող հետազոտությունները: Ըստ այսմ՝ կարևորել եմ թե՛ աննալական հեղինակների գրքերի (ըստ անհրաժեշտության, բայց հատկապես մանրամասն գիտարկելով

Հիմնադիր-հայրերի՝ Ֆեռի և Բլոկի գործերը), թե՛ պատմության վերաբերյալ նրանց հայեցակարգերի ու մոտեցումների ներկայացումը: Միևնույն ժամանակ խուսափել եմ պատմագիտական այդ աշխատությունների այն արժանիքների մանրակրկիտ քննարկումից, որոնք պահանջում են տրամաստվածությունների, իմաստների, կառուցվածքների կամ սոցիալական փոխազդեցությունների ավելի ընդլայն վերլուծություն:

Հետազոտությունն նպատակից դուրս եղած խնդիրներին անդրադարձել եմ ըստ անհրաժեշտության, երբեմն անգամ հպանցիկ, ինչպես, օրինակ, Աննալների հասցեին հնչեցված քննադատություններին կամ մարքսիստ աննալականների թեմային, որոնք առանձին հետազոտության նյութ են, և որոնց կանդրադառնամ առանձին հետազոտությամբ:

Հարկ եմ համարում նշել նաև, որ սույն հետազոտությունը չի հավակնում լինել ո՛չ բացառիկ, ո՛չ էլ սպառիչ. փորձել եմ Աննալների դպրոցի ստեղծած պատմագիտական հարացույցը դիտարկել ժամանակի մտավոր համատեքստի առնչությամբ՝ միևնույն ժամանակ, սակայն, խորամուխ չլինելով այդ առնչակցությունների համապարփակ ներկայացման մեջ:

Հուսով եմ, որ այս հատորի ընթերցումը որոշակի պատկերացում կտա այն մասին, թե ինչպես է որոշ պատմագետների պատկերանուն իրենց մասնագիտությունը, ինչն է նրանց առանձնացնում իրրև իրենց «արհեստը» սիրող և իրենց «արհեստին» տիրապետող պատմագետներ, ինչպես նաև Աննալների դպրոցի օրինակով կտեղեկացնի պատմության (պատմագիտության) վերաբերյալ քննարկումների մասին, կօգնի ավելի իրատեսորեն մոտենալ այսպես կոչված պատմության ճգնաժամի խնդրին, կոգևորի կամ պարզապես կմղի խնդիրների վերաբերյալ ավելին կարդալու:

Լուսագյուղ
26 մայիսի, 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIX դարի վերջին և XX դարի առաջին քառորդում, երբ տնտեսագիտությունը, սոցիոլոգիան, քաղաքագիտությունը, հոգեբանությունը և մարդաբանությունը ստեղծեցին հետազոտության իրենց ինքնավար ոլորտները, հիմնավորապես սասանվեց պատմագիտության՝ իրրև գիտակարգի հեղինակությունը և այն ուղիները, որոնցով պատմագետները ձգտում էին հասկանալ պատմությունը: Իրավիճակ, որն ընթանում էր պատմության մասնագիտացմանը (professionalisation) զուգահեռ, երբ ի հայտ եկավ պատմության հղացականացման և գրելու նոր հնարավորությունների որոնման խնդիրը:

Մինչ այդ պատմագետները, որոնք անտարբեր չէին ճշմարտության և կեղծիքի հարցերի նկատմամբ և գիտեին անցյալը վերակառուցելիս սկզբնաղբյուր օգտագործելու անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ ավելի շատ անհանգստացած էին ոճի, քան թե մեթոդի հարցերով: Արդյունքում՝ պատմության հետազոտության թե՛ մեթոդների, թե՛ տեսության նկատմամբ աճող արհամարհանքը, մանավանդ ուշ դրապաշտական միտումների առաջխաղացման համատեքստում: Իսկ քանի որ պատմաբանները միշտ չէ, որ նույն կերպ էին մտածում կամ պատկերացում պատմական աշխատության նպատակը, պատահական չէին նաև նույն անփութությունն ու անհստակ վերաբերմունքն ընտրված փաստերի բնույթի, ներկայացման կամ հիմնավորման նկատմամբ: Այստեղից էլ պատմությունն ինչպես գրելու հարցադրումը, որն իր առջև դրեց Աննալների

դպրոցը: Աննալականներն արդեն հասկացել էին պատմագիտությունից ուճից աստիճանաբար դեպի մեթոդը հակվող արդիականացման սահմանափակությունը ևս, ինչն էլ տեղիք էր տվել նոր համադրությունների որոնման: Իսկ այդ որոնման համատեքստում հույժ կարևորվում էին անջատումը փիլիսոփայությունից, պատմագիտությունից ինքնավարությունն ու ազատությունը:

Այսպես, Տարեգրություններ տնտեսական և սոցիալական պատմության (*Annales d'histoire économique et sociale*) հանդեսի առաջին իսկ համարի հրատարակմամբ (1929 թ., Ստրասբուրգ)¹, Լյուսիեն Ֆերը և Մարկ Բլոկը տոն տվեցին նոր պատմագիտական ըմբռնումների միջավայրի ձևավորմանը²: Հանդեսի շուրջ համախմբվեց պատմագետների մի խումբ, որոնք գրում և կառուցում են պատմությունն իրենց բնորոշ մեթոդներով և ոճով՝ խախտելով հին սովորույթները, հարցականի տակ դնելով ոչ միայն հին դպրոցների մոտեցումներն ու հայեցակարգերը, այլև հընթացս խնդրարկելով անզամ իրենց իսկ մտավոր կամ ուղղվածության միասնությունը, և այս ամենի շնորհիվ դառնում պատմագիտական հետազոտական միջավայրի չափանիշ:

Շուտով ուրվագծվեց Աննալների պատմագիտական դպրոցը, որը «վճռորոշ նշանակություն ունեցավ ոչ միայն Ֆրանսիական»³, այլև ընդհանրապես պատմագիտության մեջ: Դպրոց, որը XX դարի սկզբից ի վեր պատմագիտական

¹ Նկատենք, որ *Տարեգրություններ* հանդեսի այս հրատարակությունից առաջ դեռ 1920 թվականին, Ֆերն ու Բլոկը նման մի փորձ արել էին, որը, սակայն, չհաջողվեց: Միայն 1928 թվականին էր, որ այդ նախաձեռնությունը հասավ իր լրմանը: Ավելի մանրամասն տե՛ս Müller B., Introduction, dans Marc Bloch et Lucien Febvre, *Correspondance, t. 1: La naissance des Annales (1928-1933)* /édition établie, présentée et annotée par Bertrand Müller, Paris: Fayard 1994, p. XXI-XXX:

² Տե՛ս Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., Ժամանակի կառույցը Ֆ. Բլոկի և պատմահայեցողության ծիրում, *Պատմություն և կրթություն*, Ե., 1-2, (2005), էջ 33:

³ Տե՛ս Braudel F., *Écrits sur l'histoire*, Paris, Flammarion, 1969, p. 32:

բոլոր հաջորդական շարժումներից ամենաշատ մտորումների, հետազոտությունների և հակասությունների տեղիք տված շարժումներից մեկն է: Հընթացս իր այլացման այն կարողացավ մի կողմից՝ վերակերպել պատմական գիտելիքների պայմանները, մյուս կողմից՝ առաջ մղել պատմական գիտելիքի միջոցներն ու սահմաններն անընդհատ կասկածի տակ դնելու հրամայական անհրաժեշտությունը՝ պատմագիտությունը վերածելով ժամանակաշրջանի ինքնօրինակ «դաշնային հասարակագիտության»⁴:

Հարկավ, Աննալների դպրոցն ամենևին էլ սովորական իմաստով գիտական դպրոց չէր, որը համախմբված էր ընդհանուր ուսմունքով կամ ընդհանուր ինտելեկտուալ հայացքներով և մեկ մեթոդաբանական ու տեսական հարթակի վրա: Ճիշտ հակառակը՝ Հանդեսի շուրջ համախմբված պատմագետները հույժ տարբեր հոսանքների ներկայացուցիչներ են և կապված չեն տեսակետների կամ մեթոդների միասնությամբ: Այստեղից էլ ամենուր լայն կիրառում ստացած «Աննալների դպրոց» եզրույթի ոչ միանշանակ և խնդրահարույց լինելու հանգամանքը, մանավանդ եթե նկատի ունենանք Մորիս էմարի արդարացի հարցադրումը. «Հնարավոր է, որ ինքնանորոգման անհրաժեշտ գործընթացը միշտ հավատարիմ մնա ուղղորդող ծրագրին»⁵:

Աննալականները, Ֆերից ու Բլոկից սկսած, մերժում էին «դպրոց» եզրույթը՝ համարելով, որ իրենք դեմ են հենց այդ «խմբային ոգուն»⁶: Ըստ Ֆերի՝ Աննալները «մարդկանց ազատ միավորում է, որոնք միմյանցից հույժ տարբերվում են տարիքով, ծագմամբ, գործնական փիլիսոփայությունների (*philosophies pratiques*) և կրոնների նկատ-

⁴ Chaunu P., L'économie: dépassement et prospective, dans Le Goff J., Nora P. (éd.), *Faire de l'Histoire. Nouvelles approches*, t. 2, Paris: Gallimard, 1974, p. 52.

⁵ Aymard M., The Annales and French Historiography (1929-72), *JEEH*, 2 (1972), p. 491. Տե՛ս նաև Clark S. (ed.), *The Annales School: Critical Assessments*, v. 1, *Histories and Overviews*, New York: Routledge, 1999, p. 3:

⁶ Bloch M., Deux livres sur Saint-Denis, *Annales. HÉS*, 1937, p. 85.

դպրոցը: Աննալականներն արդեն հասկացել էին պատմագիտությունից ուսումնասիրելու անհրաժեշտությունը, սակայն մեթոդը հակվող արդիականացման սահմանափակությունը ևս, ինչն էլ տեղիք էր տվել նոր համադրությունների որոնման: Իսկ այդ որոնման համատեքստում հույժ կարևորվում էին անընտրելի փիլիսոփայությունից, պատմագիտության ինքնավարությունն ու ազատությունը:

Այսպես, Տարեգրություններ տնտեսական և սոցիալական պատմության (*Annales d'histoire économique et sociale*) հանդեսի առաջին իսկ համարի հրատարակմամբ (1929 թ., Ստրասբուրգ)¹, Լյուսիեն Ֆեբրե և Մարկ Բլոկը տոն տվեցին նոր պատմագիտական ըմբռնումների միջավայրի ձևավորմանը²: Հանդեսի շուրջ համախմբվեց պատմագետների մի խումբ, որոնք դրում և կառուցում են պատմությունն իրենց բնորոշ մեթոդներով և ոճով՝ խախտելով հին սովորույթները, հարցականի տակ դնելով ոչ միայն հին դպրոցների մոտեցումներն ու հայեցակարգերը, այլև հրեթացս խնդրարկելով անգամ իրենց իսկ մտավոր կամ ռազմավարական միասնությունը, և այս ամենի շնորհիվ դառնում պատմագիտական հետազոտական միջավայրի չափանիշ:

Շուտով ուրվագծվեց Աննալների պատմագիտական դպրոցը, որը «վճռորոշ նշանակություն ունեցավ ոչ միայն ֆրանսիական»³, այլև ընդհանրապես պատմագիտության մեջ: Դպրոց, որը XX դարի սկզբից ի վեր պատմագիտական

¹ Նկատենք, որ *Տարեգրություններ* հանդեսի այս հրատարակությունից առաջ՝ դեռ 1920 թվականին, Ֆեբրե ու Բլոկը նման մի փորձ արել էին, որը, սակայն, չհաջողվեց: Միայն 1928 թվականին էր, որ այդ նախաձեռնությունը հասավ իր լրմանը: Ավելի մանրամասն տե՛ս Müller B., Introduction, dans Marc Bloch et Lucien Febvre, *Correspondance*, t. 1: *La naissance des Annales (1928-1933)* /édition établie, présentée et annotée par Bertrand Müller, Paris: Fayard 1994, p. XXI-XXX:

² Տե՛ս Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., Ժամանակի կառույցը Ֆ. Բրոկելի պատմահայեցողության ծիրում, *Պատմություն և կրթություն*, Ե., 1-2, (2005), էջ 33:

³ Տե՛ս Braudel F., *Écrits sur l'histoire*, Paris, Flammarion, 1969, p. 32:

բոլոր հաջորդական շարժումներից ամենաշատ մտորումների, հետազոտությունների և հակասությունների տեղիք տված շարժումներից մեկն է: Հրեթացս իր այլացման այն կարողացավ մի կողմից՝ վերակերպել պատմական գիտելիքների պայմանները, մյուս կողմից՝ առաջ մղել պատմական գիտելիքի միջոցներն ու սահմաններն անընդհատ կասկածի տակ դնելու հրամայական անհրաժեշտությունը՝ պատմագիտությունը վերածելով ժամանակաչափանի ինքնօրինակ «դաշնային հասարակագիտության»⁴:

Հարկավ, Աննալների դպրոցն ամենևին էլ սովորական իմաստով գիտական դպրոց չէր, որը համախմբված էր ընդհանուր ուսմունքով կամ ընդհանուր ինտելեկտուալ հայացքներով և մեկ մեթոդաբանական ու տեսական հարթակի վրա: Ծիշտ հակառակը՝ Հանդեսի շուրջ համախմբված պատմագետները հույժ տարբեր հոսանքների ներկայացուցիչներ են և կապված չեն տեսակետների կամ մեթոդների միասնությամբ: Այստեղից էլ ամենուր լայն կիրառում ստացած «Աննալների դպրոց» եզրույթի ոչ միանշանակ և խնդրահարույց լինելու հանգամանքը, մանավանդ եթե նկատի ունենանք Մորիս էմարի արդարացի հարցադրումը. «Հնարավոր է, որ ինքնանորոգման անհրաժեշտ գործընթացը միշտ հավատարիմ մնա ուղղորդող ծրագրին»⁵:

Աննալականները, Ֆեբրեի ու Բլոկից սկսած, մերժում էին «դպրոց» եզրույթը՝ համարելով, որ իրենք դեմ են հենց այդ «խմբային ոգուն»⁶: Ըստ Ֆեբրեի՝ Աննալները «մարդկանց ազատ միավորում է, որոնք միմյանցից հույժ տարբերվում են տարիքով, ծագմամբ, գործնական փիլիսոփայությունների (*philosophies pratiques*) և կրոնների նկատ-

⁴ Chaunu P., L'économie: dépassement et prospective, dans Le Goff J., Nora P. (éd.), *Faire de l'Histoire. Nouvelles approches*, t. 2, Paris: Gallimard, 1974, p. 52.

⁵ Aymard M., The Annales and French Historiography (1929-72), *JEEH*, 2 (1972), p. 491. Տե՛ս նաև Clark S. (ed.), *The Annales School: Critical Assessments*, v. 1, *Histories and Overviews*, New York: Routledge, 1999, p. 3:

⁶ Bloch M., Deux livres sur Saint-Denis, *Annales. HÉS*, 1937, p. 85.

մամբ վերաբերմունքով, իրենց միավորված են զգում ոչ թե տասը կամ քսան հոգվածներից բաղկացած հավատամքով, [...] այլ ուժեղ ընդհանուր միտումներով, որոնք ինքնաբերաբար իրենց կարծիքներն ու եզրակացությունները կողմնորոշում են մեկ ուղղությունը»⁷: Ստոյանովիչի դիպուկ ձևակերպմամբ՝ «լինելով *débats et combats*-ի (քննարկումների և մարտերի) դպրոց՝ նրանք, որպես օրենք, դռները չեն փակում բանավեճերի առջև»⁸: Մանավանդ երբ նկատի առնենք պատմության կերտման նրանց մտահոգությունը, որը դարձել էր «հասարակական գիտությունների կենտրոնը, սիրտը, բոլոր գիտությունների առանցքը՝ հասարակությունը հետազոտելով գանազան՝ սոցիալական, հոգեբանական, բարոյական, կրոնական և գեղագիտական, ի վերջո նաև քաղաքական, տնտեսական և մշակութային դիտանկյուններից»⁹: Թե՛ Ֆեբրի և թե՛ Բլոկի նպատակն էր Հանդեսը դարձնել բանավեճի, փոխանակման և փորձի վայր, այլ կերպ ասած՝ «գործող պատմության կենդանի լաբորատորիա»¹⁰: Ուստի պատմագիտությունը խթանող քննադատական տարբեր առաջարկներով հանդես եկող և այլ գիտությունների հետ երկխոսության ձգտող պատմագետների այս խումբը չի կարող դիտարկվել իր իսկ ուսմունքի մեջ պարփակված մի դպրոց: Այն համագործակիցների և համախոհների մի ինքնօրինակ ցանց էր, որը երբեմն ներկայացնում էր ինչպես տարասեռ ցանցերի սերտաճում, այդպես և գիտահետազոտական հաստատություն: Իսկ քանի որ «դպրոց» եզրույթով ընդհանրացված համագործակցային ցանցերն իրականում գործում են իբրև փխրուն տարասե-

⁷ Febvre L., Pro parva nostra domo: scolies sur deux articles belges, *Annales. ÉSC*, 3, (1953), p. 513–514.

⁸ Stoianovich T., *French Historical Method: The Annales Paradigm*, Ithaca & London: Cornell University Press, 1976, p. 232.

⁹ Febvre L., Pro parva nostra domo: scolies sur deux articles belges, *Annales. ÉSC*, 3, (1953), p. 513–514.

¹⁰ Müller B., «Une espèce de petite révolution intellectuelle»: la correspondance Bloch-Febvre, *Espaces Temps*, 59–61 (1995), p. 125.

ուղթյուններ և մշտապես գտնվում են փլուզման եզրին, ուստի գոյատևման համար անընդհատ լրացուցիչ ջանքեր են ենթադրում¹¹: «Դպրոց» եզրույթն անտեսում է խմբի անդամների անհատական տարբերությունները, ինչպես նաև զարգացումները ժամանակի երկար տևողության ծիրում, ուստի որոշ պատմագետներ այն համարում են սահմանափակ և գերազասում են կիրառել «չարժում» հասկացությունը¹²:

Հետազոտողներից Ստոյանովիչը, աննալականների մոտեցումների տարասեռությունը համարելով ավելի շատ թվացյալ, գտնում էր, որ դրանք իրականում փոխլրացական են, ուստի «դպրոց» եզրույթի փոխարեն նախընտրում էր «հարացույց» հղացք¹³, որին հատուկ են նախ և առաջ կասկածն ու քննադատությունը: Ըստ այդմ՝ փոփոխություններն ընկալվում են ոչ թե իբրև առաջընթաց, կանոնավոր զարգացում կամ պարզ շարունակականություն, այլ իբրև կառուցման, ապակառուցման և վերակառուցման գործընթացի մաս:

Չնայած նման տարասեռ մոտեցումներին՝ «Աննալների դպրոց» եզրույթը շարունակում է գոյություն ունենալ: Նկատի ունենալով վերն ասվածը՝ «դպրոց» հասկացությունը սույն հետազոտության մեջ ես գործածում եմ հարացուցային իմաստով և աննալականներին պայմանականորեն բաժանում երեք սերնդի. Առաջին սերունդ՝ 1929–1956 թթ., երկրորդ՝ 1956–1969 թթ., երրորդ՝ 1969–(1989)1994 թթ.: Ինչ վերաբերում է Չորրորդ սերնդին, ապա նրա գոյությունը խնդրարկելի է¹⁴:

¹¹ Տե՛ս Grishakova M., Salupere S., *Theoretical Schools and Circles in the Twentieth-Century Humanities: Literary Theory, History, Philosophy*, New York & London: Routledge, 2015, p. ix:

¹² Տե՛ս Burke P., *op.cit.*, p. 2:

¹³ Տե՛ս Stoianovich T., *French Historical Method: The Annales Paradigm*, Ithaca & London: Cornell University Press, 1976, p. 20:

¹⁴ Տե՛ս Հովհաննիսյան Ս., «Աննալների» պատմագիտական դպրոցը և դրա կերպափոխության շրջափուլերը, Ստեփանյան Ա. (խմբ.),

*

Հրատարակության ընթացքում Հանդեսն ունեցել է մի քանի անվանում: Սկզբնապես լույս է տեսել Տարեգրությունների տնտեսական և սոցիալական պատմության (Annales d'histoire économique et sociale) անվամբ Ստրասբուրգում (1929–1938), փարիզյան Հրատարակությունը՝ Տարեգրությունների սոցիալական պատմության (Annales d'histoire sociale) անվամբ (1939–1941): Ֆաշիստական տիրապետության տարիներին Հրատարակվել է ժողովածուների տեսքով՝ Սոցիալական պատմության ժողովածու (Melanges d'histoire sociale) անվամբ (1942–1944): Մարկ Բլոկի հիշատակին նվիրված երկու հատորները լույս են տեսել Տարեգրությունների սոցիալական պատմության (Annales d'histoire sociale) անվամբ (1945): Այնուհետև՝ Տարեգրությունների, տնտեսությունների, հասարակություն-

Պատմության Հարցեր 1, Ե., Ջանգակ-97, 2009, էջ 123–134: Աննալների դպրոցի պատմության պարբերացման տարբեր մոտեցումներ կան՝ երեք, չորս կամ հինգ փուլերի բաժանումներով: Ժակ Ռեկել, օրինակ, այն բաժանում է հինգ փուլերի (սերունդների)՝ ընդունված Առաջին (1929–1946) և երկրորդ (1956–1968) փուլերի միջակայքում հավելելով առանձին մի փուլ՝ 1946–1956 թթ., նկատի ունենալով այն, որ Բլոկի մահվանից հետո, այդուամենայնիվ, Դպրոցը ենթարկվել էր նշանակալի փոփոխությունների: Բացի այդ, Ռեկելն Աննալների վերջին՝ 1989 թվականից հետո եկած սերնդին ևս համարում է առանձին սերունդ (տե՛ս Revel J., *Annates on the Move, in Grishakova M., Salupere S., Theoretical Schools and Circles in the Twentieth-Century Humanities: Literary Theory, History, Philosophy*, New York & London: Routledge, 2015, p. 235–252): Ազիռե Ռոխասը Ռեկելի հավելած փուլը՝ 1946–1956 թթ., դիտարկում է իբրև «անցումային փուլ» (բայց արդեն 1941–1956 թթ.) և ոչ իբրև առանձին փուլ, իսկ Չորրորդ սերունդը թեպականորեն ձևակերպում իբրև հերթական «անցումային» փուլ (տե՛ս Агирре Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Кругъ, 2006, с. 50–53): Այստեղ մեկ անգամ ևս ընդգծենք, որ, չնայած Աննալների դպրոցի պատմության նման պարբերացմանը, այդ պատմությունները երբեք չի եղել գծային կամ պարզ զարգացում, այլ բազմակերպ և բազմառիթմ՝ նշանավորվելով թե՛ շեղումներով, թե՛ շրջադարձներով և թե՛ վերադարձներով ու այլացումներով:

ներ, քաղաքակրթություններ (Annales: Économies, Sociétés, Civilisations) անվամբ (1946–1994), իսկ արդեն 1994 թվականից առ այսօր՝ Տարեգրությունների. պատմություն, սոցիալական գիտություններ (Annales: Histoire, Sciences Sociales):

Մինչև Աննալները (Տարեգրությունները) պատմության մեջ գերակայող էր քաղաքական և իրադարձային շարադրանքը՝ մշակված դրապաշտական փիլիսոփայության ծիրում: Այն մեկնարկում էր փաստերի և դրանց աղբյուրների ուղղակի բացահայտման նպատակից¹⁵: Ուստի պատահական չէր, որ պատմագիտական մտքի ճգնաժամն աննալականները ներկայացնում էին որպես դրապաշտության գերակայության հետևանք:

Հանդեսի առաջին տարիների հրապարակումներն, ըստ էության, ուսկային քայլեր էին: Նրա նորամուծություններն անտեսվում էին ու մնում աննկատ¹⁶: Բայց չնայած ակադեմիական վերնախավի անբարեհաճ վերաբերմունքին՝ հիմնադիրները Հանդեսի շուրջ կարողացան ստեղծել համախոհների ստվար մի խումբ, որի ջանքերով հնարավոր եղավ հաղթահարել հնացած կարծրակերպերը: Նրանց ավանդը, ինչպես նշեցինք, զնահատվում է որպես պատմագիտական մտքի հեղաբեկում¹⁷:

Աննալականներն առաջնորդվում էին պատմագիտության փոխակերպության անհրաժեշտությամբ: Եվ դա ապահովելու համար, ինչպես նկատում է Ֆեբրը, անհրաժեշտություն դարձան բազմակողմանի և ուշադրավ մտքերի

¹⁵ Տե՛ս Collingwood R. G., *The Idea of History*, London, Oxford, New York: Oxford University Press, 1956, p. 126–127:

¹⁶ Տե՛ս Ревель Ж., История и социальные науки во Франции. На примере эволюции школы «Анналов», *ННИ*, 5, (1998), с. 85. Müller B., Introduction, dans Marc Bloch et Lucien Febvre, *Correspondance, T. 3: Les Annales en crises (1938–1943)* /édition établie, présentée et annotée par Bertrand Müller, Paris: Fayard 2003, p. V–LVII:

¹⁷ Տե՛ս Schmitt J.-C., L'histoire des marginaux, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *La nouvelle histoire* (Encyclopédies du savoir moderne), Paris: Retz-C.E.P.L., 1978, p. 344:

առկայությունը, ինչպես նաև նոր ձևով «մտածելու կարողությունը»¹⁸: Ըստ այդմ՝ Հանդեսի յուրաքանչյուր համարում հրապարակվում էր երկու-երեք հիմնարար հոդված: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինը նվիրված էր նեղ, մասնակի, իսկ երկրորդը՝ առավել ընդգրկուն հիմնախնդիրներին: Ելակետն այն էր, որ պատմագիտական խնդիրներն այլևս անհնար է լուծել մեկուսի: Ուստի Ֆեբրեն ու Բյոկեն առաջադրում էին պատմագետներին արհեստավարի ձևավորման գաղափարը: Դրա վառ օրինակը դարձավ նրանց անձնական համագործակցությունը: Ընդամին, երկուսի համար էլ պատմության նոր ընկալման մեկնակետը «քաղաքակրթություն» հղացքն էր: Ֆեբրի համար քաղաքակրթությունը համապարփակ և համընդգրկուն պատմությունն էր ներառում, մինչդեռ Բյոկի համար դա մտայնությունների (mentalités) ամբողջությունն էր¹⁹: Այս մոտեցումներն իրենց ընդհանրական և մասնակի ընդգրկմամբ միտված էին միմյանց փոխլրացնելուն, փոխհարստացնելուն և կազմում էին կենդանի պատմության (histoire vivante) բովանդակությունը²⁰:

Ֆեբրը և Բյոկը ձգտում էին հաղթահարել հասարակական գիտությունների (մեծամասամբ դյուրկհայմյան սոցիոլոգիայի) և նորարական փնտրողներից հետ մնացած դրապաշտական պատմագիտության միջև ի հայտ եկած խզումը²¹: Չնայած որ աննալականները մշտապես հակա-

¹⁸ Febvre L., *Combats pour l'histoire*, Paris: Librairie Armand Colin, 1953, p. 33.

¹⁹ Стів Гуревич А. Я., Уроки Люсьена Февра, в Февр Л., *Бои за историю*, Москва: Наука, 1991, с. 511:

²⁰ Ֆեբրի և Բյոկի պատմատեսական հայացքների մանրամասն քննարկմանը կանդիդատանք առանձին:

²¹ Դրապաշտ պատմաբանները, համարելով, որ պատմության մեջ բացակայում է որևիցե կրկնություն, փաստերի ընտրության հարցում չունենին որոշակի մոտեցումներ, իրենց առջև փաստերի վերադասավորման և համադրման նպատակ չէին դնում: Ուստի նրանց պատմագիտական աշխատությունները վերածվել էին սոսկ իրադարձությունների շարադրանքի:

գրվել են «գերմանական գիտական ավանդույթի մեջ արմատավորված ծայրահեղ ագրեսիվ դրապաշտությունը», ինչպես նկատում է Փիթր Բրբըր²², այնուամենայնիվ, «նույնիսկ ամենակարկառուն ներկայացուցիչներին այդպես էլ չհաջողվեց ամբողջովին ձեռքազատվել դրապաշտությունը հատուկ ինչ-ինչ սահմանափակություններից»²³:

Հիմնադիր հայրերը կրկին պատմության հիմնախնդիր էին դարձնում մարդուն²⁴ և միաժամանակ առաջնորդվում «պատմությունը խնդիր է» սկզբունքով²⁵: Ըստ նրանց՝ պատմության ուսումնասիրությունը ոչ այլ ինչ է, քան ներկայի (արդիականության) և անցյալի երկխոսություն. «Ներկան չհասկանալն անցյալի չիմացություն անխուսափելի հետևանք է: Բայց թերևս նույնքան էլ ապարդյուն է անցյալը հասկանալու ամեն ջանք, եթե ներկայի մասին ոչինչ չգիտես»²⁶: Ուստի երկխոսությունը հնարավոր դարձնելու համար, ըստ հիմնադիր հայրերի, անցյալի իրադարձությունների վերաբերյալ պատմություն-պատումից և փաստեր կուտակելուց հարկ է անցում կատարել պատմությունը խնդիր է հարցադրմանը:

Աննալականներին հատուկ է նաև հետաքրքրությունը սոցիալական կյանքի պատմության (սոցիալական պատմության) նկատմամբ՝ բառի լայն իմաստով: Սկզբնական շրջանում նրանք պատմագիտության ոլորտն ընդլայնեցին հիմնականում տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների ներքերմամբ: Հանդեսում տեղ գտան հոդվածներ, որոնցում քննարկվում էին տեխնոլոգիաների դարգացումը,

²² Burke P., *op.cit.*, p. 21.

²³ Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., *նշվ. աշխ.*, էջ 34:

²⁴ Մարդու հիմնախնդրի վերաբերյալ հետաքրքրությունը կրում էր Հումանիտար մարդաբանության կնիքը, ուր մարդը դիտվում էր որպես «միկրոտիեզերք», բնական գործընթացների անկապտելի մասնիկ: Այն, անշուշտ, Անրի Բերրի մարդաբանության տեսության զարգացումն էր:

²⁵ Стів Febvre L., *La France physique: question de methode*, *MHS*, 3, (1943), p. 93:

²⁶ Բյոկ Մ., *նշվ. աշխ.*, էջ 89:

ապրանքափոխանակությունը, գները, տնտեսական ճգնաժամերը, Հասարակությունից սոցիալական կառույցները, ուրբանացումը, մշակույթի պատմությունը և այլն²⁷: Այս միտումը կարմիր թելի պես անցնում էր Հանդեսի Հրատարակությունից ամբողջ ընթացքում²⁸: Ընդ որում՝ փոխակերպությունների ենթարկվեցին նաև մարդու և Հասարակության մասին այլ գիտությունների հետ պատմագիտության փոխհարաբերությունները: Չնայած այդ ամենին՝ միջգիտակարգային (interdisciplinaire) հետազոտությունների նկատմամբ աննալականների հակումը մնաց անփոփոխ:

Մարկ Բլոկից հետո²⁹ Լյուսիեն Ֆեբրը շարունակեց Հանդեսի Հրատարակությունը: Ըստ նրա՝ աշխարհում տեղի ունեցած տարաբնույթ խոշոր տեղաշարժերը՝ Ֆիզիկայի զարգացումը, հեղափոխական վերափոխություններն արվեստում, աշխարհի քարտեզի վերաձևումը, ինքնիշխանություններից զուրկ ազգերի ինքնագիտակցության արթնացումը և այլն, սասանել էին նաև պատմագիտության առկա հարցույցների արժանահավատությունը³⁰: Հետպատերազմյան տարիներին աննալականների հետազոտական փնտրուքը միտված էր պատմագիտության նոր սահմանների և արժեքների հաստատման գործին: Դա արտահայտվեց և Հանդեսի նոր անվանման մեջ՝ Տարեգրություններ. տնտեսություններ, Հասարակություններ, քաղաքակրթություններ (Annales: Économies, Sociétés, Civilisations): Ուշագրավ է, որ Հանդեսի 1946 թվականի Հրատարակությունից սկսած՝ կազմի վրա հայտնվում է Հերմես աստծո պատկերը: Անշուշտ,

²⁷ Стів Далин В. М., *Историки Франции XIX–XX веков*, Москва: Наука, 1981, с. 187:

²⁸ Стів Revel J., *Histoire et sciences sociales: les paradigmes des «Annales»*, *Annales. ÉSC*, 6, (1979), p. 1361:

²⁹ Մարկ Բլոկն այս ժամանակ Դիմադրության ակտիվ մասնակիցներից էր, պաշարում էր ֆաշիստական ռեժիմի դեմ և ձերբակալվելուց հետո գնդակահարվեց 1944 թ. հունիսի 16-ին:

³⁰ Стів Febvre L., *Sur une nouvelle collection d'Histoire*, *Annales. ÉSC*, 1, (1954), p. 6:

ոչ պատահականորեն: Այս աստվածությունը հունական դիցաբանությունից մեջ համարվում էր աստվածների բանբերը, երկնքի, երկրի և անդրաշխարհի կապող օղակը: Հերմեսը Զևսի բանբերն էր և Տիեզերքի միավորիչը: Նրան էին վերագրվում տեխնիկայի այլևայլ դրսևորումներ՝ առևտուր, ծովագնացություն, դրամափոխություն, ինչպես նաև մտքի ճարտարություն: Հին հունական դիցաբանությունից մեջ Հերմեսը զուգակցվում էր Հեստիա աստվածուհուն, որը, ի տարբերություն նրա, մարմնավորում էր տունը, փակ տարածությունը, անշարժությունը, մնայունությունը: Երկու աստվածությունների հակադրությամբ Ֆեբրն ընդգծում էր Հանդեսի հիմնարար չափույթները՝ փոփոխությունն ու հաստատունությունը, իրադարձություններն ու կառույցները³¹:

1947 թվականին աննալականներին հաջողվում է հիմնել Բարձրագույն կրթության Գործնական դպրոցի Վեցերորդ բաժանմունքը (VI^e section de l'École pratique des hautes études): Դրանում ներառվում էին Հասարակական գիտությունների բոլոր ուղղությունները, բոլոր գիտությունները, որոնք սովորական ֆակուլտետներում բավարար զարգացման հնարավորություն չուներին: Ընդլայնվում են պատմագիտության հետազոտական սահմանները: Շուտով այս գործում աննալականների հետ համագործակցում են նաև պատմական ու Հասարակական գիտությունների այս կամ այն ոլորտում մասնագիտացած շատ հանդեսներ, և սկսվում է ստեղծագործական-հետազոտական բեղուն մի շրջան:

Պատմագիտական հարցույցների բարեփոխման հիմնախնդրի իրենց յուրօրինակ լուծումներն առաջարկեցին աննալականների արդեն Երկրորդ սերնդի ներկայացուցիչները՝ Ժորժ Դյուբրի, Ռոբեր Մանդրու, Պիեռ Գուբեր և այլք³²:

³¹ Стів Афанасьев Ю. Н., *Историзм против эклектики: Французская историческая школа «Анналов» в современной буржуазной историографии*, Москва: Мысль, 1980, с. 141:

³² 1956 թ. Ֆեբրի մահից հետո՝ մինչև 1969 թվականը, Հանդեսի խմբագիրն էր Ֆեռնան Բրոդելը: Բրոդելը ձևականորեն խմբագրակազմում մնաց մինչև իր մահը (1985 թ.):

եվ մասնավորապես՝ Ֆեռնան Բրոդելը³³: Աննալականների «բրոդելյան» սերնդի հիմնական առանձնահատկությունը «համընդգրկուն պատմություն» հղացքի մշակումն էր: Դա ենթադրում էր պատմական անցյալի բոլոր բաղադրիչների ներառումը ժամանակի մեջ և անցյալի համակարգված, ընդգրկուն, բազմաչափ պատկերը: «Համընդգրկուն պատմություն» հղացքն առկա էր դեռ հիմնադիր-ուսուցիչների պատմատեսության մեջ, սակայն սաղմնային վիճակում: Նրա բաղադրիչները դեռ բավականաչափ ակտիվ էին: Բրոդելը կարողացավ ի մի բերել ամբողջի և մասի հարաբերակցությունը «համընդգրկուն» պատմության հղացքի ծիրում: Այն դարձավ աննալականների «դասական» հարացույցներից մեկը:

Աննալականների համար այս փուլում հետազոտությունն առաջնային խնդիրներից է դառնում կառուցաբանական մոտեցումը: Միաժամանակ պահպանվում է հետադարձ կապը ավանդական լավագույնի հետ: Դա մի ժամանակաշրջան էր, երբ լայն տարածում էր ստացել կառուցաբանական (ստրուկտուրալիստական) հայեցակարգը՝ մարդաբանական (Կլոդ Լեի-Ստրոսս), մշակութաբանական (Միշել Ֆուկո), հոգեբանական (ժակ Լական) և այլ տարատեսակներով: Աննալականների Երկրորդ սերնդի ներկայացուցիչներից ոմանք իրենց հետազոտությունները ծավալում են աշխարհագրության, ժողովրդագրության, հոգեբանության, մարդաբանության և այլ բնագավառների համադրմամբ: Հանդեսի էջերում տպագրվում են միջգիտակարգային հետազոտություններ³⁴: Այս առումով ուշագրավ է Լը Ռուա Լադյուրիի դիտարկումը, որ «գրեթե կես դար ֆրանսիական լավագույն պատմաբանները՝ Բլոկից մինչև Գուբեր, կիրարկել են կառուցաբանությունն իրենց հետազոտություններում՝ ճիշտ է, հաճախ չգիտակցելով դա»³⁵: Կառուցաբանությունը խթան

հանդիսացավ պատմագիտական մի շարք կարևոր սկզբունքների վերակերպման համար: Դա էլ իր հերթին խթանեց պատմության և սոցիալական գիտությունների երկխոսության հետագա խորացումը³⁶:

Սկզբնավորվելով լեզվաբանության մեջ (Ֆերդինան դը Սոսյուր)³⁷ կառուցաբանությունը հետագայում տարածում գտավ այլևայլ գիտություններում՝ բանասիրություն, առասպելաբանություն, սոցիոլոգիա, աշխարհագրություն, տնտեսագիտություն, պատմություն և այլն: Այն միտում ուներ վերացարկվելու կոնկրետ փաստերից, իրողություններից և դեպքերից: Նրան հետաքրքրում էին դրանց համընդհանուր-տիպական կապերն ու հարաբերությունները: Այլ խոսքով՝ կառույցը, որն անտարբեր է ժամանակի նկատմամբ կամ էլ փոփոխվում է շատ դանդաղ. «Կառույցը՝ լինի այն գերկառույց թե ենթակառույց, համապատասխանում է հասարակական, տնտեսական կամ մշակութային իրողությունների երկարատևությունը»³⁷: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ներթափանցելու պատմական իրադարձությունների այնպիսի խորքեր, որոնք անհասկանալի են այլ մոտեցումների պարագայում: Սակայն, կրկինք մեկ անգամ էլ, այն անտարբեր է եզակիի և առանձնահատուկի նկատմամբ: Ուստի միակողմանիությունից խուսափելու համար այն պետք է համադրվեր հետազոտական այլ հայեցակարգերի հետ:

Կառուցաբանության յուրացմամբ աննալականները հանձին Ֆեռնան Բրոդելի, ընդհուպ մոտեցել էին պատմական ժամանակի նոր ըմբռնմանը: Արդեն 1958 թ. Հանդեսի ծրագրային հոդվածում Բրոդելը մինչ այդ գերակայող ժամանակի գծային-իրադարձային հարացույցի փոխարեն կարևորում է պատմության ժամանակային մեծ ընդգրկումը: Հրաժարվելով իրադարձային պատմությունից

³³ Տե՛ս Burke P., *op. cit.*, p. 15:

³⁴ Տե՛ս Le Roy Ladurie E., *Histoire et Climat, Annales. ÉSC*, I (1959), p. 6–7:

³⁵ Le Roy Ladurie E., *L'histoire immobile, Annales. ÉSC*, 3 (1974), p. 676.

³⁶ Տե՛ս Revel J., *Histoire et sciences sociales ...*, p. 1368:

³⁷ Տրվում է ըստ Грабски А., Фернан Бродель: вопросы методологии истории цивилизаций, *Цивилизации*, Вып. 1, М., 1992, с. 181:

«տնտեսական և սոցիալական համակցությունների բացահայտմամբ», Բրոդելը միաժամանակ առաջարկում է ուշադրությունը բեռել երկար տևողության գործընթացների հետազոտությանը³⁸: Այս նպատակով նա առաջադրում է սոցիալական գիտությունների համադրության նոր մեթոդ: Այն մեկնարկում է սոցիալական ժամանակի նոր ըմբռնումից՝ համարելով, որ պատմաբանը չի կարող պատմությունը հետազոտել ժամանակի միայն մեկ չափումով: Բրոդելն առանձնացնում է ժամանակի երեք հիմնարար չափում՝ կարճ տևողություն՝ իրադարձային պատմություն, միջին տևողություն՝ կապակցությունների պատմություն, և երկար տևողություն՝ կառուցվածքային պատմություն, արտահայտիչներով³⁹: Նման ըմբռնումը տիպական է Հանդեսի 1950–60-ական թթ. հրատարակումներում:

Աննալականների Երրորդ սերնդի (Ժակ Լը Գոֆֆ, էմմանյուել Լը Ռուա Լադյուրի, Մարկ Ֆերրո, Պիեռ Շոնյու, Ժակ Ռեել, Ռոժե Շարտիե, Ֆրանսուա Դոսս, Ֆրանսուա Ֆյուրե, Պիեռ Վիլար, Միշել Վովել և այլք) գործունեությունը ծավալվում էր 1970-ական թթ., երբ Հանդեսի խմբագրակազմի մեջ ներգրավվեցին Լը Գոֆֆը, Լը Ռուա Լադյուրին, Ֆերրոն: Այս ժամանակաշրջանում Աննալների դպրոցի տարածումը (մասնավորապես Ֆրանսիայում) այնքան մեծ էր, որ դպրոցը կորցնում է հետազոտական նպատակների և մեթոդների իր նախկին հստակությունը⁴⁰: Գրեթե նույն այս ժամանակ «Նոր պատմագիտություն» հասկացությունը սկսում է ավելի հաճախ գործածվել թե՛ Ֆրանսիական, թե՛ այլ երկրներում հրատարակվող պատմագիտական հետազոտություններում⁴¹: Վերջին հիսուն տարիներին հրատարակված պատմագիտական հոդվածներ-

³⁸ Braudel F., Histoire et Sciences sociales: La longue durée, *Annales. É.S.C.*, 4 (1958), p. 725–753.

³⁹ *Ibid.*, p. 729.

⁴⁰ Stéu Burke P., *op. cit.*, p. 2:

⁴¹ Stéu Olabarri I., 'New' New History: A Longue Durée Structure, *HT*, 1 (1995), p. 1–29:

րում և հետազոտություններում այս ուղղությունը համարում են համաշխարհային պատմագիտության նշանակալի իրադարձություններից⁴²:

Աննալականների Երրորդ սերնդի ներկայացուցիչները ենթադրում էին, որ «Նոր պատմագիտությունը» վերապահված է հույժ կարևոր դեր՝ փոխակերպել մարդկանց հավաքական հիշողությունը և ստիպել գիտության ու գիտելիքի համալիրին կայանալ ժամանակային երկար տևողության ծիրում: Ըստ այդմ՝ գիտության մեջ կարևորվում է հասարակության էվոլյուցիայի գաղափարը⁴³: «Նոր պատմագիտությունը» աննալականների բազմապարունակ տեսություններից մեկն էր: Այն շարունակում էր հիմնադրությունների ավանդները և, այդուհանդերձ, արդեն դուրս էր եկել աննալականների ավանդական դարձած սահմաններից՝ ներառելով պատմագիտական այլ ուղղություններ:

Հատկանշական է, որ կառուցաբանության ազդեցությամբ ժամանակի «կարճ տևողությունից» ուշադրության տեղաշարժը դեպի «երկար տևողություն» որոշ պատմաբանների կոնկրետ պատմական իրադարձությունների հանդեպ «արհամարհանքի» մղեց: Եվ դա հանգեցրեց արդարացի հակազդեցության: Պատմագիտության մեջ այժմ կրկին առաջին պլան է մղվում հետաքրքրությունն առ կոնկրետ (քաղաքական) իրադարձություններն ու անցքերը⁴⁴: Անշուշտ, խոսքը հին քաղաքական պատմության վերադարձի մասին չէ: Լը Գոֆֆն արդեն այդպիսի հարցադրում արել էր. հնարավոր է արդյոք արդի պատմագիտության վերադարձն առ

⁴² Stéu Hexter J. H., Fernand Braudel and the Monde Braudellien..., *JMH*, 4 (1972), p. 468: Ինչպես նաև՝ Andrews R. M., Implications of *Annales* for U.S. History, *RFBC*, 1 (1978), p. 165–180. **La recherche historique en France depuis 1965.** Paris: Éditions du Centre National de la Recherche Scientifique, 1980. Coutau-Bégarie H., Le phénomène «Nouvelle Histoire», Paris, 1984 և այլք:

⁴³ Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *La nouvelle histoire* (*Encyclopédies du savoir moderne*), Paris: Retz-C.E.P.L., 1978, p. 236.

⁴⁴ Stéu Burke P., *op. cit.*, p. 3:

քաղաքական պատմությունը, և, եթե հնարավոր է, ապա ի՞նչ կերպ⁴⁵: Ըստ նրա՝ քաղաքական պատմությունը հնարավոր է որպես «քաղաքական մարդաբանություն», որպես պատմություն, որը բացահայտում է կոնկրետ իրադարձությունների իմաստային խորքերը՝ շնորհիվ «խորհրդանիշների, ծեսերի, իշխանական արարողակարգերի համակողմանի հետազոտության»: Իսկ Ժորժ Դյուրին, անդրադառնալով քաղաքական պատմության հանդեպ պատմագիտության հետաքրքրությունը, բացատրում է, որ դա բոլորովին էլ չի նշանակում վերադարձ նրան, ինչ եղել է Հանդեսի հիմնադիրներից առաջ. «Այսօր Ֆրանսիական պատմագետները վերադառնում են իրադարձությանը՝ հարստացած իրենց կեսդարյա փորձագիտությամբ»⁴⁶: Քաղաքական պատմության նկատմամբ հետաքրքրության մեծացումը պայմանավորված է նաև մեկ այլ իրողությամբ: Բանն այն է, որ 1960-ական թվականներին Եվրոպայի հասարակական կյանքում իշխանական կառույցների դերն անհամեմատ ակտիվանում էր⁴⁷:

Աննալականների այս նոր սերունդը, հավատարիմ մնալով Ֆևրի, Բլոկի և Բրոդելի պատմագիտական «ոգուհ», փորձում էր դրան հաղորդել նոր բովանդակություն⁴⁸: Նրանք բրոդելյան «համընդգրկուն պատմություն» հղացքը սկսեցին կերպափոխել գիտական տարասեռ մոտեցումների համադրմամբ: Այդպիսով մերժվում էր պատմական երևույթների իմաստավորման միազիժ մոտեցումը: Աննալների նոր իմբազրակազմն այդ կապակցությամբ նշում է. «Նրա (Բրոդելի – Ս.Ն.) ծրագիրը մարդու մասին գիտու-

⁴⁵ Տրվում է ըստ՝ Гуревич А. Я., «Новая историческая наука» во Франции: Достижения и трудности (критические заметки медиевиста), в История и историки – 1981, М., 1985, с. 121:

⁴⁶ Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, Одиссей. Человек в истории, 1991, М., 1991, с. 55.

⁴⁷ Այս հիմնախնդիրներին են նվիրված Միշել Ֆուկոյի գրեթե բոլոր աշխատությունները, որոնք լայն ճանաչման են արժանանում փարիզյան գիտական շրջանակներում, այնուհետև աշխարհում:

⁴⁸ Sté Fernand Braudel (1902–1985), *Annales. ÉSC*, 1, (1986), p. 6:

թյունների ավանդների միասնացման համընդգրկուն պատմությունն էր: Մենք տրվեցինք ավելի տեղական փորձարկումներին՝ հուսալով ավելի որոշակիորեն հոգ տանել իրականացվող գիտական ընթացակարգերի մասին, ավելի ուշադիր արժեւորել գիտակարգային պրակտիկաներում առերեսված երկկողմանի ավանդները»⁴⁹:

Պատմության տեղայնացումը պատճառ դարձավ դրա կոտորակման ու քանակայնացման: Պատմական առանձին իրադարձություններն ու դրվագները, կորցնելով իրենց առանձնահատկությունները, վերածվեցին հաջորդական շարքերի (sérielles)⁵⁰: Աննալականներից Յյուրեն, ընկնելով ծայրահեղությունների մեջ, անգամ առաջարկում էր վերջ տալ պատմական անցյալի բազմակողմանի վերարտադրման ձգտումներին⁵¹: Իսկ Լը Ռուա Լադյուրին, Ֆրանսիական պատմագրություն ներմուծելով ամերիկյան մեթոդները, կարծում էր, թե պատմագետը կոչված է սոսկ տվյալներ հայթայթելու «այլ մասնագետների՝ տնտեսագետների, սոցիոլոգների, ազգաբանների համար»⁵²: Ըստ նրա՝ պատմագետի ճակատագիրն է «անընդհատ ու անդադար հաշվել ու հաշվել», և հաշվումների «շնորհիվ է, որ գոյություն ունի պատմությունը, որը քանակային է»⁵³:

Պատմության քանակային դիտարկման տրամաբանությունն ի վերջո կարող է հանգեցնել «պատմության առանց մարդկանց»՝ ապամարդացման (déshumanisation): Իսկ դա հակասում էր դպրոցի հիմնարար գաղափարին՝ մարդակենտրոնությունը: Սկսած հիմնադիր-ուսուցիչներից՝ պատմության կենտրոնատեղին մարդն էր: Այնինչ Լը Ռուա Լադյուրին առաջարկում է կատարել միայն կոնկրետ հետազո-

⁴⁹ Ibidem.


⁵⁰ Sté Fernand Braudel, Un nouveau champ pour l'histoire sérielle. Le quantitatif au troisième niveau, dans *Mélanges en l'honneur de Fernand Braudel*, Paris, 1973, vol. 2, p. 106:

⁵¹ Sté Fernand Furet, *L'Atelier de l'histoire*, Paris: Flammarion, 1982, p. 172:

⁵² Le Roy Ladurie E., *op. cit.*, p. 14.

⁵³ Ibid., p. 20.

8948



տուեթյուններ, որոնց առարկան մարդը է՝ ո՛չ կենտրոնում, ո՛չ էլ ծայրամասերում⁵⁴: Այստեղից էլ նրա բանաձևային պնդումը. «Վաղվա պատմագետը պետք է լինի ծրագրավորող կամ չպետք է գոյություն ունենա»⁵⁵:

Աննալականների երրորդ սերնդի մեկ այլ ներկայացուցիչ՝ Պիեռ Շոնյուն, «քանակային պատմություն» եզրույթի փոխարեն նախընտրում էր շարային պատմություն (histoire sérielle) եզրույթը՝ համարելով, որ իրադարձությունները պետք է դիտարկել միայն «շարայնության» մեջ, երբ պատմությունը ենթարկվում է մաթեմատիկական մշակման, իսկ առանց մաթեմատիկական գործողությունների «չկա գիտական գիտելիք»: Ըստ այդմ՝ «պատմությունը սոցիալական գիտություն է, որը հաշվում է և չափագրում»⁵⁶: Շարային պատմությունը «փնտրում է կրկնվող փաստերը, ուշադիր է փաստերի հաջորդականության հանդեպ՝ համառորեն և պարբերաբար վտարելով կոպիտ ոչ-վիճակագրական նյութերը»⁵⁷: Քանի որ պատմության յուրաքանչյուր շրջափուլ, յուրաքանչյուր հասարակություն հիմնվում է նախկինում կրկնվող գործընթացների վրա, պատմությունը մասնատվում է ըստ շերտազրույթների (stratigraphiques), որոնք միմյանցից հարաբերականորեն անկախ են: Ուստի պատմատիրույթի շարայնացումը նպատակ ունի հետազոտական նյութի յուրաքանչյուր միավորի (իրադարձություն, դեպք և այլն) տալ անկախություն այլ միավորների հետ փոխհարաբերություններում: Պատահականություններն, ըստ էության, տեղ չունեն շարային պատմության մեջ: Հետազոտության առարկան արդեն ոչ թե կոնկրետ հասարակությունն է, այլ վերացական մոդելներն ու կառույցները՝ միասնականացված, համահարթեցված⁵⁸:

⁵⁴ Ibid., p.13.

⁵⁵ Ibidem.

⁵⁶ Chaunu P., Histoire, science sociale. La durée, l'espace et l'homme à l'époque moderne, Paris: S.E.D.E.S., 1974, p. 325.

⁵⁷ Chaunu P., Un nouveau champ ..., p. 106.

⁵⁸ Снѣ Афанасьев Ю. Н., Эволюция теоретических основ школы «Анналов», ВП, М., 9 (1981), с. 89:

Հարկ է նաև նշել, որ եթե Աննալների հիմնադիր հայրերի համար ավանդույթների պատմության ուսումնասիրությունը պարզապես տնտեսական և սոցիալական պատմությունների ավելի խոր ըմբռնման միջոց էր, ապա դպրոցի երրորդ սերնդի ներկայացուցիչների համար այս պատմությունները ձեռք են բերում ինքնուրույն արժեք: Եվ պատահական է, որ մտայնությունների, քանակային և/կամ շարային պատմությունների տրամաբանական ամփոփումը դարձավ պատմական մարդաբանությունը, որը գիտակարգային ևս մի նոր արդյունավետ գործակցություն էր և իր հերթին նոր հարթակներ էր տրամադրում համադրությունների համար: Միևնույն ժամանակ, եթե դրապաշտական պատմագրության կարևոր հայեցակարգերից մեկը ժամանակակից իրադարձությունների սկզբնաղբյուրների որոնումն էր անցյալում (այսպես կոչված «առաջնային սկզբնաղբյուրների կուռքը»), երբ հետազոտողի հորիզոնը սահմանափակվում էր այն երևույթներով, որոնց համանունությունները նա տեսնում էր իր ժամանակի հասարակություններում, ապա պատմական մարդաբանությունը գնահատեց և կարևորեց հիմնականում այն տարբերությունները, որոնք օգնում են մեզ ըմբռնել անցյալը՝ չստորագրասելով անցյալի ընկալումը ներկային:

Հաջորդ քայլը եղավ այն, որ կրկին ընդգծվեց հիշողության և պատմության թեմայի կարևորությունը, և պարզ դարձավ, որ դրանց գուշակահարությունը չի կարող սպառիչ կերպով ներկայացնել պատմության հսկայական դաշտը: Միևնույն ժամանակ հիշողության և պատմության փոխհարաբերության ըմբռնումը նշանակում էր որոշ չափով բացահայտել ոչ միայն նրանց տարբերություններն ու հակադրությունները, այլև, մասնավորապես, դրանց համադրական-երկխոսային հեռանկարները: Եվ մինչ այս հեռանկարներն ուրվագծելը հույժ կարևոր էր, որ հիշողությունը, նախքան պատմության վերածվելը, անցնի ինքնազարգացման շրջան, որի ընթացքում պետք է ձեռք բերեր պատ-

մագրական կառույց: Մեծ հաշվով, հիշողութային/պատմական վերկայացումն իր ողջ բազմազանությունը պետք է տեղի ունենար այն հանգույցում, որտեղ կենտրոնացած են պատմական գիտության բոլոր հնարավոր կապերն ու անցումները: Սա հիմք և հնարավորություն է ստեղծում պատմագիտական համապարփակ համադրության համար, որը ներառում է փոխներթափանցող և փոխարտացոլվող, նույնիսկ հակոտնյա հարացույցներ և հղացքներ:

Պատմագիտական այս փոխակերպումների ծիրում ուշագրավ է և Չորրորդ սերնդի խնդիրը: Այս շրջանը պատմաբանները հաճախ անվանում են բեկումնային ժամանակաշրջան, որին բնորոշ էր նաև ճգնաժամը⁵⁹, որն արդյունք էր կողմնորոշումների և հետազոտական հարացույցների հետարդիական (postmoderne) քննադատության⁶⁰: Ընդամին, հետազոտողների մեծ մասն այն կարծիքին է, որ այդպիսի սերունդ այդպես էլ չձևավորվեց⁶¹, քանի որ նոր պատմագետները չձևակերպեցին իրենց միասնական պատասխանը պատմության առջև ծառայած մարտահրավերներին՝ «փոփոխելով պատմությանն ուղղված իրենց հարցերի բնույթն ու իմաստը»⁶²:

Ուստի կարող ենք ասել, որ 1980-ական թվականներին ի հայտ եկան աննալականների Չորրորդ սերնդի միայն նախանշանները (Բեռնար Լըպտի, Ժան-Իվ Գրընիե և այլք): Դա դրսևորվեց պատմագիտության նոր հիմնախնդիրների և հետազոտական մեթոդների մշակման ճիգով: Փնտրտուք,

⁵⁹ Stéven Bessmertnyy Ю., Школа «Анналов»: весна 1989 г., Европейский альманах, М., 1991, с. 139:

⁶⁰ Ավելի մանրամասն տե՛ս Լիոտար Փ.-Ֆ., Հետարդիական կացություն. Զեկույց գիտելիքի մասին /Մրանս. Թարգմ.՝ Ե. Մակարյան, առաջաբան և հիմնական հասկացությունների բառարան՝ Լ. Բայադյան, Ժամանակագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Ակտուալ արվեստ, 2022:

⁶¹ Stéven Barros C., La Escuela de Annales y la historia que viene, URL:// http://www.h-debate.com/cbarros/spanish/articulos/historiografia_inmediata/escueladeannaes.htm (07.05.2007). Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 2005, p. 255:

⁶² Ստեփանյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

որը դեռ չի ավարտվել: 1988 թվականի Հանդեսի խմբագրականում՝ «Պատմությունը և հասարակական գիտությունները: Քննադատական շրջադարձ»⁶³, խոսվում է «ժամանակաշրջանի անորոշության» մասին՝ վկայակոչելով այն փաստը, որ աննալական դպրոցի ծաղկումն ինքնին պատմագիտության և հասարակական գիտությունների համադրման արդյունք էր, որը հնարավորություն տվեց բարեփոխելու պատմագիտության հետազոտության առարկան, հիմնախնդիրն ու ընթացակարգը: Հասարակական գիտությունների սկիզբ առած ճգնաժամը, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ պատմագիտության վրա: Եվ խմբագրականի հեղինակները վերջինիս ճգնաժամը տեսնում էին այն բանում, որ, նախ՝ վերջին տասնամյակներին վերակերպվել են գիտակարգերի միջև եղած սահմանները, և երկրորդ՝ նախկինում գերակայող մի շարք տեսություններ (կառուցաբանություն, մարքսիզմ և կլիոմետրիկա) այլևս վստահություն չեն վայելում: Եվ պատմագետները, հասարակական գիտությունների մեջ չգտնելով անհրաժեշտ հենարան, վերադառնում են պատմամիտ և ավանդական իրադարձությունը⁶⁴: Հիմնախնդիրներ, որոնք քիչ ուշ կհանգեցնեն նաև Հանդեսի վերնագրի փոփոխությանը՝ Տարեգրություններ. պատմություն, սոցիալական գիտություններ (1994):

Չնայած այդ ամենին՝ Հանդեսի խմբագիրները չեն հրաժարվում «համընդգրկուն պատմություն» հղացքից, ավելի շուտ վերակերպափոխում են այն՝ ակտիվացնելով նրա ոչ թե ընդգրկունությունը, այլ վերլուծության-համադրության հնարավորությունները: Ինչպիսին էլ լինի վերջինիս ծավալը, ըստ նրանց՝ պատմական հետազոտության խնդիրը միշտ էլ սոցիալական փոխազդեցությունների (որպես

⁶³ Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales. ESC*, 2 (1988), p. 291–293.

⁶⁴ Stéven Leprie B., Гренье Ж.-И., О некоторых изменениях в журнале «Анналы» в 1994 г. (Ответы на вопросы Ю. Л. Бессмертного), *Одиссей: Человек в истории*, РАН, Ин-т всеобщ. истории, М., 1994, с. 316:

ամբողջի) Հետազոտությունն է: Եվ պատմական Հետազոտություն խնդիրը տեղաշարժելով միկրոպատմության տարածք այդուամենայնիվ, այն դիտարկում են «ժամանակի երկար տևողության» համապատկերում⁶⁵: Ուստի ճգնաժամի մասին դատողությունները ձեռք են բերել բոլորովին այլ բովանդակություն և իմաստ: Բանն այն է, որ «ճգնաժամը», որքանով այն վերաբերում է Հին հարացույցների բեկանմանը, վերարժևորմանը, նույնքան էլ վերաբերում է նոր հարացույցների առաջացմանը: Այս համատեքստում էլ, թերևս, հարկ է խոսել աննալականների նոր փուլի մասին, քանի որ Հանդեսի էջերում շարունակում են արտահայտվել անցյալի վերարժևորման մեթոդների, Հին ու նոր հարացույցների համադրման անհրաժեշտություն մասին: Ուստի շրջանառվող «ճգնաժամ» հասկացությունը կարելի է փոխարինել «չբջարեկամք», քանի որ խոսքն առավելաբար պատմագիտության նոր հնարավորությունների դաշտի ձևավորման մասին է: Ասվածի խոսուեն վկայություն է և այն, որ արդեն Հանդեսի 1989 թվականի վերջին համարում տեղ են գտնում ճգնաժամը հաղթահարելուն միտված գանազան տեսական հոդվածներ:

Միով բանիվ՝ Աննալների դպրոցի ձեռքբերումներն անուրանալի են: Դրանք նպաստել և նպաստում են պատմագիտության Հետազոտական տիրույթի ընդլայնմանն ու որակական զարգացմանը: Փոխվել են հասարակական գիտությունների սահմաններն ու փոխհարաբերությունների կերպը: Պատմագիտությունը ստանձնել է անցյալի, ներկայի և ապագայի Հեռանկարների կառուցակազմման բարդ առաքելությունը: Նման հանձնառությունը, ինչպես նշել ենք, հաճախ որակվում է իբրև «Ֆրանսիական պատմագիտական հեղաշրջում»⁶⁶:

Գլուխ առաջին

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ. ԼՅՈՒՍԻԵՆ ՖԵՎՐ ԵՎ ՄԱՐԿ ԲԼՈԿ

XIX դարի վերջին – XX դարի սկզբին հումանիտար ճանաչողության գլխավոր նպատակը դարձել էր մարդկության ամբողջական պատմության իբրև միասնական ֆենոմենի Հետազոտությունը: Առաջադրվել էին այդ նպատակին հասնելու տարբեր մոտեցումներ: Արդյունքում՝ միջգիտակարգային համադրություններով Հետազոտությունների կտրուկ աճը, որոնք ավելի հստակ դրսևորվեցին պատմագիտության բազմաթիվ ենթադրատեսակներում՝ «մշակութային պատմության» բարդ ընկալումներից մինչև «տնտեսական պատմության» նույնքան բազմակողմանի ոլորտները: Կտրուկ վերափոխվեց պատմագիտական լանդշաֆտը. այն կարծես կորցրել էր իր կենսունակությունը: Կրկին կասկածի տակ էր դրվել պատմագիտություն գիտակարգի և նրա հիմնարար հասկացությունների վավերականությունը: Ակնհայտ էր պատմագիտական մտքի ճգնաժամը¹: Այն հայտնվել էր իր հասկացությունների վերարժևոր-

⁶⁵ Sh'u Agrippa Roxas K. A., *Критический подход к истории французских «Анналов»*, М.: Кругъ, 2006, с. 180:

⁶⁶ Burke P., *op. cit.*, p. 111.

¹ Եզրույթն առաջացել է գերմանական պատմության փիլիսոփայության համաժիրում, մասնավորապես Կառլ Հեյսիի «Պատմականության ճգնաժամը» (Heussi K., *Der Krisis des Historismus*, Tübingen: Mohr, 1922)» գրքից, թեև առաջին պատշաճ վերլուծությունը տվել էր էռնստ Թրյոլշը (Ernst Troeltsch, *Der Historismus und Seine Probleme*, Tübingen, 1922): Ավելի մանրամասն տես Matthew D. C., *The Idea of Historical*

ման, սկզբնաղբյուրների հետազոտության նոր մեթոդների և պատմագիտական հետազոտությունների հին հարա-
ցույցների վերանայման անհրաժեշտության առջև:

Ճգնաժամը հաղթահարելու համար առաջադրվում էին նոր հետազոտական մոտեցումներ: Մինչ այդ եղած պատմագիտական հայեցակարգերի վերաբերմամբ և վերաներկայացմամբ, ինչպես նաև պատմագիտական նոր հարացույցների առաջադրմամբ աչքի ընկավ հատկապես Աննալների (Տարեգրությունների) դպրոցը: Այն XX դարի պատմագիտական մտքի ամենաազդեցիկ դպրոցներից է², որի նվաճումները պատմագիտության մեջ համեմատվում են «կոպենհեյնիսյան հեղափոխության» հետ³:

Հարկավ, Աննալների դպրոցը չձնվեց միանգամից կամ դատարկ տեղում. Ժակ Լը Գոֆֆի և Նիկոլա Ռուսսելիեի դիպուկ բնորոշմամբ՝ «Աննալները բացարձակ սկիզբ չէին»⁴: Աննալական դպրոցի նախագիծը չէր կարող այդքան արագ իրագործվել առանց դանդաղ հասունացման, ոչ էլ կարող էր գոյություն ունենալ և վերջապես պարտադրվել առանց դրա նախաձեռնողների երբեմն «ձանր փորձություն ենթարկված վճռականության»⁵: Ուստի հույժ կարևոր է հիմնադիր-ուսուցիչների հայացքների դիտարկումը XIX դարի վերջի – XX դարի սկզբի պատմագիտական մտքի զարգացումների համատեքստում⁶:

Synthesis, Henri Berr and the Relationship between History and Sociology in France at the Beginning of the Twentieth Century, URL//https://www.sheffield.ac.uk/polopoly_fs/1.714101/file/8cole.pdf (11.10.2007).

² Տն՝ Trevor-Roper H. R., Fernand Braudel, the Annales and the Mediterranean, *JMH*, 4 (1972), p. 468:

³ Տն՝ Burke P., *The French Historical Revolution. The Annales School 1929–1989*, Cambridge: Polity Press, 1990, p. 2:

⁴ Le Goff J., Roussellier N., Préface, dans Aymard M., Bercé Y. M., Sirinelli J.-F. (dir.), *L'Histoire et le métier d'historien en France, 1945–1995*, Paris: Les Éditions de la Maison des sciences de l'homme, 1995, p. 11.

⁵ Müller B., «Une espèce de petite révolution intellectuelle»: la correspondance Bloch-Febvre, *Espaces Temps*, 1995 (59–61), p. 125.

⁶ Տն՝ Հովհաննիսյան Ա., Աննալների պատմագիտական դպրոցը.

Ա. Աննալների դպրոցի կազմավորման նախադրյալները

Պատմագիտական միտքն առաջին անգամ չէ, որ հայտնվում էր փակուղային վիճակում: Մարտին Հայդեգգերի բնորոշմամբ՝ ճգնաժամն ի հայտ է գալիս գիտությունների ներսում, երբ խնդրարկելի է դառնում «առանձին գիտությունների սկզբունքային հարաբերությունն առ այն առարկաները, որոնք այդ գիտությունները խնդրարկում են»⁷:

Ցայդ պատմագիտության մեջ գերակայող էր քաղաքական և իրազարձային պատմությունը: Այն մշակվել էր դրապաշտական (պոզիտիվիստական) փիլիսոփայության ազդեցությամբ և մեկնարկում էր մի կողմից՝ փաստերի բացահայտման, մյուս կողմից՝ դրանց միավորման և «օրենքների բացահայտման» նպատակից⁸: Ուստի պատահական չէր, որ ճգնաժամը հաղթահարելուն միտված պատմագիտական ուղղությունները մեծ մասամբ «ներկայանում էին որպես հակադրապաշտական ընդվզում»⁹: Բանն այն էր, որ XIX կեսերին դեռ գերակայող էր գիտելիքի մաթեմատիկական հարացույցը, ըստ որի՝ մենք գիտենք միայն այն, ինչ ապացուցում ենք, և որ գիտելիքը պետք է լինի համընդհանուր և անհրաժեշտ¹⁰:

Ակտիվ քննարկումներն սկսվեցին նախ Գերմանիայում, որտեղ պատմության հետազոտության մեջ գերակայում էր Լեոպոլդ ֆոն Ռանկեի (1795–1886) դպրոցը, և դրապաշտական հայացքների տարածման համար միջավայրը բարե-

Լյուսիեն Ֆերի և Մարկ Բլոկի պատմության տեսությունը, «Վէժ» համահայկական հանդես, 2 (2011), էջ 95–118:

⁷ Heidegger M., *Prolegomena zur Geschichte des Zeitbegriffs*, Frankfurt am Main: Vittorio Klosterman, 1979, S. 3.

⁸ Collingwood R. G., *The Idea of History*, London, Oxford, New York: Oxford University Press, 1956, p. 126–127.

⁹ Collingwood R. G., *op. cit.*, p. 134.

¹⁰ Տն՝ Beiser Frederick C., *After Hegel German Philosophy, 1840–1900*, Princeton & Oxford: Princeton University Press, 2014, p. 134:

նպատակ էր¹¹: Ռանկեական «ինչպես եղել է իրականում (*wie es eigentlich gewesen*)»¹² Հայեցակարգը թեպետ ենթադրում էր պատմական և բնական գիտությունների, ինչպես նաև պատմության և փիլիսոփայության մեթոդական տարբերությունը, այդուամենայնիվ, բնական գիտությունների հետ կիսում էր «օբյեկտիվության իդեալը և պահանջվող գիտական կամ ակադեմիական էթոսը»¹³: Ուստի Ռանկեի «օբյեկտիվ պատմության հղացքն» իր «չեզոքությունը» տալիս էր սոսկ իրականության արտաքին նկարագրությունը և նպատակում ճգնաժամի խորացմանը: Ճանապարհը գտան մեկնարկից (հերմենևտիկայի) և նորկանտական իմաստասիրության ծիրում՝ ուրվագծելով պատմությունը բնական գիտություններից տարանջատելու հիմնարար սկզբունքները:

Այս ուղղությունը նշանակալի էր Վիլհելմ Դիլթայի (1833–1911) պատմության՝ որպես «ոգու մասին գիտության» հղացքը, որտեղ առկա էր պատմության իբրև զուտ բանական (իրականության հետ միջնորդված առնչություն ունեցող) գիտության ըմբռնումը: Նրա խնդիրը համարվում էր «անցյալի բանական մեկնությունը»¹⁴: Իր «Ներածություն Ոգու մասին գիտությունների» (*Einleitung in die Geisteswissenschaften*, 1883) գրքում և հետագա հետազոտություններում նա շեշտում էր, որ բնագիտությունը և պատմական գիտությունը («ոգու մասին գիտությունները»)

¹¹ Տե՛ս Вайнштейн О. Л., *Очерки развития буржуазной философии и методологии истории в XIX–XX вв.*, Ленинград: Наука, 1979, с. 26:

¹² Ranke L. von, *Geschichte der romanischen und germanischen Völker von 1494 bis 1514*, 2nd ed., Leipzig 1874. (*Sämtliche Werke* 33/34), p. vii. (առաջին հրատարակությունը՝ 1824):

¹³ Novick P., *That Noble Dream: The 'Objectivity Question' and the American Historical Profession*, Cambridge, 1988, p. 1–2. Iggers G. G., *The Intellectual Foundations of Nineteenth-Century 'Scientific History': The German Model*, in Macintyre S., Maignushca J., Pók A. (ed.), *The Oxford History of Historical Writing, Volume 4, 1800–1945*, Oxford University Press, USA, 2012, p. 47.

¹⁴ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France (19^e–20^e siècle)*, Paris: Armand Colin, 2005, p. 101.

ները») միմյանցից զանազանվում են ըստ հետազոտության առարկայի¹⁵: Այն է՝ ըստ առարկայի հետ ոգու ունեցած հարաբերության, ընդ որում՝ պատմությունն անհնար է հանգեցնել բնագիտական վերացական կատեգորիաների: Ըստ այսմ՝ բնական գիտությունների (*Naturwissenschaften*) նպատակը բացատրելն է (*erklären*) դրսից, իսկ ոգու մասին գիտությունների (*Geisteswissenschaften*), ներառյալ պատմության նպատակը ներսից հասկանալն է (*Verstehen*): Համապատասխանաբար՝ բնական գիտություններին հատուկ է պատճառականության բառապաշարը, մինչդեռ ոգու մասին գիտություններին հատուկ է «փորձի (*Erfahrung*)» լեզուն¹⁶: Այս կապակցությամբ Դիլթայը որպես ոգու մասին գիտությունների մեթոդ է առաջադրում պատմական իրադարձությունների անմիջական վերապրումը (*Nacherleben*) և հասկացումը (*Verstehen*), որի խնդիրն է հասկանալ անհատականության անկրկնելիությունը, մինչդեռ բնագիտությանը հատուկ է բացատրությունը (*Erklären*), երբ մասնավոր փաստը հանգեցվում է ընդհանուրին՝ օրենքին¹⁷: Այսպիսով, պատմաբանը ոչ թե պետք է պարզապես վերարտադրի պատմական իրադարձության իրական պատկերը, այլ «վերապրի դա ներսից»: Դա թույլ կտա հասնել պատ-

¹⁵ Տե՛ս Carnap R., 1966, *Der logische Aufbau der Welt*, Hamburg: Felix Meiner Verlag, S. 28: Տե՛ս նաև Քոչարյան Ռ., «Բաց հերմենևտիկայի» խնդրակարգը և Վ. Դիլթայի հերմենևտիկայի Հայեցակարգը, «Վէմ» Համահայկական հանդես, 1 (2015), էջ 9–35, Ոսկանյան Ա., Հասկացման անխուսափելիությունը: Դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաբանության պատմությունից, Եր., ԵՊՀ Հրատ., 2015:

¹⁶ Տե՛ս Burke P., *History and Social Theory*, Ithaca & New York: Cornell University Press, 1993, p. 7:

¹⁷ Տե՛ս Collingwood R. G., *op. cit.*, p. 173–174. Նկատենք, սակայն, որ մեկնաբանելու (հասկանալու) և բացատրելու նրա տարբերակումը նպատակ ունի ոչ թե բացառել բացատրությունները ոգու մասին գիտություններից, այլ միայն սահմանադատել դրանց շրջանակը: Տե՛ս Makkreel R. A., Rodi F., Preface to all Volumes, in Dilthey W., *Selected Works, Vol. III, The Formation of the Historical World in the Human Sciences*, p. xii:

մական իրականություն ընդհանրական ընթացմանը, քանի որ հասարակություն մեջ առկա փաստերը «հասկանալի են ներսից (von innen verständlich)»¹⁸: Իսկ պատմության հետազոտությունը կարող է վստահելի լինել միայն այն դեպքում, եթե հաջողի եզակիի ըմբռնումը հասցնել համընդհանուր վավերականության մակարդակի: Ուստի պատմաբանի գերագույն խնդիրը ոչ թե տվյալ դարաշրջանում կամ մշակույթի մեջ գերիշխող «գաղափարների» ուսումնասիրումն է, այլ այն իրական աշխարհների, որոնք կազմված են միմյանց հետ իմաստային հարաբերություններով կապված անհատներից¹⁹:

Բնագիտության և պատմության մեթոդների ներհակությունից էին մեկնարկում նաև Վիլհելմ Վինդելբանդն (1848–1915) ու Հայնրիխ Ռիկկերտը (1866–1936):

Վինդելբանդը, ի տարբերություն Դիլթայի, շեշտում էր, որ բնագիտությունը և պատմական գիտությունը միմյանցից զանազանվում են ոչ թե ըստ հետազոտության առարկայի, այլ ըստ մեթոդի: 1894 թվականի իր «Պատմություն և բնագիտություն» (*Geschichte und Naturwissenschaft*) ռեկտորական ուղերձում նա հանդես եկավ Դիլթայի հայեցակարգի քննադատությամբ՝ ներկայացնելով պատմական (ոգու մասին) և բնագիտական գիտությունների դասակարգման սեփական մոտեցումը²⁰: Վինդելբանդը նախ մերժում է «բնության մասին գիտություններ» և «ոգու մասին գիտություններ» եզրույթները և իբրև բաժանման սկզբունք ընդունում «գիտությունների ճանաչողական նպատակների ձևական

¹⁸ Stü Diltthey W., *Einleitung in die Geisteswissenschaften: Versuch einer Grundlegung für das Studium der Gesellschaft und der Geschichte*, Leipzig: B. G. Teubner, 1922, S. 36–37:

¹⁹ Stü Noiriell G., *Sur la «crise» de l'histoire*, Paris: Belin, 1996, p. 75:

²⁰ Windelband W., *Geschichte und Naturwissenschaft: Rede zum Antritt des Rectorats der Kaiser-Wilhelms-Universität Strassburg, geh. am 1. Mai 1894*, Strassburg, 1894. Անգլերեն թարգմանությունը՝ Windelband W., *Rectorial Address, Strasbourg, 1894, HT, Vol. 19, 2 (1980), p. 169–185:*

բնույթը»²¹: Ըստ այդմ՝ որոշ գիտությունների խնդիրն է ընդհանուր օրենքների ուսումնասիրությունը, իսկ որոշների էլ՝ կոնկրետ պատմական փաստերի: Մի դեպքում՝ մտահոգված են այն ձևով, որն անընդհատ մնում է անփոփոխ, մյուս դեպքում՝ մտահոգված են իրական իրադարձության եզակի, անկրկնելի բովանդակությամբ: Այստեղից էլ՝ Վինդելբանդի առաջարկած մեթոդաբանական տարբերակումը. ընդհանուր օրենքներ սահմանող բնագիտությունը հանգիստանում է նոմոթետիկ (օրինագիր) գիտություն, իսկ առանձին փաստեր սահմանող հասարակական գիտությունները՝ իդեոգրաֆիկ (գաղափարագիր) գիտություններ²²: Ընդամին՝ միևնույն առարկան կարող էր ենթարկվել միաժամանակ թե՛ «նոմոթետիկ», թե՛ «իդեոգրաֆիկ» մոտեցման: Այսու Ռիկկայի տարբերակումը կորցնում էր իր իմաստը:

Ասվածի առավել համապարփակ վերլուծությունը տալիս է Ռիկկերտը: Նրան չէր բավարարում բնագիտության և ոգու մասին գիտությունների լոկ հակադրման դիլթայական մոտեցումը: Ըստ Ռիկկերտի՝ պատմության նպատակը «եղելության» պատկերումը կամ բնութագրումն է որպես միանվագ, եզակի իրադարձություն, որը բացառում է «ընդհանուր օրենքները»: Ուստի ի տարբերություն բնական գիտությունների, որոնք համընդգրկուն նպատակներ ունեն, պատմությունն անհատականացնող գիտություն է²³: Միևնույն ժամանակ ճանաչողության ընդհանրացնող և անհատականացնող մեթոդները, չնայած իրենց տրամաբանական և մեթոդական հակադրությանը, սերտորեն փոխկապակցված են²⁴: Դրա

²¹ Windelband W., *Rectorial Address, Strasbourg, 1894, HT, Vol. 19, 2 (1980), p. 175.*

²² Ծագումը՝ Հունարեն «nomos (օրենք)», «thetos (հաստատում)», «idios (ինքնօրինակ)», «grapho (գրում եմ)» բառերից:

²³ Stü Rickert H., *Les quatre modes de "l'universel" dans l'histoire, RSH, t. II, 1901, p. 123:*

²⁴ Stü Թիլունց Ա., Իմամուսիլ Կանոթ և Նորկանապականության Բաղնյան դպրոցը (Հ. Ռիկկերտի և Վ. Վինդելբանդի պատմագիտության արժեքանությունը), Ստեփանյան Ա. (խմբ.), *Պատմության հարցեր 2*, Ե., Զանգակ, 2013, էջ 218:

Հետ մեկտեղ Ռիկկերտի պատմասիրութեան մեջ շեշտվում է օբյեկտիվ իրականութեան «պատճենահանման» անհնարինությունը, քանզի ցանկացած գիտական հասկացութեան մեջ իրականությունը միշտ պատկերվում է ոչ այնպես, ինչպես կա, այլ պարզեցված: Այլ կերպ ասած՝ առարկայի իրողությունը չի կարող վերարտադրվել հասկացութեան մեջ, քանի որ այն անսպառ է: Ուստի ցանկացած գիտութեան ցանկացած հասկացութեան մեջ վերարտադրվում են միայն առարկայի որոշ կողմեր կամ հատկություններ՝ վերացարկված կամ ընտրված նրա իրական բովանդակությունից՝ ըստ այն տեսակետի, որով դեկավարվում է այդ գիտությունը և որի մեջ արտահայտվում են նրան բնորոշ ճանաչողական հետաքրքրությունները²⁵: Ուստի Ռիկկերտը պատմութեան մեջ օրենքների փոխարեն կարևորում է «արժեքների» դերակատարությունը²⁶: Ավելի կոնկրետ՝ «Միայն արժեքային հարաբերություններն (Wertbeziehungen) են որոշում անհատական տարբերությունների մեծությունը: Դրանք մեզ թույլ են տալիս նկատել մի գործընթացը և անտեսել մեկ ուրիշը»²⁷: Արժեքների հետ այս հարաբերությունը հնարավորություն է տալիս պատմական աշխարհը սահմանել որպես նշանակալի իրողությունների մի ամբողջություն: Ընդամին՝ տարբեր դարաշրջաններին, տարբեր հասարակություններին ներհատուկ արժեքային համակարգերը միավորում են պատմական դեպքերն ու իրադարձությունները՝ ուրվագծելով դրանց զարգացման հեռանկարը: Այսու միայն «արժեք» հասկացութեան շնորհիվ է, որ հնարավոր է մշակութային գործընթացները տարբերել բնական երևույթներից²⁸:

²⁵ Տե՛ս Rickert H., *Kulturwissenschaft und Naturwissenschaft*, Tübingen: Verlag von J. C. B. Mohr (Paul Siebeck), 1926, S. 38–51:

²⁶ Տե՛ս Rickert H., *Kulturwissenschaft und Naturwissenschaft*, S. 132:

²⁷ Տե՛ս Rickert H., *Die Grenzen der naturwissenschaftlichen Begriffsbildung. Eine logische Einleitung in die historischen Wissenschaften*, Freiburg: J. C. B. Mohr (Paul Siebeck), 1896, S. 366:

²⁸ Տե՛ս Rickert H., *Kulturwissenschaft und Naturwissenschaft*, S. 132:

Վինդեյբանդի և Ռիկկերտի կողմից բնագիտության (Համընդհանուրի) և պատմության (առանձնահատուկի) տարբաժանումը հնարավորություն տվեց խոսսափելու պատմության ծիրում բնական գիտություններին օրենքների դոգմատիկ կիրարկումից: Այն է՝ շեշտադրվում էին հասարակական և անհատական մտայնություններն իբրև գործողությունների խթաններ, և պատմագիտությունն սկսեց ներկայանալ իբրև ինքնակա հետազոտական միջավայր:

Գերմանական միջավայրում կենսունակ էր պատմության ընկալման հոլիստական հարացույցը՝ պատմական օրինաչափություններ (Կառլ Մարքս), իդեալական կառուցակերպեր (Մաքս Վեբեր)²⁹: Նկատվում էր նաև հիշյալ բոլոր մոտեցումները համադրելու միտումը, որի վառ ներկայացուցիչներից էր Կառլ Լամպրեխտը (1856–1915), որի պատմահայեցողության հիմնարար հասկացությունը «հավաքական հոգեբանությունն» էր: Վերջինիս հիման վրա նա ձգտում էր կառուցել «սոցիոհոգեբանական պատմություն», որում համակեցական բոլոր չափումները պետք է համադրվեին³⁰: Ի տարբերություն գերմանական պատմաբանների ճնշող մեծամասնության, որոնք դեռևս հետամուտ էին պատմական իրադարձությունների նկարագրմանը և կենտրոնացած էին նշանավոր գործիչների պատմության վրա, Լամպրեխտը գրեց պատմություն, որտեղ գլխավոր «Հերոսները» հասարակությունն ու մշակույթն էին:

Նման քննարկումներն իրենց արձագանքը գտան Ֆրանսիայում: Նոր պատմագիտական ըմբռնումների համար այստեղ հիմք հանդիսացան մասնավորապես Ժյուլ Միշլետի մեթոդական (méthodique) պատմությունը, էմիլ Դյուրկհայմի սոցիոլոգիան, Պոլ Վիդալ դը Լա Բլաշի «մարդկային աշխարհագրությունը» և Անրի Բերրի «պատմական

²⁹ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France (19^e–20^e siècle)*, Paris: Armand Colin, 2005, p. 101.

³⁰ Lamprecht K., *La méthode historique en Allemagne, RSH*, t. I, 1900, p. 26.

Համադրությունը», որոնք էլ հիմնականում սահմանեցին աննալականների ելակետային սկզբունքներն ու դարձան տեսական-մեթոդաբանական հիմք:

Փյուլ Միշլեի (1798–1874) պատմագիտական նախադժի նորարարության ելակետը պատմական գիտելիքների ամբողջական վերանայման պահանջն էր: Ըստ նրա՝ որպեսզի պատմութունը չվերածվի ժամանակագրության, պետք է պատմության անվերջ մանրամասները (կրոնական, տնտեսական, գեղարվեստական և այլն) գիտարկել բնական և աշխարհագրական կենդանի միասնության համատեքստում³¹: Այստեղից էլ «գիտությունների միասնության» հղացքը, այն է՝ Միշլեն հետազոտական նյութին մոտենում է գլոբալ տեսանկյունից՝ ցանկանալով ստեղծել ամբողջական պատմութուն՝ «մեկ շարժման մեջ ի մի բերելով իրականության բոլոր կողմերը»³²: Նա յուրաքանչյուր ժամանակաշրջան իր ամբողջության մեջ վերցնում է իբրև բազմաթիվ ռեզոնանսների ներդաշնակութուն՝ կազմված տարբեր ոլորտների միջև եղած փոխհարաբերություններից³³: Այդուհետև հետազոտության նյութ դարձնելով այնպիսի թեմաներ, ինչպիսիք են կախարհները, կանայք, իռացիոնալ, հերետիկոսական, բացառված, ժողովրդական մշակույթները և այլն, նա ձայնը տալիս է պատմության կողմից մոռացվածներին, որոնք մահացել էին «դեռ թոթովելով (*bégayant encore*)»³⁴: Իբրև նման երկխոսության կարևորագույն քայլ՝ Միշլեն առաջադրում էր պատմության և փիլիսոփայության երկխոսությունը և զբանով խորքային առումով հակադրվում էր մեթոդիստ (զբապաշտ) պատմաբաններին: Պատմու-

թյան և փիլիսոփայության այս խաչմերուկում, սակայն, ուշագրավն այն է, որ պատմութունը ոչ թե հանգեցվում է փիլիսոփայությանը, այլ հակառակը՝ փիլիսոփայության միջոցով իրականացվում է պատմության ազատագրումը՝ սահմանափակումներից ձերբազատվելուն: Շատ առումներով Միշլեն զարգացրեց արևիվների պատմագիտական կիրառականությունը՝ հասցնելով այն գրական կամ միստիկ փորձառության աստիճանի³⁵: Այսպես տոգորված պատմությամբ՝ Միշլեն անցյալի «վերակենդանացման» գործում կարևորում է կրքով գրված պատմությունը՝ միևնույն ժամանակ, սակայն, պահպանելով «ամուր խիղճը և ճշմարտության սերը»³⁶: Ընդհանուր առմամբ Միշլեի պատմասիրությունը, ինչպես դիպուկ նկատել է Ռայմոն Արոնը, հիմնված է այն համոզման վրա, որ «պատմությունը մարդու համար ոչ թե արտաքին մի բան է, այլ նրա կեցության էությունը (*essence de son être*)»³⁷:

XIX դարի վերջի Ֆրանսիական գիտական գլխավոր իրադարձությունը սոցիոլոգիայի, մասնավորապես դյուրկհայմյան սոցիոլոգիայի ի հայտ գալն էր: Էմիլ Դյուրկհայմի (1858–1917) հետազոտական սեևումի խնդիրն էր «բնագիտական իմացաբանությամբ ոգեշնչված» օբյեկտիվ սոցիոլոգիայի հիմնումը³⁸: Նման սոցիոլոգիայի պահանջը երկակի է: Նախ այս գիտության առարկան պետք է լինի կոնկրետ, այն պետք է տարբերվի բոլոր մյուս գիտություններից: Երկրորդ՝ առարկան պետք է գիտարկվի և բացատրվի այնպես, ինչպես փաստերը գիտարկվում և բացատրվում

³¹ Michelet J., *Histoire de France*, Tome 1, Paris: A. Lacroix et Compagnie, 1880, p. i–ii. (Préface).

³² Տե՛ս Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 89:

³³ *Ibid.*, p. ii.

³⁴ Michelet J., *Correspondance Générale, Tome 1, 1820–1832*, Textes réunis, classés et annotés par Louis Le Guillou, Paris: Librairie Honoré Champion, 1994, p. 378.

³⁵ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 33.

³⁶ Michelet J., *Correspondance Générale, Tome II, 1833–1838*, Textes réunis, classés et annotés par Louis Le Guillou, Paris: Librairie Honoré Champion, 1994, p. 215. Թերևս դա է պատճառը, որ Հրեթացու Միշլեն անընդհատ վերագրում է պատմութունը և միևնույն իրադարձություններին, դեպքերին ու անցքերին տալիս նոր մեկնաբանութուն:

³⁷ Aron R., *Introduction à la philosophie de l'histoire. Essai sur les limites de l'objectivité historique*, Paris: Gallimard, 1986, p. 12.

³⁸ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 104.

են մյուս գիտություններում: Ուստի դյուրեկհայմյան սոցիոլոգիայի ռազմավարական խնդիրը դարձավ մի կողմից՝ սոցիոլոգիայի տարանջատումը պատմության փիլիսոփայություններից (որը մարդկության զարգացման ընդհանուր օրինահասկություններն է վեր հանում) և մետաֆիզիկայից (որը որոշարկում է հասարակության տիպաբանությունը), մյուս կողմից՝ սոցիալական պատճառականության (causalité sociale) հայեցակարգի հիմքում ընկած բոլոր հումանիտար գիտությունների միավորմանը հասնելու հավակնությունը: Այս երկակի պահանջն իրականացնելու համար նա մեկնարկում էր մի կողմից՝ «սոցիալական փաստերն իբրև իրեր (choses)» գիտարկելուց³⁹, որտեղ «իր է այն ամենը, ինչ տրված է, ինչ ներկայացվում կամ, ավելի ճիշտ, պարտադրվում է գիտարկմանը»⁴⁰, որով սոցիալական փաստերին (faits sociaux) տալիս էր նյութական փաստերին (faits matériels) համարժեք գոյություն⁴¹, մյուս կողմից՝ սոցիալական փաստերի ինքնավարությունից՝ քննարկելով դրանք անհատներից անկախ, «ինքնին՝ գիտակցող և պատկերացնող սուբյեկտներից կտրված»⁴²: Դյուրեկհայմյան, ըստ այդմ, առանձնացնում է սոցիալական փաստին բնորոշ երկու հատկանիշ՝ արտաքին գոյություն և հարկադրական ուժ անհատների նկատմամբ⁴³: Հասարակությունը նրա մեկնաբանությունն մեջ հանդես է գալիս որպես անհատներից անկախ իրականություն, արտա- և վեր-անհատական իրականություն: Ըստ նրա՝ հասարակությունն առաջա-

³⁹ Դյուրեկհայմ է., *Սոցիոլոգիական մեթոդի կանոնները*, Սարգիս Խաչենց, Եր., 2006, էջ 50:

⁴⁰ Դյուրեկհայմ է., *Նշվ. աշխ.*, էջ 63:

⁴¹ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 104. Այստեղ ուշագրավ է այն, որ «սոցիալական փաստերն» իբրև «իրեր» բանաձևը ենթադրում է ինչպես քաղաքական տնտեսության քննադատություն, այնպես էլ հասկացությունների վերացական քննարկումների քննադատություն, ինչպիսին արժեքն է:

⁴² Դյուրեկհայմ է., *Նշվ. աշխ.*, էջ 64:

⁴³ Անդ., էջ 49:

նում է անհատների փոխազդեցություն արդյունքում, սակայն սկսում է ապրել իր օրենքների համաձայն⁴⁴: Ուստի «սոցիալական կյանքը պետք է բացատրվի ոչ թե իր մասնակիցների ձևավորած պատկերացումներով, այլ խորքային պատճառներով, որոնք խուսափում են նրանց գիտակցություններից»⁴⁵: Հարց է առաջանում՝ որո՞նք են այն խորքային պատճառները, որոնք խուսափում են նրանց գիտակցություններից: Ավելին՝ եթե հասարակական կյանքում «ամեն ինչ բաղկացած է պատկերացումներից, գաղափարներից և տրամադրություններից», ապա արդյո՞ք դրանք, թեկուզ հավաքական, մասնակիցների և վկանների պատկերացումներ չեն: Երկրնտրանք, որից Դյուրեկհայմը փորձեց խուսափել՝ վերջինիս մասին խոսելով «ուժերի», «հոսանքների» և «ստեղծագործական համադրությունների» համարանական (analogical) պատճառական լեզվով⁴⁶:

Տեսական այս դիրքերից էլ Դյուրեկհայմը սահմանում է սոցիոլոգիայի հավակնությունները. հասարակությունների մասին մնացած բոլոր էմպիրիկ գիտելիքները դառնում են սոցիոլոգի կողմից օգտագործվող նյութ, և այդ նյութը հավաքող առարկաներն իջեցվում են օժանդակ գիտությունների կարգավիճակի: Սոցիոլոգիայի համար այդպիսի օժանդակ գիտություններից են պատմությունը, ազգագրությունը և վիճակագրությունը, «առանց որոնց սոցիոլոգիան ոչինչ անել չի կարող»⁴⁷: Նկատենք, որ չնայած

⁴⁴ Այստեղ նկատենք, որ այդ տարասեռությունը բնավ չի ենթադրում, որ անհատական պատկերացումները և հավաքական պատկերացումները չունեն նմանություն եզրեր, մասնավանդ երբ երկու դեպքում էլ գործ ունենք պատկերացումների հետ:

⁴⁵ Durkheim É., *Marxism and Sociology. The Materialist Conception of History (1897)*, in Durkheim É., *Rules of Sociological Method* /Edited with an Introduction by Steven Lukes, Translated by W. D. Halls, New York, London, Toronto, Sydney: Free Press, 1982, p. 171.

⁴⁶ Lukes S., Introduction, in Durkheim É., *Rules of Sociological Method* /Edited with an Introduction by Steven Lukes, Translated by W. D. Halls, New York, London, Toronto, Sydney: Free Press, 1982, p. 9.

⁴⁷ Durkheim É., *Le Socialisme. Sa définition, ses débuts, la doctrine*

Դյուրկհայմը պատմությունը (պատմական հետազոտությունները) կարևորում էր՝ իբրև համեմատական մեթոդի (*méthode de comparaison*) տարր, այդուամենայնիվ, փոփոխում է դրա կարգավիճակը՝ իջեցնելով գործիքի՝ տեխնիկայի մակարդակի: Ֆրանսուա Դոսսի դիպուկ ձևակերպմամբ՝ «Պատմաբանը պետք է բավարարվի կեր փնտրելով՝ հավաքելով այն նյութերը, որոնցից սոցիոլոգը կպատրաստի իր մեղրը»⁴⁸: Ուստի սոցիոլոգիայի մեջ ինտեգրելու հավակնությունամբ շեշտում է պատմության ոչ գիտական լինելու իրողությունը, քանի որ այն սահմանափակվում է անհատական փաստերի քննության մեջ՝ վերածվելով գուտ գրական ժանրի: Մինչդեռ գիտություն «այն կարող է լինել միայն անհատականից վեր կանգնելու պայմանով», բայց այդ դեպքում էլ գիտական պատմությունը կորցնում է իր գոյություն պատճառն ու ամբողջովին ընկղմվում «դինամիկ սոցիոլոգիայի» մեջ⁴⁹: Մոտեցում, որը դարաշրջանի և հասարակական գիտակցության կտրուկ փոփոխությունների պայմաններում դառնում է գերակայող և հիմք դնում պատմության՝ գիտություն լինել-չլինելու բանավեճին՝ ձգվել-հասնելով մինչև Աննալների դպրոց և հետո: Փոփոխվում է և պատմագիտության նպատակի, պատմական գիտելիքի մեթոդաբանական ձևերը մասին պատկերացումը, այդու՝ պատկերացումը համալսարանական «ավանդական» պատմագիտության սահմանները խախտելու պահանջարկի հասունացման մասին, որն արդեն կիրականացնեն Աննալական դպրոցի հիմնադիր-հայրերը:

Ֆրանսիական պատմագիտության զարգացման վրա գործուն ազդեցություն թողած մյուս բնագավառը Պոլ Վիդալ դը Լա Բլաշի (1845–1918) աշխարհագրական դպրոցն

saint-simoniennes, Paris: Alcan, 1928, p. 348.

⁴⁸ Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 19.

⁴⁹ Durkheim É., Review: Salvemini, Croce, Sorel, *Contributions to L'Année Sociologique 1901–1902* (1903), p. 71.

էր՝ մարդու աշխարհագրություն, երկրային միասնություն և միջավայր, կենսակերպ, մարդն իբրև աշխարհագրական գործուն հղացքների շուրջ իր քննարկումներով: Ըստ Վիդալ դը Լա Բլաշի՝ մարդկային աշխարհագրություն (*géographie humaine*) հղացքը «ոչ մարդկային ֆիզիկաաշխարհագրական» հղացքի հակադրությունը չէ, այլ աշխարհագրական գիտելիքների ուրույն մեկնություն: Ի հակադրություն գերմանական աշխարհաքաղաքագետների⁵⁰, որոնք ուսումնասիրության կենտրոնում դնում էին տարածությունը, դը Լա Բլաշի հղացքի կենտրոնում մարդն է⁵¹: Նա մեծ նշանակություն էր տալիս մարդկային կամքին և նախաձեռնությունները. «Մարդը, ինչպես և բնությունը, կարող են դիտարկվել որպես աշխարհագրական գործուն»⁵²: Ընդամին, չեն թերագնահատվում մարդկային գործունեության մեջ քաղաքական կապերից զատ գոյություն ունեցող բազում ուրիշ կապեր. դրանք բազմազան են և ընթանում են բնությունից

⁵⁰ Այս գիտակարգի՝ աշխարհաքաղաքականության հիմնադիրներից է Համարվում գերմանացի աշխարհաքաղաքագետ, սոցիոլոգ Ֆրիդրիխ Ռատշելը (Friedrich Ratzel, 1844–1904). Գերմանիայի միավորման ժամանակ Ռատշելը որդեգրեց «քաղաքական աշխարհագրություն (Politische Geographie)» եզրույթը, որը նաև 1897 թ. հրատարակված նրա գրքի վերնագիրն էր: Երկու տարի անց, Ռատշելի տեսությունից ոգեշնչված, շվեդ սոցիոլոգ և քաղաքագետ Ռուդոլֆ Ջելլենն (Rudolf Kjellén, 1864–1922) առաջադրեց «աշխարհաքաղաքականություն (Geopolitik)» եզրույթը: Ռատշելի և Ջելլենի հետ մեկտեղ աշխարհաքաղաքականություն գիտակարգի դասականներ են համարվում բրիտանացի աշխարհագրագետ և քաղաքական գործիչ Հելֆորդ Մլեքինգերը (Halford Mackinder, 1861–1947), ծովային ռազմավարության ամերիկացի տեսաբան Ալֆրեդ Մեհենը (Alfred Mahan, 1840–1914), գերմանացի աշխարհագրագետ և սոցիոլոգ Կառլ Հաուսհոֆերը (Karl Haushofer, 1869–1946), միջազգային հարաբերությունների ամերիկացի տեսաբան Նիքոլաս Սփիքմենը (Nicholas J. Spykman, 1893–1943): Ավելի մանրամասն տես **Holdar S.**, *The Ideal State and the Power of Geography the Life-Work of Rudolf Kjellén*, *PG*, Volume 11, 3 (1992), p. 307–323:

⁵¹ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op.cit.*, p. 89.

⁵² Vidal de La Blache P., *Leçon d'ouverture du cours de géographie*, *AG*, t. 8, 38 (1899), p. 97.

առ մարդը, կազմում առավել երկար հաջորդական օղակները⁵³: Այսու՝ ի տարբերություն Դյուրկհայմի սոցիալական միջավայրի հղացքի, որտեղ մարդուն պասիվ դեր էր տրված (մարդն առաջին հերթին պայմանավորված է իր Ֆիզիկական միջավայրով), Վիդալ դը Լա Բլաշի աշխարհագրական միջավայրում մարդուն տրվում էր ակտիվ դեր (որտեղ մարդը «միանում էր բնության խաղին»):

Այս համատեքստում նա առաջադրում է երկրային միասնություն (unité terrestre) հղացքը, որը հազարավոր համադրությունների արդյունք է: Այսու՝ երկրային օրգանիզմի մեջ մեկուսի ոչինչ գոյություն չունի. «Ամենուրեք ընդհանուր օրենքները դրսևորվում են այնպես, որ անհնար է, դիպչելով մի մասին, չդիպչել պատճառների և հետևանքների ամբողջ շղթային»⁵⁴: Փաստի նշանակություն ունեցող տեղայինի (մասի) արտաքին հատկանիշները գիտական հասկացություն նշանակություն են ձեռք բերում, միայն երբ վերցված են շղթայի մեջ, երբ «ոգեչնչված են բարձրագույն ընդհանրություն սկզբունքով»՝ համակցումներով⁵⁵: Ուստի կարևոր էր հասկանալ շրջակա միջավայրի և քաղաքակրթության շարունակական փոխազդեցությունը, քաղաքակրթության արտաքին միջավայրի (ֆիզիկական գիտարկելի օրինաչափություններ և գործընթացներ) և քաղաքակրթության ներքին միջավայրի (արժեքներ, սովորություններ, համոզմունքներ և գաղափարներ) միջև երկարատև լարվածությունը: Ընդ որում՝ արտաքին միջավայրը տալիս էր լայն հնարավորություններ, ներքին միջավայրը թելադրում էր ընտրություն հարազա-

⁵³ Ibid., p. 98.

⁵⁴ Vidal de La Blache P., Le principe de la géographie générale, AG, t. 5, 20 (1896), p. 141. «Երկրային միասնություն» (l'unité terrestre) հղացքն իր ուշագրավ գուգորդումն ունի Պուանկարի հայեցակարգի հետ, ըստ որի՝ «յուրաքանչյուր ընդհանրացում ենթադրում է հավատ բնության միասնության և պարզության նկատմամբ» (տես Poincaré H., La Science et l'Hypothèse, Paris: Flammarion, 1968, p. 16):

⁵⁵ Vidal de La Blache P., Le principe de la géographie générale. AG, t. 5, 20 (1896), p. 142.

փերն այս տիրույթում: Այս համատեքստում էլ Վիդալ դը Լա Բլաշը կարևորում է աշխարհագրություն մեջ պատմություն ընդգրկվածությունը, քանի որ միայն վերջինիս շնորհիվ է, որ փաստերին հնարավոր է վերագրել իմաստ և կշիռ (portée)⁵⁶: Թերևս սա նկատի ունենալով էր, որ Վիդալ դը Լա Բլաշի աշխարհագրական հայեցակարգը Լյուսիեն Ֆևրը բնորոշեց իբրև «հնարավորական (possibilisme)»⁵⁷, որի համատեքստում պատահականությունը դառնում է կենտրոնական տարր, և որով Վիդալ դը Լա Բլաշը հակադրվում էր Ռաթցեյլյան դետերմինիզմին (determinism): Իսկ բնության և մարդու փոխհարաբերությունների համատեքստում կարևորվում է մարդու դերը իբրև աշխարհագրական միջավայրը փոփոխող գործոն⁵⁸: Հասկացությունների այս համակարգը հետագայում աննալականներին հանգեցնելու էր միջգիտակարգային հետազոտական մեթոդին:

Դյուրկհայմի տեսության ազդեցությամբ, բայց բոլորովին այլ հայեցակետից հանդես եկավ Անրի Բերրը (1863–1954): 1900 թվականից ի վեր նա հրատարակում էր «Պատմական համադրությունների հանդեսը»-ը: Նպատակն էր համակարգել պատմագիտական հետազոտությունները և ընդլայնել դրանց ընդգրկման ծիրը՝ կարևորելով պատմագիտության և հումանիտար այլ գիտությունների հետազոտական մեթոդների և արդյունքների անընդհատ համադրման անհրաժեշտությունը⁵⁹: Ինչպես տարիներ առաջ իր ատենախոսության մեջ էր գրել, «համադրությունը պետք է կլանի բոլոր էներգիաները, այն պետք է վերականգնի արկածային հնագույն ոգին» և փորձարկի «միասնության վար-

⁵⁶ Vidal de La Blache P., Leçon d'ouverture du cours de géographie, AG, t. 8, 38 (1899), p. 98.

⁵⁷ Febvre L., La Terre et l'évolution humaine. Introduction géographique à l'histoire, Paris: La Renaissance du Livre, 1922, p. 25.

⁵⁸ Стів Афанасьев Ю. Н., Историзм против эклектики: Французская историческая школа «Анналов» в современной буржуазной историографии, Москва: Мысль, 1980, с. 27:

⁵⁹ Стів Berr H., Sur notre programme, RSH, t. I (1900), p. 1–8:

կածը (*hypothèse d'unité*)»⁶⁰: Դա հնարավորություն էր տալիս ընդլայնել պատմության սահմաններն աշխարհագրության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, ազգաբանության, ժողովրդագրության և այլ գիտությունների հետ համագործակցության մեջ՝ այն ամենի, «ինչ հնարավոր է պատմական համադրական հանդեսում»⁶¹:

Համադրական այս մոտեցումը կրկնակի կարևորություն ուներ. այն թույլ էր տալիս մարդուն պարզաբանել «և՛ իր ծագման, և՛ ապագայի առեղծվածը»⁶²: Ըստ էության՝ պատմական համադրության զգալի մասը նվիրված էր պատմության մեջ պատճառականության որոնման խնդրին, որի վերաբերյալ Բերրը կառուցել է շատ մանրամասն և բարդ սխեմա⁶³: Ըստ նրա՝ հանդիպում են պատճառական հարաբերությունների երեք տեսակ՝ պարզ հաջորդականություն, երբ փաստերն անմիջականորեն հաստատվում են ուրիշ փաստերով, մշտական հարաբերություններ, երբ փաստերը կապակցված են մյուսներին անհրաժեշտաբար, ներքին կապակցության հարաբերություններ, երբ փաստերը կապակցված են բնականոն ձևով: Այս տարասեռ պատճառական հարաբերություններին համապատասխանում են պատմական տարրերի երեք տեսակ՝ պատահարային կամ «կոպիտ» փաստեր, անհրաժեշտ փաստեր կամ սոցիալական օրինաչափություններ և «ներքին տրամաբանության» փաստեր: Վերջիններս ներկայացնում են «միտումների և տևողությունների տարրերը», որոնք կազմավորում են պատմական շարժման ուղղությունն ու շարունակականությունը⁶⁴:

⁶⁰ Sté H. Berr H., *L'Avenir de la philosophie. Esquisse d'une synthèse des connaissances fondée sur l'histoire*, Paris: Hachette, 1899, p. 510–511:

⁶¹ Sté H. Berr H., *Sur notre programme*, RSH, t. I, 1900, p. 1:

⁶² Sté H. Leroux R., *History and Sociology in France: From Scientific History to the Durkheimian School*, New York & London: Routledge, 2017, p. 72–73:

⁶³ Sté H. Агирре Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Кругъ, 2006, с. 71:

⁶⁴ Sté H. Berr H., *En marge de l'histoire universelle*, t. I, Paris: La

Ընդհանրացնելով իր տեսությունը՝ Բերրը գրում է. «Որքա՞ն հեռու է տարածվում և ինչպե՞ս է գործում երեք տարրերի գուգակցությունը, պատահարայնության (զուտ հաջորդականություն), անհրաժեշտության (անշարժություն կամ կրկնություն), թե՞ տրամաբանության (միտում և տևողականություն) գերակայությամբ՝ մենք չգիտենք: Գիտությունը դեռ նոր է սաղմնավորվում»⁶⁵: Հարցադրում, որից էլ սկզբնավորվում է Աննալների դպրոցը:

Բ. Լյուսիեն Ֆերի և Մարկ Բլոկի պատմության տեսությունը

Աննալների հիմնադրման պահից ի վեր Լյուսիեն Ֆերն ու Մարկ Բլոկն իրենց առջև նպատակ էին դրել պայքարել «ընդդեմ սահմանազատման, ներփակության, անջրպետման, որոնք աղճատում, մեկուսացնում են պատմությունը»⁶⁶: Նրանք հաստատում էին պատմագիտության վերակերպման խիստ անհրաժեշտությունը⁶⁷:

Մինչ Հանդեսը Ֆերն ու Բլոկն իրենց հոգվածներում և մենագրություններում բազմիցս հանդես էին եկել ընդդեմ պատմության *a priori* գնահատման և, ի հակադրություն հին հայացքների, ձգտում էին պատմության մեջ գտնել այն առանցքայինը, որի շուրջ հնարավոր կլիներ համախմբել առաջին հայացքից միմյանցից տարանջատ գործընթացները, իրադարձությունները, հասարակական խմբերն ու առանձին մարդկանց: Ինչպես նշել ենք, համանման պատմահետազոտական խնդիր էին հետապնդում էմիլ Դյուրկ-

Renaissance du livre, 1934, p. 7:

⁶⁵ Berr H., *La synthèse en histoire. Essai critique et théorique*, Paris: F. Alcan, 1911, p. 159.

⁶⁶ Bloch M., *Le congrès des sciences historiques d'Oslo (1928)*, AHÉS, I, (1929), p. 73.

⁶⁷ Sté H. Burke P., *op. cit.*, p. 6:

Հայմի սոցիոլոգիան, Վիդալ դը Լա Բլաշի մարդկային աշխարհագրությունը և հատկապես Անրի Բերրի պատմական համադրությունը: Նույն նպատակն էին հետապնդում նաև գերմանական հումանիտար մտքի ծիրում մշակված պատմական օրինաչափությունների (Կառլ Մարքս), պատմական իդեալական կառուցակերպերի (Մաքս Վեբեր), պատմության բանական կարգաբերման (Վիլհելմ Դիլթայ), բնագիտության և պատմության ներհակության (Վիլհելմ Վինդեբանդ, Հայնրիխ Ռիկկերտ), սոցիոհոգեբանական պատմության (Կառլ Լամպրեխտ), պատմական գիտելիքի իրրև քաղաքակրթական ինքնագիտակցության (Բենեդեկտտո Կրոչե, Յոհան Հայդինգա) այլազան տեսությունները⁶⁸:

Ֆեբրն իր հետազոտական գործունեությունը սկսել է որպես աշխարհագրագետ⁶⁹: Ավելի ուշ նա իր հետազոտության գիտաթեման դարձրել է Վաղ աղի դարերի և Նոր դարերի եվրոպայի պատմությունը՝ նշանակալի տեղ հատկացնելով Վերածննդի մշակույթի պատմությանն ու պատմական հոգեբանությանը:

Նրա առաջին մենագրության մեջ՝ Ֆիլիպ II-ը և Ֆրանչ-Կոնտեն⁷⁰, արդեն առկա էր հարակից գիտակարգերի հետազոտական մեթոդների և արդյունքների միջոցով պատմությունը համաբերելու և ընդհանրացնելու մոտեցումը: Դա մի փոքրիկ շրջանի՝ Ֆրանչ-Կոնտեի պատմությունն է Կառլոս V-ի (1516–1555) կառավարման անցումային լար-

⁶⁸ Այս տարասեռ տեսությունների համահավաք քննադատությունը տես Marwick A., *The New Nature of History, Knowledge, Evidence, Language*, London, 2001, pp. 41–42, 56–59, 94–96, 119–126 etc:

⁶⁹ Տես Հովհաննիսյան Ս., Լյուսիեն Ֆեբր. «Կենդանի պատմության» տեսությունը, Ստեփանյան Ա. (խմբ.), *Պատմության հարցեր* 2, Երևան, Զանգակ-97, 2013, էջ 225–238:

⁷⁰ Febvre L., *Philippe II et la Franche-Comté. Étude d'histoire politique, religieuse et sociale*, Paris: Honoré Champion, 1911. Ընդամենը Ֆեբրը Ֆրանչ-Կոնտեի վերաբերյալ ունի ևս երկու այլ մենագրություններ՝ Febvre L., *Notes et documents sur la Réforme et l'Inquisition en Franche-Comté*, Paris: Honoré Champion, 1912. *Idem*. *Histoire de Franche-Comté*, Paris: Honoré Champion, 1912:

ված պայմաններում, որոնց հետևանքով դա՛հը հանձնվում է նրա որդի Ֆիլիպ II-ին (1555–1598): Այս հետազոտության առանցքը դեռ քաղաքական պատմությունն էր, բայց Ֆեբրը հետազոտական դաշտ էր ներբերում հասարակական և կրոնական բախումների խնդիրը՝ շեշտը մասնավորապես դնելով բնական-աշխարհագրական միջավայրի և մարդկության փոխհարաբերությունների վրա: Ավելի կոնկրետ՝ Ֆեբրը հետազոտում էր ոչ միայն Նիդեռլանդների հակաիսպանական ապստամբությունները (1566–1609) և բացարձակ միապետության կայացումը, այլև երկու սոցիալական դասերի՝ ազնվականության և բուրժուազիայի «կատաղի» պայքարի պատմությունը⁷¹: Նա համադրում էր մի կողմից՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական կառույցների և մյուս կողմից՝ աշխարհագրական միջավայրի, մշակույթի, մարդկանց մտայնությունների (mentalités)⁷² ու վարքի բարդ կապերն ու փոխազդեցությունները: Ուրվագծվում էր քաղաքակրթական ընկալումը: Ֆեբրի այս հետազոտության մեջ արդեն տեսնում ենք հասարակական դասերի և խմբավորումների բախումների, աղքատության, «մարդկանց գերածի», գների տատանումների, բնական աղետների (1584–1585 թթ. ժանտախտը), ավատատիրական կարգերի քայքայման և բուրժուազիայի բարձրացման պատմությունը: Գլխավոր դերակատարը մարդն է. «Մարդու մասնակցությունը տիրապետող է: Նա պետք է կոփի իր երկիրն ու դրա քաղաքական ամբողջությունը»⁷³:

Ֆեբրի գիտական գործունեության առաջին շրջանի մյուս նշանավոր աշխատությունը դեռ Առաջին աշխարհամարտից առաջ նախաձեռնած Երկիրը և մարդկության էվոլյուցիան⁷⁴ հետազոտությունն է, որի ենթավերնագիրը՝

⁷¹ Տես Febvre L., *Philippe II et Franch-Comté ...*, p. 9:

⁷² Մտայնությունների պատմությանը մանանրամասն կանգրադատանք Երրորդ գլխի համապատասխան բաժնում:

⁷³ Febvre L., *Philippe II et Franch-Comté ...*, p. 30–31.

⁷⁴ Febvre L., *La Terre et l'évolution humaine. Introduction geogra-*

«Պատմության աշխարհագրական ներածություն», արդեն իսկ խոսում է թեմայի մեջ աշխարհագրական գործոնի առանցքայնության մասին: Այն գրվել էր Բերրի «Մարդկության էվոլյուցիան» ծրագրային մատենաշարի համատեքստում և վերաբերում էր մարդկության նախապատմությանն ու հին շրջանին: Այս հետազոտությունը ևս նվիրված է մարդկության վրա աշխարհագրական միջավայրի ազդեցության խնդրին: Ֆեբրե անհրաժեշտություններին հակադրում էր հնարավորությունները. «Անհրաժեշտություններ՝ ոչ մի տեղ, հնարավորություններ՝ ամենուր»⁷⁵: Շեշտվում էր, որ «իրական, միակ աշխարհագրական խնդիրը հնարավորությունների օգտագործման խնդիրն է»⁷⁶: Հաջող փորձ էր կատարվում համադրելու «մարդկային աշխարհագրություն» (լաբլաշականություն) և «հասարակական ձևաբանություն» (դյուրկհայմականություն) հակամետ հղացքները: Այդ հետնախորքի վրա Ֆեբրե կարողացավ ակադեմիական սահմաններից դուրս հետազոտական մի նոր դաշտ ձևավորել: Դա նրան թույլ տվեց կատարել համընդգրկուն համադրություն⁷⁷: Ըստ նրա՝ համադրական պատմության ծիրում է հնարավոր աշխարհագրության և սոցիոլոգիայի երկխոսությունը⁷⁸: Ֆեբրե փորձում էր ցույց տալ, որ պատմության մեջ «ամեն ինչ կապակցված է, բայց ոչինչ մեկնաբանված չէ»⁷⁹: Նա հակադրվում էր գերմանական աշխարհաքաղաքական դպրոցին և «մարդկային աշխարհագրության» հիմնադիրներից մեկին՝ Ֆրիդրիխ Ռաթցեյլին, որը մարդկության (և մարդկանց) ճակատագրում բացարձակացնում էր աշխարհագրական միջավայրի

phique à l'histoire («L'évolution de l'Humanité»), Paris: Albin Michel, 1922.

⁷⁵ Ibid., p. 284.

⁷⁶ Ibid., p. 425.

⁷⁷ Տե՛ս Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France: 19^e-20^e siècle*, Paris: Armand Colin, 2005, p. 119:

⁷⁸ Տե՛ս Dosse F., *op. cit.*, p. 74:

⁷⁹ Febvre L., *La Terre et l'évolution humaine...*, p. 257.

դերը⁸⁰: Այս կապակցությամբ Ֆեբրե շեշտում էր, որ տվյալ աշխարհագրական միջավայրը պատմության մարտահրավերներին կարող է տալ տարբեր պատասխաններ: Ամեն ինչ կախված է մարդկային (և հասարակական) գործոններից⁸¹: Այլ խոսքով՝ Վիդալ դը Լա Բլաշի աշխարհագրական հայեցակարգը Ֆեբրի համար հիմք էր՝ կատարելու դինամիկ և բաց հետազոտություն, որի ծիրում ուրվագծվում են միջդատակարգային երկխոսությունները:

Նույն մտացմամբ Ֆեբրե անդրադառնում է նաև մտայնությունների պատմությանը (histoire des mentalités): Նրա համար կարևոր են նաև «պատմության հոգեբանական տվյալները»⁸²: Մտայնության և հոգեբանության համադրության արդյունք դարձան Մի ճակատագիր. Մարտին Լուիթեր⁸³ և Անհավատության խնդիրը XVI դարում. Ռաբլեի կրոնը⁸⁴ մենագրությունները: Առաջինը նվիրված էր XVI դարի առաջին կեսին գերմանական հասարակության և Մարտին Լուիթերի միջև առաջացած լարվածությունն ու ռեֆորմացիոն շարժման խնդիրներին: Իսկ մյուսը՝ XVI դարի մարդկանց և հասարակական միջավայրի փոխհարաբերությունների խնդիրներին՝ Ռաբլեի ստեղծագործության

⁸⁰ Այստեղ նկատենք, որ ֆրանսիացի աշխարհագրագետների մտահոգությունները տարբեր էին գերմանական Geopolitiker-ների մտահոգություններից, ինչպես նաև այդ ժամանակ տարածում գտած անգլիացի աշխարհաքաղաքագետ Հելֆորդ Մըքինդերի ռազմավարական կարգի և ուժի որոնումներից: Ֆրանսիացի աշխարհագրագետները կարևորում էին ակտիվ քաղաքական աշխարհագրությունը՝ ձգտելով լուծել ընթացիկ խնդիրները և խուսափել ապագա կոնֆլիկտներից: Տե՛ս Muet Y., *Les géographes et l'Europe. L'idée européenne dans la pensée géopolitique française de 1919 à 1939*, Geneva: Europa, Institut européen de l'Université de Genève, 1996, p. 19:

⁸¹ Febvre L., *La Terre et l'évolution humaine...*, p. 257.

⁸² Dosse F., *op. cit.*, p. 78.

⁸³ Febvre L., *Un Destin. Martin Luther*, Paris: Presses Universitaires de France, 1928.

⁸⁴ Febvre L., *Le problème de l'incroyance au XVI^e siècle. La religion de Rabelais, L'évolution de l'humanité*, Paris: Albin Michel, 1942, Rééd., 1968.

և կենսագրություն, մասնավորապես՝ հավատի և անհավատության համատեքստում: Դրանցում Ֆեբրը մեկնարկում էր Անրի Բերրի «պատմությունը հոգեբանություն է» դրույթից՝ հակադրվելով մարդու (կամ մարդկության) մեկուսի դիտարկմանը: Մտային և հոգեբանական աշխարհների համադրական վերլուծությունն իրականացնելու նպատակով նա իր սեւեռումի կենտրոնում պահում էր անհատականության խնդիրը: Մարտին Լութերի և Ֆրանսուա Ռաբլեի⁸⁵ հոգեբանությունը (ներաշխարհը) նա դիտարկում է XVI դարի մտայնության հետ, փորձում պարզել այն միջավայրը, այն բանական միջավայրը, ուր կայացել է նրանց աշխարհատեսությունը. «Յուրաքանչյուր դարաշրջան բանականորեն արարում է աշխարհի իր սեփական պատկերը»⁸⁶: Վեր են հանվում այդ ժամանակների համակեցական կյանքը և մարդկանց մտածողությունը, որոնք բոլորովին այլ են եղել: Նա ձգտում էր XVI դարը կարգալ նաև ոչ «XX դարի մարդու», այլ XVI դարի մարդու աչքերով⁸⁷: Ակնհայտ է դառնում, որ մտայնության տիրույթում հան-

⁸⁵ Այդ նույն ժամանակ ռուս խոշոր բանասեր Միխայիլ Բախտինը, դարձյալ մեկնարկելով զանգվածային գիտակցության հիմնախնդրից, առաջադրում է հումանիտար հետազոտության մեկ այլ կառնավալային ծիծաղի մշակույթի ուղղությունը: Բախտինի՝ Ռաբլեի վերաբերյալ հետազոտության մեջ վերաբեռվում են այդ մշակույթի խորքային շերտերը, ինչը Հարցականի տակ էր դնում ողջ ընտրանու «լուրջ» մշակույթի հիմնարար արժեքները՝ վերակերպելով և Հարաբերականացնելով դրանք (տես **Бахтин М. М., Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса**, Москва: Художественная литература, 1965): Բախտինը ծանոթ էր Ֆեբրի հիշյալ աշխատությանը և քննադատեց Ֆեբրին այդ կառնավալային կամ ծիծաղային մշակույթը չըմբռնելու մեղադրանքով, քանի որ վերջինս Ռաբլեի տեքստը դիտարկել էր «լուրջ» մշակույթի հարթության վրա: Այս մասին տես **Гуревич А. Я., Исторический синтез и Школа «Анналов»**, 2-е изд., доп. и испр., Москва: Центр гуманитарных инициатив, Университетская книга, 2014, с. 70–75.

⁸⁶ **Febvre L., Le problème de l'incroyance...**, p. 2.

⁸⁷ **Bourde G., Martin H., Les Écoles historiques**, Paris: Editions du Seuil, 1997, p. 221.

դիպում և համադրվում են պատմության անհատական և հավաքական ձգտումները⁸⁸: Եվ Լյուսիեն Ֆեբրի հետազոտությունը սոսկ Մարտին Լութերի կենսագրությունը չէր, այլ «մարդու և հասարակության միջև առկա փոխհարաբերությունների խնդրի քննարկումը»⁸⁹: Նրա հետազոտությունը դուրս էր գալիս քաղաքական պատմության ավանդական սահմաններից՝ լրացուցիչ խորություն հաղորդելով պատմական ընկալմանը: Մենագրությունների մեջ Ֆեբրը լուծել է հիմնական երկու խնդիր. ցույց է տվել տարբեր դարաշրջանների մարդկանց մտայնությունների տարբերությունը և մտայնությունների ու սոցիալական կյանքի բարդ փոխհարաբերությունները: Այսպիսով Ֆեբրը պատմագիտական հետազոտության տիրույթ ներբերեց մտային փաստերը քաղաքակրթությունների լայն հետնախորքի վրա դիտարկելու խնդիրը:

Ի տարբերություն Լյուսիեն Ֆեբրի՝ Մարկ Բլոկն առանձնահատուկ հակում ուներ դյուրեկհայմյան սոցիոլոգիայի հանդեպ⁹⁰: Նա էլ իր հետազոտական աշխատանքը սկսեց աշխարհագրական հարացույցից: Նրա Իլ-դը-Ֆրանսու երկրամաս՝ Փարիզի շուրջը⁹¹ մենագրության մեջ նույնպես առկա էր «խնդրային կողմնորոշումը»: Այստեղ նա, ինչպես Ֆեբրը, մի փոքրիկ երկրամասի տեղային պատմության հետնախորքի վրա վերակառուցում է դարաշրջանի ընդհանուր պատկերը:

⁸⁸ Տես **Ricoeur P., La mémoire, l'histoire, l'oubli**, Paris: Éditions du Seuil, 2000, p. 242:

⁸⁹ **Burke P., op.cit.**, p. 21.

⁹⁰ Տես **Հովհաննիսյան Ս., Մարկ Բլոկը և Աննաների դպրոցը. Մարդաբանական և համադրական պատմության մեթոդաբանությունը. Մարկ Բլոկ, Պատմության պաշտպանական, կամ Պատմաբանի արհեստը /Ֆրանսու. Թարգմ. Ե. Մակարյան, Հոգված և ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Սարգիս Խաչենց, Փրինսիփոն, Անտարես, 2018, էջ V–XXXVIII:**

⁹¹ **Bloch M., L'Île-de-France: les pays autour de Paris**, Paris: Ed. Mignot et J. Tallandier, 1913.

Մեկնարկելով աշխարհագրական հետազոտության մեթոդաբանությունից՝ Բլոկն առաջնորդվում էր դյուրելհայմյան սոցիոլոգիայի և պատմագիտության երկխոսայնացման մեթոդով: Եվ շատ դեպքերում աշխարհագրությունը նա փոխարինում է սոցիոլոգիայով⁹²: Ներկայացնելով Իլդը-Ֆրանսը որպես առանձին տարածքային միավոր⁹³ Բլոկին հաջողվել է համադրել իրավական, տնտեսական և հնագիտական մոտեցումները: Ի տարբերություն Ֆեռի՝ նա այս աշխատությունում ավելի շատ ներդրում ունի սոցիոլոգիայի, քան աշխարհագրության և պատմության մեջ⁹⁴: Այդուամենայնիվ, թե՛ Ֆեռի և թե՛ Բլոկի մոտ արդեն ուղղվածվում էր միջգիտակարգային համադրական մոտեցումը:

Բլոկի միջգիտակարգային համադրությունն ավելի վառ արտահայտություն է գտավ նրա Հրաշագործ արքաները⁹⁵ մենագրության մեջ: Դրա առանցքը «ձեռնադրման ճանապարհով» Ֆրանսիական և անգլիական արքաների՝ գեղձախտով հիվանդներին բուժելու ունակության հանդեպ հավատի սոցիալ-իմացաբանական քննությունն է: Հեղինակն սկսում է գեղձախտի վերաբերյալ XIV–XVI դարերի բժշկությանը հայտնի բոլոր տվյալների համակարգումով: Միջնադարյան այդ հիվանդությունն այնքան տարածված էր, որ «բուժում տենչացող անթիվ հիվանդներ պատրաստ էին դիմելու ցանկացած միջոցի, որ ցուցանում էր ավանդույթը: Ահա այն մեկնակետը, որն անպատճառ պետք է նկատի ունենա հետազոտողը «արքայական հրաշքն» ուսումնասիրելիս»⁹⁶: Բլոկը դիմում էր հարակից մի շարք

գիտակարգերի ձեռքբերումներին, այդ թվում՝ հավաքական հոգեբանության, մտայնությունների պատմության, համադրական ազգաբանության, կենսաբանության, բժշկության, սոցիալական պատմության և բանասիրության: «Արքայական հրաշքի» հանդեպ հավատի պատմությունը՝ ծագումը, տարածումը և աստիճանական անկումը, մենագրության մեջ դիտարկվում է Միջնադարի և Վաղ նոր դարերի քաղաքակրթական համատեքստում: Հետազոտողները մենագրության ձեռքբերումներից առանձնացնում են հրեքը: Առաջին Բլոկը չի սահմանափակվել սոսկ պատմական մի ժամանակով, ինչպիսին են Միջնադարը կամ Վաղ նոր դարերը, այլ ընդգրկել է ավելի մեծ պատմական տևողություն, որը հետագայում Ֆեռնան Բրոդելի կողմից զարգացվել է որպես «երկար տևողություն»⁹⁷: Երկրորդ խոշոր ներդրում էր «սոցիալական հոգեբանության» պատմական աղբյուր ուսումնասիրությունը, որն իր արտածական (դեդուկտիվ) ներգործությունը ունակ է վերափոխելու հասարակական կյանքի շատ տիրույթներ՝ սկսած տնտեսությունից ու քաղաքականությունից մինչև կրոն և մշակույթ: Եվ երրորդ՝ Բլոկը զարգացրել է «համադրական պատմության» ըմբռնումը և «արքայական հրաշքի» առիթով բացել քաղաքակրթական խորքային իրողություններ⁹⁸: Մեկ այլ առանձնահատկություն ևս՝ մենագրությունում, ըստ էության, հաղթահարված է իրադարձային պատմությունը: Մեկնարկելով առանձին փաստերից ու իրադարձություններից՝ Բլոկը հանգել է սկզբնաղբյուրների համալիր քննության՝ վեր հանելով դրանց «ընթերցման» նոր հնարավորություններ:

Պատմության բոլոր գործոնները փոխկապակցված են քաղաքակրթական ամբողջի մեջ: Ուստի պատահական չէր, որ Բլոկը միջնադարյան մտայնություններից հետո «հանկարծ» անդրադարձավ Ֆրանսիայի տնտեսական պատ-

⁹² Stéven Stengers J., Marc Bloch et l'histoire, *AÉSC*, 3, (1953), p. 332:

⁹³ Dosse F., *op.cit.*, p. 74.

⁹⁴ Stéven Burke P., *op.cit.*, p. 19:

⁹⁵ Bloch M., *Les Rois thaumaturges. Étude sur le caractère surnaturel attribué à la puissance royale particulièrement en France et en Angleterre*, Strasbourg et Paris: librairie Istra, 1924.

⁹⁶ Блок М., *Короли-чудотворцы: Очерк представлений о сверхъестеств. характере королев. власти, распростр. преимущественно во Франции и в Англии*, Москва: Яз. рус. культуры, 1988, с. 94.

⁹⁷ Stéven Le Goff Ж., Предисловие, в Блок М., *Короли-чудотворцы...*, с. 25:

⁹⁸ Stéven Burke P., *op.cit.*, p. 19–20:

մուծյան խնդիրներին: Դրա արտահայտությունը դարձան նրա Ֆրանսիական ազդարային պատմության բնորոշ գծերը⁹⁹ և Ավատատիրական Հասարակությունը¹⁰⁰ մենագրությունները: Դրանց գիտախնդիրը Ֆրանսիական ազդարային կառույցի և ավատատիրական Հասարակության պատմությունն է ժամանակի երկար տևողությունում (VIII–XIX դդ.): Որպեսզի ընդգծի Ֆրանսիայում կայացած ազդարային հարաբերությունների և ավատատիրական Հասարակության առաձևահատկությունները, նա ծավալուն Համեմատություններ է անցկացնում Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի և Իսպանիայի ավատատիրական Հասարակությունների միջև: Ուշադրությունը սևեռում է սոցիալական-տնտեսական և մշակութային գործընթացների խորքային շերտերի վրա:

Իր առջև դնելով Հասարակական կառույցի բովանդակությունը Հնարավորինս Համապարփակ մեկնաբանելու խնդիրը՝ Բլոխը Հանգում է այն գաղափարին, որ բավական է միայն սկզբնաղբյուրների իմացությունը: Հասարակական կառույցի խորքային կողմերը բացահայտելու Համար Հարկ է փաստերը դիտարկել ամբողջական Համակարգերի, Հասարակական այլ զուգակցությունների Համատեքստում, որոնցում ներառված են դրանք և որոնցով իմաստավորվում են: Այս կերպ, ըստ Բլոխի՝ «Եվրոպական ավատատիրությունը, իրեն բնորոշ Հաստատություններով, արխայիկ վերապրուկների ինչ-որ Հյուսվածք է: Այն ծնունդ է առել մի ամբողջ սոցիալական միջավայրից»¹⁰¹: Երևույթի նման խնդրարկումը պայմանավորված է նրանով, որ Հետազոտողն իր ուշադրությունը պետք է սևեռի ոչ թե «կյանքից կտրված» տեսություններին, այլ «մտքերի և զգացմունք-

ների ուղղվածությունը, որոնց ազդեցությունը սոցիալական պատկերացումների վրա, ըստ էության, ավելի նշանակալի է եղել»¹⁰²: Հասարակական կառույցների, ազդարային հարաբերությունների, ծեսերի և արարողակարգերի վերլուծությունը, որոնցով Հագեցած էր միջնադարյան Համակցությունը, Բլոխին թույլ է տալիս կատարել ավատատիրության «կենդանի իրականություն» Հետազոտումը քաղաքակրթական խորություններով:

Ֆեֆրի և Բլոխի այս Հետազոտությունները, չնայած շեշտադրումների որոշակի տարբերությունը, անտարակույս փոխըացնում են միմյանց: Դա երևում էր Հանդեսում Հրապարակված նրանց Հոդվածներում: Սակայն փոխըացումն առավել ցցուն էր նրանց տեսական-ընդհանրացնող աշխատություններում: Նկատի ունենք Ֆեֆրի Մարտեր պատմության Համար¹⁰³ և Բլոխի Պատմության պաշտպանական (ապոլոգիան), կամ պատմաբանի արհեստը¹⁰⁴ մենագրությունները, որոնք ներկայացնում են, թե ինչպիսին պետք է լինեն պատմությունն ու պատմաբանի աշխատանքը (արհեստը):

Ինչպես նշել ենք, նրանք մեկնարկում էին Անրի Բերրի մարդաբանությունից: Նրանց Համար պատմության Հիմնարար չափումը մարդն էր՝ իրեն շրջապատող աշխարհագրական և սոցիալական միջավայրի Հետ ունեցած փոխհարաբերության ողջ բարդությունը: Եվ բնավ պատահական է, որ Բլոխը պատմաբանին Համեմատում է «մարդակերի» Հետ. «Լավ պատմաբանը նման է առասպելական մարդակերին: Նա գիտի, որ իր որսն այնտեղ է, որտեղից մարդամսի Հոտ է գալիս»¹⁰⁵: Համաձայն Ֆեֆրի՝ «Պատմության չափորոշիչը մարդն է: Ավելին՝ պատմությունը նրա գոյության

⁹⁹ Bloch M., *Les Caractères originaux de l'histoire rurale française*, Paris: Armand Colin, 1931.

¹⁰⁰ Bloch M., *La société féodale*, t. 1, *La formation des liens de dépendance*, Paris: Albin Michel, 1939. Bloch M., *La société féodale*, t. 2: *Les classes et le gouvernement des hommes*, Paris: Albin Michel, 1940

¹⁰¹ Բլոխ Մ., նշվ. աշխ., էջ 79:

¹⁰² Bloch M., *La société féodale*, Paris: Albin Michel, 1982, p. 130.

¹⁰³ Febvre L., *Combats pour l'histoire*, Paris: Librairie Armand Colin, 1953.

¹⁰⁴ Bloch M., *Apologie pour l'histoire ou Métier d'historien*. («Cahiers des Annales», 3). Paris: Librairie Armand Colin, 1949, Rééd. 1993.

¹⁰⁵ Բլոխ Մ., նշվ. աշխ., էջ 70:

արտահայտումն է»¹⁰⁶: Շարունակելով այս միտքը՝ նա մասնավորեցնում էր. «ոչ [ուղղակի] մարդը, և կրկին՝ երբեք մարդը, այլ մարդկային հասարակությունները, կազմակերպված խմբերը»¹⁰⁷: Ֆեբրե և Բլոկը փորձում էին մարդուն դուրս բերել մեկուսացվածությունից, քանզի «մեկուսացված մարդը վերացականություն է, իսկ իրականությունը մարդն է սոցիալական խմբի կազմում»¹⁰⁸: Այստեղից էլ «Պատմությունը գիտություն է մարդու մասին, մարդկային անցյալի մասին, այլ ոչ թե առարկաների կամ գաղափարների մասին»¹⁰⁹: Այդու՛ սոցիալ-ընդհանրացված մարդը փոխարինվում էր կոնկրետ սոցիալական խմբում գտնվող կոնկրետ մարդով՝ իր բազմազան հարաբերություններով հանդերձ: Ուստի մարդուն ընկալելով իբրև պատմական ճանաչման առանցք՝ պատմաբանը չպետք է նրան տարանջատի իր կեցության իրական պայմաններից, կոնկրետ տեղից ու ժամանակից, այլ ուշադրությունը պետք է կենտրոնացնի սոցիալական խմբերի ու նրանց փոխհարաբերությունների վրա¹¹⁰: Թե՛ Ֆեբրե և թե՛ Բլոկի համար սոցիալական խմբերն ու նրանց փոխհարաբերությունները պատմագիտության համար մեկնարկային նշանակություն ունեն. «Մեր հետազոտության օբյեկտը հանուր իրականության ինչ-որ բեկորը, մարդկային գործունեության մեկուսի կերպը է»¹¹¹:

Աննալների հիմնադիրները, մեկնարկելով «մարդուց առ հասարակությունը» և «մարդկանց հարաբերումը միմյանց ու արտաքին միջավայրի հետ» հասկացություններից, հանդեցին հետազոտության խնդրի վերանայմանը: Ըստ նրանց՝ պատմություն-պատումի փոխարեն այսու-

հետ հարկ էր պատմաբանի հետազոտություն առարկան դարձնել պատմություն-խնդիր: Ի տարբերություն պատմություն-պատումի, որի շարադրանքը կազմակերպվում է դեպքերի, դեմքերի, իրադարձությունների, փաստերի կամ ժամանակագրության շուրջ, պատմություն-խնդիրն անցյալի մասին մեր գիտելիքները կազմակերպելու մի նոր միջոց է, որի նպատակն է կենտրոնացնել մեր գիտելիքները շատ կոնկրետ խնդրի վրա, որը սովորաբար սահմանվում է հարցով և ենթահարցերով¹¹²: Առաջինի դեպքում ակտիվ է նկարագրությունը, երկրորդի դեպքում՝ բացատրություն-մեկնաբանությունը: Ընդամին՝ պատմություն-խնդիրն ապահովում է նաև պատմության գիտականությունը: Իսկ պատմագիտական յուրաքանչյուր աշխատության կարևորությունը որոշարկվում է նրա առաջադրած հարցերի կարևորմամբ: Դրանք ձևակերպում է պատմաբանը՝ լծվելով ստեղծագործական աշխատանքի¹¹³: «Հետազոտության իսկական նախապայմանը նրա խնդիրն է», – գրում էր Ֆեբրե¹¹⁴: Բլոկն իր հերթին հավելում էր. «Փաստերի հետազոտման մեջ որքան խնդիրները տիրապետող լինեն, այնքան մեր հետազոտությունն ավելի կմոտենա այն բանին, ինչը սոցիալական գիտությունների մեջ պատմության իսկական գործառույթն է»¹¹⁵: Միով բանիվ՝ պատմաբանը ձևակերպում է իր հետազոտական խնդիրը և ըստ այդմ էլ ընտրում այն հուշարձանները, տեղեկություններն ու փաստերը, որոնց վերլուծությունը կարող է լույս սփռել դրա վրա: Հարցադրող-հետազոտողը չի բավարարվում փաստի ուղղակի մեջբերումով, այլ փնտրում է այն, ինչը փաստից անդին է՝ փորձելով հասկանալ երևույթների ներքին

¹⁰⁶ Febvre L., *Combats pour l'histoire...*, p. 103.

¹⁰⁷ Febvre L., *La Terre et l'évolution humaine...*, p. 198.

¹⁰⁸ Febvre L., *Combats pour l'histoire...*, p. 15.

¹⁰⁹ Ibid., p. 12.

¹¹⁰ Տե՛ս Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 71:

¹¹¹ Febvre L., *Combats pour l'histoire...*, p. 21.

¹¹² Stéu Massicotte G., *L'histoire problème. La méthode de Lucien Febvre, St-Hyacinthe (Québec), Edisem Inc., et Paris: Maloine, S.A., 1981*, p. 41:

¹¹³ Febvre L., *Combats pour l'histoire...*, p. 356.

¹¹⁴ Stéu Febvre L., *La France physique: question de méthode, AHS*, 1, (1943), p. 93:

¹¹⁵ Bloch M., Louis Baudin, *La réforme du crédit, AHS*, 1, (1940), p. 161.

կապերը¹¹⁶: Այսու՝ փաստն ինքնին երկխոսությունն է, ուստի պատմաբանը պետք է սովորի հարցեր տալ, քանի որ «պատմական փաստերը, անգամ ամենաանշանները, կյանքի է կոչում պատմաբանը»¹¹⁷: Ուստի վավերագրերն ու վկայությունները, բնագրերն ու սկզբնաղբյուրները «խոսում են լոկ այն ժամանակ, երբ դրանք հարցաքննել գիտես»¹¹⁸: Հարցադրումը, եթե այն արհեստավարժ-տեղին է կազմակերպված, պիտի «մագնիս ծառայի փաստաթղթի խարտուքի համար»¹¹⁹: Հարց, որն առանձնակի շեշտադրումով միտված է դեպի ինքնաճանաչում. «Հարկ է ստիպել համր իրերին խոսել, որպեսզի նրանք պատմեն իրենց և իրենց ստեղծողների մասին այն, ինչը նրանք չեն ցանկանում ասել»¹²⁰: Հետևաբար՝ չկա հարց կամ խնդիր՝ չկա փաստաթուղթ և չկա անգամ փաստ: Այն է՝ հենց պատմաբանի առաջադրած

¹¹⁶ Sté Fevre L., *Un destin ...*, p. 104:

¹¹⁷ Fevre L., *Combats pour l'histoire ...*, p. 23.

¹¹⁸ Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 110: Նկատենք, որ Բլոկի այս մոտեցումը գուցե որդեկալի է Ֆրանսիացի հայտնի մաթեմատիկոս և ֆիզիկոս Անրի Պուանկարեի (Henri Poincaré, 1854–1912) մոտեցմանը: Ըստ Պուանկարեի՝ գիտությունն օրենքները չեն վերաբերում իրական աշխարհին, այլ ներկայացնում են կամավոր համաձայնություններ (կոնվենցիաներ), որոնք էլ ծառայում են համապատասխան երևույթների առավել հարմար և օգտակար նկարագրությանը: Ըստ այդմ՝ ցանկացած գիտական տեսության հիմնարար դրույթները, սկզբունքներն ու օրենքները ոչ արհեստական համադրական ճշմարտություններ են, ոչ էլ օբյեկտիվ իրականության ավարտուն մոդելներ: Կոնվենցիոնալիզմի տեսության համատեքստում էլ դիտարկելի է Պուանկարեի «Գիտություն և վարկած» (1905) աշխատությունը, որտեղ նա, հակադրվելով Բերտրան Ռասսելին (Bertrand Russell, 1872–1970) և Գոթլոբ ֆրեյգեին (Gottlob Frege, 1848–1925), որոնք գտնում էին, թե մաթեմատիկան տրամաբանության ճյուղն է, պնդում է, որ ինտուիցիան է մաթեմատիկայի կյանքը: Ավելի կոնկրետ՝ «Մաթեմատիկոսը, առավել ևս փորձարարը, չի կարող զլուխ հանել առանց վարկածի», քանզի «Ամենայն ընդհանրացում վարկած է: Ուստի վարկածը անհրաժեշտ դեր է խաղում, որը ոչ ոք երբևէ չի վիճարկել: Միայն թե այն պետք է միշտ ենթարկվի ստուգման» (Poincaré H., *Science and hypothesis*, New York: Dover Publications, 1952 p. xxii, 150):

¹¹⁹ Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 111:

¹²⁰ Fevre L., *Combats pour l'histoire...*, p. 428.

հարցի (խնդրի) շնորհիվ է, որ անցյալի թողած որոշ հետքեր ձեռք են բերում սկզբնաղբյուրների և փաստաթղթերի արժեք: Ավելին՝ հարցադրումների կամ խնդրարկումների շնորհիվ է նաև, որ գիտական կարգավիճակ են ձեռք բերում՝ ներգրավվելով ժամանակի խնդիրների դաշտում, օրինավորվում:

Ֆեւրն ու Բլոկը հակված չէին պատմաբանի մեջ տեսնելու դատավորի. պատմաբանի խնդիրը ոչ թե վճիռներ կայացնելն է, այլ հասկանալը¹²¹: Հակառակ դեպքում՝ «մարդկային իրականությունը [...] վերածվում է լոկ սև ու սպիտակ մի պատկերի»¹²²: Պատմական ճանաչողությունն էլ ավելի ընդլայնելու համար անհրաժեշտ է առավել ակտիվ վերաբերմունք մշակել առ հուշարձանները, փաստերը. «[Պատմաբանը] փնտրում է պատճառահետևանքային ալիքների շարաններ և չի ահաբեկվում դրանց բազմությունից, քանզի կյանքում էլ դրանք այդպիսին են»¹²³: Ուստի հետազոտությունն սկսվում է ոչ թե փաստերի հավաքմամբ, այլ հարցադրմամբ և հարցերի նախնական ցուցակագրմամբ, որոնք հետազոտողն ուզում է տալ սկզբնաղբյուրներին¹²⁴: Այստեղից էլ Բլոկի դիպուկ ձևակերպումը՝ «պատճառները պատմության մեջ, ինչպես և, ի դեպ, այլ ոլորտներում, չեն կանխադրվում: Դրանք փնտրվում են...»¹²⁵, որին Ֆեւրն իր հերթին հավելում է՝ «պատմագետը նա չէ, ով գիտի, այլ նա, ով որոնում է»¹²⁶:

Ուսումնասիրողը պատմական խնդիրները ձևակերպում է՝ ելնելով արդիականությունից: Ներկայի մեջ անցյալի նման ներբերումը իրականացվում է հարց ու պատաս-

¹²¹ Sté Ibid., p. 120–121:

¹²² Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 189:

¹²³ Անդ, էջ 242:

¹²⁴ Sté Гуревич А. Я., Марк Блок и «Апология истории, в Блок М., *Апология истории, или Ремесло историка*, Москва: Наука, 1986., с. 204:

¹²⁵ Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 245:

¹²⁶ Fevre L., *Le problème de l'incroyance au XVI^e siècle. La religion de Rabelais*, Paris, Éditions Albin Michel, 1942, p. 1.

խանի մեթոդով՝ անցյալին առաջադրելով հարցեր, որոնք արդիական են: Ուստի «անմիջականորեն փաստաթղթային հետազոտությունը կարող է զրկվել ամենայն դիտական հետաքրքրությունից, եթե այն պատասխանում է լոկ այնպիսի հարցերի, որոնք արդիական չեն»¹²⁷: Ֆերն ու Բլոկը նշում էին, որ անցյալի պատմությունը չպետք է տարանջատվի արդիությունից, քանի որ արդիությունն ի գործ է պատմաբանի առջև բացելու անցյալի հեռանկարն իր ողջ խորությունամբ ու ընդգրկմամբ: Զեակերպելով իր խնդիրը և մեկնարկելով դրանից՝ պատմաբանը պետք է զգուշ լինի, որ արդիությունն «իր տակ չճզմի» անցյալը: Անցյալի մարդուն հարց ուղղող պատմաբանը երբեք չպետք է նրան պատասխաններ պարտադրի, այլ պետք է ականջալուր լինի նրա ձայնին ու փորձի վերակառուցել նրա անցյալն ու հոգևոր աշխարհը: Պատմության հետազոտությունը և ընդհանրապես պատմությունը արդիության և անցյալի (նաև ապագայի) հարատև երկխոսությունն է¹²⁸: Պատմաբանի մտահոգությունը տարածքում ծավալվող երկխոսությունն ապահովում է անցյալ-ներկա-ապագա շարակարգի շրջելիությունը, զրանով՝ ընդլայնումը: Այդու պատմաբանը «ճամփորդում» է ժամանակի մեջ, քանի որ գիտի «ներկան չհասկանալը անցյալի չիմացություն անխուսափելի հետևանք է: Բայց թերևս նույնքան էլ ապարդյուն է անցյալը հասկանալու ամեն ջանք, եթե ներկայի մասին ոչինչ չգիտես»¹²⁹:

Այս իմաստով պատմության հետազոտության ուղին ոչ թե միակողմանիորեն ձգվում է անցյալից ներկա, այլ նաև ներկայից անցյալ՝ հետադարձ կապի ակտիվացմամբ, որտեղ և կարևորվում է հետազոտողի ստեղծագործական

ակտիվությունը: Այդպես հաղթահարվում էր նաև պատմաբանի մեկուսացածությունը, քանի որ պատմությունամբ «կարելի է զբաղվել միայն փոխադարձ օգնությամբ»: «Որևէ մասնագետ, եթե մեկուսանա, ամեն ինչ միշտ թերի է հասկանալու, թեկուզ հենց սեփական ուսումնասիրության դաշտում»¹³⁰: Ուրվագծվում է պատմաբանի արհեստը, որը «գործադրվում է անհատական և թիմային աշխատանքների համակցումով»¹³¹, որից էլ՝ «Հավաքական պատմագրությունը»: Ֆերի դիպուկ ձևակերպմամբ՝ «Գիտությունը փղոսկրե աշտարակում ժամանակից և տարածությունից դուրս, գուտ մտավոր կյանքով ապրող անպտուղ գիտնականների մասնավոր և գաղտնի գործողությունների մեջ չէ»¹³²: Այստեղից էլ միջգիտակարգային համագործակցության անհրաժեշտությունը, մասնավանդ դիմելը նրանց աջակցությանը, ովքեր իրենց ոլորտում արդեն կազմակերպել են «Հավաքական հետազոտություններ»¹³³:

XIX դարի վերջի նշանավոր պատմաբան Ֆյոկստել դը Կուլանժը պնդում էր, որ պատմությունը «գիտություն է սոցիալական փաստերի մասին», և սկզբնաղբյուրներն են արարում պատմությունը: Պատմաբանը, ըստ նրա, պետք է հետազոտի պատմական գործընթացի բոլոր գործոնները՝ իրավունքը, տնտեսությունը, հոգևոր հմտությունները, սովորույթները, համակեցության ամբողջ կառույցը: Ավելին լիարժեք, ամբողջական սկզբնաղբյուր Ֆյոկստել դը Կուլանժը համարում էր միայն գրավոր սկզբնաղբյուրները՝ «տեքստերը»: Ավելի կոնկրետ՝ «Տեքստերը միշտ չէ, որ ճիշտ են, բայց պատմությունը կերտվում է միայն տեքստերով»¹³⁴: Դրան դեմ չէր Ֆերը, բայց ի հավելումն նա շեշ-

¹²⁷ Про А., Двенадцать уроков по истории, Москва: РГГУ, 2000, с. 87.

¹²⁸ Сын Гуревич А. Я., Жак Ле Гофф и «Новая историческая наука» во Франции, в Ле Гофф Ж., Цивилизация средневекового Запада, /Пер. с фр. общ. ред. В. А. Бабинцева, Послесл. Гуревич А. Я., Екатеринбург: У-Фактория, 2005, с. 533:

¹²⁹ Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 89:

¹³⁰ Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 93:

¹³¹ Լը Գոֆֆ ժ., Առաջաբան, Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 24:

¹³² Febvre L., Combats pour l'histoire ..., p. 56.

¹³³ Ֆեր Լ., Հանուն ուղղորդված պատմության. Համատեղ հետազոտությունները և պատմության ապագան /Թրգմ. ֆր.՝ Ս. Լովանինիսյան, «Վէմ» Համահայկական Հանդես, 4 (2012), էջ XII:

¹³⁴ Coulanges F. de, Histoire des institutions politiques de l'ancienne

տաղերում էր, որ «սկզբնաղբյուրների հիման վրա գրված պատմությունը, այդուամենայնիվ, գրել է կենդանի մարդը»¹³⁵: Եվ քանի որ պատմությունը գրվում է կոնկրետ մի ժամանակաշրջանում, ժամանակի որոշակի համակարգի մեջ, ապա անցյալի, ներկայի և ապագայի միջև հնարավոր երկխոսությունը պատմաբանի մտահոգեկոր տիրույթում է կայանում: Այդ առումով պատմաբանի մտահոգեկոր տարածքը մի տեղեկատվական-հաղորդակցական միջավայր է, որը ենթադրում է գանազան արժեքների, հասկացությունների, գիտակարգերի երկխոսային հարաբերակցություն: Որքան պատմաբանի մտահոգեկոր տարածքը բովանդակալից է, այնքան նրա ստեղծագործությունը բազմաչափ է ու բովանդակալից: «Ամբողջ պատմությունը,— գրում է Ֆևրը,— ընտրություն է»¹³⁶, բայց ոչ ինքնակամ, այլ կանխամտածված: Նման բանական ընտրությամբ պատմաբանը ձգտում է «կազմակերպել անցյալը» պարզություն և համաչափություն հաղորդել նրա անընդհատ շարժվող ամբողջությունը, փաստերի անկարգ փայլատակումներին և շրջապատյաններին, որոնք, չպատկանելով որևէ տեսանելի սկզբունքի, բախվում, միախառնվում և հաղորդակցվում են միմյանց հետ, յուրաքանչյուր մարդու շուրջ նրա կյանքի յուրաքանչյուր ակնթարթին, ասել է թե նաև հասարակության կեցության ամեն մի ակնթարթի, որին նա պատկանում է¹³⁷: Ասվածի համատեքստում ակնհայտ է, որ պատմաբանի անձը և ստեղծագործական ակտիվությունը ձեռք են բերում առանցքային նշանակություն, քանի որ նրա «կերպարը և հետազոտական աշխատանքի ոճն ու մակարդակը տվյալ հասարակության գիտամշակութային զարգացածության կարևորագույն չափորոշիչներն են»¹³⁸:

France. La monarchie franque, Deuxième édition, Paris, Librairie Hachette et Cfe, 1905, p. 33.

¹³⁵ Febvre L., *Combats pour l'histoire* ..., p. 3.

¹³⁶ Ibid., p. 6-7.

¹³⁷ Տե՛ս Ibid., p. 209:

¹³⁸ **Ստեփանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 19:

Այս կապակցությամբ աննալականների կողմից առաջ էր քաջվում պատմաբանի գործունեության նոր ըմբռնումը, որում կարևորվում էր նրա ինքնագիտակցության նոր կերպը՝ գիտելիքի երկխոսային ինքնագիտակցությունը: Պատմաբանն այլևս «սկզբնաղբյուրների ստրուկը չէ», նա ցուցաբերում է ակտիվ ինքնուրույն և ստեղծագործական գործունեություն՝ չմոռանալով, սակայն, որ «յուրաքանչյուր դարաշրջան ստեղծում է պատմական անցյալի սեփական պատկերը»¹³⁹: Պատմաբանի առջև ծառայած է մի բարդ խնդիր՝ փաստերի բազմազանությունից մշակել այնպիսի հետազոտական քայլեր, որոնք թույլ կտան ուրվագծել գիտախնդրի ճշմարիտ լուծման հեռանկարը:

Այս ամենի արդյունքում հիմնադիր-ուսուցիչները հանգեցին պատմական փաստի ընդգրկուն ընկալմանը: Նրանք համոզված էին, որ «Փաստն այն մեխն է, ըստ որի շարակազմվում է պատմությունը: Բայց այդ մեխ-փաստերը դարձնում է պատմաբանն ինքը»¹⁴⁰: Նրանք ընդդիմանում էին XIX դարի վերջի դրապաշտական պատմագիտության պատկերացումներին (Շառլ-Վիկտոր Լանգլուա և Շառլ Սենյորոս), որոնց համաձայն՝ պատմությունը գրվում է ըստ սկզբնաղբյուրների տառի. «Պատմությունը փաստաթղթերով է ստեղծվում: Փաստաթղթերը հետքեր են, որոնք թողել են նախկինում ապրած մարդկանց մտքերն ու արարքները»¹⁴¹: Նման մոտեցմամբ պատմությունը կախված է պատմական վկայություններից. «Անդ, ուր լուծում են սկզբնաղբյուրները, համը է և պատմությունը»¹⁴²: Ի պատասխան դրա՝ Ֆևրը շեշտում էր. «Պատմությունը գիտություն է մարդու մասին: Այն կիրառում է փաստերը, բայց իբրև տեղեկություններ մարդկային կեցության մասին: Պատմաբանի

¹³⁹ Febvre L., *Le problème incroyance* ..., p. 12.

¹⁴⁰ Febvre L., *Combats pour l'histoire* ..., p. 116.

¹⁴¹ Langlois Ch.-V., Seignobos Ch., *Introduction aux études historiques*, Paris: Editions Kimé, 1992, p. 29.

¹⁴² Halphen L., *Introduction à l'Histoire*, Paris: Presses Universitaires de France, 1946, p. 61.

խնդիրն է փորձել հասկանալ մարդկանց՝ իբրև անցյալի իրադարձությունների վկանների»¹⁴³: Ուստի հույժ կարևորվում էր հոգեբանական իրողությունների տեսական հետազոտության անհրաժեշտությունը, ինչը բազմակի քննադատությունների հետևանքով դուրս էր սպրդել պատմության գրման (*écriture de l'histoire*) տիրույթից¹⁴⁴: Այդու՛ պատմական փաստերը վերաձևակերպվում էին իբրև հոգեբանական փաստեր: Բլոկի դիպուկ բնորոշմամբ՝ «Պատմական փաստերն ըստ էության հոգեբանական փաստեր են: Ուստի դրանց նախապարագաները, որպես կանոն, այլ հոգեբանական փաստերի մեջ են: Ճիշտ է, մարդկային ճակատագրերը ֆիզիկական աշխարհի մասն են կազմում և կրում են դրա ծանրությունը: Սակայն արտաքին այդ ուժերը, իրենց ամենաբիրտ միջամտության դեպքում անզամ, գործում են միմիայն մարդու և նրա բանականության ուղղորդմամբ»¹⁴⁵:

Պատմական փաստերի վերանայման այս մոտեցումը հնարավորություն էր տալիս անցյալի ուսումնասիրության համար օգտագործել նաև այն տեղեկությունները, որոնք նախկինում պատմական փաստեր չէին համարվում: Եվ պատմաբաններն ավելի հաճախ սկսեցին ուշադրություն դարձնել պատմական անցյալի այն կառույցներին ու գործընթացներին, որոնք ժամանակի երկար տևողության մեջ մնացել էին «անփոփոխ» կամ «անշարժ»: Եվ առաջին անգամ Համր մեծամասնությունը, տվյալ դեպքում՝ միջնադարյան հասարակությունը սկսեց խոսել սեփական լեզվով: Սա հիմնադիր-ուսուցիչների մեծագույն նվաճումներից էր: Դա նաև հետազոտական նոր մեթոդի հաղթանակն էր:

¹⁴³ Febvre L., *Combats pour l'histoire ...*, p. 117.

¹⁴⁴ Նկատենք, որ հետազոտողներից շատերը հաճախ լուրջ չեն վերաբերվում պատմությունն իբրև գրություն ըմբռնմանը՝ համարելով այն «երկրորդական գործողություն, որը վերաբերում է բացառապես հաղորդակցության հստորաբանությանը, և որը կարող է անտեսվել որպես զուտ խմբագրական պատկեր»: Տե՛ս Ricœur P., *Temps et récit*, t. 1, *L'intrigue et le récit historique*, Paris: Le Seuil, 1983, p. 287:

¹⁴⁵ Տե՛ս Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 242:

Աննալականները մեծ ուշադրություն դարձրին վերաբերվում պատմության մեթոդաբանությանը: Ընդ որում, հատուկ սեևուումի խնդիր էին դարձնում հետադարձ և համադրական մեթոդները:

Ըստ Բլոկի՝ պատմական հետազոտությունը պետք է ընթանա վերլուծությունից (*analysis*) դեպի համադրություն, որն էլ պետք է լինի վերլուծության տրամաբանական շարունակությունն ու ավարտը¹⁴⁶: Համադրական մեթոդը համարելով առավել արգասավոր՝ նա իր «Հանուն եվրոպական հասարակության համադրական պատմության» հոդվածում ուրվագծում է դրա հիմնարար չափումները. «Համադրական մեթոդն ընդունում ենք լոկ այն ժամանակ, երբ երկու կամ ավելի համանման երևույթների էական գծերի կողքին կան և այլ գծեր: Դրանք կարող են գոյություն ունենալ ժամանակի ու տարածության մեջ»¹⁴⁷: Ուստի հարկ է, որ նախ ուշադրություն դարձվի ժամանակի գործոնի հետ տվյալ փաստաթղթի առնչությանը, քանի որ յուրաքանչյուր դարաշրջան ունի նյութական և գրավոր հուշարձանների (և փաստաթղթերի) իր յուրահատուկ ձևերը՝ արձանագրություններ, տեքստային պատումի տարասեռ դրսևորումներ: Համադրական մեթոդի օգնությամբ հնարավոր է վերականգնել երևույթների միջև եղած կապերը, նրանց բնորոշը, տիպականը: Բայց և, ինչպես նշում էր Բլոկը, պատմության մեջ համադրումը ծառայում է միաժամանակ թե՛ տիպականացմանը, թե՛ անհատականացմանը: Եվ դա նպաստում է հետազոտվող առարկայի առավելագույն ըմբռնմանը¹⁴⁸: Այլ խոսքով՝ պատմությունը, լինելով հասարակական փոփոխությունների մասին գիտություն, գիտություն է նաև տարբերությունների մասին: Սակայն Բլոկն անհրաժեշտ էր համարում համադրել ոչ թե մեկուսի փաստ

¹⁴⁶ Տե՛ս Անդ, էջ 203:

¹⁴⁷ Bloch M., *Histoire et historiens. Manuel d'historiographie*, Paris: Armand Colin, 1995, p. 95.

¹⁴⁸ Տե՛ս Гуревич А. Я., *Марк Блок и ...*, с. 200:

տերն ու կառույցները (նման մակերեսային որոնումը կարող է հանգեցնել և հանգեցնում է կեղծ ընդհանրացումներին), այլ հենց սոցիալական համակարգերն ամբողջությամբ: Ուստի պատմաբանը պետք է ուշադրություն դարձնի ժամանակի խնդրին, քանզի անհնար է մտածել «մարդկայինի մասին, առանց ժամանակի»¹⁴⁹:

Պատմաբանը կուտակված փոփոխությունները երևակելիս, որոշարկելիս և բացատրելիս կանգնած է ժամանակի հասկացման առջև: Ժամանակային ռիթմերն էական նշանակություն ունեն պատմության ցանկացած դարաշրջանի ըմբռնման համար: Բարդությունն այն է, որ «մարդկային ժամանակը միշտ ըմբոստ կմնա ժամացուցային ժամանակի անողոք միակերպության ու խստորոշ տրոհման հանդեպ: Նրան հարկավոր են չափման իր փոփոխական ռիթմին ներդաշնակ միավորներ, որոնք հաճախ իբրև սահման համաձայն են ճանաչել, — քանզի իրականությունն այդ է պահանջում, — լուկ լուսանցքային գոտիները»¹⁵⁰: Զարգացնելով Անրի Ֆոսիյոնի միտքը, թե միևնույն ժամանակաշրջանում հավասար մակարդակի վրա չեն կարող գտնվել քաղաքականությունը, տնտեսությունը ու արվեստը¹⁵¹, Բլոկը հավելում է. «Հենց այդ շեղումներն են հաղորդում սոցիալական կյանքին իր մշտապես աններդաշնակ ռիթմը»¹⁵²: Այստեղից էլ պատմական ժամանակի կարևորությունը, որը ոչ միայն պատմության միջավայրն է, այլև կոնկրետ նյութը, «հենց այն պլազման, որի մեջ, ինչպես իրենց դյուրըմբռնելիության վայրում, ընկղմված են երևույթները»¹⁵³: Ըստ այդմ՝ պատմական ժամանակը նաև միջոց է, որով նրանք հասկանալի են դառնում: Դա անընդհատ մի տեղություն է,

¹⁴⁹ Bloch M., *Histoire et historiens*, p. 24.

¹⁵⁰ Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 237:

¹⁵¹ Ֆոսիյոն Ա., *Ձևերի կյանքը: Գույք ձեռքերին /Ֆր. Թարգմ.՝ Ս. Խաչատրյան, Ե., Սարգիս Խաչենց, 1999, էջ 74–75:*

¹⁵² Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 202:

¹⁵³ Անդ, էջ 71:

սակայն նրանում ևս առկա է փոփոխությունը. «Այս երկու հատկանիշների հակաթեզից ծագում են պատմահետազոտության մեծագույն խնդիրները»¹⁵⁴: Այդ առանցքի վրա էլ կազմավորվում է պատմության կառույցը, որը պետք է «վերլուծել հիմնաչենքի և վերնաչենքի մեռյալ հակադրությունից դուրս»¹⁵⁵:

Այս ամենն առիթ էր տալիս ուսուցիչներին հանգամանալից անդրադառնալու մտայնություն հղացքին: Վերնաբեր են նկատել ենք, որ առանց դրա դժվար էր այս կամ այն դարաշրջանի, մարդկանց վարքի ու մտածողության ընկալումը¹⁵⁶: Դա էլ իր հերթին հանգեցնում է պատմագիտության խնդրի ձևակերպմանը. այն գործ ունի մարդկային գիտակցությունների հետ: Այդու՜ հաղթահարվում է նաև ավանդական պատմագիտության կողմից ավանդաբար առարկայական տիրույթի մասնատումն առանձին, ինքնավար տարածքների (սոցիալական պատմության, տնտեսական պատմության և այլնի)՝ կարևորելով իրերը միմյանց հյուսող գիտակցությունները, որոնք էլ «պատմության համար կազմում են ինքնին իրականությունը»¹⁵⁷: Ի տարբերություն բնական գիտությունների՝ պատմության հետազոտության առարկան իմաստների որոնումն է «տարտամ անցյալականության մեջ», որպեսզի այն կառուցակազմվի իբրև «բանական ըմբռնելի անցյալ», որին ներհա-

¹⁵⁴ Անդ, էջ 72:

¹⁵⁵ Ле Гофф Ж., С небес на землю, *Одиссей. Человек в истории. Культурно-антропологическая история сегодня* – 1991, Москва: Наука, 1991, с. 28.

¹⁵⁶ Այստեղ նշենք, որ մտայնությունն այն հղացքներից էր, որոնց շուրջ Ֆերն ու Բլոկը տարբեր մոտեցումներ ունեին, երբեմն անգամ միմյանց ներհակ, ինչն ավելի դրսևորվեց, երբ Բլոկը հրատարակեց իր «Ավատատիրական հասարակություն» մենագրությունը: Ավելի մանրամասն տե՛ս Burguière A., *L'École des Annales: Une histoire intellectuelle*, Paris: Odile Jacob, 2006, p. 71–108 (La notion de mentalités: une invention ou une filiation?). Righi N., L'héritage du fondateur? L'histoire des mentalités dans l'École des « Annales », *Le Philosophoire*, 1 (2003), p. 155–174.

¹⁵⁷ Բլոկ Մ., *Նշվ. աշխ.*, էջ 199:

տուեկ է պատճառա-հետևանքային հատուկ առանցք¹⁵⁸: Այս նպատակին հետամուտ՝ աննալականները մեկնարկում էին մտայնություն հղացքից՝ դրա տակ հասկանալով ինչպես պատմություն գերակատարների, այնպես էլ պատմությունը գրառողների (պատմաբան) ներաշխարհը¹⁵⁹: Այն հետագա մշակման է ենթարկվել աննալական սերունդների կողմից և այսօր առանցքային կարևորություն է ստացել:

Պատմաբանները նախկինում մեկնարկում էին այն ըմբռնումից, թե մարդը ընդ որ ժամանակներում զգում և մտածում է միակերպ և, ըստ այդմ էլ, բավարարվում էին «առողջ դատողությունը»: Դա, ըստ էության, դիմազրկում էր թե՛ անցյալը, թե՛ ներկան, և նրանց երկխոսությունը պատմաբանի գրչի տակ դառնում էր սխեմատիկ ու միագիծ: Սակայն տարբեր դարաշրջանների և քաղաքակրթությունների համադրման արդյունքում պարզ դարձավ, որ մարդու աշխարհատեսությունը նույնական չէ, որ այն փոփոխվում է ըստ մշակութային պատկանելության և սոցիալական միջավայրի: Այլ խոսքով՝ մարդկային գիտակցությունը պատմական է¹⁶⁰: Հետազոտողի ուշադրությունը կենտրոնանում է մարդկանց «Հոգևոր կառույցի», մտայնության բացահայտման վրա: Հիմնադիր-ուսուցիչները, ազգաբաններից փոխառելով մտայնություն հղացքը, կիրառեցին առավել բարդ և զարգացած հասարակությունների հետազոտման համար¹⁶¹: Նրանց համար դա կարևոր մեթո-

¹⁵⁸ Տե՛ս Ստեփանյան Ա., *նշվ. աշխ.*, էջ 10:

¹⁵⁹ Արդարություն դեմ չմեղանչելու համար նշենք, որ թեպետ Բլոկը կիսում էր մտայնությունների պատմության նկատմամբ Ֆեյրի հետաքրքրությունները, սակայն միևնույն ժամանակ չէր գրում մտայնությունների նույն պատմությունը, ինչ Ֆեյրը. նրա ոգեկոչումն այս բնագավառում գալիս էր նոր-նոր ձևավորվող մարդաբանական պատմությունից: Տե՛ս Dosse F., *op. cit.*, p. 83:

¹⁶⁰ Гуревич А. Я., «Новая историческая наука» во Франции, с. 117.

¹⁶¹ Տե՛ս Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 156: Հղացքը փոխառել էին Լյուսիեն Լևի-Քրյուլի հայեցակարգից: Տե՛ս Lévy-Bruhl L., *La mentalité primitive*, Paris: Félix Alcan, 1922:

դաբանական նշանակություն ունենր. անցյալի եղելությունների «արտաքին» նկարագրությունից բացի այժմ հնարավոր էր դառնում ներթափանցել դրանց «ներքին» տարածքները, մարդկային անհատականությունների սոցիալական, բանական և հոգեբանական աշխարհները: Պատմության «օբյեկտիվ» կերպին (արդի գիտությունների կողմից կիրարկվող հղացք) հավելվում է և անցյալի մարդկանց ներաշխարհի «սուբյեկտիվ» ընկալումը:

Անցած դարաշրջաններին ներհատուկ մտայնությունների հետազոտության ժամանակ պատմաբանը ձեռք է բերում պատմական եղելության երկակի ընկալում. «Խնդիրն այն է, թե ինչպես պետք է ներդաշնակել երկու մոտեցումները՝ «ներքին» և «արտաքին», որպեսզի պատմական անցյալն առավել հստակ և ճշմարտացի ներկայանա»¹⁶²: Ուստի պատմական վերացական գաղափարներին աննալականները հակադրում էին մարդկանց վարքի և պահվածքի կոնկրետ կերպերը՝ ներմուծելով դրանք սոցիալական կյանքի այն համատեքստ, որի պայմաններում դրանք ծագել են: Բացի մարդուց և սոցիալական խմբերից, Աննալների հիմնադիրները պատմություն ներբերեցին հասարակական կյանքն ամբողջությամբ՝ նրա փոխհարաբերությունների ողջ ներկայակերպով:

Որոշարկվեց պատմագիտության խնդիրը. «Մեկնարկել այն ամենից, ինչը, պատկանելով մարդուն, կախված է նրանից, ծառայում է նրան, արտահայտում է նրան, վկայում է նրա ներկայության, գործունեության, ճաշակի և գոյություն ունակության մասին»¹⁶³: Այլ խոսքով՝ պատմության գլխավոր բաղադրիչներն արտածվեցին «մարդու հասարակական կառույցից»՝ նյութական կյանքի պայմաններ, տնտեսություն, սոցիալական կառույցներ, հոգևոր կյանք և այլն: Այստեղից հետևություն պատմությունն այն ժամա-

¹⁶² Споры о главном: Дискуссии о настоящем и будущем исторической науки вокруг школы «Анналов», Москва: Наука, 1993, с. 28.

¹⁶³ Febvre L., *La Terre et l'évolution humaine...*, p. 201.

նակ է դառնում գիտություն, երբ «քաղաքակրթությունը, ինչպես և անհատը, ոչ մի ընդհանրություն չունի մեխանիկորեն համախմբվող պայանսի հետ. մեկը մյուսի ետևից առանձին-առանձին ուսումնասիրված զրվագների ճանաչողությունը երբեք չի ապահովի ամբողջի ճանաչողություն, չի ապահովի անգամ ինքնին զրվագների ճանաչողություն»¹⁶⁴:

Այս լույսի ներքո ակնհայտ է դառնում միջգիտակարգային հետազոտության անհրաժեշտությունը: Այն ի զորու է ստեղծել «գիտելիքի մի նոր հարացույց», որը հնարավորություն է տալիս հաղթահարելու «փաստագրական պատմագիտության տաղտուկը՝ հնարավորինս տարբեր հումանիտար գիտությունների միջև առկա (չատ դեպքերում պայմանական) սահմանները ստվերելու նպատակով»¹⁶⁵: Հիմնադիր-ուսուցիչները շատ լավ հասկանում էին, որ մարդկային համակեցությունն այնքան հարուստ է, որ պահանջում է զանազան մեկնաբանություններ, և որքան շատ մոտեցումներ կան, նույնքան և բազմակողմանի է պատմության պատկերը: Այս առնչությամբ նրանք կրկին իրենց անբավարարվածությունն էին արտահայտում ժամանակի պատմագիտությունից¹⁶⁶: Արդեն նշել ենք, որ ավանդական պատմագիտությունը, ուղղորդվելով լոկ «իրադարձային պատմության» հղացքով, խուսափում էր լայն համադրությունից և առանձին իրադարձություններն ու խնդիրները տարանջատում պատմության համընդհանուր և խորքային շարժումից: Հետաքրքրվելով լոկ մեկուսի, անկրկնելի փաստերով՝ ավանդական պատմագիտությունն անկարող էր կազմավորել կենդանի պատմություն (histoire vivante): Վերջինիս տակ Ֆեյրն ու Բլոկը հասկանում էին պատմության այնպիսի շարադրանք, որի ծիրում համադրվում են պատմական գործընթացի բոլոր կարևոր բաղադրիչ-

ները (առտնին կյանք, տնտեսություն, քաղաքական համակարգ, իրադարձություններ, մշակույթ, մտայնություն և այլն)՝ իրենց եզակիությունը և ընդհանրականությունը: Ուստի «կենդանի պատմություն» ստեղծելու համար անխուսափելի է համագործակցությունն աշխարհագրագետների, տնտեսագետների, սոցիոլոգների, ազգաբանների, հոգեբանների, լեզվաբանների, արվեստաբանների և այլոց հետ: Այլևս անհնար էր պատմությունը հետազոտել միայն մեկ դիտանկյունից: Բացի այդ, որ պակաս կարևոր էր, շեշտադրվում էր անցյալի «գերությունից» ձեռքազատվելը, Ֆեյրի պատկերավոր ձևակերպմամբ՝ «Գնացեք կյանքի խորքերը: Պատմություն գրելու համար առաջին հերթին պետք է գիտակցաբար երես թեքել անցյալից ու ապրել»¹⁶⁷:

Հասարակական կառույցն իր ամբողջականությամբ դարձավ աննալականների հետազոտությունների կարևորագույն մեկնակետերից մեկը: Այն հնարավորություն է տալիս պատմաբանին ներկայացնելու պատմական գործընթացների խորքային կողմերը, հաղթահարելու փաստերի և իրադարձությունների «կարճատևություն», գրեթե ակնթարթային ներփակությունը¹⁶⁸ և հետազոտության առարկան իրադարձություններից, պատմական դեմքերից տեղափոխելու «սոցիալական և մարդկային ոլորտ»¹⁶⁹: «Նոր կապեր հաստատել մոտակա և հեռակա գիտակարգերի միջև, հետազոտության միևնույն օբյեկտի վրա կենտրոնացնել տարբեր գիտությունների համատեղ ջանքերը՝ ահա հիմնարար այն խնդիրը, որ կանգնած է պատմության առջև [...] ՈՍՈՒՔ ոչ միայն հասկացությունների փոխառության մասին է (թեկուզ հաճախ հույժ անհրաժեշտ), այլ հետազոտության մեթոդների և ոգու»¹⁷⁰: Բրոդելի դիպուկ բնորոշմամբ՝ պատմությունն «ուզում է նվաճել և կազմակերպել մարդու մասին գիտություն-

¹⁶⁴ Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 203.

¹⁶⁵ Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., նշվ. աշխ., էջ 33–34:

¹⁶⁶ Տե՛ս Гуревич А. Я., Марк Блок и..., с. 217:

¹⁶⁷ Febvre L., *Combats pour l'histoire* ..., p. 32.

¹⁶⁸ Տե՛ս Febvre L., *Combats pour l'histoire* ..., p. 96:

¹⁶⁹ Bloch M., *Les caractères originaux* ..., p. 7.

¹⁷⁰ Febvre L., *Combats pour l'histoire* ..., p. 14.

ների (*sciences de l'homme*) ամբողջ ոլորտը հօգուտ իր հետաքրքրությունների կամ, առնվազն, ներթափանցել նրանց մեջ և հընթացս այդ ներխուժումների հարստացնել իր հիմնախնդիրն ու թարմացնել իր մեթոդները»¹⁷¹:

Հասարակության նկատմամբ համընդգրկուն և ամբողջական մոտեցումը (որպիսին առկա է աննալականների հիմնադիր և հետագա սերունդների հայացքներում) հիմք դարձավ մեկ այլ պատմական խնդրի վերանայման համար: Այն միտված էր ճշգրտելու մարդու վերաբերյալ բոլոր մյուս գիտությունների համակարգում պատմությունը տեղը. հիմնադիրները համոզված էին, որ պատմագիտությունը կարող է ընդգրկել մարդկային կեցության հետազոտության տարբեր գիտանկյունները միայն այն դեպքում, եթե լուծի միջգիտակարգային կապերի խնդիրը՝ համագործակցելով սոցիոլոգիայի, տնտեսագիտության, լեզվաբանության, աշխարհագրության և այլ գիտությունների հետ¹⁷²: Բլոկը բազմիցս շեշտում է, որ պատմագիտությունը գտնվում է կազմավորման ընթացքում, և նրա առջև ծառայած է իր հետազոտական մեթոդների ստեղծման խնդիրը: Ըստ էության՝ «Պատմության առարկան [...] մարդն է: Ավելի ճիշտ՝ մարդիկ»¹⁷³: Պատմությունն «ամբողջական տեսնելու» ձգտումը, ինչպես անդրադարձանք վերը, աննալականներին հանգեցրեց «համընդգրկուն պատմության» հղացքին¹⁷⁴:

Սակայն համընդգրկուն պատմություն ասելով՝ չպետք է հասկանալ միայն հանուր աշխարհը: Այն կարող է լինել նաև տեղային սահմանափակված ժամանակային որոշակի հատվածով: Դա պատմություն է՝ դիտարկված հետազոտման տարաբնույթ չափույթներով և դիտանկյուններից: Ասել, թե «պատմությունն իր բնույթով սոցիալական

¹⁷¹ F. Braudel, Les Annales ont trente ans (1929–1959), *AÉSC*, 1, (1959), p. 1–2.

¹⁷² Տե՛ս Афанасьев Ю. Н., *Историзм против эклектики...*, с. 49:

¹⁷³ Բլոկ Գ., *Եզվ. աշխ.*, էջ 69:

¹⁷⁴ Агирре Рокас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Кругъ, 2006, с. 87.

է», նշանակում է ընդունել, որ այն նախ և առաջ հասարակական գիտակցության պատմությունն է: Սակայն «համընդգրկուն պատմությունը» չի սպառվում միայն հասարակական խմբերի գործողություններով ու մտայնությունով: Նրանում կարևոր տեղ ունեն նաև առանձին անհատների գործողությունները, գաղափարները և կամքը:

Մյուս կողմից՝ համընդգրկուն պատմությունը հրաժարվում է մարդկանց կյանքը բաժանել քաղաքական, դիվանագիտական, ռազմական, տնտեսական, կրոնական կամ որևէ այլ «մասնակի» պատմության¹⁷⁵: Այն, ավելի շուտ, մարդկային համակցության զանազան շերտերի (տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութա-հոգեբանական) խաղարկում-համադրումն է: Այս իմաստով հիմնադիր-ուսուցիչներն ընդհուպ մոտեցել էին քաղաքակրթություն հղացքի ըմբռնմանը¹⁷⁶: Ըստ նրանց՝ համապատմական խոշոր տեղաշարժերը հնարավոր էր բացատրել և տիպականացնել ժամանակի առավել մեծ տևողության ծիրում: Քաղաքակրթությունը, ըստ Ֆեբրի, «նյութական և հոգևոր, բանական և կրոնական այն համահավասարակշիռ ուժն է, որը ներգործում է մարդկանց գիտակցության վրա ժամանակի տվյալ հատվածում, տվյալ տարածքում»¹⁷⁷:

¹⁷⁵ Տե՛ս Гуревич А. Я., *Исторический синтез...*, с. 82:

¹⁷⁶ Նկատենք, որ քաղաքակրթություն (ինչպես նաև դարաշրջան) հղացքը Ֆեբրի հիմնարար հասկացություններից էր, մինչդեռ Բլոկի համար առանցքային հղացքը *հասարակությունն* էր (սոցիալական կապեր, կառույցներ և այլն): Տե՛ս Гуревич А. Я., Марк Блок и..., с. 196. Гуревич А. Я., Уроки Люсьена Февра, в Февр Л., *Бои за историю* (Памятники исторической мысли), Москва: Наука, 1991, с. 511:

¹⁷⁷ Febvre L., Les principaux aspects d'une civilisation: La première Renaissance française (1924), dans Febvre L., *Pour une Histoire à part entière*, Paris: S.E.V.P.E.N., 1962, p. 529. Ուշագրավ է, որ Ֆեբրը, դեմ չլինելով քաղաքակրթություն հղացքի էվոլյուցիային, այդուամենայնիվ, շարունակում էր հավատարիմ մնալ եզակի մարդկային քաղաքակրթության (civilisation humaine unique) հին գաղափարին: Հարկավ, նա ոչ թե հավատում էր ձեռք բերված այդպիսի քաղաքակրթության դոյունությանը, այլ քաղաքակրթական այն ձգտմանը, որն անընդհատ

Ընդամին՝ «քաղաքակրթական փաստերը, զոնե մասամբ, տվյալ հասարակությունով սահմանափակվող փաստեր չեն, այլ տարածվում և հաստատվում են այնպիսի տիրույթներում, որոնք շատ հեռու են և շատ տարբեր իրենց ծագման տիրույթներից»¹⁷⁸: Այսու՝ համընդգրկուն պատմություն և քաղաքակրթություն հղացքները հարաբերակցվում էին չնույնացվելով:

Ամփոփելով նշենք, որ Աննալների դպրոցի ծագման և զարգացման գործընթացից պարզ է դառնում, որ XIX դարի վերջի – XX դարի սկզբի պատմագիտական մտքի ճգնաժամը խոր հիմքեր ունեւ: Այն կանգնած էր պատմական անցյալի և ներկայի ուսումնասիրման նոր մեթոդների ձևավորման առաջ: Ձևափոխվում էին մարդու և հասարակության մասին այլ գիտությունների հետ պատմագիտության ունեցած փոխհարաբերությունները: Հաստատագրվում էր պատմության ինքնուրույն՝ որպես գիտություն գոյություն իրավունքը, բացահայտվում էր պատմության տեսության խոր տարբերությունը պատմության իմաստասիրությունից իր խնդիրներով և հետազոտական մեթոդներով: Գիտության ճգնաժամը դառնում էր հաղթահարելի:

Ի մի բերելով հիմնադիր-ուսուցիչների ներդրումը պատմագիտության բնագավառում՝ հետազոտողներն առանձնացնում են դրանցից հատկապես երեքը. (ա) ավանդական իրադարձային պատմությունը փոխարինեցին վերլուծական-համադրական պատմությունը, (բ) քաղաքական պատմությունը հակադրեցին «մարդկանց համակեցական գործունեության» տարասեռ կողմերի հետազոտությունը, (գ) պատմագիտություն ներբերեցին այլ գիտակարգերի

փորձում է իրագործել այդ գաղափարը: Միևնույն ժամանակ նա թեպետ հնարավոր էր համարում համաշխարհային եզակի քաղաքակրթությունը, բայց ոչ անհրաժեշտ: Տե՛ս Mann H.-D., Lucien Febvre: la pensée vivante d'un historien /Préface de Fernand Braudel, Paris: Armand Colin, 1971, p. 50: Քաղաքակրթություն հղացքն ավելի մանրամասն կբնարկենք հաջորդ գլխում:

¹⁷⁸ Febvre L., *Combats pour l'histoire* ..., p. 210.

(աշխարհագրություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, իմաստասիրություն, տնտեսագիտություն, լեզվաբանություն, սոցիալական մարդաբանություն և այլն) հետազոտական մեթոդներն ու արդյունքները:

Հիմնադիր-ուսուցիչների պատմատեսական-պատմագիտական համակարգն իր «բանական շրջաբեկմամբ» դարձավ XX դարի պատմագիտական առաջատար ուղղություններից մեկը: Նրանց հաջողվեց աննախադեպ ընդլայնել պատմագիտության հետազոտության տարածքը: Եվ այս ամենը՝ շնորհիվ նոր մեթոդական լուծումների և սկզբնաղբյուրների նորովի ընթերցման:

Գլուխ երկրորդ

ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԱՑՈՒՄԸ. «ԲՐՈՒԿԵԼՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ»

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիները (1945–1975) նշանավորվեցին տնտեսական վերականգնման աննախադեպ արագությամբ՝ զուգորդված միջազգային համագործակցության նույնքան տպավորիչ եռանդով և մասշտաբայնությամբ։ Ժամանակաշրջանն աչքի ընկավ նաև միջազգային նոր կառույցների առաջացմամբ, ինչպիսիք են Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և Համաշխարհային բանկը (իբրև Բրեհտտոն Վուդսի արժույթային համակարգի մաս), ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (UNCTAD), ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը (UNIDO) և հինգ Տարածաշրջանային հանձնաժողովները։ Ժամանակաշրջանը նշանավորվեց նաև ապագադուլթացման արդյունքում բազմաթիվ նոր ազգերի ծնունդով։ Զուգորդվեցին ռազմաքաղաքական նոր դաշինքներ (Արևմտյան միություն (Western Union), ՆԱՏՕ և այլն) և միջազգային համագործակցության նոր մեխանիզմներ, ինչպիսիք են Արևմտյան Եվրոպայի վերակառուցման Մարշալի ծրագիրը և 1960-ական թվականներին ՄԱԿ-ի զարգացման առաջին տասնամյակի ռազմավարությունը¹։

¹ Տես Հովհաննիսյան Ս., Աննալների դպրոցի հետպատերազմյան փորձառությունը (1945–1975), «Վէմ» Համահայկական հանդես, 1 (2022), էջ 67–78:

Ի լրումն աշխարհում կատարված արմատական փոփոխությունների՝ պատերազմի հետևանքներն առաջին պլան մղեցին մարտահրավերների մի ամբողջ նոր շարք՝ սկսած ապագադուլթացման գործընթացից մինչև «սառը պատերազմ», սոցիալական կարողությունների կուտակման գործընթացից մինչև տեխնաբանական հեղափոխություն (révolution technologique), համաշխարհայնացումից մինչև քաղաքական ապակենտրոնացում, հետարդիականությունից մինչև հետկրոնականություն և այլն: Գործընթացներ, որոնք նոր և ընդարձակ տարածք են բացում նորարարության, ընդլայնման և աճի համար, և որոնցից անմասն չի մնում նաև պատմագիտությունն ընդհանրապես և Ֆրանսիական պատմագիտությունը՝ մասնավորապես: Այն կրկին լրջագույն մարտահրավերների առջև էր կանգնած: Անցումային մի շրջան, երբ, ինչպես նկատում է Լյուսիեն Ֆեբրը, շուրջըտրոն ամեն ինչ փլուզվում էր, նաև «աշխարհի տեսլականը», որը դուրս էր պրծել «կոպեռնիկոսների, կեպլերների, նյուտոնների, լապլասների կողմից հանճարեղորեն համակցված շրջանակներից»՝ մղելով «Հայտնի չէ, թե ուր, արտահոսքի արագությունը»²:

Ակնհայտ էր պատմագիտության վրա սոցիալական գիտությունների «ճնշումը»: Ֆրանսիական պատմագրության զարգացման վրա շարունակում էին միաժամանակ վճռորոշ ազդեցություն ունենալ ինչպես այլ գիտակարգեր (դիցուք՝ սոցիոլոգիա, տնտեսագիտություն, հոգեբանություն, ժողովրդագրություն, որոնք, ինչպես վերն ասացինք, նույնպես աննախադեպ թափ հավաքեցին այդ ժամանակ), այդպես և այն պատմաբանների աշխատությունները, որոնք դեռևս 1930-ական թվականներին առաջադրել էին ավանդական «դրապաշտական» պատմագրության մեթոդաբանական սկզբունքների վերանայման հարցը: Այդպիսիք էին նախ և առաջ Աննալների դպրոցի ներկայա-

² Febvre L., Sur une nouvelle collection d'Histoire, *Annales. É.S.C.*, 1 (1954), p. 1.

ցուցիչների, ինչպես նաև Էռնեստ Լաբրուսի, Պիեռ Ռենուվանի, Ժորժ Լըֆլերի, Անդրե Մառուի, Ռայմոն Արոնի աշխատությունները: Այդու դեռ 1929 թվականից սկիզբ առած «իմացաբանական ճեղքմանը (rupture épistémologique)» (Գաստոն Բաշար) այլևս վիճակված էր շարունակական հաջողություններ արձանագրել³: Ֆեռնան Բրոդելի կենսագիր Ջուլիանա Ջեմելլիի դիպուկ ընորոշմամբ՝ Աննալների դպրոցն այն քչերից էր, որոնց հաջողվեց հաղթահարել «ինտելեկտուալ համակցությունների փոփոխականությունն ու համապարփակությունը երկար տևողության ծիրում»⁴:

Ընդամին՝ պատմության վրա սոցիալական գիտությունների ճնշման ուժգնացումը նպաստեց, որ Աննալների դպրոցը ոչ միայն վերանայի իր ուղղվածությունը⁵, այլև հաստատությունի իր ձեռքբերումները:

Ա. Աննալականների հետպատերազմյան փորձառությունը

Մարկ Բյուկից հետո⁶ Լյուսիեն Ֆեբրը շարունակեց Հանդեսի հրատարակությունը. 1930-ական թվականների անհանգիստ, նյարդային մթնոլորտին փոխարինելու էին եկել լավատեսությունն ու կառուցողական ձգտումը: Սկիզբ էր առնում զարգացման և արդիականացման տևական մի շրջան, որը հետագայում պատմության մեջ մտավ «Փառապանծ երեսնամյակ (Les Trente Glorieuses, 1945–1975)»⁷

³ Տե՛ս Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 96:

⁴ Տե՛ս Gemelli G., *Fernand Braudel*, Paris: Editions Odile Jacob, 1995, p. 137:

⁵ Տե՛ս Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 168:

⁶ Մարկ Բյուկը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Դիմադրության ակտիվ մասնակիցներից էր: Պայքարում էր Ֆաշիստական ռեժիմի դեմ և ձերբակալվելուց հետո զնդակահարվեց 1944 թ. Հունիսի 16-ին:

⁷ Ревель Ж., История и социальные науки во Франции. На примере

անվամբ: Ինչպես հետագայում նկատում է Լյուսիեն Ֆերը, աշխարհում տեղի ունեցած տարաբնույթ խոշոր տեղաշարժերը՝ Ֆրիդիկայի զարգացումը, հեղափոխական վերափոխություններն արվեստում, աշխարհի քարտեզի վերաձևումը, ինքնիշխանությունից զուրկ ազգերի ինքնագիտակցության զարթոնքը և այլն, սասանել էին նաև պատմագիտության առկա հարացույցների արժանահավատությունը⁸:

Հետպատերազմյան զարգացող հասարակության մեջ, որտեղ արդիականացման, սարքավորումների, ներդրումների ու գնահիթեմաները գերակայող էին դարձել, պատահական չէր տնտեսության հույժ կարևորումը, որն այդ ժամանակ ոչ միայն ընդգրկեց ամբողջ սոցիալական տիրույթը, այլև վճռորոշ դարձավ մտածողության շրջանակների ձևավորման համար⁹: Աննալականները կանգնած էին ընտրության առջև: Լյուսիեն Ֆերը ժառանգվածից ընտրություն կատարելիս նախապատվությունը տվեց հատկապես տնտեսությանը, որի արդյունքում միառժամանակ ստվերում մնացին մշակութային պատմությունը, մտայնության պատմությունը և հոգեպատմությունը¹⁰: Առաջնահերթու-

эволюции школы «Анналов», *Новая и новейшая история*, 5 (1998), с. 89. «Փառապանք երեսնամյակ (Les Trente Glorieuses, 1945–1975)» եզրույթը ներմուծել է ֆրանսիացի տնտեսագետ և սոցիոլոգ, «արդյունաբերական հասարակության տեսության» հիմնադիրներից Ժան Ֆուրաստիեն (Jean Fourastié, 1907–1990): Եզրույթը շրջանառության մեջ մտավ 1979 թվականին Ֆուրաստիեի հրատարակած գրքի վերնագրի հիման վրա՝ «Փառապանք երեսնամյակը կամ 1945–1975 թթ. անտեսանելի հեղափոխությունը (Les Trente Glorieuses, ou la révolution invisible de 1946 à 1975)»: Եզրույթը ստեղծվել է 1830 թվականի հուլիսի 27–29-ի ֆրանսիական Հեղափոխության անվան «Փառապանք եռօրյակի» (Les Trois Glorieuses) նմանությամբ:

⁸ Տե՛ս Febvre L., Sur une nouvelle collection d'Histoire, *Annales. ÉSC*, 1 (1954), p. 6:

⁹ Տե՛ս Dosse F., *op. cit.*, p. 97:

¹⁰ Տե՛ս Ibidem: Դոսսը պատմության «տնտեսականացմամբ» է բացատրում և այն, որ Ֆիլիպ Արիեսը, որը «մտային ոլորտի (univers mental)» հետազոտության նախաձեռնողներից էր, մնաց «մեկուսացված» մինչ 1960–70-ական թվականները: Նկատենք, որ մշակութային

թյուն ստացավ հետազոտական մի ընազավառ, որն ընկալվում էր իբրև «բոլոր սոցիալական կառույցների հիմքը և պատմական փոփոխությունների հիմնական պատճառը»¹¹: Նման ընտրությունը, հարկավ, թերի կլիներ, եթե չապահովեր համադրական նոր հորիզոններ: Ուստի աննալականների հետազոտական փնտրտուքը միտվեց պատմագիտության նոր սահմանների և արժեքների հաստատման գործին, որն արտահայտվեց նաև Հանդեսի նոր անվանման մեջ՝ Տարեգրություններ: Տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ (*Annales. Économiques, sociétés, civilisations*): Ինչպես վերանվանված Հանդեսի առաջին համարում Ֆերն էր նշում, «Աննալները փոխվում են, քանի որ նրանց շուրջ փոփոխվում է ամեն ինչ՝ մարդիկ, իրերը, միով բանիվ՝ աշխարհը»¹²: Վերնագրից «սոցիալական պատմության» սղումը և «քաղաքակրթությունների» հավելումը շեշտադրումը պատահական չէր և ուներ բեկումնային նշանակություն¹³: Ըստ ամերիկացի պատմաբան Տրայան Ստոյանովիչի՝ նոր անվանումը կոչված էր ընդգծելու, որ Հանդեսը «չի սահմանափակվում միայն սոցիալական և տնտեսական պատմությամբ, այլ ավելի շուտ հետամուտ է լինելու համընդգրկուն պատմության և անգամ հումանիտար

պատմության, մտայնության պատմության և հոգեպատմության միառժամանակ ստվերվելու վերաբերյալ այլ մոտեցում ունեւ ժակ Ռեյելը, ըստ որի՝ կարելի է չհամաձայնել, որ դրա պատճառն ուշադրության կենտրոնի տեղաշարժն էր այլ գործոնների վրա, բայց և ճիշտ է այն, որ հիմնադիր Հայրերի տված օրինակները (ստեղծագործությունները) «բարդ էին ընդօրինակման համար ոչ միայն որովհետև դրանք վիթխարի գործեր էին, այլև որ նրանք չկարողացան ձևավորել հետազոտության չափորոշիչ, որը կարող էր կիրառվել ակադեմիական հետազոտական ծրագրերում»: Ревель Ж., *указ. соч.*, с. 98:

¹¹ Տե՛ս Ревель Ж., *указ. соч.*, с. 94:

¹² Տե՛ս Lucien F., Face au vent: manifeste des Annales Nouvelles, *Annales. ÉSC*, 1 (1946), p. 2:

¹³ Афанасьев Ю. Н., *Историзм против эклектики. Французская историческая школа «Анналов» в современной буржуазной историографии*, Москва: Мысль, 1980, с. 140.

գիտությունների գիտություն հավակնոտ նպատակին»¹⁴: Իսկ ըստ Աննալների դպրոցի ներկայացուցիչ Ֆրանսուա Դոսսի՝ այդ փոփոխությունը նշանակում էր, որ աննալականների առաջիկա ձգտումներից մեկն էր դառնում սոցիալական գիտությունների փոխներթափանցման ապահովումը, ընդ որում՝ այդպիսի համադրական հեռանկարն ապահովողները լինելու էին պատմաբանները¹⁵: Մյուս կողմից՝ Հանդեսի նոր անվանման ներքո, ըստ Դոսսի, Հնարավոր կլինեին «թաքցնել [պատմաբանների] պատկանելությունը», որով՝ դժվար կլինեին ճանաչել նրանց (պատմաբանների) կազմակերպչական դերը¹⁶: Համաձայնելով վերոնշյալ մեկնաբանությունների հետ՝ նշենք միայն, որ Ֆերի (և աննալականների) նպատակներն այնքան էլ «քողարկված» չէին, որքան թվում էր, քանի որ վերջինս վերանվանված ամսագրի առաջին իսկ համարում փորձեց հիմնավորել այդ փոփոխությունը: Նա պնդում էր, որ տեխնիկական, տնտեսական խնդիրների կողքին ապագա մարդկության համար կարևոր է միայն մի խնդիր՝ մարդկայինը¹⁷, և տարբեր առիթներով ու տարբեր հոգվածներում հորդորում էր չմոռանալ, որ «պատմությունը գիտություն է մարդու մասին»¹⁸: Խորքային առումով դա նշանակում էր, որ «աշխատանքի, փոխանակման և ազատ համագործակցության» համատեքստում «առանց [պատմության] ոչինչ հնարավոր չէ»¹⁹:

Ինչ վերաբերում է «քաղաքակրթություն» եզրույթի

¹⁴ Stoianovich T., *French Historical Method: The Annales Paradigm*, Cornell University Press, 1976, p. 43.

¹⁵ Stéu Dosse F., *op. cit.*, p. 118. Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 171:

¹⁶ Stéu Dosse F., *op. cit.*, p. 118:

¹⁷ Stéu Lucien F., *Face au vent: manifeste des Annales Nouvelles, Annales. ÉSC*, 1 (1946), p. 2:

¹⁸ Lucien F., *Propos d'initiation: vivre l'histoire, MHS*, 3 (1943), p. 16.

¹⁹ Stéu Lucien F., *Face au vent: manifeste des Annales Nouvelles, Annales. ÉSC*, 1 (1946), p. 7:

Հավելմանը, հետազոտողներից ոմանք կարծում են, որ դա Ֆեռնան Բրոդելի ազդեցությունը է տեղի ունեցել²⁰: Իրականում, սակայն, դա գալիս էր Հենց Ֆերի պատմատեսական Հայեցակարգից. ինչպես արդեն նշել ենք, նրա պատմագիտական Հայեցակարգի կարևորագույն բաղադրիչներից էր «քաղաքակրթություն» հղացքը, որը կյանքի նյութական և հոգևոր կողմերը պարառում էր մեկ ամբողջության մեջ, մանավանդ որ «քաղաքակրթական փաստերը» չեն սահմանափակվում «այս կամ այն հասարակությունում, այլ ընդունակ են գաղթելու և պատվաստվելու այն տիրույթներին, որոնք երբեմն շատ հեռու և հույժ տարբեր են իրենց ծագման տիրույթից»²¹: Միևնույն ժամանակ աննալականները, մասնավորապես Ֆերը, քաղաքակրթություն եզրույթը գատում էին Առնոլդ Թոյնբրի կիրառած նույն եզրույթից, քանի որ վերջինիս Հայեցակարգի մեջ գերակայում էր պատմության փոխադարձությունը և ոչ գիտական պատմությունը²²:

Միով բանիմ հետպատերազմյան ամսագրի բովանդակությունն էականորեն փոխվում է. մինչ այդ եղած բազմաթիվ խնդիրներ, որոնք միայն ուրվագծվել էին, այժմ արդեն համակողմանի վերլուծության են ենթարկվում: Այս հանգամանքը, սակայն, որոշ հետազոտողների տեղիք է տվել կարծելու, որ չնայած նման աննալիստիկ փոփոխություններին՝ Երկրորդ աշխարհամարտը «մեթոդական առումով սահմանափակ ազդեցություն ունեցավ պատմության տեսության և կիրառության վրա»²³: Հանդեսի հետպատերազմյան գործունեության վերաբերյալ գրեթե նույն կար-

²⁰ Օրինակ, տե՛ս Афанасьев Ю. Н., *указ. соч.*, с. 141:

²¹ Lucien F., *Une vue d'ensemble. Histoire et psychologie, dans Lucien F., Combats pour l'histoire*, Paris: Librairie Armand Colin, 1953, p. 210.

²² Stéu Le Goff J., *L'histoire nouvelle, dans Le Goff J. (éd.), La Nouvelle Histoire*, Paris: Retz-C.E.P.L., 1978, p. 35-76:

²³ Stéu Donald R. K., *Frontiers of history historical inquiry in the twentieth century*, New Haven & London: Yale University Press, 2006, p. 138:

ծիքին է Ագիրրե Ռոխասը՝ գրելով, որ «[Հանդեսը] չի ներմուծել իմացաբանական, տեսական կամ մեթոդաբանական բացարձակապես նոր գաղափարներ այն գաղափարների համեմատ, որոնք արդեն արտահայտվել և մեկնաբանվել են ամսագրի զարգացման նախորդ երեսուն տարիների ընթացքում»²⁴: Չնայած նման մոտեցման առկայությանը՝ կարող ենք ասել, որ իրականում նախապատերազմյան գաղափարները, հայեցակարգերը շարունակում էին արժարժվել, բայց դրանց զուգահեռ Հանդեսում արդեն քննարկվում էին գաղափարներ, որոնք չէին շոշափվել նախապատերազմյան շրջանում: Ավելին՝ կարճ ժամանակամիջոցում Հանդեսում տեղ գտած խնդիրների փունջն արդեն այնքան էր ընդլայնվել, որ խիստ դժվարին է դրանց որևէ մանրամասն նկարագրություն: Թերևս անփոփոխ էին մնացել Հանդեսի նորարարական բնույթը, գիտական հետազոտությունն ոչ ավանդական թեմաների ու դրանց մեկնաբանման ինքնօրինակ եղանակների որոնումը, ըստ այդմ՝ բացությունը տարբեր՝ անգամ ներհակ և հույժ տարբեր մոտեցումների քննարկումների համար, ինչպես նաև միջգիտակարգային երկխոսությունը²⁵: Ստեղծվում են կայուն բաժիններ, որոնք Հանդեսին հաղորդում են որոշակի հետևողականություն և ավանդույթ: Այդպիսիք են «Գիտակնարկներ (Études)», «Էսսեներ (Essais)», «Բանավեճեր և մարտեր (Débats et combats)», «Տեղեկություններ և պարզաբանումներ (Informations et mises au point)» բաժինները:

Ուշագրավ է նաև այն, որ Հանդեսի 1946 թվականի հրատարակությունից սկսած՝ կազմի ստորին հատվածում հայտնվում է Հերմես աստծո պատկերը՝ ազատության թևավոր գլխարկով և կերպարիտություն հրաշագործ մականով: Անշուշտ, ոչ պատահականորեն: Այս աստվածությունը հունական դիցաբանության մեջ Զևսի բանբերն էր

²⁴ Агирре Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Кругъ, 2006, с. 107.

²⁵ Афанасьев Ю. Н., *указ. соч.*, с. 142.

և երկինքը, երկիրն ու անդրաշխարհը կապող օղակը՝ Տիեզերքի միավորիչը, պերճախոսություն և զրույցի աստվածը, սրնդի ու քնարի գյուտարարը, նաև օրենքների ու գրերի գյուտարարը, դեսպանների, վաճառականների, հովիվների, թափառաշրջիկների ու գողերի աստվածը, նաև ճանապարհների, անցումների, դարպասների, հասարակական վայրերի, մարզարանների և սահմանների աստվածը²⁶: Նրան էին վերագրվում տեխնիկայի գրսեղություններ՝ առևտուրը, ծովագնացությունը, դրամափոխությունը, ինչպես նաև մտքի ճարտարությունը: Նկատենք, որ հին հունական դիցաբանության մեջ Հերմեսը զուգակցվում էր Հեստիա աստվածուհու հետ և, ինչպես արդարացիորեն նկատել է Ստոյանովիչը, «Հերմեսի թիկունքում կամ կողքին կանգնած է անտեսանելի կամ թաքնված Հեստիան»²⁷, որը, ի տարբերություն նրա, մարմնավորում էր տունը, փակ տարածությունը, անշարժությունը, մնայունությունը²⁸:

Աննալիկանների համար, ըստ այսմ, մարդկային հասարակությունների տարածությունը, ինչպես հունական ավանդույթի մեջ, ունի երկակի կերպարանք՝ Հերմեսյան և Հեստիական²⁹: Երկու աստվածությունների համադրմամբ ընդգծվում էին Հանդեսի հիմնարար չափումները՝ շարժունությունն ու անշարժությունը, փոփոխությունն ու հաստատունությունը, իրադարձություններն ու կառույցները, որոնք մշտական լարվածության պայմաններում վերածվում են միմյանց անհրաժեշտ լրացումների³⁰: Եվ այս

²⁶ Տե՛ս Jean-Pierre Vernant, *Œuvres. Religions, Rationalités, Politique*, First volume, Seuil, 2007, p. 381–422. Тахо-Годи А. А., *Гермес, в Мифы народов мира. Энциклопедия. В 2 томах. 2-е изд. Т. 1, с. 292–294:*

²⁷ Stoianovich T., *French Historical Method: The Annales Paradigm*, Ithaca: Cornell University Press, 1976, p. 63.

²⁸ Տե՛ս Jean-Pierre Vernant, *op. cit.*, p. 381–422. Тахо-Годи А. А., *Гестия, в Мифы народов мира. Энциклопедия. В 2 томах. 2-е изд. Т. 1, с. 299:*

²⁹ Stoianovich T., *op. cit.*, p. 63.

³⁰ Տե՛ս Stoianovich T., *op. cit.*, p. 63. Афанасьев Ю. Н., *указ. соч.*, с. 141:

ամենը նշանակում էր, որ աննալականները զնայով ավելի ու ավելի էին կարևորում հաղորդակցությունը՝ ձգտելով բոլորովին նոր տեսակի համակցված հետազոտություն:

Ուշագրավ է և այն, որ վերանայվել էր նաև խմբագրակազմը. նախկին երկու տնօրենի փոխարեն այժմ Հանդեսն ուներ մեկ տնօրեն՝ Լյուսիեն Ֆերը, բայց և ղեկավար կազմում ներառվում են նաև Ֆեռնան Բրոդելը (որը 1947 թվականից պիտի զբաղեցներ ամսագրի ղեկավարի պաշտոնը), Շառլ Մորագեն, Ժորժ Ֆրիդմանը և Պոլ Լյոիոն: Խմբի մեջ ընդգրկվում են նաև սոցիալական տարբեր գիտություններ ներկայացնող նոր աշխատակիցներ՝ պատմաբաններ Պիեռ Շոնյուն, Պիեռ Գուբերը, Մորիս Կրուզեն, Կլոդ Ֆոլանը, Մորիս Լոմբարդը, Իվ Ռենուարը, աշխարհագրագետներ Պիեռ Գուրուն, Ռոժե Դիոնը, Անդրե Մենիեն, տնտեսագետներ Շառլ Բետտլայմը, Ժան Ֆուրաստիեն և այլք:

Աննալականները շարունակում են պահպանել և զարգացնել իրենց միավորիչ դերը³¹. բոլոր նախադրյալները կային պատմության բարդ սոցիալական գիտություն վերածվելու համար՝ իբրև տարբեր գիտակարգերի փոխկապակցության կենտրոն: Իսկ դա կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր հաղթահարել ոչ միայն պատմագիտության, այլև սոցիալ-հումանիտար մյուս գիտակարգերի մեկուսացվածությունը: Ընդամին՝ նորացված այս պատմագիտությունը չպետք է համակարգային բնույթ կրեր, այն է՝ ստեղծեր միատարր պատմություն (unitary history)³²: Եվ արդեն 1947 թվականին աննալականներին հաջողվում է հիմնել Բարձրագույն կրթության գործնական դպրոցի վեցերորդ բաժանմունքը (VI^e section de l'École pratique des hautes études)³³:

³¹ Sté Dosse F., *op. cit.*, p. 119. Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 171:

³² Iggers G., Wang Q. E., Mukherjee S., *A Global History of Modern Historiography*, London, Routledge, 2008, p. 257.

³³ Ավելի մանրամասն տե՛ս Mazon B., *Aux origines de l'École des hautes études en sciences sociales. Le rôle du mécénat américain (1920–1960)*, Paris, Éditions du Cerf, 1988:

Մինչ այդ Բարձրագույն կրթության գործնական դպրոցը բաղկացած էր մաթեմատիկայի (*Mathématiques*), ֆիզիկայի և քիմիայի (*Physique et chimie*), բնական գիտությունների և բնախոսության (*Sciences naturelles et physiologie*), պատմական և բանասիրական գիտությունների (*Sciences historiques et philologiques*), ինչպես նաև կրոնագիտության (*Sciences Religieuses*) բաժանմունքներից: Եվ ահա երկար քննարկումներից հետո 1947 թվականին բացվում է նաև VI^e տնտեսական և սոցիալական գիտությունների (*Sciences économiques et sociales*) բաժանմունքը: Նախագահ է դառնում Ֆերը³⁴: Սա աննալականներին հնարավորություն տվեց հետազոտություններ կատարելու այն ուղղություններով, որոնցով նրանք գտնում էին, որ պետք է ընթանա պատմագիտությունը³⁵: Դրանց թվում էին սոցիալական գիտությունների բոլոր ուղղությունները՝ բոլոր գիտությունները, որոնք սովորական ֆակուլտետներում բավարար զարգացման հնարավորություն չունեին: Եթե մինչ այդ դյուրկհայմյան նախագիծն առաջարկում էր սոցիալական գիտությունների

³⁴ Ուշագրավ է, որ այս նախաձեռնության հաջողությանը Լյուսիեն Ֆերը չէր հավատում և ուստի չէր մասնակցում սկզբնական աշխատանքներին: Միայն Մորագեի համոզիչ փաստարկումներից հետո է, որ նա համաձայնում է ստանձնել նոր կազմավորվող բաժնի տնօրենի պաշտոնը: Հակառակ դեպքում այն կարող էր անցնել Ժորժ Գուրվիչին, որով սոցիալական գիտությունները կթողնվեին սոցիոլոգների հսկողությանը: Sté Mazon B., *op. cit.*, p. 123:

Ընդամին՝ Լյուսիեն Ֆերը միաժամանակ դառնում է մի շարք հանձնաժողովների անդամ, ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ում Ֆրանսիայի պատվիրակ, Պատմական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) ղեկավար մարմնի անդամ, երկրորդ աշխարհամարտի պատմության հանձնաժողովի նախագահ և այլն: Sté Clark S. (ed.), *The Annales School: Critical Assessments 4: Febvre, Bloch and Other Annales Historians*, London and New York: Routledge, 1999, p. 27:

³⁵ Iggers G., Wang Q. E., Mukherjee S., *op. cit.*, p. 257. Նկատենք, որ գուգահեռաբար ընթանում էր նաև Ֆրանսիական պետական հաստատություններում Աննալների դպրոցի գիտնականների ներգրավումը. նրանք բարձր պաշտոններ են զբաղեցնում բարձրագույն կրթության և գիտության համակարգում:

Հարցաթերթի (questionnaire) արմատական վերափոխում, ապա աննալականները ջանքեր են գործադրում կենտրոնացման, համագործակցության, մեթոդների և արդյունքների փոխանակման կառուցվածքներ ստեղծելու համար³⁶: Այս միտումն ավելի ուշ արտահայտվում է նաև պաշտոնական գրություն մեջ. «Անկախ տարիքից (կամ հաջողությունից), բոլոր հումանիտար գիտությունները «խաչմերուկ» կամ, եթե կուզեք, տարբեր դիտանկյուններ են սոցիալական և հումանիտար իրողությունների միևնույն համակարգի վերաբերյալ»³⁷:

Չնայած Լյուսիեն Ֆերի նման ջանքերին՝ այդուամենայնիվ, Աննալների դպրոցի հաստատությունացման բուն գործընթացն իրականություն դարձրեց Ֆեռնան Բրոդելը (1902–1985), շնորհիվ որի սկիզբ առավ «դպրոցի «պետականացման» ընդհանուր գործընթացի փուլերից մեկը»³⁸: Բրոդելը հանդես եկավ պատմագիտական հետազոտությունների նոր՝ ավելի ընդգրկուն ռազմավարությունը: Բրոդելի որդեգրած ռազմավարությունը բնորոշվում է նաև իբրև «պաշտպանողական» բաղկացած «այլ հումանիտար գիտությունների առավել նորարարական ներդրումների համակցումից՝ գիտակարգերի էմպիրիկ համադրության հարացույցի շրջանակում և տարբերվող տեղությունների լեզվով»³⁹:

Բրոդելը սկսում է Աննալների խնդիրների ոլորտ ներմուծել «տարբեր մշակույթների պատմությունը, պատմության և տնտեսության, աշխարհագրության և սոցիոլոգիայի հարաբերություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև տարբեր «ժամանակների», մասնավորապես «երկար

³⁶ Jacques R., Histoire et sciences sociales: les paradigmes des Annales. *Annales. ÉSC*, 6 (1979), p. 1368.

³⁷ Longchambon H., Les sciences sociales en France. Un bilan, un programme, *Annales. ÉSC*, 1 (1958), p. 96–97.

³⁸ Афанасьев Ю. Н., указ. соч., с. 87.

³⁹ Gemelli G., *Fernand Braudel*, Paris: Editions Odile Jacob, 1995, p. 149.

տեղություն ժամանակի» վերաբերյալ յուրահատուկ գաղափարներ»⁴⁰: Եվ պատահական չէր, որ հենց Բրոդելն է ստանձնում Հանդեսի մտավոր ժառանգությունը, քանի որ հատկապես նրան է հաջողվում համադրել աննալական փորձառությունները՝ թե՛ մշակութային, թե՛ ակադեմիական և թե՛ հաստատությունային: Իսկ արդեն 1950-ական թվականներին Բրոդելը փաստացիորեն միանձնյա մեկտեղում է իր նախորդների բոլոր գործառույթները՝ Կուլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր, Աննալների համատնօրեն, ապա տնօրեն, իսկ Ֆերի մահից հետո (1956)՝ նաև VI բաժանմունքի նախագահ:

Արդեն 1951 թ., հետամուտ բրոդելյան եռաչափ հեռանկարին, Վեցերորդ բաժանմունքը սկսում է թողարկել նաև հետազոտական-հրատարակչական երեք կարևոր շարքեր հետևյալ ուղղություններով՝ 1) նավահանգիստներ, ճանապարհներ և փոխադրումներ, 2) տնտեսական գործունեություն և ձեռնարկատիրություն, 3) փողի շրջանառություն, գներ և շուկայական պատահակցություններ: Այսու ընդլայնվում են պատմագիտական հետազոտության սահմանները, և շուտով այս գործում աննալականների հետ համագործակցում են նաև պատմական ու սոցիալական գիտությունների այս կամ այն ոլորտում մասնագիտացած շատ հանդեսներ: Սկսվում է ստեղծագործական-հետազոտական բեղուն մի շրջան: Իսկ մեծ նախագիծը, որը նշանավորվում է Բրոդելի անձով, ներկայացվում է 1956 թվականին (ընդունելության հանձնախմբի (jury d'agrégation) նախագահի պաշտոնը թողնելուց հետո): Նախագիծը հիմնված էր ամերիկյան համալսարանների տարածաշրջանային հետազոտությունների (area studies) փորձառության վրա. այդ մոդելի օրինակով նախատեսում էր հետազոտություններ մշակութային գոտիների (aires culturelles) վերաբերյալ: Մի բան, որը թույլ կտար վերախմբավորել պատմական, տնտեսական և սոցիոլոգիական մեթոդները⁴¹:

⁴⁰ Агнппе Рохас К. А., указ. соч., с. 108.

⁴¹ Stéu Dosse F., *op. cit.*, p. 123: Մինչ այդ՝ 1955 թ. վերջին, Բրոդելը

Նախագիծը հաջողվում է, և յուրաքանչյուր տարի VI բաժանմունքում ավելանում են հետազոտական նոր կենտրոններ: Սա էլ իր հերթին հնարավոր է դարձնում Բրոդելի գուգահեռ նախագծի իրականացումը՝ սոցիալական գիտությունների նոր համաբերման հնարավորություններ բացող Մարդու մասին գիտությունների տան (Maison des Sciences de l'Homme) հիմնումը: 1958 թվականին նախ հնարավոր է դառնում նոր հաստատության կառուցման համար հողատարածքի ձեռքբերումը, 1968 թվականին՝ շենքի կառուցումը, և վերջապես 1975 թվականին միայն հնարավոր է լինում ամբողջ շինություն շահագործումը⁴²:

Այսպիսով հաղորդակցության և տեղեկատվության համաշխարհայնացման արդյունքում Աննալների դպրոցի պատմական տրամասությունը վերաթարմացման կարիք ուներ. պատմական ժամանակի նոր գիտակցությունը հարմարվելու, փոփոխություններին ու զարգացումներին հարիր հասկացումի համար անհրաժեշտ էին հետազոտական նոր հարացույցներ: Ուրվագծվում էին գիտակարգի զարգացման տարբեր ուղիներ, ինչն արդյունք էր սոցիալական գիտությունների ինքնօրինակ «պոսթկլամ», որն էլ արդյունք էր սոցիալական գիտություններին տրված նոր պատվերների: Այդու՝ փոփոխվում է նաև Աննալների դպրոցի կարգավիճակը. մինչ այդ ակադեմիական ծայրամասերում գտնվողի կարգավիճակից այն գերիշխող դիրքերի է հասնում ինչպես ակադեմիական, այդպես և առա-

երկարատև ճամփորդություն էր կատարել Միացյալ Նահանգներում՝ տեղում ուսումնասիրելու տարածաշրջանային հետազոտությունների (area studies) փորձառությունը: Միացյալ Նահանգներում Բրոդելի շրջագայությունների մանրամասն նկարագրությունը տես Gemelli G., *Fernand Braudel*, Paris: Editions Odile Jacob, 1995, p. 197–245 (Braudel et l'Amérique). Aguirre Rojas C. A., Braudel in Latin America and the U.S.: A Different Reception, *RFBC*, 1 (2001), p. 25–46:

⁴² Տես Dosse F., *op. cit.*, p. 123–125. Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 177–178:

վել լայն՝ հասարակական շրջանակներում: Փիթր Բըրքի դիպուկ բնորոշմամբ՝ աննալականները, սկսելով իրենց ուղին իբրև «հերետիկոս աղանդավորներ», վերածվում են ֆրանսիական պատմագրության «ընտրախավի»⁴³:

Բ. Ֆեռնան Բրոդելի պատմության տեսությունը

Ֆրանսիական Աննալների դպրոցի ձեռքբերումների համատեքստում նշանակալի է նրա Երկրորդ սերնդի ներդրումը, որի ներկայացուցիչները հայտնի են նաև «բրոդելյան սերունդ» անվամբ⁴⁴: Ֆեռնան Բրոդելը (1902–1985) ոչ միայն այդ սերնդի խոշորագույն ներկայացուցիչն է, այլև XX դարի երկրորդ կեսի թերևս ամենականավոր պատմաբանը: Նրա ազդեցությունը համաշխարհային պատմագիտական մտքի վրա այնքան մեծ է, որ Սեմյուել Քինսերի բնորոշմամբ՝ եթե երբևէ «Նորելյան մրցանակ տրվեք պատմաբաններին, ապա դա անվերապահորեն կպատկաներ Բրոդելին»⁴⁵:

Աննալականների այս շրջանը էվոլյուցիայի էական այն օղակն է, որը հնարավորություն տվեց ընդլայնելու պատմաբանի տեսադաշտն ու հետազոտության տիրույթը՝ նախապատրաստելով անգամ Երրորդ սերնդի պատմագիտական տրամասությունների շեղումները:

⁴³ Տես Burke P., *The French Historical Revolution: Annales School, 1929–1989*, Cambridge: Polity Press, 1990, p. 31:

⁴⁴ Տես Հովհաննիսյան Ս., Ֆեռնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վէճ» համահայկական հանդես, 1 (2011), էջ 98–119:

⁴⁵ Տես Kinser S., *Annaliste Paradigm? The Geohistorical Structuralism of F. Braudel*, *AHR*, 86, (1981), p. 63:

1. Համընդգրկուն պատմության հղացքը և պատմական ժամանակի բազմաչափությունը

Ֆեռնան Բրոդելի պատմասիրության հիմնական ձեռք-բերումներից էր Համընդգրկուն պատմության հղացքի մշակումը: Այն ուրվագծվել էր դեռևս Աննալների դպրոցի հիմնադիրներ Լյուսիեն Ֆերի և Մարկ Բլոկի մոտ՝ տարասեռ գիտակարգերի մեթոդների և մոտեցումների համադրությամբ: Միջգիտակարգային հետազոտության հանդես նրանց հակումը պետք է վերահեր համընդգրկուն պատմության հղացքի, քանի որ, ինչպես դեռ Բլոկն էր նշել, «մեկը մյուսի հետևից առանձին-առանձին ուսումնասիրված դրվագների ճանաչողությունը երբեք չի ապահովի ամբողջի ճանաչողություն, չի ապահովի անգամ ինքնին դրվագների ճանաչողություն»⁴⁶, և «ավելի մեծ վստահություն կա ամբողջի, քան դրա բաղադրիչների նկատմամբ»⁴⁷:

Բրոդելը, ի մի բերելով ուսուցիչների տեսություն(ներ)ը, է՛լ ավելի է ակտիվացնում «եզակիից հոգնակիին» անցնելու հայեցակարգը, չի մեկնարկում համընդգրկուն պատմության տեսությունից պարզապես այն ստուգված փաստերի միջոցով հաստատելու համար, այլ պահպանում է պատմության համընդգրկունության սկզբունքը՝ կարևորելով «տեսարանը (scène) բազմաթիվ հնարավոր լուսարձակների կիրառման շնորհիվ լուսավորելը»⁴⁸: Սկզբունք, համաձայն որի հարկ է դրել մի պատմություն, որը լցված է «մարդու

մասին բոլոր գիտություններով», որտեղ յուրաքանչյուր դիտարկում, յուրաքանչյուր չափում վերամիավորված է «սոցիալական ուժի դաշտի ամբողջություն հետ»⁴⁹, որտեղ խոսքը «ոչ միայն մեկի ընտրության և ամուսնության մասին է, այլև մարդկային բոլոր գիտությունների հետ արտամուսնական համակեցության (concupinage) մեջ ապրելու մասին»⁵⁰: Միևնույն ժամանակ, սակայն, համընդգրկուն պատմությունը հնարավոր է՛լ պարզապես համաչխարհային պատմության մեջ առկա խնդիրները քննելով կամ նույնիսկ դրանց հաղորդակցության ողջ տեսածիրը դիտարկելով: Այդ համընդգրկունությունը բնավ էլ չի հավակնում գրել աշխարհի ամբողջական պատմությունը: Այն պահանջում է մարդկային գործողությունների բոլոր միավորների ուսումնասիրություն՝ որպես գինամիկ (ոչ ամբողջությամբ կապակցված, ոչ էլ ամբողջովին անհամատեղելի) հարաբերությունների սոցիալական կամ մշակութային ցանցեր⁵¹: Եվ այս ամենի համատեքստում՝ համընդգրկուն պատմությունը «գիտելիքից այն կողմ անցնելը, խնդիրների խորքը գնալու ցանկությունն» է⁵²:

Շուտով նման մոտեցումը դառնում է աննախականների «դասական հարացույցներից» մեկը՝ պայմանավորելով պատմական անցյալի համակարգված, ընդգրկուն ըմբռնումը: Նման մոտեցմամբ մարդկային համակեցության հիմնարար բաղադրիչները (տնտեսություն, մշակույթ, քաղաքական կառույց, կրոն, հոգեբանություն և այլն) դիտարկվում են իրրև մեկ ամբողջություն՝ ինչպես համաժամանակյա

⁴⁶ Բլոկ Մ., Պատմության պաշտպանական, կամ Պատմաբանի արհեստը /Ֆրանս. Թարգմ. Ե. Մակարյան, հոդված և ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Սարգիս Խաչենց, Փրինսիփս, Անտարես, 2018, էջ 181:

⁴⁷ Բլոկ Մ., նշվ. աշխ., էջ 203: Ընդամին եզակի իրավիճակներից դուրս գալն այնպիսի անհրաժեշտություն էր, որով հնարավոր էր դառնում նաև պատմությունն իբրև գիտություն դիտարկելը:

⁴⁸ Vézier A., La leçon de braudel, récit et problème en histoire, *Le cartable de Cléo, revue suisse sur les didactiques de l'histoire*, Université de Genève, 2012, p. 102.

⁴⁹ Braudel F., Georges Gurvitch ou la discontinuité du social, *Annales. ESC*, 3 (1953), p. 359.

⁵⁰ Braudel F., *Une Leçon d'histoire de Fernand Braudel*, Conférence: Châteauevallon Journées Fernand Braudel 18, 19 et 20 octobre 1985 (Toulon-Ollioules, France), Paris: Arthaud-Flammarion, 1987, p. 162.

⁵¹ Տե՛ս Հովհաննիսյան Ս., Համընդգրկուն պատմության և քանակային պատմության հիմնախնդիրը Փրանսիական «Աննալների» դպրոցի կերպափոխության համատեքստում, *Կանթեղ*, 1 (2008), էջ 103–109:

⁵² Braudel F., En guise de conclusion, *RFBC*, 3/4 (1978), p. 246.

(*synchronique*), այնպես էլ տարժամանակյա (*diachronique*) հարթություններում⁵³: Սակայն համընդգրկուն պատմության գործնական իրականացման մեջ համոզիչ լինելու համար անհրաժեշտ էր նոր հիմքեր ստեղծել պատմագիտության (որը հայտնվել էր պատմելու ճգնաժամի մեջ) և աշխարհագրության (որը հայտնվել էր նկարագրության ճգնաժամի մեջ) երկխոսության համար:

Բրոդելն իր հետազոտություններում մեկնարկում էր այն իրողությունից, որ «մարդու մասին մեկուսի գիտությունների և նրանց հատվածների բարեփոխումը»⁵⁴ ենթադրում է համընդգրկունության հիմնախնդիրը՝ «դանդաղ գործընթացներից շարժվելով դեպի մարդկային կենսագործունեության ավելի շարժուն և ակտիվ ոլորտները»⁵⁵: Եվ համընդգրկուն պատմության հեռանկարը կառուցակազմելու համար Բրոդելն իրրե մեկնակետ է ընդունում աշխարհապատմությունը (*géohistoire*)⁵⁶, քանի որ իր նոր նախագիծը կյանքի կոչելու համար նրան բավարար գործիքներ չէին տրամադրում ո՛չ ֆրանսիական, ո՛չ էլ գերմանական աշխարհագրագետների ու պատմաբանների տեսությունները: Բանն այն է, որ եթե առաջինների (ֆրանսիական) դեպքում հնարավոր էր հասկանալ շրջակա միջավայրը, բայց ոչ սոցիալական և տնտեսական հարցերը, ապա երկրորդների (գերմանական) դեպքում մեկնաբանվում էր տարածության և տնտեսության կապը, բայց չէր գնահատվում բնության և պետության կապի հույժ մեծ կշիռը⁵⁷: Այսուհետև Բրոդելի

⁵³ Տե՛ս Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., Ժամանակի կառույցը Բրոդելի պատմահայեցողության ծիրում, *Պատմություն և կրթություն*, 1–2 (2005), էջ 34:

⁵⁴ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, Paris, 1969, p. 7.

⁵⁵ Braudel F., *op. cit.*, p. 138.

⁵⁶ Նկատենք, որ հետագայում աշխարհապատմության փոխարեն Բրոդելը նախընտրում է օգտագործել «աշխարհագրական պատմություն (histoire géographique)» եզրույթը, իսկ երկար տևողություն հղացքի կիրառումից հետո դուրս թողնում շրջանառությունից:

⁵⁷ Տե՛ս Ribeiro G., La genèse de la géohistoire chez Fernand Braudel: un

առաջարկած աշխարհապատմությունը ֆրանս-գերմանական աշխարհագրական և պատմագիտական տեսությունների քննադատական համադրության փորձ էր, որով նա ձգտում էր դուրս գալ վիզավլայաչյան և Ֆեյրյան տեսամեթոդական կաղապարներից: Ուստի Բրոդելը, թեպետ կառույցների նկատմամբ իր վերաբերմունքով նման էր տնտեսագետներին, որոնք կառույցը դիտարկում էին տարածություն-ժամանակ-գործողություն հարաբերությունների տեսանկյունից, ավելի շատ շեշտադրում է մարդու գործողությունները իրրե և՛ ժամանակային, և՛ տարածական հարաբերությունների գործառույթ⁵⁸:

Ընդգծելով տարածության ու ժամանակի և սոցիալական կառույցների անբաժանելիությունը՝ Բրոդելը նշում էր. «Հասարակության կյանքը կախված է ֆիզիկական և կենսաբանական գործոններից. Հասարակությունը շիման, սերտ միություն մեջ է նրանց հետ, և դրանք ձևավորում, օգնում կամ խանգարում են նրա կյանքին, հետևաբար՝ նրա պատմությանը»⁵⁹, բայց ոչ ամբողջ պատմությանը, այլ դրա մի մասին, որի համար Բրոդելն առաջարկում է աշխարհապատմություն եզրույթը: Աշխարհապատմությունը «գրեթե անշարժ պատմությունն» է, «շրջակա միջավայրի հետ ակտիվ հարաբերակցվող մարդու պատմությունը»⁶⁰: Այդուհանդերձ աշխարհապատմության համատեքստում մարդկային պատմությունը չի ինքնամեկուսանում, այլ պարանելով աշխարհագրական, կլիմայական, ժողովրդագրական և այլ գործոններ՝ ընդլայնում է անցյալի ընկալման հորի-

chapitre de l'histoire de la pensée géographique, *AG*, 4 (2012), p. 338:

⁵⁸ Տե՛ս Stoianovich T., *French Historical Method: The Annales Paradigm*, Ithaca: Cornell University Press, 1976, p. 109:

⁵⁹ Braudel F., Géohistoire: la société, l'espace et le temps, dans Braudel F., *Les ambitions de l'histoire* /Édition établie et présentée par Roselyne de Ayala et Paule Braudel, Paris: Éditions de Fallois, 1997, p. 87.

⁶⁰ Бродель Ф., *Средиземное море и Средиземноморский мир в эпоху Филиппа II, Роль среды*, т. I, Москва: Языки славянской культуры, 2002, с. 20.

զոնը: Եթե Կլոդ Լևի-Ստրոսսը մարդկություն պատմության «գաղտնիքները» փորձում էր վեր հանել կենսաբանական և հոգեբանական ժամանակների համադրությամբ, ապա Բրոդելը դրանց հակադրում էր «ֆիզիկական բնության անհաղթահարելիությունը, աշխարհագրական ժամանակի դանդաղընթացությունը»⁶¹: «Դա հնարավորություն է տալիս պատմության ծիրում ներառված բոլոր գործոնների հավասարակշռումով ձևավորել պատմության անշարժ կազմը»⁶²: Բրոդելը հաճախ դա բանաձևում է իբրև անշարժ պատմություն (histoire immobile), որի շնորհիվ հնարավոր է դառնում հաղթահարել «պատմության ժամանակագրական սահմանները»⁶³: «Գրեթե անշարժ պատմության» հենքի վրա էլ ծավալվում է «դանդաղընթաց պատմությունը»՝ «սոցիալական պատմությունը [...], խմբերի և հավաքական կազմավորումների պատմությունը»⁶⁴, «համընդհանուր և հիմնային փոփոխությունների պատմությունը», «որը խոսում է ոչ թե «իրերի», այլ մարդու մասին, մարդկանց մասին կամ, եթե կարելի է, այն մասին, թե ինչպես է օգտվել մարդը դրանցից»⁶⁵:

Ակնհայտ է, որ այս մոտեցմամբ Բրոդելը մեկնարկում էր Վիդալ Դե Լա Բլաշի մարդկային աշխարհագրության տեսությունից և իր աշխարհագրատմությունը կառուցում հետևյալ երեք հիմնասյուների վրա. 1) աշխարհագրատմությունն ունի հստակ օբյեկտ, որը «կապված է հողին» և միջավայրին, 2) աշխարհագրատմությանը հատուկ են գործընթացներ, որոնց առանձնահատկություններն ի

⁶¹ Dosse F., *L'histoire en miettes. Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 2005, p. 132.

⁶² Juillard E., *Aux frontières de l'histoire et de la géographie, Révue historique*, t. CCXV, 1956, p. 271.

⁶³ Бродель Ф., *Средиземное море и средиземноморский мир в эпоху Филиппа II, Коллективные судьбы и универсальные сдвиги*, т. 2, Москва: Языки славянской культуры, 2003, с. 17.

⁶⁴ Бродель Ф., *Средиземное море ...*, т. 1, с. 20.

⁶⁵ Бродель Ф., *Средиземное море ...*, т. 2, с. 17.

հայտ են գալիս ժամանակի երկար տևողության ծիրում և պահպանվում են երկար ժամանակ, 3) աշխարհագրատմությունը գերակայող է պատմական մյուս ըմբռնումների նկատմամբ⁶⁶: Այս համատեքստում ակնհայտ է (դեռ Պոլիբիոսից մինչև Վիդալ դը Լա Բլաշ հասնող) աշխարհագրական դետերմինիզմի (déterminisme géographique) միտումը: Հարց է առաջանում՝ արդյո՞ք հաղթահարելի է այն, մանավանդ որ ըստ Բրոդելի՝ բնական և աշխարհագրական պայմանները, նյութական և տնտեսական պայմանների հետ միասին, ամբողջությամբ և համակողմանիորեն որոշարկում են մարդկանց գործունեությունը: Որից՝ անհատների և մարդկային խմբերի (հասարակությունների) կախվածության, անազատության մասին ենթադրությունը, քանի որ ժխտվում է մարդու ազատությունը՝ տեղ չթողնելով ընտրության և ստեղծագործելու համար⁶⁷: Բայց, ըստ Բրոդելի՝ տեխնաբանական հնարավորությունների սահմաններում մարդն ազատ է բնակավայրի լանդշաֆտի հետ (որտեղ ապրում է) անելու այն, ինչ ուզում է. «Մարդկային կյանքն արձագանքում է շրջակա միջավայրի թելադրանքներին, բայց նաև ձգտում է խուսափել և հաղթահարել դրանք, միայն որպեսզի հայտնվի այլ հոգսերի մեջ, որոնք մենք՝ որպես պատմաբաններ, կարող ենք քիչ թե շատ ճշգրիտ վերակառուցել»⁶⁸: Այդու՝ Բրոդելը, Ֆեւրին և Բլոկին հետամուտ, կարևորում էր աշխարհագրական հնարավորականությունը, մարդկային նախաձեռնությունը, որը փոխազդում է օբյեկտիվ պայմանների հետ և հնարավոր է դարձնում նորի հայտնվելը, որով էլ հաղթահարվում է ենթադրյալ դետերմինիզմը:

⁶⁶ Տե՛ս Kinser S., *op. cit.*, p. 69:

⁶⁷ Տե՛ս Гуревич А. Я., *Исторический синтез и Школа «Анналов»*, Москва: Центр гуманитарных инициатив, Университетская книга, 2014, с. 144:

⁶⁸ Braudel F., *The Mediterranean and The Mediterranean World in the Age of Philip II, Volume I* /Translated from the French by Sian Reynolds, London: Collins, 1973, p. 267.

Հակասական այս խնդրին Բրոդելը հանգամանորեն անդրադարձել է իր Միջերկրածովքը և միջերկրածովյան ավազանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում կոթողային աշխատություն մեջ՝ առաջադրելով եռաչերտ մի սխեմա՝ «չրջակա միջավայր» (կամ «գրեթե անշարժ պատմություն»), «հավաքական ճակատագրեր և ընդհանուր միտումներ» (կամ «կառույցների պատմություն») և «իրադարձություններ, քաղաքականություն և մարդիկ» (կամ «իրադարձային պատմություն»)՝⁶⁹։ Ֆեբրի դիպուկ բնորոշմամբ՝ «մշտապես հաղորդակցվող, բայց տարբեր» մի «եռաչերտ շարան», մի «աստիճանակարգ», որն ընդլայնվում է՝ «սկսած ամենախորքայինից և մշտականից մինչև ամենամակերեսայինն ու անցողիկը»⁷⁰։ Մենագրությունը սկսվում է «գրեթե անշարժ պատմությամբ», որը «դանդաղ է հոսում», «հաճախ բաղկացած է համառ վերադարձներից, անընդհատ կրկնվող փուլերից»՝ «գրեթե ժամանակից դուրս», և վերաբերում է մարդու և նրա աշխարհագրական միջավայրի հարաբերություններին. այստեղ է Բրոդելի առանձնահատուկ ներդրումը՝ տարածության միասնացումը ժամանակայնության (*temporalité*) մեջ։ Դրան հաջորդում է «խորքային ալիքներից» կազմված «դանդաղ ռիթմով պատմություն» տնտեսության և հասարակության պատմությունը։ Իսկ վերջում՝ «մակերևութային հուզումների», «կարճ, արագ, մարդկային տատանումների» պատմությունը՝ անհատի մասշտաբով, ավանդական պատմության հակիրճ և դրամատիկ տատանումներով⁷¹։ Ընդամենի՝ այստեղ Բրոդելին ավելի շատ «հետաքրքրում են շարժման տեղությունն ու

⁶⁹ Braudel F., *La Méditerranée et le Monde Méditerranéen à l'époque de Philippe II*, 3 vols., - vol. 1: *La part du milieu*, vol. 2: *Destins collectifs et mouvements d'ensemble*, vol. 3: *Les événements, la politique et les hommes*, Paris: Armand Colin, 1949 (երկրորդ վերանայված հրատարակությունը՝ 1966).

⁷⁰ Febvre L., *Un livre qui grandit...*, p. 223-224.

⁷¹ Տե՛ս Hexter J. H., Fernand Braudel and the Monde Braudellien..., *JMH*, 4 (1972), p. 498:

արագությունը, ուստի ժամանակն իբրև տարածություն չափորոշիչ»⁷²:

Նրա հետազոտության հիմնական առարկան սոցիալական կառույցներն են, որոնք ակնհայտ են, անմիջականորեն հասանելի և ունեն այլ փաստերը կառավարելու հատկություն, ինչը երկար տեղությունը գերակայություն է տալիս այլ ժամանակային ռիթմերի նկատմամբ, մանավանդ իրադարձությունների: Այդ կապակցությամբ Բրոդելը պատմության հորվությունում ընդգծում է հատկապես պատմության դանդաղ ընթաց մոտքի և նրա հանկարծական արագ ընթացության, կառուցվածքի և համակցության միջև առկա աններդաշնակությունը, որը մնում է իբրև չավարտվող երկխոսություն: Անհրաժեշտ է այս գործընթացները գնահատել իրենց փոխկախվածություն մեջ՝ նախապես վստահ չլինելով, թե դրանցից որոնք են գերակայող և որոնք՝ պայմանավորված մյուսներով: Այս կերպ հնարավոր է դառնում համադրել «անշարժությունն ու շարժությունը, դանդաղ ընթացությունն ու արագ ընթացությունը»⁷³: Ամենադանդաղ գործընթացների վրա կենտրոնանալու ցանկությունն ակնհայտորեն բացահայտում է նկարագրական պատմության վտանգից խուսափելու ցանկությունը⁷⁴: Այս հիմամբ Բրոդելը պատմական անցյալի կառուցվածքային և համակցային դրսևորումները կառուցում է չորս հիմնարար համակարգերի ձևով՝ (1) տնտեսություններ, (2) կայսրություններ, (3) հասարակություններ և (4) քաղաքակրթություններ:

Այսպիսով՝ Բրոդելն իր ուշադրությունը սևեռում էր այնպիսի համակցությունների հետազոտությանը, որոնք առևտրական ուղիների միջոցով շաղկապում են առան-

⁷² Leduc J., *Les historiens et le temps. Conceptions, problématiques, écritures*, Paris: Le Seuil, 1999, p. 135.

⁷³ Бродель Ф., *Средиземное море ...*, т. 2, с. 791.

⁷⁴ Տե՛ս Лотман Ю. М., Исторические закономерности и структура текста, в Лотман Ю. М., *Семиосфера*, СПб: Искусство-СПб, 2010, с. 342:

ձին համակեցական միավորները՝ ազգեր, պետություններ, տնտեսություններ, հասարակություններ: Այստեղից էլ առևտրական ուղիների, քաղաքների և շուկաների համադրական հետազոտությունը, որոնց կրավորականությունը կամ ակտիվությունը, տնտեսական բարգավաճումը կամ լճացումները Բրոդելը լծորդում է առևտրական հաղորդակցության ճանապարհների, շուկայական գների, ապրանքների նկատմամբ պահանջմունքների և այլ պայմանների հետ: Այս ամբողջի հիմամբ հաղթահարվում է հասարակությունների աշխարհագրական մեկուսացվածության նախկին պատկերը: Բնության հետ նրանց պայքարն ու ստեղծագործական ակտիվությունն ի վերջո որոշարկվում են տնտեսության ազդեցությունը: Իսկ տնտեսության անընդհատ ծավալման հետ տեղաշարժվում են պատմության նախկին սահմանները, որոնց համապատասխան էլ ձևավորվում են կայսրությունները: Այս լույսի ներքո էլ Բրոդելը քննում է պետությունների և մարդկային հասարակությունների փոխհարաբերությունները: Նման խնդրարկումից բխում է քաղաքակրթությունների հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը, որի նպատակն է «ոչ թե հանրագումարի բերել պատմության բոլոր փաստերը, ինչպես սպասելի էր, այլ մշակել մեկնաբանության նոր մեթոդներ և միջոցներ»⁷⁵:

Աշխարհապատմության և տնտեսական ու հասարակական պատմությունների համադրմամբ ասպարեզ է բացվում անհատականության պատմության (նաև անհատական ժամանակի) ծավալման համար՝ իրադարձություններ, քաղաքականություններ և մարդիկ, քանի որ աշխարհապատմության անշարժությունը հնարավոր է հաղթահարել մարդկային ստեղծագործ ճիգով⁷⁶: Ճիշտ է, այն ավանդական «թվարկումների կամ իրադարձությունների ժամանակագրության» պատմությունն է, սակայն այս դեպքում

պատմությանը ներկայացվում են այլ պահանջներ: Մասնավորապես՝ մեկուսի փաստերից հնարավոր է դառնում գնալ դեպի ամբողջականը, որտեղ համադրման շնորհիվ հնարավոր է բացահայտել «մարդկային պատմության տարասեռ դրսևորումները»⁷⁷:

Պատմության այս ըմբռնումը Բրոդելը որոշ առումով զուգահեռում էր Լեոպոլդ Ֆոն Ռանկեի պատմատեսության հետ, սակայն անմիջապես շեշտում էր դրա սահմանափակությունը, քանի որ Ռանկեի դեպքում պատմագիտական ըմբռնումների կենտրոնում պատմական կարճ ժամանակի տիրույթն է և քաղաքական իրադարձությունների ուղղակի արձանագրությունը⁷⁸: Անտեսվում են պատմության տնտեսական, սոցիալական, մշակութային, կրոնական, աշխարհատեսական, հոգեբանական խորքային դիտանկյունները: Մինչդեռ նոր մոտեցմամբ իրադարձությունները, որոնք պատմության ընդամենը «փոշին են կամ կարճ առկայծումները», ձեռք են բերում նոր իմաստ, քանի որ «իրենց առկայծումներով նրանցից յուրաքանչյուրը վկայություններ է տալիս, լուսարանում պատմության բնապատկերի մոլթ անկյունները՝ թույլ տալով նայել նրա խորքերը»⁷⁹: Քանի որ տնտեսական և քաղաքական փաստերն ավելի հեշտ են տեղակայվում կարճ և շատ կարճ տևողությունների մեջ, քան սոցիալական կյանքի այլ դրսևորումները, ուստի դրանք թույլ են տալիս ուրվագծել այդ ոլորտների նեղ սահմանները զանցող առավել ընդհանրական սխեմաներ և անցնել ներառվող իրադարձություններից շատ ավելի լայն կառույցների և ստորոգությունների հետազոտության⁸⁰:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարող ենք արձանագրել հետևյալը. անցյալի իրադարձային կառույցը բացելով

⁷⁵ Бродель Ф., *Средиземное море ...*, т. 3, 2004, с. 20.

⁷⁸ Sicut Trevor-Roper H. R., Fernand Braudel, the Annales, and the Mediterranean, *JMH*, 4 (1972), p. 475:

⁷⁹ Бродель Ф., *Средиземное море ...*, т. 3, 2004, с. 16.

⁸⁰ Sicut Там же, с. 17:

⁷⁵ Там же, с. 17.

⁷⁶ Sicut Kinser S., *op. cit.*, p. 105:

աշխարհապատմության (կառուցվածքային)⁸¹ հիմքի վրա՝ Բրոդելը պատմությունը հաղորդում է ժամանակատարածական և բովանդակային նոր չափում: Նրանում մարդը հանդես է գալիս համապարփակ ներգրավվածությունում. «Նա համապատասխանում է աշխարհագրական միջավայրի պահանջներին: Ապրում է խմբի մեջ: Եվ, վերջապես, ապրում է իր անհատական կյանքը, որի զրսևորումները դեպք առ դեպք արձանագրվում են ժամանակագրորեն»⁸²: Այն է՝ «բազմաշերտ պլանով» համադրված են աշխարհագրական ժամանակը, սոցիալական ժամանակը և անհատական ժամանակը՝ ձևավորելով մի ինքնօրինակ երկխոսություն, որն «անընդհատ կրկնվում է, կրկնվում է հանուն տևողություն, որը կարող է փոխվել և փոխվում է արտաքուստ, բայց համառորեն շարունակվում է՝ ասես ժամանակի հպումից ու խայթոցից դուրս»⁸³: Այդու՝ բրոդելյան ժամանակաչափն ընդհուպ մոտեցել էր Բախտինի մշակած բրոնտոպի հղացքին, որը ժամանակի և տարածություն ինքնօրինակ համակցությունը սահմանում է «իրականություններ» տեքստի աշխարհում⁸⁴: Մի բան, որը հնարավոր է

⁸¹ Ընդամին Բրոդելն իր «Միջերկրածովքը և միջերկրածովյան ավազանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում» մենագրության առաջին (1949) հրատարակության մեջ «աշխարհապատմությունը» ներկայացրել է որպես «անշարժ պատմություն», իսկ երկրորդ հրատարակության մեջ (1966)՝ արդեն որպես «կառուցվածքային պատմություն»: Ակնհայտ է, որ եզրույթի նման փոխակերպումը (թերևս՝ կառուցաբանության ազդեցության ներքո), խոսում է և Բրոդելի պատմատեսության մեջ որոշակի տեղաշարժի մասին:

⁸² Febvre L., Un livre qui grandit. La Méditerranée et le monde méditerranéen à l'époque de Philippe II, *RH*, 2 (203), 1950, p. 223–224.

⁸³ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 24.

⁸⁴ Տե՛ս Beaton R., 'Historical Poetics: Chronotopes in Leucippe and Clitophon and Tom Jones', in Nele Bemong et al. (ed.), *Bakhtin's Theory of the Literary Chronotope: Reflections, Applications, Perspectives*, Gent: Academia Press, 2010, p. 107: Քրոնտոպի բախտինյան Հայեցակարգի և ժամանակի երկար տևողության բրոդելյան չափումի առանձնահատկություններին կանդորադաճանք առանձին հոգվածով: Այստեղ բավարարվում ենք միայն նշելով նմանությունը:

դարձնում միմյանց լծորդել ժամանակի տարբեր ռիթմեր (երեկը, այսօրն ու վաղը)՝ ապահովելով մշտական անցում «ինչպես բովանդակայնորեն, այդպես էլ իրականությունն ալյացնող տարրերի փոխանցմամբ (գործառական փոխադրմամբ)»⁸⁵: Շնորհիվ դրա բացվում էր մարդկային կյանքը տարբեր ժամանակային ռիթմերով արտահայտելու հնարավորությունը⁸⁶, մանավանդ որ պատմությունն ալյուս չէր մրցակցում աշխարհագրության հետ, և այդուհետ հարկ էր հաշվի առնել արագորեն ընդլայնվող ալյու գիտակարգեր՝ հիմնականում սոցիոլոգիան (որի նշանավոր ներկայացուցիչն էր այդ ժամանակ Ժորժ Գուրվիչը) և մարդաբանությունը (որը Ֆրանսիական ինտելեկտուալ բեմի առաջին պլան էր մղվել Կլոդ Լևի-Ստրոսսի մի շարք գրքերի շնորհիվ): Եվ պատահական չէ, որ Բրոդելի «միջերկրածովյան աշխարհը» դարձավ եզակի այն դեպքը, երբ աշխարհագրական միջավայրը «լիակատար ազատություն» ստացավ, «պոկվեց» կոշտ աշխարհագրական դետերմինիզմից, որը ենթադրում էր նստակյաց, անշարժ աշխարհագրական պատկերներ:

Արդ, համընդգրկուն պատմության հասկացությունը ձևակերպելու համար Բրոդելը զգում է պատմական ժամանակի նոր հղացքի անհրաժեշտությունը, քանի որ «չկա եզակի ու պարզ ընթացքով սոցիալական ժամանակ, այլ հազարավոր արագացումներով ու դանդաղումներով սոցիալական ժամանակներ, որոնք գրեթե ոչ մի կապ չունեն տարեգրության ու ավանդական պատմության լրագրողական ժամանակի հետ»⁸⁷: Պատմական ժամանակի բրոդելյան ըմբռնումն իր ամփոփիչ ձևակերպումը ստացավ 1958 թվականին հրատարակված նրա «Պատմությունը և

⁸⁵ Կարապետյան Մ., Ժուռնալիստական ժամանակ և քաղաքակրթական ժամանակ, Ստեփանյան Ա. (խմբ.), *Պատմության հարցեր* 2, Եր., Զանգակ, 2013, էջ 178:

⁸⁶ Տե՛ս Daix P., Braudel, Paris: Flammarion, 1995, p. 62:

⁸⁷ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 24.

սոցիալական գիտությունները. երկար տևողություն»⁸⁸ տեսական հոդվածում, որտեղ, ընդգծելով պատմական ժամանակի բազմաչափությունը, Բրոդելը ձգտում էր հաստատել երկար տևողություն (longue durée) իբրև անկախ պատմական առնչություն, ինչպես նաև առաջադրում էր այն որպես մեթոդաբանական հիմք⁸⁹, որի վրա կառուցում էր պատմության իր հայեցակարգը՝ միտված հաղթահարելու պատմագիտության զուտ փաստագրական սահմանափակությունն ու հետպատերազմյան «ներկայականությունը (présentisme)»⁹⁰:

Ժամանակաչափի բրոդելյան հղացքն անկարելի է ընկալել առանց նրա սոցիալական բովանդակության դիտարկման⁹¹: Դեռ 1930-ական թվականներին լրջորեն արծարծվում էր այն գաղափարը, թե «յուրաքանչյուր գիտություն ունի իր առանձնահատուկ ժամանակաչափը»: Հայտնի է, որ 1937 թվականին Պիտրիմ Սորոկինն ու Ռոբերթ Մերթոնն առաջադրեցին սոցիալական ժամանակ հասկացությունը, որն «արտահայտում է սոցիալական ֆենոմենների փոփոխությունը կամ տեղաշարժը՝ իբրև ելակետ վերցված սոցիալական այլ ֆենոմենների դիտանկյունից»⁹²: Ավելի հստակ՝ իբրև սոցիալական կյանքի կերպափոխու-

⁸⁸ Stéven Braudel F., Histoire et sciences sociales: la longue durée, *Annales. ESC*, 4, (1958), Débats et Combats, p. 725–753:

⁸⁹ Stéven Tomich D., The Order of Historical Time: The Longue Durée and Micro-History, *Almanack*, 2 (2011), p. 54:

⁹⁰ Stéven Blocker D., Haddad É., Le présent comme inquiétude: temporalités, écritures du temps et actions historiographiques, *RHMC*, 3 (2006), p. 160–169:

⁹¹ *Սոցիալական ժամանակ հասկացությունը բարդ և տևական մշակման արդյունք է, որի առաջին փայլն այն էր, որ ժամանակը եզակի է (Հյուբերթ, Դյուրկհայմ) և տարբերվում է մի մշակութից մյուսը՝ տարածությունը և ժամանակով: Հաջորդ փայլը ժամանակի բազմաչափության գոյակցության բացահայտումն էր, որոնցից յուրաքանչյուրը կապված էր աշխարհի որոշակի հայեցակարգի հետ:*

⁹² Sorokin P. A., Merton R. K., Social Time: A Methodological and Functional Analysis, *AJS*, 5 (1937), p. 618.

թյունների և շարժումների հաշվարկման միջոց: Ըստ Սորոկինի և Մերթոնի մշակած հայեցակարգի՝ (1) ժամանակային համակարգերը շատ են, բազմազան և հավասարապես կիրառելի չեն տարբեր իրադարձությունների համար, (2) աստղագիտական կամ օրացուցային չափումները պարտադիր չէ, որ լավագույնս համապատասխանեն սոցիալական ֆենոմեններին, (3) ցանկացած համակարգ որոշարկվում է խմբի ներսում համաժամանակայնացման և համակարգման անհրաժեշտությամբ, (4) տեղային ժամանակային համակարգերի բնութագրերը տարբերվում են՝ կախված այն խմբերի որակներից, որոնց նրանք պատկանում են, (5) բարդ հասարակություններում ընդլայնված ընդհանուր համակարգը պետք է դրվի տեղային համակարգերի վրա⁹³:

Տեղային համակարգերի կապը միմյանց անհամապատասխան ժամանակային համակարգերի հետ պարտադիր դարձրեց ընդհանուր հայտարարի որոնումը, որն իր տեսական ավարտուն ձևակերպումն ստացավ Ժորժ Գուրվիչի՝ 1955 թվականին հրատարակած «Սոցիալական դետերմինիզմը և մարդկային ազատությունը» հիմնարար աշխատության մեջ⁹⁴: Այստեղ սոցիալական ժամանակը դիտարկվում է իր բազմաչափություն մեջ. այն «կարող է լինել կտրված, սառեցված կամ ամբողջովին շարժման մեջ՝ ըստ ցանկություն»⁹⁵: Նման ըմբռնման Գուրվիչը հանգել էր՝ մեկնարկելով համընդդրուհի հասարակությունների (sociétés globales) հղացքից, որոնց ներհատուկ են մի շարք կայուն չափորոշիչներ⁹⁶: Դրանցից հատկապես կարևոր են երկուսը: Առաջինը դիտարկում է հասարակությունն ուղղահայաց, երկրորդը՝

⁹³ Stéven Sorokin P. A., Merton R. K., *op. cit.*, p. 621–626:

⁹⁴ Stéven Gurvitch G., *Déterminismes sociaux et liberté humaine. Vers l'étude sociologique des cheminements de la liberté*, Paris: Presses Universitaires de France, 1955:

⁹⁵ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 119.

⁹⁶ Կազմաբանական և էկոլոգիական մակարդակը, սոցիալական հարցույցները, հավաքական վարքը, սոցիալական խորհրդանիշները, հավաքական արժեքներն ու գաղափարները և այլն:

Հորիզոնական հարթություններում⁹⁷: Հորիզոնական հարթության դեպքում նա առանձնացնում էր համակեցական երեք վիճակ՝ անվերջ փոքրերը (*infiniment petites*), միջին կազմությունները (*corps moyens*) և համընդգրկուն հասարակությունները: Այս վիճակները կարող են գոյություն ունենալ զուգահեռաբար, և դրանց համադրությամբ հնարավոր է ստանալ համակեցական ամբողջի պատկերը:

Զարգացնելով «սոցիալական ժամանակի» իր տեսությունը՝ Գուրվիչն առանձնացրել էր ութ ժամանակաչափում՝ (1) երկարատև կամ դանդաղած (*longue durée et au ralenti*). վերաբերում է գյուղացիական դասին և նահապետական հասարակություններին, երբ հեռավոր անցյալը տիրում է ներկային, (2) պատրանքային կամ հանկարծական (*trompe-l'oeil ou surprise*). նման է նախորդին, բայց պարտակում է ընդհատումները, բռնի արագացումներն ու անակնկալները, (3) փոփոխուն ռիթմների (*changements de rythme*) կամ անհամաչափ բարախող (*battement irrégulier*). անցումային հասարակությունների ժամանակն է, որտեղ ներկան գերակշռում է անցյալի ու ապագայի համեմատ, (4) շրջափուլային (*cyclique*). հին հասարակությունների ժամանակն է՝ ինքն իրենից դուրս ընկալվող, անընդհատ ինքն իր մեջ պարփակվող և նախնիների անցյալը ներկայում վերարտադրող, (5) ինքն իրենից հետ ընկնող (*retard sur lui-même*). ինքնամփոփ, իրենց խորհրդանիշներին կառչած հասարակությունների ժամանակն է, որոնք դիմադրում են փոփոխություններին և փորձում հավերժացնել իրենց կացությունը, (6) ինքն իրենից առաջ անցնող (*avance sur lui-même*), որը գաղափարների և հավաքական շարժումների ժամանակն է, երբ ապագան դառնում է ներկա, (7) հալադումի և առաջխաղացման հերթազայումի (*alternance entre retard et avance*). անցումային վարչակարգերի ժամանակն է, որոնք ձգտում են դուրս գալ անցյալի հարացուլցյնե-

⁹⁷ Տե՛ս Braudel F., Georges Gurvitch ou la Discontinuite du social, *Annales. É.S.C.*, 3 (1953), p. 355:

րից՝ իրականում չընդունելով ապագան, և (8) պայթուցիկ (*explosif*). հեղափոխությունների ժամանակն է, որտեղ անցյալն ու ներկան տարրալուծվում են հավաքական հուզումի (*effervescence collective*) մեջ, և ամենավտանգավոր ժամանակն է, քանի որ տապալում է գոյություն ունեցողը՝ առանց նորացման սահմանման⁹⁸:

Բրոդելը, մանրագնին հետազոտելով Գուրվիչի այս բազմաչափությունը և հակադարձելով ժամանակի գծային հայեցակարգին, կառուցեց պատմական ժամանակի իր ըմբռնումը՝ բաժանելով այն բազմաթիվ տարասեռ ռիթմների, որոնք խախտում են տևողության միասնությունը: Բրոդելը ժամանակին որակական հատկանիշներ է վերագրում՝ մի շարք մակարդակներում նոր ըմբռնում ձեռք բերելու համար: Այն անշրջելի ժամանակն է և հիմնված է երեք հիմնական չափման վրա՝ կարճ տևողություն (*courte durée կամ bref durée*) կամ քաղաքական ժամանակ, միջին տևողություն (*moyenne durée*) կամ տնտեսական ժամանակ և երկար տևողություն (*longue durée*) կամ քաղաքակրթական ժամանակ⁹⁹: Հարկավ, նա լավ գիտակցում էր, որ «գոյություն ունեն ոչ երկու կամ երեք, այլ տասնյակ ենթա-ժամանակներ, և դրանցից յուրաքանչյուրը կարիք ունի առանձնահատուկ պատմական շարակարգման», ուստի և «համընդգրկուն պատմությունն այս գործընթացների արդյունք է»¹⁰⁰: Ընդ որում, Բրոդելը ժամանակի նման տար-

⁹⁸ Տե՛ս Gurvitch G., *La vocation actuelle de la sociologie, tome 2: Antécédents et perspectives*, Paris: PUF, 1969, p. 341–344:

⁹⁹ Նկատենք, որ *durée*-ի ներքո կարելի է տարբեր նշանակություններ առանձնացնել. այն երբեմն կարող է նշանակել «տևողություն», երբեմն «չարունակականություն», իսկ երբեմն էլ «ժամանակավորություն»: Հայերեն «տևողություն» եզրույթը պարունակում է բոլոր այդ նրբերանգները, ուստի *durée*-ի դիմաց բոլոր դեպքերում թողել ենք «տևողությունը»: Այս մասին տե՛ս Wallerstein Imm., Braudel on the Longue Duree: Problems of Conceptual Translation, *RFBC*, 2 (2009), p. 155–170:

¹⁰⁰ Бродель Ф., *Средиземное море...*, т. 3, с. 424.

բաժանումն իրականացնում էր ըստ ուսումնասիրության առարկայի փոխակերպումների¹⁰¹:

Պատմական գործընթացների ժամանակային առաջին շերտը՝ կարճ տևողությունը, որը լծորդվում էր «անհատականության և իրադարձության» հետ, ավանդական պատմության կերպն է, այն է՝ իրադարձային պատմությունը (histoire événementielle): Այն չափվում է տասնամյակներով, որոնց մեջ ներառված են առանձին մարդկանց կենսագրական դրվագները, արարքները կամ իրադարձությունները, որոնք եղել են մասնակից կամ ականատես: Այն համաչափ է «անհատականությանը, նրա կյանքի առանձին ռիթմին»: Այլ խոսքով՝ համանման է «ժամանակագրի, ժուռնալիստի ժամանակաչափին»¹⁰² և արձանագրված ժամանակի երկար տևողության ծիրում՝ հանդիսանում է միկրոպատմություն¹⁰³: Ընդամենն, կարճ տևողությունն «առավել կամակոր, առավել խաբուսիկն է տևողություններից»¹⁰⁴: Կարճ տևողության նման ընկալումը Բրոդելը ձևակերպել է նաև որպես «պատմության փոշի»¹⁰⁵, որը երբեմն լծորդում են քաղաքական պատմություն հղացքի հետ՝ միայն այն վերապահումով, որ պարտադիր չէ, որ քաղաքական պատմությունը սահմանափակվի ժամանակի կարճ տևողության կամ իրադարձությունների պատմության վանդակում¹⁰⁶:

Բրոդելյան ժամանակաչափի միջին տևողությունը ներառում է տնտեսական ռիթմերը: Այն ընդգրկում է հասարակական կառույցների, ժողովրդագրական զարգացումների, արտադրության, ապրանքաշրջանառության, շուկայական հարաբերությունների և այլնի ամբողջու-

¹⁰¹ Стів Валерстайн И., Изобретение реальностей времени-пространство: к пониманию наших исторических систем, *Время Мира*, вып. 2, 2001, с. 103:

¹⁰² Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 45–46.

¹⁰³ Ibid., p. 112.

¹⁰⁴ Ibid., p. 46.

¹⁰⁵ Бродель Ф., *Средиземное море ...*, т. 3, с. 16.

¹⁰⁶ Стів Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 46:

թյունը: Միջին տևողությունը, ինչպես նշեցինք, համադրելի է կոնդրատեյան տնտեսական ալիքների հետ և հիմնականում բնութագրում է տնտեսական տեղաշարժերը: Այլ կերպ այն կոչվում է համակցային պատմություն (histoire conjoncturelle): Եթե ավանդական ժամանակաչափի մեջ գործող պատմաբանը, որի համար ժամանակը օրերի սուկական հաջորդականություն էր, բավարարվում էր մեկ օրվա կամ մեկ տարվա ընդգրկմամբ, ապա ժողովրդագրական աճերը, աշխատավարձերի ցածրացումները, բանկային տուկոսադրույքների փոփոխությունները, արտադրության հետազոտությունները, ապրանքաշրջանառությունը ճշգրիտ վերլուծելու համար կարիք ունի ավելի տևական ժամանակի ըմբռնման¹⁰⁷: Ժամանակի միջին տևողությունը չափվում է հարյուրամյակներով: Ժամանակի այս չափումը համընկնում է տնտեսական և հասարակական շրջափուլերի հետ, սակայն այն վերապահության էր, որ այստեղ պատմաբանը չպետք է այս երկուսը փոխարինի պատմական այլ գործընթացներով, որպիսիք են գիտությունը, տեխնոլոգիաները, քաղաքական հաստատությունները, ճանաչողության մեթոդները, քաղաքակրթությունները, որոնք ունեն կյանքի և զարգացման սեփական ռիթմերը¹⁰⁸:

Եվ վերջապես ժամանակի մյուս չափումը՝ երկար տևողությունը: Այն «անշարժ է կամ գրեթե անշարժ»՝ անկախ քաղաքական կամ սոցիալական փոխակերպություններից: Այս ժամանակաչափը համընկնում է «անգիտակցական պատմությանը (histoire inconsciente)», որը ծավալվում է երկարաժամկետ հեռանկարում, չափազանց ընթեռնելի իրադարձությունների կեղևի տակ, և որը կարելի է կազմակերպել հաջորդական կառույցների մեջ, որոնցում համակարգի տարրերը լրացնում են միմյանց¹⁰⁹: Ժամա-

¹⁰⁷ Стів Ibid., p. 48:

¹⁰⁸ Стів Ibidem:

¹⁰⁹ Voyelle V., L'histoire et la longue durée, dans Le Goff J. (éd.), *op. cit.*, p. 78.

նակի նման չափման մեջ շեշտվում է կառուցվածքային պատմության (histoire structurelle) այն կերպը, որը «տիրապետող է երկար տևողությանն առնչվող բոլոր գործընթացներում»¹¹⁰: Longue durée-ն կարող է ընկալվել նաև իբրև «վթարների (accidents)», «Համակցությունների (conjunctures)» և «խզումների (ruptures)» պատմության այլընտրանք¹¹¹: Այն հիմնված է «իներցիայի (inertie)» («պատմության մեծագույն մշակի») վրա¹¹²: Ընդ որում՝ դա սոսկ թվացյալ անշարժություն է, «մարդկանց գրեթե անշարժ պատմությունը՝ նրանց կրող և սնուցող երկրի հետ սերտ հարաբերությունների մեջ»¹¹³, այն է՝ մի «կիսաանշարժություն (semi-immobilité)», որի շուրջ պտտվում է ողջ պատմությունը: Այս ժամանակաչափի հետախոսողի վրա բացվում են ոչ միայն անցյալի հետազոտության հնարավորությունները, այլև ապագայի կանխատեսման հեռանկարները: Բացի այդ, ըստ Բրոդելի, «երկար տևողությունը» բացում էր պատմության և ապագայի այն փոխկապակցական հեռանկարները, ներքին կապերն ու առնչությունները, որոնց մասին դեռևս Լյուսիեն Ֆերն ու Մարկ Բլոկն էին խոսում: Այս ժամանակաչափի շնորհիվ պատմությունը տարանջատվում է այլ գիտակարգերից, քանի որ ժամանակի երկար տևողության մեջ հնարավոր է ինքնահաստատվել որպես հետազոտական առանձին բնագավառ¹¹⁴:

Այս առումով պատմագիտության առջև ծառանում է մեկ այլ կարևոր հիմնախնդիր՝ բազմաչափությունից անցում դեպի «միասնական պատմական տևողության և տեքստի ձևակերպումը»¹¹⁵: Նման մոտեցումը ենթադրում է

ավելին, քան պարզապես հետազոտության առարկայի կամ պատմաբանի հետաքրքրության շրջանակների ուղղակի ընդլայնում¹¹⁶: Ընդունել այդ դանդաղընթաց, գեթե «անշարժ» ժամանակը կամ ընտելանալ դրան՝ պատմաբանի համար նշանակում է փոխել ոճը, վերաբերմունքը, նշանակում է մտածողության մի ամբողջ շրջադարձ, սոցիալական հարցերի ընկալման միանգամայն նոր ձև, որովհետև միայն այդ դեպքում է հնարավոր «ազատագրվել իրադարձությունների գերությունից, որպեսզի հնարավոր լինի կրկին դրանց վերադառնալ և դիտարկել բոլորովին այլ հայացքով»¹¹⁷:

Ժամանակի վերոհիշյալ երեք չափումների բնականոն համադրության համար Բրոդելն առաջադրում էր չափազանց երկար տևողության (temps très long) հղացքը, որը «չգիտի վթարներ, պատահակցություններ, խզումներ» և սահմանափակվում է այնպիսի ճշմարտություններով, «որոնք հար և նման են հավերժական մարդու ճշմարտություններին»¹¹⁸: Այս չափումը, «եթե այն գոյություն ունի, ապա պետք է որ լինի իմաստունների ժամանակը (temps des sages)», որի ծիրում պատմաբանը վերացարկում և վերակառուցում է պատմության եռաչափ ըմբռնումը¹¹⁹: Եվ միայն այս ժամանակ հնարավոր կլինի պատմությունը հասկանալ հիրավի համընդգրկուն կերպով, երբ «պատմական ժամանակի բոլոր մակարդակները, բոլոր հազարավոր մակարդակները, բոլոր հազարավոր պայթյունները կարելի է հասկանալ այս խորքից, այս կիսաանշարժությունից. ամեն ինչ պտտվում է նրա շուրջը»¹²⁰: Պատմության այս չափումը միտում ունի միավորելու ողջ մարդկությունը, ի մի բերելու նրա ծավալումը ժամանակի և տարածության մեջ: Միտում ունի նրան համախմբելու

¹¹⁰ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 50.

¹¹¹ Տե՛ս *Ibid.*, p. 72:

¹¹² Braudel F., *Civilisation matérielle, économie et capitalisme, XV^e-XVIII^e siècle*, t. I, Paris: Armand Colin, 1979, p. 642.

¹¹³ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 24.

¹¹⁴ Տե՛ս Агипре Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Круг, 2006, с. 113:

¹¹⁵ Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., *Նշվ. աշխ.*, էջ 38:

¹¹⁶ Տե՛ս Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 54.

¹¹⁷ *Ibidem.*

¹¹⁸ Braudel F., *Histoire et Sciences sociales: La longue durée*, *Annales. ESC*, 4 (1958), p. 747.

¹¹⁹ Տե՛ս Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 76:

¹²⁰ *Ibid.*, p. 54.

իրեն «տիեզերական միավոր»: Համաձայն Բրոդելի՝ չափազանց երկար տևողության ժամանակը մարդկության առաջընթացի «հնարավոր ուղիներից մեկն է միայն»¹²¹:

Այսպիսին է Բրոդելի պատմական ժամանակի կառույցը: Այն հույժ արդյունավետ «գործիք» է պատմությունը համակողմանիորեն և համաչափ ըմբռնելու համար պարառելով նրա բոլոր կարևոր հարթությունները՝ մասնավոր դեպքից մինչև համընդհանուր իրադարձություն, առանձին անհատից մինչև հանուր մարդկություն: Ընդամին՝ վերջերս, տեական մերժումից հետո, պատմագիտության և սոցիալական գիտությունների մեջ կրկին կարևորվում է երկար տևողության հղացքը, որի ուղղվածությունն այս անգամ, սակայն, արդեն ամբողջությամբ չընկած է դեպի ապագա¹²²: Այն է՝ եթե նախկինում երկար տևողությունն անցյալի չափման միավոր էր, ապա այժմ այն ապագայի չափման միավոր է դառնում:

Պատմական ժամանակի երկար տևողության հետևախորքի վրա էլ Բրոդելը կառուցում է ժամանակի քաղաքակրթական չափումը, մի հարացույց, որը լրացուցիչ ազդակ և բովանդակություն է հաղորդում պատմության համընդգրկուն ըմբռնմանը:

2. «Քաղաքակրթություն» հասկացությունը և դրա չափորոշիչները

Քաղաքակրթություն հասկացության ըմբռնումը և նրա տեսաբանումը ծագել ու նախապատրաստվել են արևմտաեվրոպական փիլիսոփայական և պատմագիտական մտքի համաձիրում: Ընդ որում՝ քաղաքակրթություն հասկացությունը սկզբնապես ներհակ էր «զուտ պատմական» ըմբռնում-

¹²¹ Ibid., p. 81.

¹²² Տե՛ս Armitage D., Guldi J., Le retour de la longue durée: une perspective anglo-américaine, *Annales. HSS*, 2 (2015), p. 291:

ներին, սակայն արդեն XIX դարի վերջերից դառնում է պատմության հետազոտման մեթոդաբանական հենքերից մեկը: Իսկ արդեն XX դարի սկզբներին ձևավորվում են «քաղաքակրթություն» հղացքի տեսաբանման երեք՝ գերմանական, անգլիական և ֆրանսիական պատմագիտական դպրոցները:

Քաղաքակրթության տեսաբանման նոր ալիքն ի հայտ եկավ Երկրորդ աշխարհամարտի ավարտին և «սառը պատերազմի» սկզբնավորման ժամանակաշրջանում, երբ կրկին շրջանառություն մեջ դրվեցին իշխանություն և ազգային շահերի հիմնախնդիրները¹²³: Ուշագրավ է, որ նույն այս ժամանակներում էլ աննալականների թեմատիկան ընդլայնվելով դուրս էր եկել սոցիալ-տնտեսական սահմաններից, ուստիև առկա էր պատմագիտական նախկին հարացույցի վերաթարմացման հիմնախնդիրը: Դրա արժարժումը, ինչպես նշել ենք, շուտով փոխադրվեց Հանդեսի խորագրի մեջ՝ Տարեգրություններ. տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ (*Annales. Économies, Sociétés, Civilisations*): Անշուշտ, քաղաքակրթություն եզրույթի հայտնվելը Հանդեսի խորագրում ամենևին էլ պատահական չէր, քանզի արտահայտում էր աննալականների պատմագիտության վերարժեքման ձգտումը: Եվ այն շուտով վերածվեց պատմատեսական հիմնարար ուղղության, որում մեծ էր Բրոդելի ներդրումը:

Հարկավ, Բրոդելը քաղաքակրթական իր տեսությունը կառուցելիս մեկնարկում էր դպրոցի հիմնադիր-ուսուցիչների, մասնավորապես Ֆլեբի պատմատեսությունից: Ըստ Ֆլեբի՝ պատմագիտությունը պետք է ընդգրկի մարդկային համակեցության զանազան շերտեր, ինչպիսիք են սոցիալական կառույցը, տնտեսությունը, քաղաքականությունն ու մշակութա-հոգեբանությունը: Համաձայն նրա՝ հիշյալ շերտերն իրենց հերթին ընդգրկում են չորս ենթաշերտ: Այս-

¹²³ Տե՛ս Rich P., Civilizations in European and World History: A Reappraisal of the Ideas of Arnold Toynbee, Fernand Braudel and Marshall Hodgson, *The European Legacy*, 5, (2000), p. 341:

պես, սոցիալականը ներառում է այն ամենը, ինչն առնչվում է մարդկանց համակեցությանը՝ կենսակերպ, բնակչության վերարտադրություն (ընտանիք, ազգակեցություն, սեռատարիքային հարաբերություններ), առողջություն, հիգիենա, խմիչք, սնունդ, հագուստ, աշխատանք, զվարճանք, պաշտպանվածություն և այլն: Տնտեսականը ներառում է արտադրությունը՝ շուկա, գներ, պահանջարկ-առաջարկ, արտադրանքի և ծառայությունների փոխանակում, տեխնիկա, հաղորդակցության համակարգ, տնտեսության կազմակերպում և այլն: Քաղաքական ենթաշերտի մեջ ներառվում են մարդկանց իշխանական-հաստատության փոխհարաբերությունները, այն է՝ սովորույթները, նորմերը, իրավունքը, իշխանությունը, քաղաքացիական կառույցները, կուսակցությունները, հասարակական շարժումները և այլն: Իսկ մշակութա-հոգեբանական ենթաշերտը ներառում է հոգևոր կյանքի ոլորտն իր արժեքային ողջ համալիրով: Այս չորս ենթաշերտի փոխհարաբերության և փոխազդեցության արդյունքում ձևավորվում է համընդգրկուն մի համակարգ, որը կարելի է ձևակերպել իբրև «քաղաքակրթություն»: Ուստի «քաղաքակրթությունն», ըստ Ֆեբրի, նյութական և հոգևոր, բանական և կրոնական այն հավասարակշիռ ուժն է, որը ներգործում է մարդկանց գիտակցության վրա ժամանակի տվյալ հատվածում, տվյալ տարածքում¹²⁴:

Չնայած քաղաքակրթություն եզրույթի՝ Ֆեբրի նշանակալից ճշգրտումներին՝ այն, այդուամենայնիվ, դեռևս ամբողջական չէր: Դրա համալրմանն էլ միտված էր բրոդելյան հետազոտական ճիգը: «Քաղաքակրթություն» հասկացությանը Բրոդելն անդրադարձել է դեռևս իր Միջերկրածովքը և միջերկրածովյան ավազանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում մենագրության նախնական տարբերակներում (1947 և 1949 թթ.), որի տեսական ամփոփումն

¹²⁴ Տե՛ս Febvre L., Les principaux aspects d'une civilisation: La première Renaissance française (1924), dans Febvre L., Pour une Histoire à part entière, Paris: S.E.V.P.E.N., 1962, p. 529:

իրականացվել է նախ՝ Քաղաքակրթությունների պատմություն. անցյալը մեկնաբանում է ներկան¹²⁵ Հողվածի և ապա՝ Քաղաքակրթությունների քերականություն¹²⁶ և նյութական քաղաքակրթությունը, տնտեսությունը և կապիտալիզմը, XV–XVIII դդ. մենագրությունների մեջ:

Բայց մինչ քաղաքակրթություն հղացքը ժամանակի երկար տևողության համաժիրում դիտարկելը Բրոդելը նախ՝ փորձում էր պարզել հասկացության բովանդակային փոփոխությունները գիտության մեջ, քանի որ դրա ըմբռնումները բոլորովին էլ նույնական չէին: Այս կապակցությամբ հեղինակն առաջադրում է «ո՞րն է քաղաքակրթության ստույգ պատմությունը»¹²⁷ հարցադրումը և դրան հնարավորինս համապարփակ պատասխան տալու համար քննարկում է «քաղաքակրթություն» եզրույթը երկու ուղղությամբ. նախ՝ վերջինս «իր իսկ ակունքների», իսկ ապա՝ «մշակույթ» հասկացության ըմբռնումների համատեքստում: Բրոդելն իր հետազոտությունը կառուցել է ժամանակի երկար տևողության հետնախորքում¹²⁸, որպեսզի հնարավոր լինի ըմբռնել քաղաքակրթությունը և մշակույթը «իրենց կենդանի իմաստների շրջանակներում»: Միտումն է՝ հետևել դրանց փոխակերպությունների ընթացքին արդի դարաշրջանի պատմական գիտակցության դիտանկյունից¹²⁹:

¹²⁵ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 255–314.

¹²⁶ Braudel F., *Grammaire des civilisations*, Paris, 1993. Ձեռնարկելով այս դասագիրքը՝ Ֆեռնան Բրոդելը նախատեսում էր արդի պատմությունը և համաշխարհային պատմությունը համադրելով ներմուծել դպրոցական ծրագրերում: Սակայն Բրոդելի բարեփոխական ծրագրերը ձախողվում են Ֆրանսիական աշերի ու ձախերի համադրան ընդդիմության շնորհիվ, չնայած որ նա այն քչերից էր, որ չէր հարում քաղաքական ոչ մեկ, ոչ էլ մյուս ճամբարին: Հարաբերությունները մասնավորապես սրվում են Ժորժ Պոմպիդուի պատմագիտական ծայրահեղ պատկերացումների հետևանքով, որը հատուկ անհարգալից վերաբերմունք ուներ այլոց պատմության հանդեպ:

¹²⁷ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 258.

¹²⁸ *Ibidem*.

¹²⁹ *Ibid.*, p. 265.

Բրոդելը նկատում է, որ քաղաքակրթությունն եզրույթը սկզբնապես ըմբռնվել է իբրև «բանական, տեխնիկական, բարոյական և սոցիալական զարգացումների պարզունակացված գաղափար»՝ մինչ վերջինիս կոտորակումը և տարասեռ ենթաիմաստների ու սահմանումների ի հայտ գալը¹³⁰։ Այս առումով ուրվագծվում են մոտեցման երկու չափումներ՝ եզակի և հոգնակի¹³¹։ Եզակի չափումն ի հայտ է եկել 18-րդ դարում (1756)¹³²։ Դրանում քաղաքակրթությունը ներկայանում է «իբրև հասարակական առաջընթացի ցուցիչ»՝ վայրենությունից դեպի լուսավոր ապագա¹³³։ Իսկ հոգնակի չափումն ի հայտ է եկել արդեն XIX դարի սկզբին (1819), երբ քաղաքակրթությունը դադարում

¹³⁰ Ibid., p. 259.

¹³¹ Տե՛ս Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., նշվ. աշխ., էջ 39:

¹³² Նկատենք, որ քաղաքակրթություն հղացքը (կամ գաղափարը) կար անգամ քաղաքակրթություն բառի ի հայտ գալուց հարյուրավոր տարիներ առաջ և գրականության մեջ բավականին մանրամասնորեն լուսաբանված է եզրույթի ձևավորման գործընթացը։ Այսպես՝ «Քաղաքակրթություն» (civilisation) եզրույթը ծագում է լատիներեն «civilis» կամ «civitas» բառերից, որոնք նշանակել են «քաղաքային» կամ «քաղաքացի», իսկ հղացքի ակունքներն, օրինակ, կարելի է գտնել անտիկ հեղինակների մոտ, հաճախ այն դեպքերում, երբ առկա է Հակադրում, աստիճանակարգային տարբերակում, ինչպես *Կիկերոնի* մոտ քաղաքայինի և բնականի տարբերակումը՝ քաղաքային և բնական կեցությունների հակադրություններով (տե՛ս Chignola S., *Civis, civitas, civilitas: Translations in Modern Italian and Conceptual Change*, CHC, 2 (2007), p. 234–253): Ընդունված է քաղաքակրթություն (civilisation) բառ-եզրույթի առաջին կիրառող համարել մարկիզ դը Միրաբոյին (*Վիկտոր դը Ռիկետի*), որն այն կիրառել է իր Հանրահայտ «Մարդկանց բարեկամը կամ քննախոսություն բնակչության մասին» (*L'Ami des hommes, ou Traité de la Population*, 1757) աշխատության մեջ։ Հետազոտողներից *ժորժ Վյուլբրան* իր Հետազոտության մեջ ցույց է տվել, որ մարկիզ դը Միրաբոյի ստեղծագործությունն ամբողջովին գրված և անգամ հրատարակված է եղել 1756 թվականին, բայց հայտնի է դարձել միայն 1757 թվականին։ Ավելի մանրամասն տե՛ս Weulersse G., *Les Manuscrits économiques de François Quesnay et du marquis de Mirabeau aux Archives nationales*, Paris: P. Geuthner, 1910, p. 19–20:

¹³³ Տե՛ս Ստեփանյան Ա., Մարգարյան, նշվ. աշխ., էջ 39:

է համարվել «զուտ բարոյական և բանական արժեք»¹³⁴։ Համաձայն վերջինիս՝ պատմության ընթացքում քաղաքակրթություններ (և մշակույթներ) շատ են եղել և կան՝ թե՛ անցյալում, թե՛ ներկայում։ Չնայած որոշ նմանություններին՝ դրանք ունեն իրենց առանձնահատկություններն ու տարբերությունները։

Հընթացս այս ամենի՝ քաղաքակրթություն եզրույթի բովանդակությունն աստիճանաբար բարդանում և ձեռք էր բերում անորոշության ինչ-ինչ տարրեր։ Իսկ քանի որ քաղաքակրթությունների պատմությունը, ինչպես և պատմությունն ընդհանրապես, գտնվում է բազմաթիվ գիտակարգների խաչմերուկում, Բրոդելը կարծում էր, որ «այն պետք է իր մեջ տարրալուծի բոլոր բացահայտումները, որոնք տարբեր տարիքի սոցիալական գիտություններ կատարել են մարդկային կյանքի անսպառելի ոլորտում»¹³⁵։ Ասվածի մեջ որոշակի հստակություն մտցնելու համար Բրոդելն առաջադրում է «չորս քայլանոց» իր մոտեցումը՝ հուսալով, որ դա Հնարավորություն կտա ներկայացնել քաղաքակրթությունների պատմությունը որպես կարճատև պատմությունների խաչաձևմամբ երկար տևողության պատմական հեռանկար ստեղծելու հնարավորություն։ Այդ նպատակով նա մշակում է քաղաքակրթություն եզրույթի սեփական բառարանը՝ կատարելով գոյություն ունեցող հասկացությունների լրացումն ու վերարժևորումը։ Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ձևակերպել «քաղաքակրթություն» հղացքը՝ դրա մեջ շեշտադրելով իրականության ավելի բազմաշերտ կառույցը¹³⁶։

Այդ ծրագրի առաջին խնդիրն էր հրաժարումը որոշ ավանդական ըմբռնումներից՝ անկախ դրանց լավ կամ վատ լինելուց։ Երկրորդը՝ քաղաքակրթություն հղացքի հստակե-

¹³⁴ Braudel F., *Grammaire des civilisations*, p. 37.

¹³⁵ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 288–289.

¹³⁶ Տե՛ս Aymard M., Braudel enseigne l'Histoire, dans F. Braudel, *Ecrits sur l'Histoire*, p. 17:

ցումը: Երբորդը՝ քաղաքակրթութունների ոլորտի շրջանակի որոշարկումը, այն է՝ դրա խմաստների բացահայտումը հումանիտար տարբեր գիտությունների համադրմամբ: Եվ չորրորդը՝ ստույգ խնդիրների առաջադրումը¹³⁷:

Պատմաբանը հրաժարվում էր որոշ լեզվական կարծրակերպերից՝ չխոսելով այլևս քաղաքակրթության (ինչպես նաև մշակույթի)՝ որպես օրգանիզմի կամ անհատականության մասին: Հրաժարվում էր քաղաքակրթությունն ուղղազիծ՝ միայն ըստ ծագման, զարգացման և մահացման դիտարկելուց՝ խուսափելով չափազանց պարզեցումից¹³⁸: Հրաժարվում էր նաև քաղաքակրթությունն «ինքնաբավ, փակ համակարգ ներկայացնելուց, ինչպես նաև դրա ցանկացած շրջափուլային (ցիկլային) մեկնաբանություն բացարձակացումից»¹³⁹: Անշուշտ, բոլոր այս հրաժարումները կամ բացասումները պետք էր կատարել շատ զգուշությամբ. քաղաքակրթություն (կամ մշակույթ) հասկացության մեջ պետք էր ընդգրկել բոլոր հնարավոր մեկնաբանությունները, որպեսզի հնարավոր լիներ ավելի պարզ մշակույթներից անցում կատարել դեպի մեծ քաղաքակրթությունները (major civilisations): Եվ, որ կարևոր է՝ մեծ քաղաքակրթությունները տարբաժանել ենթաքաղաքակրթությունների, որոնց բաղադրիչներն են պետությունները, ժողովուրդները, ազգերը: Այնուհետև հարկ էր միմյանց շաղկապել այդ փոքր տարրերը և հետևել դրանց զարգացումներին:

Խիստ կարևոր էր նաև պատմության և այլ հումանիտար գիտությունների միջև երկխոսության հիմնախնդիրը, քանզի այս համատեքստում էր միայն հնարավոր խուսափել «մշակույթ» և «քաղաքակրթություն» ստորագությունների սոսկական հակադրումից, քանի որ պատմության համադրումը միմյանցից, ինչ-

¹³⁷ Sбs Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 289:

¹³⁸ Ibidem.

¹³⁹ Ibidem.

պես վարվում են գերմանացի հետազոտողները (դիցուք՝ Շպենգլերը): Ուստի «մի շարք հաջորդական երկխոսությունների» շնորհիվ է միայն հնարավոր դառնում պատմության տարածք ներբերել հումանիտար գիտությունների տարասեռ արդյունքները և ըմբռնել «քաղաքակրթություն» և «մշակույթ» ստորագությունների խորքային իրողությունները¹⁴⁰:

Եվ ապա Բրոդելի առաջարկած հաջորդ՝ ստույգ խնդիրների առաջադրման քայլը: Այն միտված էր ցույց տալու, որ քաղաքակրթության տիպաբանության, բովանդակության և առանձնահատկությունների վերաբերյալ հակասական ընկալումները մեծ մասամբ պայմանավորված են պատմական, փիլիսոփայական, սոցիոլոգիական, մշակութաբանական մոտեցումների մեկուսի դիտարկմամբ: Այս մոտեցմամբ գիտական գրականության մեջ առանձնացվում էին քաղաքակրթության տարածքային (էթնիկական և միջէթնիկական), փուլային (նախնադարյան, նախաարդյունաբերական, արդյունաբերական, հետարդյունաբերական և այլն), զարգացումային-ֆորմացիոն (ստրկատիրական, ավատատիրական, կապիտալիստական, սոցիալիստական), տեղային (ըստ աշխարհագրական տարածքի՝ եվրոպական, ասիական, մերձավորարևելյան և այլն), պատմամշակութային և ժամանակագրական (չումերական, չինական, անտիկ և այլն), կրոնական (բուդդհայական, քրիստոնեական, իսլամական և այլն) և այլ կերպերը¹⁴¹:

Ըստ այդմ անհրաժեշտ էր հստակեցնել «քաղաքակրթության» վերաբերյալ տարաբնույթ մոտեցումների հիմնական հատկորոշիչները, քանզի առկա բազմազանություն

¹⁴⁰ Ibid., p. 291, 294, 297.

¹⁴¹ Sбs Ստեփանյան Ա., Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան, Եր., Սարգիս Խաչենց & Փրինթինգոն, 2012, էջ 12: Васильев Л. С., Исторические этапы цивилизации (традиции цивилизации), Цивилизация и исторический процесс, Москва, 1982, с. 28–29.

ավելի շատ խանգարում էր, քան թե նպաստում հիմնախնդրի լուծմանը: Բրոդելն առանձնացնում էր աշխարհագրությունը, սոցիոլոգիան, տնտեսությունը և հավաքական մտայնությունները, քանի որ չնայած գիտակարգերի հարակից չլինելուն՝ ստացված պատասխաններն ավելի կմերձեցնեին դրանք միմյանց¹⁴²: Այս քաղաքը չենքի տարբեր լծորդումների շնորհիվ ստեղծվում էր հավասարակշիռ քաղաքակրթական միջավայրը՝ իր առանձնահատկություններով ու ինքնութամբ:

Առաջինի դեպքում յուրաքանչյուր քաղաքակրթություն (անկախ նրա տարածական ընդգրկումներից) տեղայնացվում է քարտեզի վրա: Նրա էական կողմը կախվածությունն է աշխարհագրական դիրքից (խոչընդոտներ կամ առավելություններ): Այս պարագայում խոսել քաղաքակրթության մասին՝ նշանակում էր խոսել «տարածությունների, հողերի, ռելիեֆների, կլիմաների, բնական ռեսուրսների, բուսական ծածկույթի, կենդանական աշխարհի, ժառանգական կամ ձեռքբերովի առավելությունների մասին: Ինչպես նաև խոսել դրանց հետևանքների մասին՝ «գյուղատնտեսության, անասնապահության, սննդի, տների, հագուստի, հաղորդակցությունների, արդյունաբերության»¹⁴³: Ասվածի շնորհիվ ուրվագծվում էր քաղաքակրթության տարածական տիպաբանությունը՝ ըստ որոշակի աշխարհագրական-տարածքային գոտիների: Միջավայրի ազդեցությամբ ձևավորված քաղաքակրթություններից կարելի է առանձնացնել, օրինակ, «գետային քաղաքակրթությունները» (հնդկական, չինական, միջագետքյան), «ծովային քաղաքակրթությունները» (փյունիկյան, հունական, հռոմեական), «անապատային քաղաքակրթությունները» (արաբական, մոնղոլական) և այլն, որոնց պարագայում անհնար է հստակ որոշարկել քաղաքակրթության սահմանները: Ընդամին տվյալ աշխարհագրական տարածքի մեջ բազմաթիվ մշակութային գոտիների

ներառվածությունը քաղաքակրթության ավելի բարդ կառույց է հաղորդում¹⁴⁴:

Երկրորդ դեպքում չկա մի քաղաքակրթություն, որը գոյություն ունենա առանց այն հասարակության, որը նրա կրողն է. «Հասարակությունը երբեք չի կարող քաղաքակրթությունից տարանջատ լինել (և հակառակը). այս երկու հասկացություններն էլ վերաբերում են միևնույն իրականությանը»¹⁴⁵: Հասարակությունը քաղաքակրթության նյութական անդրադարձն է, իսկ քաղաքակրթությունն այն հիմնական մարտկոցն է, որով սնվում և կարգաբերվում են հասարակությունները: Հայտնի է, որ որոշ սոցիոլոգիական տեսություններում քաղաքակրթության բնորոշ միջավայր է համարվում քաղաքային կյանքը: Նրա բացակայության դեպքում, ըստ դրանց հեղինակների, կարելի է խոսել միայն մշակույթների մասին: Նման մոտեցման վերջին խոչոր ներկայացուցիչը Օսվալդ Շպենգլերն էր: Քաղաքային կյանքը դեպի իրեն է ձգում և պարառում է շրջակա մշակույթները: Այլ կերպ ասած՝ քաղաքակրթությունները հասարակությունների պահեստավորումներն են. ցանկացած հասարակություն կախված է աշխարհագրական, տնտեսական, տեխնոլոգիական, կենսաբանական, ժողովրդագրական և այլ իրողություններից: Ուստի քաղաքակրթությունները կարելի է տիպաբանել նաև ըստ հասարակական կառույցի:

Քաղաքակրթությունները տիպաբանելու և որոշարկելու համար հույժ նշանակալի են նաև ժողովրդագրական, կենսաբանական, տեխնոլոգիական տվյալները: Իսկ քանի որ տարիների ընթացքում տնտեսական լավ կամ վատ ժամանակները հաջորդում են միմյանց, անխուսափելի է նաև դրանց հետևանքները կրող հասարակությունների ու քաղաքակրթությունների կերպափոխությունը: Այն է՝ «նյութական և կենսաբանական պայմաններն անվերջորեն ներազդում են քաղաքակրթությունների ճակատա-

¹⁴² S. Braudel F., *Grammaire des civilisations*, p. 40:

¹⁴³ *Ibid.*, p. 41.

¹⁴⁴ *Ibid.*, p. 43.

¹⁴⁵ *Ibid.*, p. 47.

գրի վրա»¹⁴⁶: Այստեղից էլ քաղաքակրթություններն ըստ տնտեսական կառույցների տիպաբանելու մոտեցումը, ինչպես, օրինակ, նախաարդյունաբերական, արդյունաբերական, հետարդյունաբերական քաղաքակրթություններ և այլն¹⁴⁷:

Ընդ որում՝ Բրոդելը ժխտում էր հասարակության ուղղագիծ զարգացման տեսությունը՝ նկատի ունենալով նախ և առաջ մարդկության զարգացման դարաշրջանների վերաբերյալ Ջամբատիստա Վիկոյի, Օգյուստ Կոնտի, Կառլ Մարքսի և այլոց մոտեցումները: Բրոդելի դիտանկյունից՝ կարևոր է ոչ միայն անընդհատությունը, այլև ընդհատությունն իբրև պատմական գործընթացի անկապտելի չափում: Այս կապակցությամբ նա առաջադրում է պատմության բազմազան միտումների, ռիթմերի և կիսառիթմերի կարևորման անհրաժեշտությունը՝ մերժելով այս կամ այն գերիշխող գործոնով բացատրվող պատմությունը¹⁴⁸: Այդու վերաբերվում է նաև պատմության մեկնության խնդիրը, որն այդուհետ «լինելու է նյութական կյանքի ռիթմերի և մարդկային գործունեության այլ ոլորտներում բազմատեսակ մակընթացությունների և տեղատվությունների միջև կապերի որոնման մեջ, քանի որ ոչ թե մեկ, այլ բազմաթիվ պատահակցություններ են ստեղծվում, որոնք աստիճանաբար ծավալում են իրենց գործունեությունը պատմության մեջ»¹⁴⁹:

Եվ, վերջապես, քաղաքակրթության տիպաբանության մյուս կարևոր քաղաքակրթական է մտայնությունների պատմությունը, որի ծիրում հնարավոր է դառնում նախորդ երեքի համադրումը: Քանի որ յուրաքանչյուր դարաշրջան ունի իրեն հատուկ մտածական համակարգ (որն առավել թիչ զգայուն է ժամանակի ճնշումների նկատմամբ), ուստի

¹⁴⁶ Braudel F., *Grammaire des civilisations*, p. 50.

¹⁴⁷ *Ibid.*, p. 52–53.

¹⁴⁸ Sive Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 20–21:

¹⁴⁹ Бродель Ф., *Средиземное море...*, т. 2, с. 791–792.

հնարավոր է քաղաքակրթությունը դիտարկել ժամանակի երկար տևողության համատեքստում: Որպես մտային իրողություն՝ կարելի է դիտարկել ծեսերը, սովորույթները, արվեստի ստեղծագործությունները, գրավոր հուշարձանները, կրոնը և այլն: Ասվածը հնարավորություն է տալիս քաղաքակրթությունները որոշարկել ըստ հումանիտար արժեքների՝ դրանք արտահայտող գիտությունների հետ ունեցած փոխառնչությունների համատեքստում:

Քաղաքակրթական այս բաղադրիչների համակցությունները տարբեր միջավայրերում, տարբեր դարաշրջաններում խիստ առանձնահատուկ են: Դրանց շփման կետերում «անխուսափելիորեն գոյանում են փոխշփումի և փոխներգործության դաշտեր»¹⁵⁰: Դա հնարավոր է շնորհիվ մշակութային արժեքների «ճամփորդությունների», որոնք «հաճախ հաստատվում են որևէ տեղում և շարունակում իրենց ուղին (տարվա կամ հարյուրամյակների տևողությամբ)՝ երբեք չդադարեցնելով իրենց շրջապատույտը, մոռացվում են և կրկին վերածնվում»¹⁵¹:

Քաղաքակրթական փոխհարաբերությունների համատեքստում հետաքրքիր է դրանց փոխադարձ մերժման և, ընդհակառակը, համերաշխության հիմնախնդիրը: Ըստ Բրոդելի՝ քաղաքակրթությունները «կարող են լինել հանդուրժող և առատաձեռն ու դրա հետ մեկտեղ նաև ներփակ ու անբարեհամբույր. նրանք կերպափոխվում են՝ միմյանց այցելելով, խաղաղասեր են և միևնույն ժամանակ ռազմատենչ, զարմանալիորեն կայուն ու նաև շարժուն»¹⁵²: Տվյալ քաղաքակրթության կայունությունն ու կենսունակությունը մեծ մասամբ բխում է նման կերպափոխման ունակությունից. «Դիֆուզիայի երևույթը կարող է տվյալ քաղաքակրթության կենսունակության և առանձնահատ-

¹⁵⁰ Ստեփանյան Ա., Մարդարյան Ե., *նշվ. աշխ.*, էջ 39:

¹⁵¹ Бродель Ф., *Средиземное море...*, т. 2, с. 593.

¹⁵² Там же, с. 589.

կուլթյան հուսալի փորձաքարը լինել»¹⁵³: Ընդ որում՝ քաղաքակրթությունների թե՛ երկխոսությունը և թե՛ հակադրությունը կարող են ձգվել ժամանակի երկար տևողություն մեջ: Դրանք կարող են տեղի ունենալ ինչպես ինքնաբերական ընթացքով, այնպես էլ գիտակցված¹⁵⁴: Երկու դեպքում էլ այդ «լայնածավալ շրջապատույտը երբեք չի դադարում»¹⁵⁵, իսկ դրանցից «յուրաքանչյուրը և բոլորը (միասին վերցված) մեզ ներառում են հսկայական պատմական շարժման, ժամանակի չափազանց երկար տևողության մեջ»¹⁵⁶ տեսանելի դարձնելով ժամանակի քաղաքակրթական և երկար տևողության համընկնումը: Ուստի, կրկնենք մի անգամ էլ, քաղաքակրթությունները լիովին ըմբռնելի են միայն ժամանակի երկար տևողության ծիրում¹⁵⁷, մանավանդ եթե նկատի ունենանք, որ քաղաքակրթությունները «երբեք անշարժ չեն», և դրանց ուսումնասիրությունը նշանակում է «խաղալ մի քանի ժամանակագրական խորությունների վրա [...] բացահայտելու և հետևելու էվոլյուցիաներին, որոնք հաճախ շատ դանդաղ են ընթանում»¹⁵⁸:

Սակայն համընկնելով բրոդելյան երկար տևողության հետ՝ քաղաքակրթությունը, այնուամենայնիվ, չի նույնանում դրան, այլ ընդամենը վերջինիս բազմաթիվ չափումներից մեկն է: Ժամանակի երկար տևողությունը ներառում է բազմաթիվ քաղաքակրթություններ՝ թե՛ տարածամանակյա և թե՛ համաժամանակյա հարթություններում: Ժամանակի շրջանակներում դրանք միավորվում են իրենց

¹⁵³ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 294.

¹⁵⁴ Տե՛ս Braudel F., *Grammaire des civilisations*, p. 63:

¹⁵⁵ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 293.

¹⁵⁶ *Ibid.*, p. 302.

¹⁵⁷ Տե՛ս Braudel F., *Grammaire des civilisations*, p. 67:

¹⁵⁸ Aymard M., Étienne Balazs et Fernand Braudel, dans Will P.-É., Ang I. (ed.) *Actualité d'Étienne Balazs, 1905–1963. Témoignages et réflexions pour un centenaire*, Paris: Collège de France, Institut des hautes études chinoises, 2010, p. 57.

բազմազանություններով հանդերձ¹⁵⁹: Այստեղից հետևություն՝ «չկա մեկ համընդգրկուն և անկասելի օրենք կամ սկզբունք, որով կարելի լիներ բացատրել բոլոր քաղաքակրթություններն ու պատմությունն ընդհանրապես»¹⁶⁰:

Բրոդելը քաղաքակրթության և դրա հիմնարար բաղադրիչների գանազան լծորդումների շնորհիվ պատմության տիրույթն ավելի ընդգրկուն դարձրեց: Դա պահանջում էր նոր հետազոտական մեթոդաբանություն և աշխատանք՝ համադրելու «մեկնաբանության տարբեր համակարգերը, որոնք շաղկապված են միմյանց»¹⁶¹: Չնայած Բրոդելը խուսափում է «քաղաքակրթություն» ստորոգծության վերաբերյալ որևէ հստակ սահմանում տալուց, այնուամենայնիվ, ի մի բերելով հղացքի վերաբերյալ նրա գանազան ձևակերպումները՝ ստանում ենք հետևյալ պատկերը. «Քաղաքակրթությունը մշակված աշխարհագրական տարածք է, որին մարդիկ և պատմությունը տվել են որոշակի կառուցիկություն»¹⁶², տարածք, որով որոշարկվում են նրա հնարավորություններն ու պայմանավորում գարգացման խիստ սահմանները¹⁶³: Ընդ որում՝ քաղաքակրթությունը չի սպառվում միայն ազգագրական ըմբռնումների շրջանակներով, այլ ներկայացնում է տարածահամակեցական «գոտիներ, որոնք և՛ սահմանափակում են մարդուն, և՛ մշտական փոփոխության ենթարկվում նրա ջանքերով»¹⁶⁴: Այլ խոսքով՝ «քաղա-

¹⁵⁹ Այստեղ բրոդելյան երկար տևողության հղացքը համընկնում է Կառլ Յասպերսի *առանցքային ժամանակի* հղացքի հետ: Ավելի մանրամասն տե՛ս Jaspers K., *Vom Ursprung und Ziel der Geschichte*, München: Zürich, 1949:

¹⁶⁰ Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., *նշվ. աշխ.*, էջ 39:

¹⁶¹ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 293.

¹⁶² Бродель Ф., *Средиземное море...*, т. II, с. 605.

¹⁶³ Տե՛ս Там же, с. 608:

¹⁶⁴ Braudel F., *The Mediterranean and The Mediterranean World in the Age of Philip II, Volume II* /Translated from the French by Sian Reynolds, London: Collins, 1973, p. 773.

քակրթութիւնը որոշակի աշխարհագրական և մշակութային տարածքի մեջ պարաուված», «որոշակի հասարակական կարգի», «տնտեսական կենսակերպի» և «հավաքական հոգեբանութեան (մտայնութեան)» համադրական-երկխոսային ամբողջութիւնն է, որը ծավալվում է պատմութեան ամենաերկար տեղութեան համաժիրում¹⁶⁵: Այս առումով քաղաքակրթութեան պատմութիւնն ընդհանուր պատմութիւնն է, բայց վերցված որոշակի հեռանկարում, դիտարկված առավելագույն հնարավոր ժամանակագրական տիրույթում պատմական և մարդկային գործոնների համակցումների հետնախորքի վրա: Ընդ որում՝ տվյալ քաղաքակրթութեան առանձնահատկութիւններն ընկալելու համար հարկ է անընդհատ թարմացնել մոտեցումը նրա կոնկրետ իրադարձութիւնների և կառույցների, աշխարհագրական միջավայրի և ռեսուրսների, հասարակութեան տիպաբանութեան և մտայնութիւնների, մշակույթի և կրոնի, արվեստի և հոգեբանութեան նկատմամբ: Եվ այդ ամենը կոնկրետ ժամանակի (եռաչափ) չափումի մեջ¹⁶⁶:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ Բրոդելի քաղաքակրթութիւնների տեսութիւնը, ըստ էութեան, նախորդ հետազոտողների (և մասնավորապես Ֆելի և Բլոկի) փորձառութեան հստակ և հետեւողական զարգացումն էր: Այն հանգեցրեց պատմութեան նոր ըմբռնման, որը հայտնի է «բրոդելյան» անվամբ: Քաղաքակրթութիւնների տեսութեան մեջ նա մեկնարկում էր նյութական քաղաքակրթութիւնը հղացքից՝ առաջադրելով հղացքի նոր մեկնութիւն, որն ի հայտ էր եկել դեռևս մշակույթ և քաղաքակրթութիւն ստորոգութիւնների զանազանման և համադրման դիտանկյունների քննարկման ժամանակ:

¹⁶⁵ Braudel F., *Grammaire des civilisations*, p. 40, 47, 50, 53, 68.

¹⁶⁶ *Ibid.*, p. 66.

3. Նյութական քաղաքակրթութիւնը և դրա չափորոշիչները

Բրոդելի մշակած քաղաքակրթութիւնների պատմութեան մեջ իր առանձնահատուկ տեղն ունի նյութական քաղաքակրթութիւնը հղացքը: Համընդգրկուն պատմութիւն և պատմութեան երկար տեղութիւնը հղացքների լույսի ներքո Բրոդելին հաջողվել է մարդկանց սոցիալական կյանքը և համակեցութիւնը դիտարկել արտադրութեան կարևոր դրսևորումներից մեկի՝ նյութական քաղաքակրթութեան դիտանկյունից. «ժամանակի երկար տեղութիւնը և քաղաքակրթութիւնը՝ այս երկու նախընտրելի ստորոգութիւնները, իրենց հերթին պահանջում են լրացուցիչ դասակարգում՝ հատուկ բոլոր հասարակութիւններին, որոնք գոյութիւն ունեն համատեղ»¹⁶⁷: Համաձայն պատմաբանի՝ ասվածն ավելի քան վերաբերում է Արևմտյան Եվրոպային՝ սկսած XV դարից:

Քաղաքակրթութեան այս տարատեսակի մանրակրկիտ դիտարկումը Բրոդելն իրագործել է իր Նյութական քաղաքակրթութիւն, տնտեսութիւն և կապիտալիզմ. XV–XVIII դդ.¹⁶⁸ կոթողային մենագրութեան մեջ: Վերջինիս

¹⁶⁷ Braudel F., *Civilisation matérielle, économie et capitalisme, XV^e–XVIII^e siècle*, t. I, Paris, 1979, p. 642.

¹⁶⁸ Տե՛ս Braudel F., *Civilisation matérielle, économie et capitalisme, XV^e–XVIII^e siècle*, Paris, tt. I–III, 1979: Նշենք, որ Բրոդելի այս աշխատութիւնը Ֆելի հետ նախածեռնած հետազոտական շարքի արդյունքն էր: Ըստ այդ նախածեռնութեան՝ Ֆելը և Բրոդելը պետք է գրեին 1400–1800 թվականների Եվրոպայի երկհատոր պատմութիւնը. Ֆելը գրելու էր «արևմտյան մտքի ու Հավատքի», իսկ Բրոդելը՝ «նյութական քաղաքակրթութեան» մասին: Նախածեռնութիւնը մնաց անավարտ՝ Ֆելի մահվան պատճառով, իսկ Բրոդելի աշխատութիւնը լույս տեսավ առանձին (1967)՝ *Նյութական քաղաքակրթութիւնը և կապիտալիզմը. XV–XVIII դդ.* (Civilisation matérielle et capitalisme, XV^e–XVIII^e siècle) վերնագրով: Սակայն այդ գրքի պատրաստման ընթացքում Բրոդելը հասկացավ, որ այն շատ ավելի հավակնոտ նախագծի միայն առաջին մասն է, ուստի հաջորդ տասնամյակում ընդլայնեց այս աշխատութիւնը,

ձեռքբերումներն իրենց սեղմ ընդհանրացումն են ստացել հեղինակի վերջին՝ Ֆրանսիայի ինքնությունը մենագրություն մեջ¹⁶⁹։ Հիշենք՝ քաղաքակրթությունների բրոդելյան տեսությունը ներկայանում է իբրև բազմաշերտ ու բազմիմաստ մի կառույց, որի մեջ (ըստ դարաշրջանի մարտահրավերի) կարող են ակտիվանալ նրա քաղաքական, մտային, կրոնական, տնտեսական և այլ բաղադրիչներ։ Եվրոպայի պարագայում Նոր դարաշրջանի արշալույսին մեծ կարևորություն ձեռք բերեց հասարակական կյանքի կազմակերպման «տնտեսական-տեխնոլոգիական» զարգացումը։

Շատ առումներով այս նոր՝ Նյութական քաղաքակրթությունը, տնտեսությունը և կապիտալիզմը. XV–XVIII դդ. մենագրությունը, Միջերկրածովքի (հատկապես երկրորդ մասի) և ընդհանրապես բրոդելյան պատմատեսության կենտրոնական թեմաների ու հարցերի ընդլայնումն է նախարդյունաբերական մնացած աշխարհի առնչությունը։ Այստեղ Բրոդելը ձգտում է «եթե ոչ ամեն ինչ տեսնել, գոնե ամեն ինչ տեղավորել աշխարհի անհրաժեշտ մասշտաբով»¹⁷⁰։ Ավելի հստակ՝ քաղաքակրթության վերաբերյալ Բրոդելի մոտեցումն, ըստ էության, աշխարհագրագետի կամ աշխարհապատմաբանի մոտեցում է, որը հետաքրքրված է մշակութային տարածքներով (*aires culturelles*), որոնց միջև տեղի է ունենում կամ չի ունենում ապրանքների փոխանակում¹⁷¹։

և այն դարձավ պատմաբանի երկրորդ գլուխգործոցի առաջին հատորը։ Գրքի լրամշակված եռահատորը հրատարակվեց 1979 թվականին՝ արդեն Նյութական քաղաքակրթություն, տնտեսություն և կապիտալիզմ. XV–XVIII դդ. (Civilisation matérielle, économie et capitalisme, XV^e–XVIII^e siècle) վերնագրով։ Տես **Braudel F.**, *Civilisation matérielle, économie et capitalisme, XV^e–XVIII^e siècle*, Paris, t. I, 1979, p. 7. **Dursteler E. R.**, **Fernand Braudel** (1902–1985), in **Daileader Ph.**, **Whalen Ph.** (eds.), *French Historians 1900–2000: New Historical Writing in Twentieth-Century France*, Chichester, 2010, p. 71:

¹⁶⁹ **Տես Braudel F.**, *L'identité de la France*, 3 voll., Paris, 1986:

¹⁷⁰ **Braudel F.**, *Civilisation matérielle, économie et capitalisme, XV^e–XVIII^e siècle*, t. I, Paris, 1979, p. 641.

¹⁷¹ **Տես Burke P.**, *The French Historical Revolution: Annales School*,

Հետազոտությունն առանցքային թեման պատմության շրջադարձային կետերից մեկն է՝ ավատատիրական հասարակության քայքայման և կապիտալիստական հասարակության ձևավորման շրջանը, որտեղ հույժ կարևորվում է «շուկայական տնտեսություն» և «կապիտալիզմի» տարբերակումը։ Բանն այն է, որ կապիտալիզմի զարգացման ընդհանուր տեսությունները, որոնք մշակել էին Կառլ Մարքսը, Մաքս Վեբերը և Վեռներ Զոմբարտը, Բրոդելի համար կամ սահմանափակ էին, կամ ուղղակի հակասում էին պատմական իրականությունը։ Ըստ Բրոդելի՝ տնտեսական պատմաբանի գործիքներն, ի տարբերություն սոցիալական տեսաբանի կամ տեսաբան տնտեսագետի գործիքների, ոչ արտածական (*déductif*) մոդելներ են, որոնց նպատակը ոչ թե «կանոններ» կամ «օրենքներ» ձևակերպելն է, այլ պատմանյութը հասկանալի հարացույցներով ներկայացնել-մեկնաբանելը¹⁷²։ Ուստի կապիտալիզմի որոշակի հայեցակարգ ապահովելու համար Բրոդելը նախ և առաջ տարբերակեց տնտեսական գործունեության միմյանց լծորդված երեք մակարդակներ (կիրառելով «եռահարկ տան» համաբանությունը)՝ «նյութական քաղաքակրթություն» (առտնին կյանքի կառույցներ), «շուկայական տնտեսություն» (փոխանակման խաղեր) և «կապիտալիզմ» (իբրև աշխարհի ժամանակ և իբրև հակաշուկա)։

Ըստ այդմ էլ կառուցված է մենագրությունը։ Առաջին հատորի նպատակը «նախարդյունաբերական աշխարհում հնարավորի սահմանների ճանաչումն է»։ Հատորը ներառում է նյութական և առտնին կյանքը, սոցիալական բոլոր մակարդակները՝ վերլուծելով տարբեր, ներառյալ արժույթային (գրամական) գործիքները։ Երկրորդ հատորում առերեսվում են «տնտեսություն» ու «կապիտալիզմը»՝ «իրենց խառնուրդներով և հակադրություններով»։ Հատորն ընդգրկում է «փոխանակման բոլոր խաղերի» շրջանակը՝ մնալով

1929–1989, Cambridge: Polity Press, 1990, p. 47:

¹⁷² **Day J.**, **Fernand Braudel and the Rise of Capitalism, SRIQ**, 3 (1980), p. 508.

«սոցիալական, քաղաքական և տնտեսական հանգույցում»: Երրորդ հատորն ավելի դասական է: Հետամուտ լինելով փոփոխվող համաշխարհային գերակայությունների ժամանակագրությունը՝ Բրոդելը միևնույն ժամանակ հատորը կառուցում է «աշխարհ-տնտեսություն» նոր հայեցակարգի շուրջ և հետամուտ լինում Պատմության ժամանակների (*temps de l'Histoire*) տատանումներին՝ նախապատվությունը տալով «աշխարհի ժամանակին», այն է՝ կապիտալիստական, համաշխարհայինացված, աշխույժ հատվածներին:

Այսպես՝ նյութական քաղաքակրթություն եզրույթը, լինելով ընդհանրական քաղաքակրթություն հղացքի բաղկացուցիչներից մեկը, ունի տարասեռ բովանդակություն: Այն բացահայտվում է նախ և առաջ առտնին կյանքի զանազան դրսևորումների մեջ (առևտուր, ծովագնացություն, հաղորդակցություն, քաղաք, դրամաշրջանառություն, սնունդ, գներ, բնակավայրեր և այլն): Երկար տեղություն ծիրում դրանց համալիր դիտարկումն էլ Բրոդելը համարում է «նյութական կեցություն կամ նյութական քաղաքակրթություն»¹⁷³, որը գոյություն ունի «ամենուր, կրկնվող է, անընդհատ լրացվում է, հոսում է կրկնության նշանի ներքո»¹⁷⁴:

Շեշտենք մեկ անգամ էլ՝ քաղաքակրթության այս տարատեսակի մեջ գերակայում է տնտեսական գործոնը¹⁷⁵: Ուստի նյութական քաղաքակրթությունը հնարավորինս ընդգրկուն կերպով ներկայացնելու համար Բրոդելը սոցիալական պատմության կողքին ակտիվացնում է նաև սոցիալական տնտեսություն (socio-economies) հղացքը¹⁷⁶: Այդուհանդերձ, նա հստակ պատկերացնում է, որ դա հետազոտական հիմնախնդրի «անհրաժեշտ պարզեցում է», քանզի

¹⁷³ Braudel F., *Civilisation matérielle*, t. I, p. 8.

¹⁷⁴ *Ibid.*, p. 15.

¹⁷⁵ Տե՛ս *Ibidem*:

¹⁷⁶ Տե՛ս Stoianovich T., *Social History: Perspective of the Annales paradigm*, *RFBC*, 3/4 (19781), p. 21:

«միայն այս երկու՝ սոցիալական և տնտեսական կոորդինատներն անբավարար են»¹⁷⁷: Ուստի նա դիմում է «երկար տեղություն և անցյալի ու ներկայի երկխոսություն»¹⁷⁸ համադրական պատմությանը՝ այն դիտարկելով երեք հիմնարար չափումների մեջ¹⁷⁹: Դրանցից առաջինը կապված է մեզ արդեն հայտնի անշարժ պատմության, երկրորդը՝ հաստատված սոցիալական կառույցների դանդաղ փոխակերպման, իսկ երրորդը (կյանքի առավել արագ)՝ քաղաքական փոփոխությունների հետ: Գործընթացներ, որոնք նկատել և որոնց անդրադարձել էր Մարքսը, որն արտադրության եղանակի հղացքի և ստրկությունից ավատատիրություն, այնուհետև կապիտալիզմ անցնելու տեսության միջոցով որպես պատմության էական ձևավորումներ սահմանել էր բազմադարյան համակարգերը (*systèmes pluriséculaires*)¹⁸⁰:

Բրոդելը նշում է, որ իր նպատակն է բացահայտել նյութական կյանքի (ինչպես նաև ընդհանրապես սոցիալական կյանքի) բազմատեսակ սյուժեները¹⁸¹: Այսպես, իր առջև խնդիր դնելով թափանցել «տնտեսության անթափանցության գոտիները»՝ Բրոդելը փորձում է հաղթահարել ավանդական՝ իրականությունը համաժամանակյա («ըստ հորիզոնական հարթության») բացահայտելու դրապաշտական մոտեցումները: Բանն այն է, որ համաժամանակյա դիտարկման դեպքում պատմաբանը բախվում է ժամանակի սեղմությանը՝ տեսադաշտից դուրս թողնելով խորքային գործընթացները: Բրոդելը հստակ գիտակցում էր, որ պատմությունն ինչ-որ համասեռ և ինքնաբավ ոլորտների մեխանիկական հանրագումար կամ հաջորդականությունն է: Պատմաբանի խնդիրն է առտնին կյանքն ու իրադարձությունների հաջոր-

¹⁷⁷ Braudel F., *Civilisation matérielle*, t. I, p. 642.

¹⁷⁸ *Ibid.*, p. 10.

¹⁷⁹ Տե՛ս Burke P., *op. cit.*, p. 46:

¹⁸⁰ Տե՛ս Le Goff J., *L'histoire nouvelle*, dans Le Goff J. (éd.), *op. cit.*, p. 54:

¹⁸¹ Տե՛ս Braudel F., *Civilisation matérielle*, t. I, p. 639:

դակնությունը լծորդել կառույցների դինամիկայի հետ և դրանք միմյանց հակադրելու փախարեն համադրել:

Որպես առաջին քայլ Բրոդելը, ջնջելով «գյուղատնտեսություն», «առևտուր» և «արդյունաբերություն» ավանդական հղացքները, հետազոտության առարկա է դարձնում առտնին կամ նյութական կյանքի ոլորտները՝ բնակչություն, սնունդ, հագուստ, ապաստան, փող, ժողովրդագրություն, գներ, տեխնիկա, բնակավայրեր, արտադրություն, շուկաներ, քաղաքներ և այլն¹⁸²: Նպատակն էր որոշարկել տնտեսական կյանքի և մշակութային գոտիների «հնարավոր ու անհնար սահմանները»: «Նյութական կյանքը մարդիկ են և իրերը, իրերն են ու մարդիկ: Հետազոտել իրերը՝ սնունդ, կացարան, հագուստ, պերճանքի առարկաներ, գործիքներ, դրամական միջոցներ, գյուղերի ու քաղաքների հատակագծեր, միով բանիվ՝ այն ամենը, ինչը ծառայում է մարդուն. ահա այն միակ միջոցը, որով հնարավոր է առտնին կեցության իմացությունը»¹⁸³: Այսու՝ նյութական քաղաքակրթության պատմական և ժամանակազրական չափմանը հավելելով սոցիալական և տարածական չափումը՝ հնարավոր է լինում նաև ընդլայնել պատմության ըմբռնման ավանդական սահմանները¹⁸⁴: Ի վերջո պատմությունը չի սահմանափակվում նրանով, ինչ փոխվում է, այն ներառում է և այն, ինչ չի փոխվում, և ինչ փոխվում է այնքան դանդաղ, որ մարդիկ չեն գիտակցում:

Լուսաբանելով առտնին կյանքը¹⁸⁵ Բրոդելը նկատի ունի կեցության այն կողմը, որի մեջ մենք ներգրավված ենք՝ անգամ չգիտակցելով, քանի որ «սովորույթը (և անգամ

¹⁸² **Steu Burke P.**, 'Material Civilisation' in the Work of Fernand Braudel, in Clark S. (ed.), *op. cit.*, 3, p. 196:

¹⁸³ **Braudel F.**, *Civilisation matérielle*, t. I, p. 19.

¹⁸⁴ **Steu Pesez J.-M.**, Histoire de la culture matérielle, dans **Le Goff J.** (éd.), *op. cit.*, p. 191:

¹⁸⁵ **Առտնին պատմություն (L'histoire du quotidien)** – պատմագիտական եզրույթ, որը թարգմանել ենք «առտնին», որպեսզի չչփոթենք «առօրեական»-ի հետ, որը բոլորովին այլ իրողություն է բրոդելյան պատմատեսության համապատկերում և ընդհանրապես:

առտնին կյանքը), հազարավոր ժեստեր, որոնք ծաղկում և իրագործվում են ինքնըստինքյան, և որոնց վերաբերյալ ոչ ոք պարտավոր չէ որոշում կայացնել, իրականում տեղի են ունենում մեր գիտակցությունից դուրս»¹⁸⁶: Եվ քանի որ առտնին ողջ կյանքը մանր փաստերից է բաղկացած՝ ժամանակի և տարածության մեջ հազիվ նկատելի, ապա դրանց հետազոտությունը ժամանակի երկար տևողության ծիրում հնարավորություն է տալիս մեկնաբանել աշխարհի դանդաղ փոփոխվող առանձին կառույցները, դրանց կուտակումները, անհավասար տեղաշարժերը: Այլ պարագայում դրանք գրեթե աննկատ են մնում¹⁸⁷: Այս հիմամբ «փոքրիկ պատահարներից երևակվում է հասարակությունը»: Աննկատ և վաղանցիկ դեպքերի համադրությամբ կառուցվում է «հրապուրիչ» պատկերների մի շարան, որի միջոցով սկսում է ի հայտ գալ «համընդգրկուն պատմությունը»¹⁸⁸: Նման պատկերների բազմազանությունն է, որ պատմաբանը պետք է դասակարգի և համակարգի՝ հնարավոր դարձնելով դրանց պատմական մեկնաբանությունը: Իսկ այդ նպատակով հարկ է «մեկընդմիջտ ձերբազատվել ավանդական հնապաշտության կապանքներից»¹⁸⁹:

Այստեղից էլ բխում է Բրոդելի հետազոտության երկրորդ մակարդակը՝ փոխանակությունների խաղերը: Նպատակն էր վերլուծել տնտեսական տեղաշարժերի զանազան կերպերը՝ փողոցային շուկաներից մինչև կրպակներ, խանութներ, տոնավաճառներ ու շուկայական գոտիներ: Այս «փոխանակային խաղերը» Բրոդելը դիտարկում է երկու մակարդակներով՝ շուկայական տնտեսության («բնական») և կապիտալիզմի («արհեստական»)՝ համոզված, որ «այդ-

¹⁸⁶ **Braudel F.**, *La dynamique du capitalisme*, Paris: Flammarion, 1985, p. 12–13.

¹⁸⁷ **Афанасьев Ю. Н.**, Фернан Бродель и гуманитарное знание, в **Ф. Бродель, Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XVIII вв.**, т. I, Структуры повседневности: возможное и невозможное, Москва: Весь мир, 2007, с. XXII.

¹⁸⁸ **Braudel F.**, *Civilisation matérielle*, t. I, p. 17.

¹⁸⁹ **Ibid.**, p. 640–644.

պիսի զանազանումը լիովին արդարացված է, քանի որ Հնարավորություն է տալիս բացահայտելու մի կողմից տնտեսության մեջ ներգրավված տարասեռ ուժերը, մյուս կողմից՝ դրանք իրագործող մարդկանց գործողություններն ու դիտավորությունները (մտայնությունները)»¹⁹⁰:

Այս կերպ Բրոդելը տարանջատում է շուկայական տնտեսությունն ու կապիտալիզմը՝ դրանք դիտարկելով իրրև արտադրության և փոխանակության երկու տարբեր համակարգեր¹⁹¹: Բրոդելյան այս մոտեցումը Հնարավորություն էր տալիս ապրանքային փոխանակումների ընթացքը դիտարկել ավանդական շուկայից դեպի կապիտալիստական շուկա: Գործընթացը հեղինակն ուսումնասիրում է նախ և առաջ Միջնադարից դեպի Նոր դարեր անցման դարաշրջանի համատեքստում: Նպատակին հետամուտ՝ Բրոդելը դիմում է Գուրվիչի «սոցիալական կառույցների հոգնակիություն», Սայմոն Կուզնեցի «գնագոյացման», Կառլ Փոլանյի «մարդարանական տնտեսության» տեսությունների համադրությանը: Դա նրա մոտեցումը դարձնում է «կառուցիկ և բազմաբովանդակ»¹⁹²:

Հաջորդ հիմնախնդիրը, որ ծառայել էր Բրոդելի առաջ, պահանջում էր հաղթահարել շուկայական տնտեսության «սահմանափակությունը» և անցում կատարել մրցակցության այլ մակարդակի, տիրապետության այլ մասշտաբի¹⁹³: Ուստի, փորձելով տնտեսությունը զետեղել ժամանակի ու տարածության և այդ ժամանակն ու տարածությունը կիսող մյուս տարրերի (քաղաքականություն, մշակույթ, հասարակություն) մեջ¹⁹⁴, Բրոդելն այդ միջակայքում առաջադրում է աշխարհ-տնտեսություն (économie-monde) հղացքը՝ կոչված շեշտելու, որ համաշխարհային մակրո և միկրո (առանձին

տիրությունների) տնտեսությունների (ինչպես և հասարակությունների) միջև գոյություն ունի որոշակի աստիճանակարգ՝ հիմնված զարգացման անհամաչափությունների վրա¹⁹⁵: Տվյալ մոտեցմամբ՝ այս հղացքը պետք է արտահայտեր աշխարհում ծավալվող տնտեսական գործընթացների անհամաչափությունը և ներկայացներ դրանք հավասարակշռող մակրոտնտեսական ու աշխարհապատմական զարգացումները:

Աշխարհ-տնտեսության հավասարակշիռ գործընթացն ավելի ըմբռնելի դարձնելու համար Բրոդելն առաջադրում էր աշխարհի ժամանակ ըմբռնումը, որը «չի կազմում, չի կազմելու մարդկության պատմությունն ամբողջականորեն», որը, կախված տեղից և դարաշրջանից, կառավարվում է որոշակի սկզբունքներով և նշանակություններով¹⁹⁶: Ըստ հեղինակի՝ աշխարհի ժամանակը կազմում է համընդգրկուն պատմության վերնաշենքը¹⁹⁷: Դրանից Բրոդելն ածանցում է վերը քննարկված համաշխարհային տնտեսություն և աշխարհ-տնտեսություն հասկացությունները: Ընդ որում՝ աշխարհ-տնտեսությունը Բրոդելը հակադրում է գոյություն ունեցող համաշխարհային տնտեսություն հղացքին: Այն, ըստ էության, գերմաներեն Weltwirtschaft եզրույթի բրոդելյան թարգմանությունն է¹⁹⁸: Բրոդելն աշխարհ-տնտեսությունը տալիս է իր մեկնաբանությունը. «Համաշխարհային տնտեսությունը ծավալվում է աշխարհով մեկ», իսկ «աշխարհ-տնտեսությունը շոշափում է աշխարհի սոսկ մի մասը, մոլորակի տնտեսապես անկախ մի մասը, որը հիմնականում կարող է ինքնաբավ լինել, որին որոշակի օրգանական միասնություն են հաղորդում ներքին կապերն ու փոխանակությունները»¹⁹⁹: Հետագա քննարկումներից

¹⁹⁰ Braudel F., *Civilisation matérielle*, t. II, p. 8.

¹⁹¹ Dosse F., *op. cit.*, p. 148.

¹⁹² Burke P., *op. cit.*, p. 49.

¹⁹³ Տե՛ս Braudel F., *Civilisation matérielle*, t. II, p. 728:

¹⁹⁴ Տե՛ս Бродель Ф., *Материальная цивилизация, экономика и капитализм, XV–XVIII вв., Время мира*, т. 3, Москва: Весть мир, 2007, с. 1:

¹⁹⁵ Տե՛ս Braudel F., *Civilisation matérielle*, t. II, p. 10:

¹⁹⁶ Տե՛ս Бродель Ф., *Материальная цивилизация*, с. XVI:

¹⁹⁷ Там же, с. XVII.

¹⁹⁸ Տե՛ս Gemelli G., *Fernand Braudel*, Paris: Editions Odile Jacob, 1995, p. 125:

¹⁹⁹ Braudel F., *Civilisation matérielle*, t. III, p. 12.

պարզվում է, որ աշխարհ-տնտեսությունն արտահայտում է համաշխարհային զարգացման ամենակարևոր միտումները: Այդուհանդերձ, քննարկվող հղացքը բոլորովին էլ չի արտահայտում որևէ որոշակի քաղաքակրթություն կամ հասարակություն: Այն ունակ է միավորելու մի քանի (երբեմն հույժ տարբեր) քաղաքակրթություններ՝ Արևմտյան Եվրոպա, Միջերկրածովքի ավազան, Հեռավոր Արևելք, Լատինական Ամերիկա և այլն:

Համաձայն Բրոդելի՝ աշխարհ-տնտեսությունը որոշարկվում է երեք հիմնարար հատկանիշներով: Առաջին՝ ունի որոշակի աշխարհագրական տարածք և հաղորդակցական սահմաններ: Դրանք կարող են լինել ինչպես բնական, այնպես էլ տնտեսական, մշակութային, հոգևոր (մտային), կրոնական և այլն: Ընդ որում՝ սահմանները թեպետ բավականին դանդաղ, բայց փոփոխվում են: Երկար տևողության մեջ ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում այդ սահմանների անխուսափելի ճեղքումներ²⁰⁰: Քանի որ Բրոդելը հասարակությունը հետազոտում է որպես տնտեսական ամբողջություն, ապա «աշխարհ-տնտեսության սահմանները տեղակայվում են այնտեղ, որտեղ սկսվում է նույն տեսակի մեկ ուրիշ տնտեսություն՝ ինչ-որ գծի, ավելի ստույգ՝ ինչ-որ գոտու երկայնքով: Դրա հատումն ինչպես այս, այնպես էլ այն կողմից՝ տնտեսական առումով շահավետ էր լինում միայն բացառիկ դեպքերում»²⁰¹:

Մշակույթը ևս ներառվում է աշխարհ-տնտեսության սահմանների վրա՝ պատենշ կամ կապող օղակ հանդիսանալով տնտեսական փոխանակումների ճանապարհին: Մշակույթը ևս կարող է ձևավորել համակեցական տարածություն, քանի որ այն «մարդկության պատմության ամենահին դերակատարն է. տնտեսությունները փոխարինում էին մեկը մյուսին, քաղաքական հաստատությունները

²⁰⁰ Sbrú Braudel F., *La dynamique du capitalism*, Paris: Flammarion, 1985, p. 84–85:

²⁰¹ Бродель Ф., *Материальная цивилизация*, т. 3, с. 6.

խորտակվում էին, հասարակությունները հաջորդում էին միմյանց, բայց քաղաքակրթությունը շարունակում էր իր ճանապարհը»²⁰²: Բրոդելն ընդգծում է, որ աշխարհ-տնտեսության մեջ մշակութային քարտեզներն անպայմանորեն չեն համընկնում տնտեսական քարտեզներին. «Ցանկացած աշխարհ-տնտեսության մեջ քարտեզագրված մշակույթը և տնտեսությունը կարող են խիստ տարբերվել, երբեմն նույնիսկ հակասել միմյանց»²⁰³:

Երկրորդ՝ աշխարհ-տնտեսությունն ունի իր բեկուր կանտրոնը, այն է՝ տիրապետող քաղաքը (անցյալում՝ քաղաք-պետությունը, այժմ՝ մայրաքաղաքը կամ տնտեսական կենտրոնը): Ընդ որում՝ քաղաքներն իրենց ակտիվությունը համաձայնեցնում էին մայր երկրի (métropole) ակտիվության հետ: Իսկ դեպի ծով ելք ունեցող քաղաքները մի յուրօրինակ «Նոյան տապան» էին, «դիմակների իսկական տոնավաճառ», «Բաբելոնի աշտարակ»: Պահանջվում էր, որ այդ խայտաբղետ, աշխարհաքաղաքացիական (cosmopolite) բնակչությունը կարողանար խաղաղ ապրել և աշխատել: Նոյան տապանը ենթադրում է «պարտադիր հանդուրժողականություն»: Իսկ հանդուրժողականության հրաշքները կրկին ու կրկին ի հայտ են գալիս «ամենուր, ուր երևան են գալիս շուկաների կուտակումներ»²⁰⁴: Ընդամին՝ միևնույն աշխարհ-տնտեսության շրջանակներում միաժամանակ կարող են գոյություն ունենալ երկու կամ ավելի տնտեսական կենտրոններ: Այդ կենտրոնը կամ կենտրոնները մնայուն չեն և ենթակա են փոփոխության՝ հրեթացս այս կամ այն աշխարհ-տնտեսական զարգացման: Հնարավոր է նաև այլ տարբերակ. դրանք կարող են գոյություն ունենալ երկար ժամանակ և մրցակցել միմյանց հետ²⁰⁵: Իսկ որևէ աշխարհ-տնտեսության կենտրոնի անկման արդյուն-

²⁰² Там же, с. 47.

²⁰³ Там же, с. 48.

²⁰⁴ Там же, с. 10, 11.

²⁰⁵ Там же, с. 84–85.

քում ուժեղ ցնցումները զգալի են անգամ «ամենահեռավոր ծայրամասերում»²⁰⁶:

Երրորդ՝ աշխարհ-տնտեսությունն աստիճանակարգային կառույց է՝ բաղկացած միմյանց ներհակ կամ համադրվող գոտիներից²⁰⁷: Ուղղահայաց աստիճանակարգը ներկայացվում է սոցիալական կառույցներով, որոնք գոյություն ունեն աշխարհ-տնտեսության բոլոր գոտիներում: Աստիճանակարգը աշխարհ-տնտեսության տարածական կառույցն է: Այն աշխարհաքաղաքական-գեոսոցիալական համակարգ է, որը բաղկացած է երեք գոտիներից՝ «կենտրոն», «միջին գոտի» և «լուսանցքային գոտի»: Վերջիններս միջոցով Բրոդելը մոդելավորում է աշխարհ-տնտեսության փոխհարաբերությունների համակարգերը: Այս իմաստով՝ աշխարհ-տնտեսության գործառնականացումն իրականացվում է «միջին» և «լուսանցքային» գոտիների հանդեպ «կենտրոնի» մշտական գերակայության հաստատման հիմքի վրա: Իսկ դա իր հերթին պայմանավորում է անհավասար, ոչ համարժեք հարաբերություններ²⁰⁸:

Բրոդելին հաջողվել է աշխարհ-տնտեսություն հղացքի շնորհիվ սոցիալ-տնտեսական գործընթացների հանդեպ նոր հայացք ձևավորել: Դրա անհրաժեշտությունը բխում էր ցայդ գերակայող պատմական մատերիալիզմի՝ իրականության միակողմանի մեկնաբանությունից, որը միտում ուներ համայն պատմությունը բացատրել սոսկ տնտեսական դետերմինիզմի սկզբունքով: Բոլոր պատմական իրողությունների հիմք համարվում էր տնտեսությունը՝ արտադրություն, շուկա, գրամափոխանակություն և այլն: Մինչդեռ աշխարհ-տնտեսություն հղացքը հնարավորություն է տալիս ստեղծել սոցիալական կառույցի այնպիսի հարացույց, որը հիմնված է մարդկության պատմության բազմաչափ և բազմաշերտ

ըմբռնման վրա, քանի որ «աշխարհի պատմությունը չքերթ է, մի թափոր, արտադրական միջոցների համագոյություն, որոնք մենք մեծապես հակված ենք հետևողականորեն դիտարկելու տարբեր դարաշրջանների առնչությամբ»²⁰⁹: Ավելին՝ «սխալ է աշխարհ-տնտեսությունը ներկայացնել որպես ողջ հասարակությունը կառավարող, հասարակական այլազան կարգերը որոշարկող համակարգ», քանի որ «տնտեսությունը երբեք մեկուսացած չի լինում»²¹⁰:

Այս ամենի համաձիբում Բրոդելն առաջադրում է կապիտալիզմ հղացքի ոչ ավանդական ըմբռնումը, քանի որ Վեբերի նման պնդել, թե կապիտալիզմը կալվինիստական էթիկայի մարմնացումն է, կամ Զոմբարտի նման, թե հրեաներն են հայտնագործել կապիտալիզմը, նշանակում էր բարդ խնդիրներին պարզունակ լուծումներ առաջարկել²¹¹: Թե՛ Վեբերը, թե՛ Զոմբարտը կապիտալիզմը դիտարկեցին իբրև որոշակի տեսակի մտածողության մարմնացում՝ զուտ Մարքսի հայեցակարգը շրջանցելու, դրանից խուսափելու համար²¹²: Ըստ Բրոդելի՝ կապիտալիզմը չի առաջացել եզակի աղբյուրից. այն ո՛չ հասարակական-տնտեսական ֆորմացիա է, ո՛չ որոշակի տարածաշրջանում սոցիալական հարաբերությունները կարգավորող և սեփական միջոցներով արտադրությունը կազմակերպող համակարգ, ո՛չ էլ ինչ-որ մի առանձնահատուկ սոցիալական կառույց: Կապիտալիզմն այդ ամենի ամբողջությունն է, յուրօրինակ մի «ցուցիչ», որի հետազոտումը «նշանակում է անմիջականորեն մոտենալ հասարակական հիմնական խնդիրներին և իրողություններին՝ ժամանակի երկար տևողություն, տնտեսական կյանքի տարբեր բնագավառներ, աշխարհ-տնտեսություններ, դարավոր և այլ անկայունություններ, սոցիալական աստիճանակարգի խճճված և խճճվող ցանցեր (չասելու

²⁰⁶ Там же, с. 14.

²⁰⁷ Տե՛ս Braudel F., *La dynamique du capitalism*, Paris: Flammarion, 1985, p. 86:

²⁰⁸ Տե՛ս Бродель Ф., *Материальная цивилизация*, т. 3, с. 18:

²⁰⁹ Бродель Ф., *Материальная цивилизация*, т. 3, с. 51.

²¹⁰ Там же, с. 26.

²¹¹ Տե՛ս Бродель Ф., *Материальная цивилизация*, т. 2, с. 146:

²¹² Там же, с. 409.

Համար դասակարգային պայքար) կամ գերիշխող փոքրամասնությունների համառ և բազմազան դեր, անգամ արդյունաբերական հեղափոխություններ և այլն...»²¹³:

Բրոդելը կապիտալիզմի իր տեսությունը կառուցում է նյութական և տնտեսական կյանքի տարբերակման վրա: Այդպիսով առաջադրում է տնտեսագիտության մեջ առանցքային շուկայական տնտեսության և կապիտալիզմի տարբերակման հարցը, որը հնարավորություն է տալիս տարանջատելու բորսաներում գործող երկու տրամաբանություն՝ միջազգային կապիտալիզմի տրամաբանությունը, որը վավերացվել է ավելցուկի իրացմամբ, և ավելի տեղային բնույթի կապիտալիզմի, որն ունի վճարունակ պահանջարկը (*demande solvable*) բավարարելու գործառույթ²¹⁴:

Ըստ այդմ՝ նյութական կյանքի և տնտեսական կյանքի միջև ընկած է նրանց շփման մակերեսը, որը պարզապես շարունակական հարթություն չէ, և շփումն իրականանում է հազարավոր աննկատ կետերում (շուկաներ, արհեստանոցներ, խանութներ և այլն). «Նման կետերը կարծես միաժամանակ խզման կետեր են. մի կողմից՝ տնտեսական կյանքն է՝ իր փոխանակումներով, իր արժույթներով, իր հանգուցային կետերով և իր ավելի բարձր մակարդակի միջոցներով՝ առևտրային վայրեր, բորսաներ և տոնավաճառներ, մյուս կողմից՝ «նյութական կյանքը», «ոչ տնտեսությունը» կաշուն ինքնաբավության նշանի ներքո: Տնտեսությունը սկսվում է փոխանակային արժեքի շեմային մակարդակից»²¹⁵: Այսու՝ Բրոդելը կապիտալիզմն ընկալում է որպես փոխանակման եղանակ (այդ թվում՝ զուտ ֆինանսական փոխանակումները), այլ ոչ որպես արտադրության եղանակ: Կապիտալիզմը համապարփակ է՝ ի սկզբանե ներկա ցանկացած աշխարհ-տնտեսության համաժիրում, մարդկության պատ-

մություն ցանկացած դարաշրջանում. «կառուցվածքային քամելեոն է», որը «կարող է փոխել գույնը, բայց մնում է քամելեոն»²¹⁶: Այստեղ Բրոդելն ուշադրություն է հրավիրում կապիտալիզմի ամենակարևոր որակի՝ նրա բնական ճկունության, փոփոխականության և առկա պայմաններին հարմարվելու վրա: Միևնույն ժամանակ կապիտալիստական գործունեությունն իրականացվում է մենաշնորհայնորեն, անհավասար փոխանակման միջոցով, երբ կենտրոնը գերիշխում է աստիճանակարգում և շահագործում ծայրամասը: Այդու՝ կապիտալիզմը գոյություն ունի միայն այնքանով, որքանով նրան հաջողվում է ստեղծել տարածական աստիճանակարգեր, որոնք օգուտ են բերում համաշխարհային տնտեսության «կենտրոնին»: Ընդամին՝ պարբերաբար տեղի է ունենում աշխարհ-տնտեսությունների ապակենտրոնացում, կենտրոն(ներ)ի փոփոխություն (ինչպես իրարահաջորդ Վենետիկի և Անտվերպենի, հետո Ամստերդամի, հետո Լոնդոնի դեպքում): Հընթացս այդպիսի ապակենտրոնացումների՝ տեղի է ունենում նաև վերակենտրոնացում. «Կարծես աշխարհ-տնտեսությունը չի կարող ապրել առանց ծանրության կենտրոնի, առանց բևեռի»²¹⁷:

Այսու՝ տնտեսական գործունեության բրոդելյան եռաշերտ բաժանումը, ինչպես տեսանք, ենթադրում է կապիտալիզմի նոր սահմանում՝ որպես ազատ շուկայական տնտեսությունից տարբերվող, իսկ իրականում որպես հակաշուկայի մի տեսակ: Բրոդելի դիրքորոշման մեջ ուշադրավ է շուկայի ճանաչումը որպես կապիտալիզմի ձևավորման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Ըստ Բրոդելի՝ կապիտալիզմը տիրապետության և մենաշնորհային սահմանափակումների ստեղծման համակարգ է, որը ներառում է շուկան, բայց նաև դեմ է դրան²¹⁸: Նրա մեխանիզմ-

²¹³ Бродель Ф., *Материальная цивилизация*, т. 3, с. 687.

²¹⁴ Sté Goursolas J. M., Les jeux de l'échange entre l'histoire braudélienne et l'analyse économique, *Espaces-Temps*, 34/35 (1986), p. 59:

²¹⁵ Braudel F., *Civilisation matérielle*, t. II, p. 7.

²¹⁶ Braudel F., *Une leçon d'histoire de Fernand Braudel*, p. 145.

²¹⁷ Braudel F., *La dynamique du capitalisme*, Paris: Flammarion, 1985, p. 90.

²¹⁸ Федотова В. Г., Колпаков В. А., Федотова Н. Н., *Глобальный капитализм: три великие трансформации: социально-философский*

ներն ու «նազմավարությունները» չեն բխում դասական տնտեսագետների հաստատած կանոններից, այլ մասնակիորեն ի հայտ են գալիս առևտրականների, դիվանագետների զեկուլցների, ճանապարհորդների նկարագրությունների և այլնի ուսումնասիրությունից, ինչպես նաև ոչ եվրոպական տնտեսական համակարգերի հետ համեմատություններից²¹⁹: Այստեղից էլ կապիտալիզմի ըմբռնման մեջ բրոդեյան ներդրումը՝ միմյանց լծորդված նրա երեք պնդումները. (1) պատմական կապիտալիզմի էական հատկանիշն իր երկար տևողության ընթացքում եղել է նրա «ճկունությունն» ու «փոփոխվելու և հարմարվելու ունակությունը», այլ ոչ թե տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում ընդունած կոնկրետ ձևերը, (2) համաշխարհային պատմության մեջ կապիտալիզմի «իրական տունը» եղել է ֆինանսական ասպարեզը, և ոչ թե առևտրային կամ արդյունաբերական ասպարեզները, (3) ոչ թե շուկաների, այլ պետութայունների հետ նույնացումը թույլ տվեց կապիտալիզմին հաղթել ժամանակակից դարաշրջանում:

Այսու՝ ակնհայտ է, որ կապիտալիզմի ծագումնաբանությունն ընդհանրապես, իսկ արևմտյան կապիտալիզմի ծագումնաբանությունը՝ մասնավորապես, ունի մեկնաբանությունների բազմազանություն. փոխվում են դիտանկյունները, մեկնաբանական հեռանկարները՝ ուրվագծելով գործընթացի այս կամ այն կողմերը: Կապիտալիզմի բրոդեյան վերաիմաստավորմամբ հարցականի տակ դրվեցին անխուսափելի առաջընթացի տեսության թե՛ ազատական, թե՛ մարքսիստական հայեցակարգերը: Փոխարենը Բրոդեյը տեսնում էր ոչ թե գծային առաջընթաց, այլ շարունակական լարվածություն մենաշնորհի (այսպես կոչված իրական կապիտալիզմի) ուժերի և ազատագրման ուժերի միջև, որոնք ազատագրում են փնտրում ինքնակառավար-

վող տնտեսական գործունեության միջոցով մրցակցային շուկաների համալիրում, որտեղ նրանց գործունեությունը «հազիվ է տարբերվում սովորական աշխատանքից»²²⁰:

Վերոշարադրյալից ակնհայտ է դառնում, որ Բրոդեյի համընդգրկուն պատմության հղացքն ունի համապարփակ-համալիր բովանդակություն, որի ծիրում պատմությունն օժտվում է իմաստային և կառուցվածքային ընդլայնման հնարավորություններով: Բրոդեյան եռաշերտ ժամանակահատվածի հետնախորքի վրա քաղաքակրթության, ինքնության, մտայնությունների և աշխարհ-տնտեսության զանազան լծորդումների շնորհիվ հնարավոր է դառնում պատմության «համընդգրկուն» ըմբռնումը: Միևնույն ժամանակ վերջինս չի հանգում մեկ «ճշմարիտ» և միագիծ մեկնաբանության. Բրոդեյը քննադատում է պարզեցված մոտեցումները, որոնցում բոլոր տնտեսական ու սոցիալական երևույթները դիտարկվում են որպես միմյանց հետ կապ չունեցող, կարծես թե սահմանափակ սկզբունքներից բխող մոտեցումներ: Բրոդեյան համընդգրկուն պատմությունը պարառում է իր առանձին մասերն իրրև համակարգված ամբողջություն: Ընդ որում՝ դրանց լծորդումներն ու համադրությունները միատեսակ չեն: Դրանցից մի քանիսը երբեմն առաջնային դեր են խաղում, մյուսները՝ երկրորդական: Հաճախ այդ դերակատարումները փոխվում են: Այլ կերպ ասած՝ «համընդգրկուն պատմության» ծիրում գոյություն ունեցող կապերը բացարձակ հաստատուն կամ անշարժ իրողություններ չեն: Դրանք տարբեր են պատմական տարբեր իրադրությունների պայմաններում, որտեղ տարասեռ լծորդումները պատմության բովանդակությանը նորանոր գրգռներ են հաղորդում: Մի իրողություն, որը ճկունություն է հաղորդում դիտարկվող հղացքին, շնորհիվ որի՝ հնարավոր է դառնում «պատմության

анализ взаимоотношений экономики и общества, Москва: Культурная революция, 2008, с. 48.

²¹⁹ Day J., *op. cit.*, p. 514.

²²⁰ St' u Wallerstein Imm., Braudel on Capitalism, or Everything Upside Down, in Clark S. (ed.), *The Annales School: Critical Assessments 3: Fernand Braudel*, London and New York: Routledge, 1999, p. 265:

Հորիզոնն» անընդհատ տեղաշարժել, դուրս բերել հաստատագրված սահմաններից: Ուստի համընդգրկուն պատմությունը ներկայանում է ընդլայնվող սահմանների մեջ: Այն պատմաբանից պահանջում է գործընթացների տարաչափ և տարարժեք մեկնաբանություններ:

Այսպիսով՝ Բրոդելը մերժում էր պատմությունը մեկ կամ մի քանի գործոններով մեկնաբանող տեսությունները. «Ձկա ավելի գայթակղիչ և միաժամանակ ավելի պատրանքային իրողություն, քան երևույթների միագիծ մեկնաբանությունը»²²¹: Ուստի համընդգրկուն պատմությունը, մեկնարկելով ժամանակի բազմառիթմ ըմբռնումից, ենթադրում է գործընթացների անընդհատ վերադասերման (և վերաշարադրանքի) անհրաժեշտությունը, «զի հընթացս ժամանակի փոփոխվում է հետազոտողի բանական աչքի ուղղվածությունը, և վերջինս սկսում է անցյալում նկատել փաստեր, իրողություններ և իմաստային զարգացումներ, որոնք ցայդ մնացել էին աննկատ և արժևորվել թերի»²²²: Սրանով Ֆեռնան Բրոդելը մոտեցել էր «իր իսկ ստեղծած համակարգի հաղթահարման սահմանագծին»²²³ և նախապատրաստել Երրորդ սերնդի աննալականների տրամասական շեղումները: Սերունդը, որը դարձավ Դպրոցի, ինչպես նաև առհասարակ պատմագիտության այլացման կարևորագույն օղակներից մեկը և որը հնարավոր դարձրեց ընդլայնել պատմաբանի տեսադաշտն ու հետազոտության տիրույթը, միևնույն ժամանակ կարողացավ հասարակական գիտությունների ոլորտում պահպանել և ամրադրել պատմագիտության կենտրոնական դերը, թեև այլացման գնով, որը ենթադրում էր նաև արմատական փոփոխություն:

²²¹ Braudel F., *Ecrits sur l'Histoire*, p. 133.

²²² Ստեփանյան Ա., Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրություն հնարավորություն), Պատմություն և կրթություն, 1-2, (2005), էջ 13:

²²³ Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., *նշվ. աշխ.*, էջ 40:

Գլուխ երրորդ

ԱՆՆԱԼՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԱՅԼԱՑՈՒՄԸ.

«ՆՈՐ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(Մաս առաջին)

Աննալների դպրոցի այլացման մի նոր հեռանկար բացվեց 1968 թվականի «մշակութային արմատական հեղափոխությունից» հետո¹: Հեղափոխություն, որը գնահատվեց իբրև «պատմական ջրբաժան», երբ «ուլյալ աշխարհ-համակարգի մշակութազաղափարաբանական իրողությունները վերջնականորեն այլափոխվեցին իրադարձություններ, որն ինքնին համակարգի գործառնությունն որոշակի երկարատև կառուցվածքային միտումների բյուրեղացումն էր»²: Արդյունքում՝ Արդիության մշակութային վերարտադրության գլխավոր մեխանիզմների և կառույցների փոխակերպումը: Այդպիսի արմատական փոխակերպումները, ժակ Ռեկելի դիպուկ բնորոշմամբ, մասշտաբային խաղեր (jeux d'échelles) էին³: Նոր-նոր ձևավորվող Հետարդյունաբերության և Հետկառուցաբանության ազդեցությունները Աննալների դպրոցը ենթարկվում էր տեսամեթոդական

¹ Агриппе Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Кругъ, 2006, с. 128.

² Wallerstein I., 1968, Revolution in the world-system Theses and queries, *Theory and Society*, Vol. 18, 4 (1989), p. 431.

³ Revel J., Micro-analyse et construction du social, dans Revel J. (éd.), *Jeux d'échelles. La micro-analyse à l'expérience*, Paris: Gallimard-Seuil, 1996, p. 17.

ինքնանորոգման շրջաբեկմանը: Կրկին ի հայտ է գալիս նոր հարացույցների և չափորոշիչների մշակման և կայացման հիմնախնդիրը⁴: Ընդ որում, կիզակետի փոփոխությունը նշանակում էր ոչ միայն դիտարկվող երևույթների ընդգրկման (տարածաժամանակային և բովանդակային), այլև Հանդեսի կազմակերպական ներքին փոփոխություն:

Իրավիճակն էականորեն փոփոխվում է՝ սկսած 1969 թվականից, երբ Երկրորդ սերնդի ներկայացուցիչներ Ֆեռնան Բրոդելն ու Շառլ Մորազեն թողնում են խմբագրի պաշտոնը՝ Հանձնելով այն Մարկ Ֆերրոյի, Ժակ Լը Գոֆֆի, Էմմանյուել Լը Ռուա Լադյուրիի (հետագայում նրանց կմիանան Անդրե Բյուրգիերն ու Ժակ Ռեկելը) համակառավարմանը⁵: Նկատենք, որ Հանդեսի տնօրինության կազմում բոլոր այդ տեղաշարժերը համագիտական հիմնախնդիրների, տեսամեթոդական և գաղափարաբանական «Հանդերձավորման» համապատկերում ընթացող խորագույն փոփոխությունների սոսկ արտաքին դրսևորումներն էին: Գործընթացն ուղեկցվում էր մի կողմից՝ պատմագիտության ավամարդացմամբ ու կոտորակմամբ⁶, մյուս

⁴ Տես Հովհաննիսյան Ս., Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս առաջին: Հետկառուցարանական հայացարկեր և պատմության «քանակային» կամ «չարային» ըմբռնումը, «Վէժ» համահայկական Հանդես, I (2012), էջ 62–83:

⁵ Ձևականորեն Բրոդելը խմբագրակազմի մեջ մնաց մինչ իր մահը՝ 1985 թ.: Հետագայում, անդրադառնալով խմբագրակազմի փոփոխության խնդրականին՝ Բրոդելը նշում է. «Այդ պահից սկսյալ ես դադարեցի գրազվել «Աննալներով»: Նրանք ինձ համար խորթացան» (Les 80 ans du «pape» des historiens. Entretien avec Fernand Braudel, *L'Histoire*, 48 (1982), p. 75–76): 1972 թվականին Ֆ. Բրոդելը թողնում է նաև *Կոլեժ դ'Յրանսի Արդի քաղաքակրթության Վեցերորդ բաժանմունքի և ամբիոնի* ղեկավարումը՝ պահպանելով միայն Մարդու մասին գիտության տան կառավարչի պատոնը: 1975 թվականին «Սոցիալական գիտությունների հետազոտության բարձրագույն դպրոց» անվամբ համալսարանական հաստատությունների կազմի մեջ մտած Վեցերորդ բաժանմունքի տնօրեն դարձավ Լը Գոֆֆը:

⁶ Афанасьев Ю. Н., *Историзм против эклектики: Французская историческая школа «Анналов» в современной буржуазной историографии*, М.: Мысль, 1980, с. 165.

կողմից՝ հիմնադիր-ուսուցիչների հայացարկերին նոր բովանդակություն հաղորդելու ճիգով⁷: Աննալականների նոր սերունդը խնդիր ուներ նախ և առաջ պատասխանելու Դպրոցի այլացման ներքին մարտահրավերին, իսկ ապա՝ արտաքին: Նման պատասխանի դեպքում միայն Դպրոցն ի զորու կլիներ պահպանել այլացման նոր հեռանկարը:

Այսու՝ «կառուցարանության նահանջի» հենքի վրա աստիճանաբար ձևավորվում է Աննալների դպրոցի պատմագիտական մի նոր հայացարկ, որը ստանում է Նոր պատմագիտություն (La Nouvelle Histoire) անվանումը: Աննալականների Երրորդ սերնդի ներկայացուցիչները ենթադրում էին, որ Նոր պատմագիտությունը վերապահված է հույժ կարևոր դերակատարում՝ «փոխակերպել մարդկանց հավաքական հիշողությունը և ստիպել գիտության ու գիտելիքի համալիրին կայանալու ժամանակի երկար տևողության ծիրում: Ըստ այդմ՝ գիտության մեջ կարևորվում է հասարակության էվոլյուցիայի գաղափարը⁸: Ընդամին՝ այն, ըստ էության, սկզբնապես երկվի (dichotomique) կառույց ուներ: Այն է՝ աննալականների այս նոր սերունդը մի կողմից՝ փորձում էր հավատարիմ մնալ Լյուսիեն Ֆերի, Մարկ Բլոկի և Ֆեռնան Բրոդելի պատմասիրական ոգուն, մյուս կողմից՝ վճռականորեն հրաժարվում էր համընդգրկուն պատմություն հղացքից: Դա էր պատճառը, որ ելակետային փուլում Աննալների դպրոցը «կորցնում է հետազոտական նպատակների և մեթոդների իր նախկին հստակությունը»⁹: Չնայած դրան՝ այն շուտով կարողանում է հաղթահարել իր առջև ծառայած մարտահրավերները և ինքնահաստատվել համաշխարհային պատմագիտական մտքի փոխակերպվող

⁷ Տես Fernand Braudel (1902–1985), *Annales. É.S.C.*, 1, (1986), p. 6:

⁸ Le Goff J., Chartier R., Revel J. (dir), *La nouvelle histoire*, Paris: Retz-C.E.P.L., 1978, (Les encyclopedies du savoir moderne), p. 236.

⁹ Burke P., *The French Historical Revolution: Annales School 1929–1989*, Stanford: Stanford univ. press, 1990, p. 2.

ծիրում՝ արգի հետազոտողների կողմից գնահատվելով իրրե համաշխարհային պատմագիտությունն իրազարգացման նշանակալի իրազարգացման նշանակալի իրազարգացման նշանակալի մեկը¹⁰:

Աննալականների Երրորդ սերնդի (Ժակ Լը Գոֆֆ, էմմանյուել Լը Ռուա Լադյուրի, Մարկ Ֆերրո, Պիեռ Շոնյու, Ժակ Ռեել, Ռոսե Շարտիե, Ֆրանսուա Դոսս, Ֆրանսուա Ֆյուրե, Պոլ Վիլար, Միշել Վոլվել և այլք) գործունեությունը ծավալվում է 1970-ական թթ., երբ Հանդեսի խմբագրակազմում են ներգրավվում Լը Գոֆֆը, Լը Ռուա Լադյուրին, Ֆերրոն: Ձևավորվող Նոր պատմագիտության ընդլայնվող գիտատիրությունը ներառում էր առնվազն չորս հարթություն՝ ա. քանակային և շարային պատմություն, բ. մտայնությունների պատմություն, գ. մարդաբանական պատմություն և դ. հիշողության պատմություն: Եվ պատահական է, որ համանման արդիական կողմնորոշումներով հետազոտական ուղղություններն Աննալների դպրոցի ներկայացուցիչների համար էական մեթոդաբանական խթան էին¹¹:

Ա. Պատմության քանակային և շարային ըմբռնումը

Արդեն 1960-ական թվականներին լեզվաբանության, սոցիոլոգիայի և ազգաբանության պատմագիտությանն ուղղված մարտահրավերների համաժիրում ծավալվում է հետազոտական մի ողջ ընթացք¹²: Խնդիրն էր հաղթահար-

րել դեռևս Բրոդելյան սերնդի ժամանակներում որոշարկված խզումի՝ «առանց մարդկանց պատմություն» և «մարդակենտրոն պատմություն» երկբևեռ լարվածությունը: Եվ պատահական է, որ մարտահրավերներին պատասխան տալու ցանկությունը Հանդեսից Ֆեռնան Բրոդելի պատմագիտական հայեցակարգում դետեռմինիզմի ակտիվացմանը և «մտայնությունների պատմություն» անտեսման հիմնախնդրի վերանայմանը¹³: Մասնավորապես, Բրոդելի մոտ դետեռմինիզմի ակտիվացումն արդյունք էր երկար տևողության և աշխարհագրության համադրման, որը հույժ տարբերվում էր Լյուսիեն Ֆերի հնարավորական աշխարհագրությունից: Այստեղից էլ Բրոդելի կողմից մտայնությունների պատմության անտեսումը. ըստ նրա՝ մտային (mental) շրջանակը կարող է «երկար տևողության համար բանտ ձևավորել»¹⁴: Չնայած պատմագիտության (ու նաև Աննալների դպրոցի կայացման) մեջ Բրոդելի զգալի ավանդին՝ պատմատեսության մեջ նման թերացումը լուրջ բացթողում էր:

Նույն այդ ժամանակներում, ինչպես ասել ենք, սկզբնավորվում է համընդգրկուն պատմություն հղացքի հանդես քննադատական մոտեցումը. «Իմ սերնդի պատմաբանները, — գրում է Ալեն Բլանսոնը, — զատվում են պատմական համընդգրկունության պատրանքներից... Նրանք հասկացան, որ եթե այդ համընդգրկունությունը տեղ ունի, ապա միայն իրենց երևակայության մեջ: Այդ ճշմարտության դիտարկումը թույլ տվեց ձեռքազատվել

¹⁰ Suss La recherche historique en France depuis 1965, Paris: Éditions du Centre national de la recherche scientifique, 1980. Coutau-Begarie H., Le phenomene «Nouvelle Histoire»: Stratégie et idéologie des nouveaux historiens, Paris: Economica, 1984, և այլք:

¹¹ François D., L'histoire en miettes. Des Annales à la «Nouvelle histoire», La Découverte, Paris, 2005, p. 180.

¹² Suss Про А., Двенадцать уроков по истории, М.: ПГУ, 2000, с. 45:

¹³ Նկատենք, որ Բրոդելն իր «Միջերկրածովքը և միջերկրածովյան ավազանը Ֆիլիպ II-ի դարաշրջանում» մենագրության մեջ բազմիցս շեշտադրում է պատմության մշակութային և երևակայական գործոնները, բայց աչքաթող է անում մտայնությունների պատմություն հղացքը: Suss Forster R., Achievements of the Annales School, JEH, 38 (1978), p. 58–76: Հովհաննիսյան Ա., Ֆեռնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վէժ» Համահայկական հանդես, 1 (2011), էջ 98–119:

¹⁴ Braudel F., On History, Chicago, University of Chicago Press, 1980, p. 32.

Համընդգրկուն պատմություն մտապատրանքից»¹⁵: Այսինքն՝ Երրորդ սերնդի ներկայացուցիչները բրոդելյան «Համընդգրկուն պատմության» հղացքը սկսեցին կերպափոխել գիտական տարասեռ մոտեցումների համադրմամբ: Դրանով ՀադթաՀարվում էր պատմական երևույթների իմաստավորման միագիծ մոտեցումը: Արդյունքում այլացման է ենթարկվում և ուսուցիչ-աշակերտ կառույցը, ինչը «վերջ է դնում «Magister Dixit»¹⁶ նախկին դրույթին և որոնումների համար բացում ընդլայն տարածություն»¹⁷: Աննալների նոր խմբագրակազմն այդ կապակցությամբ նշում էր. «[Բրոդելն] ուներ մարդու մասին գիտությունների ձեռքբերումները միասնացնելու համընդգրկուն պատմության նախագիծ: Մենք զբաղվեցինք առավելաբար տեղական փորձարկումներով»¹⁸: Նպատակն էր սեևոուն ուշադրություն դարձնել այն գիտական ընթացակարգերին, որոնք օգտագործվում են գիտակարգային պրակտիկաների փոխադարձ ներդրումը գնահատելու համար: Պոլ Ռիկյորի դիպուկ դիտարկմամբ՝ «Տնտեսագետների քանակային պատմությունը ճշգրիտ գիտությունների գոհասեղանին էր բերում հենց երկար տևողությունը»¹⁹:

Ակնհայտ էր, որ «Համընդգրկուն պատմություն» հղացքը, ապրելով իր գարգացման բեկումնային շրջափուլը, նոր միջգիտակարգային կապեր է որոնում սոցիալական այլ գիտությունների հետ: Վերանայման է ենթարկվում ինքնին պատմական իրականություն հղացքը, իսկ դրա հետ մեկ-

տեղ՝ պատմաբանի ինքնությունը, նրա արհեստավարժությունը, սկզբնաղբյուրի հավաստիության չափորոշիչները, պատմագիտական ճանաչողության հանդեպ հավատը և «օբյեկտիվ ճշմարտության» ձգտումը: Ստվերվում է էկզիստենցիալ «դեղատոմսերի» մատնանշած մարդկային ազատության անհատական փրկության հիմնախնդիրը, որն ուղեկցվում էր ներքին ուժերի ծայրահեղ լարվածությամբ և իռացիոնալ գործունեությամբ:

Վերողիտարկյալ կողմնորոշիչների փոխակերպումն իր հերթին, երկրորդ պլան մղելով աշխարհագրությունը և սոցիոլոգիան, առաջին պլան է բերում մարդաբանությունը, տնտեսագիտությունը, փիլիսոփայությունը և սոցիալական հոգեբանությունը²⁰: Պատմական գիտելիքի դաշտի բեկորայնացումը տեղիք է տալիս պատմագիտական այլ ուղղությունների կազմավորմանը: Ֆրանկ Անկերսմիթի խոսքերով՝ «պատմությունն այլևս մեր կյանքի տարբեր շրջափուլերում մեզ հետ կատարվածի վերակառուցումը չէ, այլ կատարվածի հիշողության հետ շարունակական խաղը»²¹: Լայն շրջանառության մեջ են դրվում քանակային (quantitative) և շարային (sérielle) պատմության հղացքները, որոնց վրա գործել էր տնտեսագիտական ազդեցությունը:

Այսպես՝ 1960-ական թթ. սկզբին արդեն ամերիկյան տնտեսագետների կողմից մշակվում է քանակային տեսությունը, որին այլևս չէր բավարարում տնտեսության *A* շրջափուլից *B* շրջափուլ անցումը գների տատանումներով բացատրելու նախկին մոտեցումը²²: Լայնորեն շրջանափոխ քանակային տեսությունը աներկրա ազդեցություն է

¹⁵ Besançon A., *Histoire et expérience de moi*, Paris: Flammarion, 1971, p. 71.

¹⁶ Magister Dixit – լատ. ուսուցիչն ասաց:

¹⁷ Агирре Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, Москва: Кругъ, 2006, с. 130.

¹⁸ Fernand Braudel (1902–1985), *Annales. ÉSC*, 1 (1986), p. 6.

¹⁹ Рикёр П., *Время и рассказ, т. 1, Интрига и исторический рассказ* /Пер. Т. В. Славко, Москва, Санкт-Петербург: Культурная инициатива: Университетская книга, 2000, с. 126.

²⁰ Агирре Рохас К. А., *указ. соч.*, с. 132.

²¹ Ankersmit F., *Historiography and Postmodernism*, *HT*, 2 (1989), p. 145.

²² Այս ժամանակներում Հատկանշական է Ու. Ռոսթոուի «Ոչ կոմունիստական Մանիֆեստի» և տնտեսական աճի տեսությունը: Sbn Rostow W., *The Stages of Growth, A non-communist Manifest*, Cambridge, 1960:

Թողնում պատմագիտություն վրա: Նույն այդ ժամանակներում հասանելի են դառնում և լայն կիրառում են ստանում գիտատեխնիկական և էլեկտրոնային հաշվիչ մեքենաները (համակարգիչները), իսկ դրանց միջոցով հնարավոր էր դառնում և պատմության հետազոտության իրականացումը, որքանով պատմաբանները գործ կունենային թվային քանակային որոշ հաշվարկների հետ (օրինակ, ժողովրդագրական, տնտեսական աճ և այլն)²³:

Քանակային տեսության մեթոդների հիման վրա ձևավորվում է ամերիկյան Նոր տնտեսական պատմություն (New Economic History) կամ Կլիոմետրիկա²⁴ պատմագիտական ուղղությունը: Այն մեկնարկում էր թեզից, որ մարդկային գործունեության որոշ ոլորտներ հնարավոր է հասկանալ միայն որպես համակարգեր (որոնցում ներառված են նրանք), և որոնց կապերը ենթակա են քանակային վերլուծության. եթե փոփոխականներից որևէ մեկի մեծությունը փոխվում է, կարելի է հաշվարկել, թե դա ինչ ազդեցություն կարող է ունենալ ողջ համակարգի վրա: Ուստի Կլիոմետրիկայի հիմնարար սկզբնաղբյուրն է դառնում էկոնոմետրիկան, որն արդի տնտեսության վերլուծության և ապագայում նրա զարգացման կանխատեսման մեթոդաբանությունն է՝ մշակված վիճակագրիչների կողմից²⁵:

Ամերիկյան պատմագիտական այս ուղղությունը լայն արձագանք գտավ և Ֆրանսիայում՝ մասնավորապես



Լյուսին Ֆեր

²³ Далин В. М., *Историки Франции XIX–XX веков*, Москва, 1981, с. 227.

²⁴ Կլիոմետրիկա (Cliometric) – եզրույթ, որը հղացել են Ջ. Հյուգեսն (J. Hughes) ու Ս. Ռեյթերը (S. Reiter): Այն որպես գիտակարգ ծագել է 1958 թ. Ա. Կոնրադի (A. Conrad) և Ջ. Մեյերի (J. Meyer) «Մինչպատերազմական Հարավի ստրկատիրական տնտեսությունները» հոդվածի հրատարակմամբ: Տե՛ս Diebolt Cl., *The Cliometric Voice*, *HEI*, 3 (2012), p. 51–61:


²⁵ Տե՛ս Tosh J., *The Pursuit of History: Aims, Methods and New Directions in the Study of Modern History* (3 ed.), London: Longman, 2002, p. 260:



Մարկ Բլոկ



Ֆեոդան Բրողել




Փորձ Դյուրի




Ռոբեր Մանգրու.




Ժակ Լը Գոֆֆ




Պիեռ Շոնյու



Էմմանյունել Լը Ռուա Լադյուրի




Պինո Նորա



Ֆելիպ Արինս



Ռոմեո Շարտիե



Քեոնար Լըպտի

աննալականների Երրորդ սերնդի ներկայացուցիչներ էմմանյուել Լը Ռուա Լադյուրիի, Ժակ Լը Գոֆի, Պիեռ Շոնյուի, Ֆրանսուա Ֆյուրբի և այլոց աշխատություններում: Աննալական պատմաբանների մոտ նկատվում է ճշգրիտ գիտությունների ձեռքբերումները պատմագիտության տիրույթ ներբերելու հակումը: Հետազոտական նախապատվությունն աստիճանաբար թեքվում է դեպի համակարգերի գործառումը, այլ ոչ թե դրանց փոփոխությունները, ընդ որում՝ ուշադրության կենտրոնում պահելով հանգամանքների, հավասարակշռությունների, կառույցների պատմությունը: Արդյունքում մարդկության պատմության մասին պատկերացումներից հեռացվում է էվոլյուցիայի հասկացությունը: Այն է՝ «Տարբեր դարաշրջանները չեն դիտվում իրրև հասարակությունների, քաղաքակրթությունների հաջորդական, առաջադիմական շրջափուլեր, իսկ զանազան ժամանակային ութմերը հանդես չեն գալիս իրրև միագիծ ժամանակի բազմակերպ և բովանդակությամբ որոշակի տարատեսակություններ»²⁶: Նրանք իրենց գիտակարգը հաճախ անվանում են «լաբորատորիաներ», որտեղ հընթացս հետազոտության կարևոր նշանակություն ունեն գիտականության հավակնող քանակային մոտեցումների կիրառումները:

Այս ժամանակաշրջանում (1960-ական թթ.) սոցիալական պատմության վերաբերյալ ֆրանսիացի պատմաբանների հետազոտությունների զգալի մասը գրվում է քանակային պատմության մեթոդաբանությամբ: Պատմագիտական այս նոր մոտեցումը Լը Ռուա Լադյուրին անվանեց «պատմության մեջ քանակային հեղափոխություն»²⁷, հար-

²⁶ Афанасьев Ю. Н., Ведущее направление французской историографии, в Мальков В. Л. (Отв. ред.), Современная зарубежная не-марксистская историография. Критический анализ, М.: Наука, 1989, с. 155–156.

²⁷ Ladurie E. Le Roy, La révolution quantitative et les historiens français: Bilan d'une génération (1932–1968), dans Le Roy Ladurie E., Le Territoire de l'historien, Vol. 1, Paris: Gallimard, 1973, p. 18.

դյունս որի՝ «բողոքովին փոխվում է [...] պատմաբանի արհեստը»²⁸: Ընդհանուր առմամբ քանակային պատմության նոր կերպը պայմանավորված էր նախ և առաջ տնտեսական աճի պատմականացմամբ. «Եթե առաջին շրջափուլի տնտեսական պատմությունը գլխավորապես համակցային դինամիկայի, ճգնաժամերի պատմությունն էր, ապա նոր տնտեսագետների քանակային պատմությունը նախ և առաջ «թռիչքի» (take off), աճի և այդ աճի զանազան տեսակների պատմությունն է»²⁹: Համակարգիչների կիրառման շնորհիվ առաջադրվում են պատմական ժամանակի ըմբռնման նոր մոտեցումներ: Միևնույն ժամանակ «նոր քանակային տնտեսական պատմությունը չծնվեց համակարգիչների հետ, բայց այդ հրաշալի գործիքի շնորհիվ էականորեն դյուրինացավ մեր հնարավորությունների ընդլայնումը: Համակարգիչը կոչված է նպաստելու ոչ միայն տնտեսական պատմության առաջընթացին, այլև նրա մեթոդների նորացմանը»³⁰: Քանակային պատմությունը ստեղծվում է փաստերի հնարավոր հաջորդական տեղադրման արդյունքում՝ իբրև համասեռ միակցություն:

Պատմության տեղայնացումը պատճառ դարձավ, ինչպես վերն ասացինք, նրա ապամարդացման (dehumanisation): Կրկին ի հայտ էր գալիս փաստերի մասնատման և վերարժեքման հիմնախնդիրը: Արդյունքում՝ պատմության կոտորակումն ու քանակայնացումը: Պատմական առանձին իրադարձություններն ու զրվագները, կորցնելով իրենց առանձնահատկությունները, վերածվեցին հաջորդական շարքերի (sérielles)³¹: Աննալականներից

Ֆյուրեն, ընկնելով ծայրահեղությունների մեջ, անգամ առաջարկում էր վերջ տալ պատմական անցյալի բազմակողմանի վերարտադրման ձգտումներին³²: Ըստ նրա՝ «քանակային պատմության» շնորհիվ հնարավոր է հանգել «հավաստի արդյունքների, տեղայնացված (localisé) երևույթի ավելի լավ նկարագրության»³³: Իսկ Լ. Բուա Լադյուրին, ֆրանսիական պատմագրություն ներմուծելով ամերիկյան մեթոդները, կարծում էր, թե պատմաբանի ճակատագիրն է «անընդհատ ու անդադար հաշվել ու հաշվել», և հաշվումների «շնորհիվ է, որ գոյություն ունի պատմությունը, որը քանակային է»³⁴: Սակայն պատմաբանին տրված չէ ամեն ինչ հաշվել ու չափաբերման ենթարկել, ուստի նա ստիպված է և պատմության հետազոտության տիրույթը հնարավորինս նեղացնել՝ հավասարումների մեջ զետեղելու համար³⁵: Ֆյուրեի ձևակերպմամբ՝ «արդի պատմաբանը դադարել է լինել «ձեռաց վարպետ», որն իր հետազոտության առարկայի՝ պատմության անորոշության և ունիվերսալության բարձունքներից ձեռք էր զարկում ամեն ինչի: Նա դադարել է պատմել այն մասին, ինչ եղել է, այսինքն՝ ինչը համարում է իր պատմությանը, իր ճաշակին կամ էլ իր տեսությանը համապատասխան: Այժմ նա, ինչպես և այլ հումանիտար գիտությունների իր արհեստակիցները, պետք է ասի, թե ինչ է հատկապես փնտրում, ինչ նյութեր են տվյալ խնդրին վերաբերում: Նա պետք է հստակորեն ձևակերպի իր վարկածները, ստացված արդյունքները, մեթոդներն ու ապացույցները, ինչպես նաև իր կասկածները»³⁶: Իսկ հետագո-

²⁸ Ladurie E. Le Roy, *La révolution quantitative en histoire*, p. 15.

²⁹ Chaunu P., *L'économie: Dépassement et prospective*, dans Le Goff J., Nora P. (eds.), *Faire de l'histoire*, 3 vols, vol. 2, Paris: Éditions Gallimard, 1974, p. 62.

³⁰ Chaunu P., *op. cit.*, p. 62.

³¹ Stéu Chaunu P., *Un nouveau champ pour l'histoire sérielle: Le quantitatif au troisième niveau*, *Mélanges en l'honneur de Fernand Braudel*, Tome II: «Méthodologie de l'Histoire et des sciences humaines», Toulouse: Privat, 1973, p. 106:

³² Stéu Furet F., *L'Atelier de l'Histoire*, Paris: Flammarion, 1982, p. 172:

³³ Furet F., *L'histoire quantitative et la construction du fait historique*, *Annales ESC*, 1 (1971), p. 63–75.

³⁴ Ladurie E. Le Roy, *La révolution quantitative en histoire*, p. 20.

³⁵ Stéu Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France (19^e–20^e siècle)*, Paris: Armand Colin, 2005, p. 257:

³⁶ Furet F., *Sur quelques problèmes posés par le développement de l'histoire quantitative*, *ISS*, 7 (1968), p. 71.

տական տիրույթ քանակային մեթոդների ներմուծմամբ մեծ ուշադրություն էր դարձվում դիտարկվող խնդրի հատկանիշների և դրանց զարգացումների ու միտումների հնարավոր կապերի (գծային և ոչ գծային) համադրություններին:

Այս համապատկերում Լը Ռուա Լադյուրին ավելի հետևողականորեն էր մերժում «իրադարձային պատմություն» հղացքը. «Արդի պատմագիտությունը, որը ձգտում է լինել քանակային, կառուցվածքային, ստիպված է ... սպանել, որպեսզի ապրի. արդեն տասնամյակներ առաջ նա իրադարձային պատմությունն ու ատոմականացված կենսագրությունը դատապարտել էր գրեթե իսպառ ոչնչացման: Կլիոն այժմ շուռ է գալիս իրադարձությունների չափազանց պարզունակ և չափազանց թեթև այդ երկար շարանից, որոնցով հրճվում էին հին տեսակի պատմաբանները: Նա կողմնորոշվում է դեպի կառույցների հետազոտությունը [...], տվյալների հավաքումը, որոնք կարող են ծառայել շարային կամ քանակային հետազոտությունը»³⁷: Ընդհանուր առմամբ՝ Լը Ռուա Լադյուրիի կողմից առաջադրված մեթոդն առանձին գործոնների բարդ խճանկար է, որում ոչ մի գործոն (կլիմա, համաճարակ, պատերազմ, վիճակագրություն, ժողովրդագրություն և այլն) վճռական նշանակություն չունի: Իսկ պատմության «քանակային» հետազոտության եղանակով նա փորձում է հնարավորինս հաղթահարել պատմության մոնիստական հայեցակարգը. «Միսլ կլիներ հասնել ծայրահեղության և ամեն ինչ հանգեցնել մեկ պատճառի [...]: Մոնիզմը միշտ էլ վտանգավոր է»³⁸:

Եվ պատահական չէ, որ հաջորդ քայլը պետք է լիներ անշարժ պատմության հղացքի առաջադրումը³⁹: Այն, ըստ Լը

³⁷ Ladurie E. Le Roy, *Le Territoire de l'historien*, Vol. 1, Paris: Gallimard, 1973, p. 165.

³⁸ Ladurie E. Le Roy, *Histoire du climat depuis l'an mil*, Paris: Flammarion, 1967, p. 289

³⁹ Stéu Ladurie E. Le Roy, *L'histoire immobile*, *Annales. ÉSC*, 3 (1974), p.673–692:

Ռուա Լադյուրիի, փոփոխություն միջոցով պատմության մշտապես ինքնավերարտադրվող անփոփոխությունն է: Լը Ռուա Լադյուրիի հղացքն ինչ-որ իմաստով Բրոդելի երկար տևողության հղացքին տալիս էր տրամաբանական ավարտունություն՝ հաստատագրելով գրեթե բացարձակ անշարժություն, անգամ ամենաչնչին փոփոխությունների բացակայություն, որոնցով բնութագրվում էր *longue durée*-ն: Դժվար չէ նկատել, որ պատմական ժամանակի նոր տեսակը Լը Ռուա Լադյուրիի մոտ ձևավորվում է դինամիկ ժամանակի և դրամատիկ իրադարձությունների (պատերազմներ, համաճարակներ և այլն) համադրմամբ, որոնց նշանակությունը գործնականում անհետանում է երկար տևողության միջակայքում դիտարկելիս:

Մարդկության պատմության դիտարկման նման փոփոխությունը հեռացնում է մարդու հիմնախնդրից: Այն է՝ պատմության քանակային դիտարկման տրամաբանությունն ի վերջո կարող է հանգեցնել «առանց մարդկանց պատմության»: Դա մասնավորապես պայմանավորված էր վիճակագրությանը, ցուցիչներին և գրաֆիկական պատկերավորմանը պատմագիտության աստիճանական անցմամբ: Ավելին՝ պատմության հետազոտության ոլորտում գնալով ավելի ու ավելի տիրապետող էին դառնում գուտ տնտեսագիտական հետազոտությունների տեխնիկան, մեթոդաբանությունն ու մոդելավորումը: Ալբեր Սոբուլի բնորոշմամբ՝ արդյունքում «պատմությունն ապամարդանում է և դրա հետ մեկտեղ կորցնում իր հոգին»⁴⁰: Իսկ դա հակասում էր դպրոցի հիմնարար գաղափարին՝ մարդակենտրոնությանը: Սկսած հիմնադիր-ուսուցիչներից՝ պատմության կենտրոնատեղին մարդն էր: Սակայն

⁴⁰ Soboul A., Problèmes théoriques de l'histoire de la Révolution française, dans *Aujourd'hui, l'histoire* – Enquete de la Nouvelle Critique – (Sources et méthodes – Problèmes théoriques et champs historiques – Histoire économique et sciences sociales – Histoire sociale et histoire des mentalités – Problèmes de la Révolution française), p. 263.

ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասենք, որ Երրորդ սերնդի աննալականները բրոդելյան սերնդից էին ժառանգել մարդկանցից անկախ դիմադուրկ կառույցների հայեցակարգը: Այն մեկնարկում է «պատմությունն առանց մարդու» հղացքից. «Մարդը սոսկ դերակատար է, որը խաղում է իր դերը՝ չտեսնելով սցենարը» (Բրոդել): Արդյունքում աննալականների Երրորդ սերնդի մոտ ամբողջությամբ է այն համոզմունքը, որ պատմությունն ընդհանրապես կարելի է գրել առանց մարդկանց: Մասնավորապես Լը Ռուա Լադյուրին առաջարկում է կատարել միայն կոնկրետ հետազոտություններ, որոնց առարկան մարդը չէ՝ ո՛չ կենտրոնում, ո՛չ էլ ծայրամասերում⁴¹: Ավելի կոնկրետ՝ ստեղծել մի պատմություն, «որտեղ մարդիկ ապրում են, բայց չեն իշխում»⁴²: Նա ձևակերպում է իր ծայրահեղ միակողմանի բանաձևը. «Վաղվա պատմագետը պետք է լինի ծրագրավորող կամ չպետք է գոյություն ունենա»⁴³:

Ընդհանուր առմամբ՝ քանակային պատմության խոցելի կողմը դարձավ պատմություն առանց մարդկանց հղացքը, քանի որ մեծ կիրառություն գտած ժողովրդագրական, վիճակագրական և բազմաթիվ համանման մեթոդների կիրառությունն իրականում պատմության մեկնաբանության միայն մեկ գիտանկյունն էր: Այնինչ պատմությունից կամ հետազոտություններից բացառելով մարդուն՝ պատմության մեկնաբանությունն ավելի միակողմանի էր դառնում:

Աննալականների Երրորդ սերնդի մեկ այլ ներկայացուցիչ՝ Պիեռ Ծոնյուն, քանակային պատմությունն եզրույթի փոխարեն նախընտրում էր շարային պատմություն (histoire sérielle) եզրույթը՝ գտնելով, որ իրադարձու-

թյունները պետք է դիտարկել միայն շարայնության մեջ, որը «փնտրում է կրկնվող փաստերը, ուշադիր է փաստերի հաջորդականության հանդեպ, որը համառորեն և պարբերաբար վտարում է կոպիտ ոչ-վիճակագրական նյութերը»⁴⁴: Ընդ որում՝ «քանակային պատմությունն ու շարային պատմությունը երկու եզրույթներ են, որոնք բացարձակապես համարժեք չեն»⁴⁵:

Քանակային և շարային պատմությունների տարբերությունների վերաբերյալ ավելի մեղմ է արտահայտվում Յյուրեն նշելով, որ «քանակային պատմությունն ու շարային պատմությունը միաժամանակ և՛ կապված են, և՛ տարբեր: Բայց դրանք երկուսն էլ ունեն ինչ-որ տարրական բան [...], այն է՝ պատմական տվյալների կազմակերպումը՝ կախված հավանական վերլուծությունից»⁴⁶: Հարկավ, սա չի նշանակում, թե շարային պատմությունը մերժում է հաշվառումներն ու չափագրումները: Ավելին այն ենթարկվում է մաթեմատիկական մշակման, իսկ առանց մաթեմատիկական գործողությունների «չկա գիտական գիտելիք»⁴⁷: Այսու՛ իրրև շարային պատմություն «կարելի է բնորոշել այն մոտեցումը, որը նախատեսում է միատեսակ տվյալների վիճակագրական շարքերի վերականգնումը, որոնք կրկնվում են մեծ ժամանակային տևողության ընթացքում և համեմատվում որոշակի, կանոնավոր դադարների միջոցով»⁴⁸: Այդ առումով «շարային պատմությունը գիտական տեսանկյունից վճռական առավելություն է», այն է՝ դրապաշտական պատմության անընդունելի «իրադարձությունը» փոխարինվում է տվյալների կանոնավոր կրկնություն-

⁴⁴ Chaunu P., *Un nouveau champ ...*, p. 106.

⁴⁵ Chaunu P., Les dépassements de l'histoire quantitative: retrospective et perspective, dans *Mélanges de la Casa de Velázquez*, Tome 8, 1972, p. 647.

⁴⁶ Furet F., *op. cit.*, p. 65.

⁴⁷ Chaunu P., *Histoire science sociale: la durée, l'espace et l'homme à l'époque moderne*, Paris: SEDES, 1974, p. 325.

⁴⁸ Le Goff J. (dir.), *La Nouvelle Histoire*, Paris: Complexe, 2006., p. 508.

⁴¹ Ladurie E. Le Roy La révolution quantitative en histoire, p.13.

⁴² Ladurie E. Le Roy, L'Histoire sans les hommes: Le climat, nouveau domaine de Cléo, dans Ladurie E. Le Roy, *Le Territoire de l'historien*, Vol. 1, Paris: Gallimard, 1973, p. 415.

⁴³ Ibidem.

ներով⁴⁹: Դրա հետևանքով պատմությունը մասնատվում է ըստ շերտագրումների (stratigraphiques), որոնք միմյանցից հարաբերականորեն անկախ են: Եվ պատմության յուրաքանչյուր շրջափուլ, յուրաքանչյուր հասարակություն հիմնվում է նախկինում կրկնվող գործընթացների վրա: Ուստի պատմատիրությունը շարանացումը նպատակ ունի հետազոտական նյութի յուրաքանչյուր միավորին (իրադարձություն, դեպք, անցք) տալու անկախություն՝ այլ միավորների հետ փոխհարաբերություններում:

Ընդհանուր առմամբ՝ շարային պատմությունը հնարավոր է դառնում համակցությունների և կառույցների հարաբերակցմամբ: Ծնորհիվ դրա՝ պատմական ժամանակի բոլոր շերտերն աստիճանաբար վերաձևակերպման են ենթարկվում շարային հիմքի վրա: Այս համապատկերում համակցությունը ենթադրում է տնտեսական պատմությունից անցում սոցիալական պատմության, իսկ ապա՝ համընդհանուր պատմության տիրույթ: Այսպիսով՝ այն մի յուրօրինակ մեթոդ է, որը «միավորում առանձին շարքերի հարաբերակցությունների առավելագույն հնարավոր քանակը»⁵⁰: Իսկ կառույցի հասկացությունը քննարկվում է երկու նշանակությամբ՝ անշարժ և շարժուն: Անշարժ կառույցը ենթադրում է տվյալ ամբողջի հարաբերությունների ներդաշնակություն, իսկ շարժուն կառույցը՝ հաստատուն կայունություն: Կառույցն ինչ-որ չափով որոշակի է, եթե «կարելի է հարաբերակցել բազմաթիվ փոփոխականների միահյուսման հետ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ներառվել շարքի մեջ»⁵¹: Ընդ որում՝ պատահականությունները հնարավորինս բացառվում են շարային պատմության տիրույթում: Դա ապահովելու համար շարային պատմության կողմնակիցներն անհրաժեշտ են համարում վիճակագրական մեթոդների լայն կիրարկումը: Ընդ որում՝ այն

⁴⁹ Furet F., *op. cit.*, p. 65.

⁵⁰ Рикёр П., *указ. соч.*, с. 125.

⁵¹ Там же.

պետք հիմնված լինի հավաստի թվերի և տեղական ժամանակագրական հատվածների համադրվող տվյալների վրա⁵²: Այսու՝ պատահարների կոնկրետ համընկնումների վերահանումով առարկան ձեռք է բերում իր սահման, գոյություն է ունենում ինքն իր մեջ, վերարտադրվում իրականության այլ չափույթների մեջ: Հետազոտության առարկան արդեն ոչ թե կոնկրետ հասարակությունն է, այլ վերացական մոդելներն ու կառույցները՝ միասնականացված, համահարթեցված⁵³: Խորքային առումով համակցությունը համընկնում էր բրոդելյան ժամանակի կարճ տևողությանը, իսկ կառույցը՝ երկար տևողությանը, բայց արդեն շարային պատմության հեռանկարում:

Այսպիսով՝ պատմաբանի խնդիրն է ժամանակի կարճ տևողության համապատկերում եզակի փաստերի շարանացմամբ հետազոտությունը դուրս բերել սոցիալական ժամանակի հաջորդ՝ քաղաքակրթական համակցության հարթակ: Իսկ ապա՝ տեղային պատմության հետ շարժականացված բոլոր անհերքելի փաստերի շարանը ներմուծել երկար տևողության, այն է՝ համընդգրկուն պատմության համապատկեր. «Շարային պատմությունն ի մի է բերում բոլոր քանակային պատմությունները, բայց այն ավելին է, քան դրանք, այն գրեթե [...] վաղվա պատմությունն է, որը պետք է նվաճի երրորդ մակարդակը՝ խարխափելով քաղաքակրթության համակարգի սահմանին»⁵⁴: Համանման հետազոտական ընթացքը, սակայն, հետազոտողին կարող էր խճճել իմացաբանական պահանջների հորձանուտում՝ «հանգեցնելով հակադիր ուղղությունների»⁵⁵: Այս առումով Ֆյուրեն, ընդհանրացնելով քանակային պատմության տեսությունն ու դրա հետևանքները, գրում

⁵² Стів Афанасьев Ю. Н., *Историзм против эклектики*, с. 189:

⁵³ Стів Афанасьев Ю. Н., *Эволюция теоретических основ школы «Анналов»*, ВП, 9 (1981), с. 89:

⁵⁴ Chaunu P., *Les dépassements de l'histoire quantitative*, p. 666.

⁵⁵ Ревель Ж., *История и социальные науки во Франции. На примере эволюции школы «Анналов»*, ННИ, 6 (1998), с. 75.

է. «Այն ատոմականացնում է պատմական իրականությունն այնքան մեկուսի բեկորների, որ դրանով վիճարկում է պատմության՝ ընդհանուրն ըմբռնելու դասական հավակնությունները: Արդ, գուցե պետք է հրաժարվե՞լ դրանցից: Իմ պատասխանը հետևյալն է. այդ պահանջները հարկավոր է, հաշվի առնելով հնարավոր առաջընթացը, պահեստավորել իբրև երկարաժամկետ նպատակ, բայց ոչ [իբրև] հետազոտության նախադրյալ, եթե միայն չենք ուզում կրկին ու կրկին վախճանաբանական սոփեստությունների զոհ դառնալ... Այդ «համակարգերի համակարգերի» ընդգրկուն վերլուծությունը, հավանաբար, իմ հնարավորություններից դուրս է»⁵⁶: Բանն այն է, որ համընդգրկուն պատմությունը կազմակերպվում էր իրադարձությունների, եղելությունների փաստական շատ կողմերի անտեսմամբ: Այնինչ դուրս թողնված նույն փաստական հենքը կարող էր կիրառություն գտնել պատմագիտության այլ հեռանկարում: Ավելի լայն տիրույթում և ավելի նեղ տիրույթում պատմագիտական հեռանկարները կարող էին տարբերվել ըստ անհրաժեշտության: Եվ, ըստ Շոնյուեի, միայն տվյալների շարային կառուցումը կարող է թույլ տալ հիմնախնդրի նորովի վերածնակերպում, որի արդյունքում հնարավոր կլինի մասամբ լուծել ի հայտ եկած երկընտրանքը, որը հնարավոր էլ էր մինչև նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Թվում է, թե շարային պատմության նման մեկնակերպը համընկնում է բրոդեյյան պատմահայեցողությանը: Սակայն շարային և համընդգրկուն պատմության հասկացությունները, առանձին վերցված, արտահայտում են պատմական հետազոտության բևեռայնությունը, հատկապես երբ խնդիր էր առաջանում՝ արդյո՞ք իրադարձայինի և պատահականի հաղթահարումը հանգեցնելու է կառույցի կողմից համակցություն յուրացմանը, թե՞ երկար տևողությունն է տարրալուծվելու «անշարժ պատմության» մեջ: Հօգուտ

երկար տևողություն՝ Բրոդեյի կողմից մերժվում էր առաջին տարբերակը, քանի որ «այդ օգտակար պատմությունը չի փոխարկվում անցյալի ընդգրկուն կենդանի պատկերի», որի մասին երազել էր⁵⁷: Մյուս կողմից՝ շարային պատմությունը ևս, նեղացնելով հետազոտական տիրույթը, փաստերի տրամաբանական շղթայից բացառում էր բազմաթիվ օղակներ, որոնք անմիջականորեն կապակցված էին գլխավոր, առանցքային իրադարձություններին: Ավելին՝ պատմաբանը, ձգտելով շարային պատմության օգնությամբ ստեղծել համընդգրկուն և համաշխարհային պատմության հետազոտության նոր մեթոդ, չի բացատրում, թե ինչպես կարելի է ընտրված փաստերի շարանը հանգեցնել համընդգրկուն պատմության: Արդյունքում՝ նույն այն բացթողումը, որը քննադատվում էր համընդգրկուն պատմության դեպքում: Հատկապես երբ «մարդն այստեղ բացակայում է, կամ, լավագույն դեպքում, ներկա է հաղվադեպ և ավարդյուն»⁵⁸:

Միով բանիմ՝ քանակային և/կամ շարային պատմությունը Բրոդեյի համընդգրկուն պատմության հղացքի հակադրությունն էր: Բայց ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է նկատել, որ նրա ինչ-ինչ տարրեր առկա էին անգամ հիմնադիր-ուսուցիչների աշխատություններում: Խոսքը տեղային (լոկալ) պատմություններից համաշխարհային (գլոբալ) պատմությանն անցնելու ճիգերի ու մեթոդների մասին է⁵⁹: Նրանք երբեմն խոսում էին «պատմության համընդգրկուն օրենքի և սկզբունքի» մասին: Այս համապատկերում՝ թեպետ պատմության նկատմամբ քանակային և/կամ շարային և համընդգրկուն մոտեցումները ելակետում հակամարտության երանգներ ունեին, իրականում,

⁵⁷ Braudel F., Pour une histoire sérielle: Séville et l'Atlantique (1504–1650), *Annales. ESC*, 3 (1963), p. 545.

⁵⁸ *Ibidem*.

⁵⁹ Տես Ստեփանյան Ա., Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրություն հնարավորություն), *Պատմություն և կրթություն*, Ե., 1–2, (2005), էջ 19:

⁵⁶ Մեջբերումն ըստ՝ Ревель Ж., *указ. соч.*, с. 75.

սակայն, «Հակամարտությունը ներհատուկ է այդ երկու ընդհանուր մտեցումների հարաբերություններին, քանի որ պատմաբանը կարող է շարժվել մեկից դեպի մյուսը՝ յուրաքանչյուր քայլափոխի շտկելով համընդգրկուն պատմության սխալները գործառական և շարային պատմությունների օժանդակության հենքի վրա, իսկ գործառական ու շարային պատմությունների սխալները՝ համընդգրկուն պատմության վերջին բացահայտումների հենքի վրա»⁶⁰: Այսու՝ «շարային պատմությունը» «համընդգրկուն պատմության» անսպառույթի հաստատագրումն էր պատմության շարայնացման ճանապարհով:

Համընդգրկուն պատմության և շարային պատմության մեթոդները դրսևորվում են մեկ միասնականության մեջ: Ընդ որում՝ այդ միասնականությունը բխում է ոչ թե նրանց բնույթից, այլ հիմնախնդիրների փոխհամաձայնեցումից: Պատմագիտական այս երկու մեթոդներն Աննալների դպրոցի թերևս ամենահաստատուն միտումներն են: Իսկ դրանց թվացյալ հակասությունները հաղթահարվում են հետագա աննալականների հետազոտություններում: Դա պայմանավորված էր նրանով, որ շարային պատմության համապատկերում մարդկային կյանքի արդիական ձևերն անկարելի էր ըմբռնել կամ մեկնաբանել այլ կերպ, քան հանգեցնելով դրանք համընդգրկուն պատմությանը, և հակառակը: Մի բան, որին հանգել էր և Բրոդելն «իր իսկ ստեղծած համակարգի հաղթահարման»⁶¹ ճանապարհին, որին ընթացք տվեցին Երրորդ սերնդի աննալականները: Այսպիսով՝ առաջնային է դառնում պատմական գործընթացի ու թիմային բազմազանությունը, որի ծիրում բացառվում էր «եզակի գործոնի վրա» կառուցված պատմությունը⁶²:

⁶⁰ Stoianovich T., French historical method: The Annales Paradigm, London: Cornell U. P., 1976, p. 203.

⁶¹ Ստեփանյան Ա., Մարգարյան Ե., նշվ. աշխ., էջ 40:

⁶² Sélis L'histoire et ses méthodes. Recherche, conservation et critique des témoignages. Sous la direction de Charles Samaran de l'Institut (Encyclopédie de la Pleiade), Paris: Gallimard, 1961, p. 65: Ինչպես նաև՝

Բ. Մտայնությունների պատմություն

1960–1970-ական թվականներին աստիճանաբար սկսում է կրկին շրջանառվել մտայնություն եզրույթը՝ բնորոշելու Աննալների դպրոցի (և ոչ միայն) ներկայացուցիչների աշխատանքն ինտելեկտուալ պատմության տիրույթում: Ընդ որում՝ շոշափելով պատմագիտության գրեթե ողջ հետազոտական տիրույթը՝ առտնին կյանքից մինչև պետական կառույց, անհատական վարքից մինչև հավաքական պատկերացումներ և այլն⁶³: Հարկավ, նման մտեցումը՝ իր ողջ զանազանությամբ, հնարավորություն էր տալիս նոր հավասարակշռություն հաստատելու պատմագիտության և բազմաթիվ այլ հումանիտար գիտությունների միջև⁶⁴:

Յուրացնելով վերլուծության գործողություններն ու մեթոդները, որոնք սոցիալ-տնտեսական մեթոդաբանությունից էին քաղված, մտայնությունների պատմությունը կարողանում է զբաղեցնել պատմագիտության առաջնագիծը և պատասխանել պատմագիտության առջև ծառայած մարտահրավերներին:

Նկատենք, որ պատմագիտական ցանկացած հղացք (եզրույթ, հայեցակարգ և անգամ հարացույց), որպես կանոն, զուրկ է միակերպությունից: Անգամ միևնույն պատմագիտական դպրոցի ծիրում միաժամանակյա մշակման դեպքում դրանց շուրջ ծավալվող տրամասույթների բազմակերպությունը հանգեցնում է դրանց տարասեռ

Braudel F., Positions de l'Histoire en 1950, dans Braudel F., *Écrits sur l'Histoire*, Paris: Flammarion, 1969, p. 20–21:

⁶³ Sélis Toshi J., *The Pursuit of History: Aims, Methods, and New Directions in the Study of Modern History (Revised Third Edition)*, London: Longman, 2002, p. 275:

⁶⁴ Տե՛ս Հովհաննիսյան Ս., Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս երկրորդ: Մտակեցվածքների պատմություն. երեք հարացույց (կառուցվածքային, շարային կամ քանակային և համարբական), «Վէժ» համահայկական հանդես, 2 (2016), էջ 27–48:

ըմբռնմանն ու կիրառությունը: Ըստ այսմ՝ եթե մտայնությունն հղացքը դիտարկենք ինքնին Դպրոցի ծիրում, կտեսնենք, որ գոյություն ունեն մոտեցումների զանազանություններ և տարբեր փորձառություններ: Ընդհանուր առմամբ մտայնության ըմբռնման այդ տարբերությունները պայմանականորեն դիտարկել ենք եռափթժ ծավալումով՝ 1) կառուցվածքային, 2) շարային կամ քանակային, 3) Համաբերական⁶⁵: Ուշագրավ է, սակայն, որ դրանք, չնայած իրենց տարբեր մոտեցումներին ու փորձառությունը, ներկայացնում են մեկ ամբողջություն: Ընդ որում՝ միավորվում են ոչ այնքան Հիմնախնդրի սահմանմամբ, որքան Հիմնախնդրի հետ ունեցած Հաղորդակցությունը, որը ենթադրում է ոչ միարժեք մոտեցումներ: Այլորեն ասած՝ Հարաբերությունների նման ըմբռնումը չի ենթադրում հրաժարում դրանց առանձին-առանձին լինելու Հնարավորությունից:

Եվ արդ, 1950-ական թվականների կեսից⁶⁶ Ռոբեր Մանդ-

⁶⁵ Նկատենք, որ Ագիրե Ռոխաս (Aguirre Rojas) առաջարկել է տիպարանման մեկ այլ Հայեցակարգ, որտեղ նա առանձնացնում է մտայնության պատմության վերաբերյալ մոտեցումների հինգ տեսակ՝ 1. «մտայնությունների ինքնավար, ինքնարավ և գրեթե իդեալիստական պատմություն», 2. «պատմության կամ ավելի շուտ՝ տրամազական կառույցների և մարդկային խոսքի կառուցվածքի հիմքերի հնարաբանության և ծագումնաբանության», 3. «նորդարապաշտական (նեոպոզիտիվիստական) կամ զուտ նկարագրական», 4. «սոցիոլոգիական կամ սոցիալ-անտեսական» և 5. «շարային» տեսակները: Ավելի մանրամասն տեսն Ագիրե Ռոխաս K. A., Критический подход к истории французских «Анналов», М.: Кругъ, 2006, с. 149–152: Իսկ ուսու հետազոտող Արոն Գուբելիցի տիպարանման համաձայն՝ մտայնությունների տեսության «երկու ուղղություն կար»՝ 1. քանակային կամ շարային (Պիեռ Եռնյու և Ֆրանսուա Ֆյուրե) և 2. Համընդգրկուն (Ժորժ Դյուբի և Ժակ Լը Գոֆֆ): Ավելի մանրամասն տեսն Гуревич А. Я., Исторический синтез и Школа «Анналов», Москва: Индрик, 1993, с. 137–138:

⁶⁶ Խոսքը 1958 թվականին Համատեղ գրված «Ֆրանսիական քաղաքակրթության պատմություն» երկհատորանոց աշխատության մասին է, որտեղ հեղինակներն արդեն իսկ շոշափում են մտայնության թեման: Տե՛ս Duby G., Mandrou R., Histoire de la civilisation française,

րուն⁶⁷, իսկ ապա Ժորժ Դյուբին⁶⁸ (Ֆեռի ազդեցությունը) կրկին պատմագիտության հետազոտական ոլորտ են ներբերում մտայնություն հղացքը (որը պայմանականորեն կոչեցինք «կառուցվածքային»): Ընդ որում՝ մտայնության ֆեռյան մոտեցումը վերահաստատվում է արդեն պատմագիտական բոլորովին այլ հեռանկարում, քան էր բրոդելյան Հայեցակարգը: Դա պայմանավորված էր տնտեսական պատմությունից հիասթափությամբ. «Գիտնականները հրաժարվում էին Հասարակության և քաղաքակրթության (XVIII դարին նախորդող) պատմությունը նրա՝ տնտեսությունից ունեցած կախվածությունը մեկնաբանելուց»⁶⁹: Իսկ արդեն 1970-ական թվականներին մտայնությունների պատմությունը, չնայած իր անորոշությունը, սկսում է «ռազմավարական այնպիսի դեր խաղալ, ինչպես «սոցիալական» հղացքը՝ 1930-ական թվականներին»⁷⁰:

Նկատենք, որ մինչ այդ թեպետ հետազոտողները դիտեին մտայնություն եզրույթի՝ ինչ տեսություններ կիրառել, սակայն բաց էր մնում ինչպես կիրառելու հարցը: Ուստի պատմագիտության մեջ լայն կիրառություն ստացան հոգեբանական, մշակութաբանական, հիշողության և այլ Հայեցակարգերի նորովի Համադրման փորձառություն-

Paris: A. Colin, 1958, 2 volumes:

⁶⁷ Տե՛ս Mandrou R., «Histoire sociale des mentalités modernes», *Annuaire de la VI^e section de l'EPHE*, année 1963–1964, p. 57–58: **Idem**: Introduction à la France moderne. Essai de psychologie historique, Paris: Albin Michel, 1961. **Idem**: L'Histoire des mentalités, in article «Histoire», 5, *Encyclopedia Universales*, Vol. 8 (1968), p. 436–438. **Idem**: Histoire sociale et histoire des mentalités, *La Nouvelle critique*, 49 (1972), p. 41–44; etc.

⁶⁸ Duby G., La feodalite? Une mentalite medievale, *Annales. ÉSC*, 4 (1958), p. 765–771. **Idem**: L'Histoire des mentalités, dans Samaran Ch. (ed.), *L'Histoire et ses methods (Encyclopédie de la Pléiade, N° 11)*, Paris: Gallimard, 1961, p. 937–966. **Idem**: L'histoire vivante, *L'Arc*, 18 (1962), p. 65–72; etc.

⁶⁹ Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, *Одиссей. Человек в истории*, М., 1991, с. 53.

⁷⁰ Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 230.

ները: Հատկապես հոգեբանական դիտանկյունն առանցքային նշանակություն ստացավ նոր հայեցակարգի մշակման ճանապարհին: Թե՛ Մանդրուի և թե՛ Դյուբրիի ուշադրությունը կենտրոնանում է «հոգեբանական ստորոգությունների ուղղություններ ոչ պակաս, հնարավոր է և անգամ ավելի շատ, քան ինտելեկտուալ ստորոգությունները»⁷¹:

Ուշագրավ է, որ մտայնության հոգեբանական կողմի շեշտադրումով մտայնությունը միևնույն ժամանակ գետեղվում է սոցիալական պատմության և մշակույթի պատմության հատման տիրույթում. «Յուրաքանչյուր պատմական հոգեբանություն, ցանկացած մտայնությունների պատմություն, անկասկած, սոցիալական պատմություն է: Սակայն բացի դրանից այն իրենից ներկայացնում է և մշակույթի պատմություն»⁷²: Ընդհանուր առմամբ ասվածը

⁷¹ Chartier R., Intellectual History and the History of Mentalities, in Capra D. La, Kaplan S. L. (ed.), *Modern European Intellectual History. Reappraisals and New Perspectives*, Cornell University Press, 1982, p. 23.

⁷² Mandrou R., *Introduction à la France moderne. Essai de psychologie historique*, Paris: Albin Michel, 1961, p. 353. Այստեղ չենք քննարկելու այն հարցը, թե արդյոք գիրքն ամբողջովին կարելի է վերագրել Մանդրուին, թե՞ այն նաև Ֆեբրի գրչին է պատկանում: Ասենք, որ գիրքը գրվել է Ֆեբրի նյութերի հիման վրա: Սակայն աշխատության համահեղինակությամբ հրատարակումը, ինչպես եղավ Ֆեբրի հետմահու մյուս աշխատության դեպքում («Գրքի լույսընծայումը»՝ համահեղինակությամբ Անրի-Ժան Մարտինի), անհնար եղավ: Բանն այն է, որ դրան ընդգրկմացավ Բրոդելը, որը գտնում էր, թե գրքում արժարժված պատմատեսությունը ոչ մի ընդհանրություն չունի Ֆեբրի հետ: Թեպետ Մանդրուն գիրքը հրատարակեց միայն իր անունով, այդուամենայնիվ այն նվիրեց ուսուցչին Լյուսիեն Ֆեբրին: Գրքի հրատարակումից անմիջապես հետո սկսվեցին մեղադրանքները, թե նա օգտագործել է Ֆեբրի նյութերը, գաղտնաբերել և այլն, իսկ Ֆեբրի ձեռագիրն անհետացել էր: Եվ երկար ժամանակ այս հարցը բաց էր մնացել, մինչև 1996 թ. Թերեզ Եարմասոնն ու Բրիջիտ Մազոնը վերջ տվեցին քննարկումներին. Ֆեբրի ձեռագիրը հայտնաբերվեց Բրոդելի արխիվում (դրանք 1966 թ. տեղադրվել էին Տոկվիլի դղյակ): Ավելի մանրամասն տես Charmasson Th., Mazon B., *Introduction, dans Febvre L., Honneur et Patrie /Une enquête sur le sentiment d'honneur et l'attachement à la patrie. Cours professé au Collège de France en 1945–46 et 1947. Texte établi, présenté et*

ենթադրում էր տնտեսական և սոցիալական պատմությունների գերակայությունից հրաժարում, քանի որ «տեղակայել սոցիալական ֆենոմենները տնտեսական ֆենոմենի պարզ շարունակականության մեջ նշանակում է սահմանափակել հարցարկման դաշտը (*champ d'interrogation*), նշանակում է խիստ աղքատացնել խնդիրները, նշանակում է հրաժարվել ուժային որոշ էական գծերի հստակ ընկալումից»⁷³: Խոսքը հնարավոր պատճառահետևանքային մեկնաբանությունների ուղղությունը չկանխորոշելու, հատկապես քաղաքական արդյունքի չհանգեցնելու մասին է:

Իրականում տնտեսական կախվածությունից ձեռքադատումը ենթադրում էր կարողական (*potentielle*) վիճակներ, որոնցով հնարավոր էր դառնում համակարգ ներբերել ինչպես տնտեսականը, այդպես և արտատնտեսականը⁷⁴: Մյուս կողմից՝ այդ կախվածությունից ձեռքազատվել չէր նշանակում ընդհանրապես հրաժարվել դրանից, այլ «գրադվել տնտեսական պատմությանը»՝ միևնույն ժամանակ «գիտակցաբար խուսափելով վիճակագրական և շարային մեթոդների կիրառումից»⁷⁵: Այստեղ բացահայտվում է «հասարակության էվոլյուցիայի մեջ նյութականի և մտայնությունների փոխհարաբերության» հիմնախնդիրը⁷⁶: Վերջինս կարևորվում էր թե՛ Մանդրուի և թե՛ Դյուբրիի կողմից, քանի որ նրանք մտայնությունների պատմության մեջ

annoté par Thérèse Charmasson et Brigitte Mazon, Paris: Librairie académique Perrin, 1996, p. 14–18. Lebrun F., Braudel, Febvre, Mandrou: bataille d'historiens, *L'Histoire*, 226 (1998), p. 23–24.

⁷³ Duby G., Les sociétés médiévales: une approche d'ensemble, *Annales. É.S.C.*, 1 (1971), p. 2.

⁷⁴ Նյութական կյանքի և մտայնությունների միջև կապի «ավելորդ շտկումից» չխուսափելու» իրողությունը նկատել է և Գուրևիչը: Տես Гуревич А. Я., *указ. соч.*, с. 152:

⁷⁵ Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, *Одиссей. Человек в истории*, М., 1991, с. 51.

⁷⁶ Дюби Ж., *Трехчастная модель или представление средневекового общества о самом себе /Пер. с фр. Ю. А. Гинзбург, Москва: Языки русской культуры, 2000, с. 18.*

տեսնում էին սոցիալական պատմություն հետազոտություն համար անհրաժեշտ լրացումը, որը հնարավոր էր նյութական սկզբնահիմքի միջոցով⁷⁷: Ըստ այդմ, Գուրեվիչի ձևակերպմամբ՝ «Մտայնությունների հետազոտությունը չի հեռացնում սոցիալ-տնտեսական հիմնախնդրից, այն դրանք ղեկում է ավելի տարողունակ և համընդգրկուն համատեքստում»⁷⁸:

Սա էլ իր հերթին հանգեցնում է տեսականի և իրականի փոխհարաբերությունների հարցի վերանայմանը: Բանն այն է, որ մտայնության պատմության այս հայեցակարգի էական կողմը նրա՝ իրականության մեջ ներառվածությունն է: Այս համատեքստում կարևորվում է այն, որ հետազոտողները ստիպված չլինեն հեռանալ կոնկրետից. «Մտայնությունը ևս պետք է գետնովի իրականության մեջ, որը պարառում, հիմնավորում կամ, ավելի շուտ, բացատրում է այն»⁷⁹: Եվ, որ հույժ կարևոր է, չվերազրեն «մտային կառույցներին չափազանց ինքնուրույնություն նյութական կառույցների առնչությամբ», հենց որոնք էլ որոշարկում են «մտային կառույցները»⁸⁰: Այլ կերպ ասած՝ «եթե ուզում ենք, որ սոցիալական պատմությունը հառաջանա և անկախություն նվաճի, անհրաժեշտ է այն ներքաշել մի ուղու մեջ, ուր կլծորդվեն նյութական քաղաքակրթության պատմությունն ու հավաքական մտային պատմությունը»⁸¹: Մի բան, որն իր հերթին նպաստեց այնպիսի ըմբռնումների, հայեցակարգերի ու հղացքների բազմաց-

⁷⁷ Шюа Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, *Одиссей. Человек в истории*. М., 1991, с. 53:

⁷⁸ Гуревич А. Я., *Проблема ментальностей в современной историографии, в Всеобщая история: Дискуссии, новые подходы*. Вып. 1., М., 1989, с. 79.

⁷⁹ Mandrou R., Le baroque européen: mentalité pathétique et révolution sociale. *Annales. ESC*, 5 (1960), p. 899.

⁸⁰ Duby G., Les sociétés médiévales: une approche d'ensemble, *Annales. ESC*, 1 (1971), p. 2-3.

⁸¹ Duby G., *op. cit.*, p. 3.

մանը, որոնք խիստ անհրաժեշտ էին մտայնությունների պատմության կայացման և օրինականացման համար: Ավելին՝ դրանք նպաստավոր էին ինքնին պատմագիտության համար: Այս իրողությունը, որը բխում էր կառուցվածքային կանոնավորման պայմանականություններից, առաջադրում էր և մտայնությունների պատմություն հղացքի սահմանազատման հարցը:

Ըստ այսմ, որքան էլ հետազոտողները փորձեն մտայնությունների պատմությունը սահմանազատել պատմության մյուս տարատեսակներից (սեփական տարածք ձևավորելու նպատակով), այդուամենայնիվ, այն աչքի է զարնում հենց իր «սահմաններ չճանաչելու կողմնորոշմամբ»: «Մտայնությունների պատմությունը, ինչպես և խորքային մեկնաբանություններ որոնող ցանկացած պատմություն, սահմաններ չի ճանաչում: Բացի այդ, այն առանձնացված չէ պատմության մյուս ստորաբաժանումներից: Հոգեբանական պատմության մեկուսացման փորձը (անգամ գաղափարների ու զգացմունքների պատմության կամ գաղափարների սոցիալական պատմության անվան ներքո) անհույս ձեռնարկ է»⁸²:

Այս համապատկերում ուշազրաժ է և մտայնություն հղացքի զուգորդումը սոցիալական հարաբերությունների և մտային միջոցների հետ: Նման զուգորդումների արդյունք են մտային կառույցներ (structures mentales) և մտային համակցություններ (conjonctures mentales), մտային ռազմավարություններ (stratégies mentales), մտակեցվածքներ (attitudes mentales), հոգեբանական կլիմա (climat psychologique) և հոգեբանական համաճարակներ (épidémies psychologiques), աշխարհատեսություն (vision du monde), մտային հորիզոն (horizons mentaux) և այլ եզրույթներ: Այստեղից էլ՝ դրան համարժեք հղացքների բազմակիությունը, որոնք հարաբերականորեն կայունու-

⁸² Мандру Р., *Франция раннего Нового времени. 1500-1640. Эссе по исторической психологии*, Москва: Территория будущего, 2010, с. 305.

թյուն են ձեռք բերում «աշխարհատեսություն» հղացքի համատեքստում, քանի որ վերջինս, ըստ Մանդրուի՝ «ծածկում է հասկացությունների ողջ համալիրը (ինչպես մտավոր, այդպես և էթիկական), որոնց օգնությամբ անհատներն ու խմբերն ամեն օր մտածում և գործում են»⁸³։ Նկատենք, որ «աշխարհատեսություն» հղացքը⁸⁴ ենթադրում է երկու մակարդակ. մի կողմից՝ այն կարող է համարվել լինել մտայնությունը⁸⁵, բայց և մյուս կողմից՝ լինել մտային կառույցի (structure mentale) հիմնարար տարրը⁸⁶։

Նման տարբերակումների և վերամիավորումների համապատկերում մտայնությունների պատմության գործառական տարրորոշումն ու միջոցների բաշխումը համապատասխանում են ժամանակային տեղումնայնությունը (կառույցին), քանի որ նրան բնորոշ են «ռիթմի և կշռությունների (cadences)» հարաբերությունները⁸⁷։ Ըստ այդմ՝ մտայնությունների պատմությունը ներկայանում է իբրև ժամանակի պատկեր, ավելի հստակ՝ որպես պատմությունն իր տարբեր չափումներով ներառող, համակարգող ժամանակային տեղումնայնությունների միասնություն։ Այսու՝ մտայնություններին հատուկ է ժամանակի սեփական տեղումնայնությունը⁸⁸։ Թե՛ Դյուբին, թե՛ Մանդրուն մտայնությունները գետնողում են

⁸³ Mandrou R., *Introduction à la France moderne (1500–1640). Essai de psychologie historique*, Paris: Albin Michel, 1961, p. 342.

⁸⁴ «Աշխարհատեսություն» (vision du monde) հղացքը, որը գուրգուրում է գերմաներեն Weltanschauung-ին, Մանդրուն վերցրել էր Ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Լյուսիեն Գոլդմանից (Sibé Goldmann L., *Recherches dialectiques*, Paris: Gallimard, 1959, p. 46), սակայն օժտելով այն ավելի ընդգրկուն իմաստով։

⁸⁵ Лазарев А., Робер Мандру и судьба исторической психологии Люсьена Февра, Мандру Р., *указ. соч.*, с. 25.

⁸⁶ Мандру Р., *указ. соч.*, с. 283.

⁸⁷ Trénaud L., L'histoire des mentalités collectives: les pensées et les hommes. Bilan et perspectives, *RHMC*, Tome XVI, 1969, p. 657.

⁸⁸ Dosse F., *L'histoire en miettes. Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 209.

ժամանակի բրոնզեյան եռաբլիթ տեղումնայնության ծիրում⁸⁹, ավելի հստակ՝ մտային համակցությունները, համընկնելով տնտեսական համակցություններին, դրանցից տարբերվում են տեղումնայնությամբ⁹⁰։ Ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել մտայնությունների երեք տարատեսակ՝ կարճ տեղումնայնության (իրադարձային կամ քաղաքական, անզամ ժուռնալիստական մտայնություններ), միջին տեղումնայնության (տնտեսական մտայնություններ) և երկար տեղումնայնության (քաղաքակրթական մտայնություններ)⁹¹։ Ընդ որում՝ ժամանակային յուրաքանչյուր տեղումնայնության մեջ այսպես թե այնպես դրսևորվող մտայնություններն ու մտային բոլոր միջոցները միայն ժամանակի քաղաքակրթական տեղումնայնության ծիրում է, որ հանդես են գալիս ներդաշնակ միահյուսվածությամբ։ Այլ կերպ ասած՝ ժամանակային հարաբերությունների մեջ հնարավոր է դառնում պատմական ամբողջի վերհանումը՝ այն չափազանց դանդաղընթաց վիճակը, որը հայտնի է իբրև անշարժ պատմություն։ Ուստի երբեմն, Բրոնզեյին հետամուտ, կարելի է խոսել նաև մտայնության չորրորդ տարատեսակի մասին, որը ծավալվում է չափազանց երկար տեղումնայնության համաժիրում (անշարժ մտայնություններ)։ Մտայնությունների ժամանակային տեղաբաշխումն ու միավորումը տեսանելի են դարձնում մտքի, գիտակցության ոլորտում տեղի ունեցած փոխակերպությունների կապը նյութական փոխակերպությունների հետ։ Ավելին՝ ի չիք են դարձնում այն թյուր պատկերացումը, թե «մտային կառույցներն» անշարժ են, քանզի «մտայնությունների ոլորտում, ինչպես և ցանկացած այլ [ոլորտում], գոյու-

⁸⁹ Duby G., L'Histoire des mentalités, dans Samaran Ch. (ed.), *L'Histoire et ses methods (Encyclopédie de la Pléiade, N° 11)*, Paris: Gallimard, 1961, p. 949. Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, *Одиссей. Человек в истории*, М., 1991, с. 20.

⁹⁰ Sibé Мандру Р., *указ. соч.*, с. 302:

⁹¹ Dosse F., *op. cit.*, 1987, p. 209. Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France (19^e–20^e siècle)*, Paris: Armand Colin, 2005, p. 234.

թյունն չունենն անշարժ կառույցներ, այլ կան մշտական փոփոխերգործություններ կառույցների և համակցությունների միջև»⁹²:

Փոխակերպությունների համատեքստում հույժ կարևոր է չսևեռվել միայն տարժամանակյա իրողությունների վրա, քանի որ «տարժամանակյա մոտեցումը չափազանց հաճախ է պոկվում իրականությունից»⁹³: Միևնույն ժամանակ հարկ է անդադար համադրել բազմակերպ տեղությունները և «առանձնացնել սոցիալական իրականության ու գաղափարաբանական պատկերացումների տարբերություններն ու անհամապատասխանությունները, որոնք չեն զարգանում կատարյալ համաժամանակությամբ»⁹⁴: Ընդ որում՝ մտայնություններն այստեղ մտածված չեն իբրև լրացուցիչ առարկա (objet supplémentaire), այլ արտահայտում են ամբողջի վերահաստատման պահանջ⁹⁵: Այստեղից էլ՝ մտայնությունների պատմության և համընդգրկուն պատմության համադրելիության հեռանկարը⁹⁶: «Մտայնությունների պատմությունն անօտարելի մասն է համընդգրկուն պատմության, որն ընկալվում է ոչ թե իբրև Միջլեի իգեալական և ռոմանտիկական երազանք, այլ իբրև մեթոդաբանական պահանջների հանրագումար, որոնք կիրառվում են հետազոտության յուրաքանչյուր փուլում»⁹⁷:

Այսու՝ համընդգրկուն պատմությունը շարունակությունն է մտայնությունների պատմության և, որոշ իմաստով, դրա ամփոփում-ավարտը: Ըստ այսմ՝ համընդգրկուն պատմություն հղացքը ենթադրում է մտայնությունների միջոցով ավելի խորքային իրողությունների հայտնաբե-

⁹² Мандру Р., указ. соч., с. 297.

⁹³ DUBY G., *Vendredi, entretien avec l'auteur*, 4 janvier 1980.

⁹⁴ Dosse F., *op. cit.*, p. 210.

⁹⁵ SÉNÉ DOSSE F., *op. cit.*, p. 210:

⁹⁶ Гуревич А. Я., указ. соч., с. 137.

⁹⁷ Мандру Р., указ. соч., с. 305.

րումն ու ըմբռնումը: Համընդգրկուն պատմության հարաբերությամբ մտայնությունների պատմությունը միայն ներունակորեն է համընդգրկուն պատմություն: Պատմության այս կերպերը փոխլրացնում են մեկը մյուսին և միավորվում են ոչ միայն անշարժ, այլև փոխակերպվող, շարժուն հարաբերությունների համատեքստում: Ասվածը ենթադրում է բոլոր այդ չափումների զանազան համադրությունների միասնություն, որը երբեք չի ամբողջանում:

Մյուս կողմից՝ այստեղ աչքի է զարնում մտայնություն հղացքի գործառական անհամասեռությունը. «Պետք է խոստովանել, որ բոլոր տարրերից, որոնք պահանջում են անհրաժեշտ վերլուծություն, նրանք, որոնք կարող են ապահովել հավաքական մտքի պատմությունը (*histoire du mental collectif*), ավելի անորոշ ու ավելի քիչ միասնական են թվում»⁹⁸: Իրականում, սակայն, լինելով հաստատումը դրանցից մեկի՝ ներունակորեն համընդգրկուն մտայնությունների պատմությունը միևնույն ժամանակ մյուսի բացառումը չէ: Այստեղից էլ «անմիջապես հարց է ծագում՝ այսօր, թերևս, պատմաբանների համար առավել մտահոգիչ ինչպե՞ս միավորել մտայնությունների պատմությունը պատմագիտական հետազոտության ամբողջին»⁹⁹: Գործն էլ ավելի է բարդանում, երբ գործառական անհամասեռությանը հավելենք մտայնության սահմանման՝ հստակ ուրվագծեր չունեցող և ժամանակի ընթացքում այլակերպվող շարժունությունը, որի «անհրաժեշտ վկայությունները հարկ է հավաքել ամենատարբեր սկզբնաղբյուրների փշրանքներից»¹⁰⁰: Թե՛ Մանդրուն, թե՛ Դյուբրին լուծումը գտնում են սկզբնաղբյուրների փշրանքների համադրման մեջ: Դյուբրիի սահմանմամբ՝ մտայնությունը շարժման մեջ

⁹⁸ DUBY G., *Les sociétés médiévales: une approche d'ensemble, Annales. ESC*, 1 (1971), p. 12.

⁹⁹ *Ibid.*, p. 12.

¹⁰⁰ Дюби Ж., *Развитие исторических исследований во Франции ...*, с. 52.

գտնվող համակարգ է, որում «նրա բոլոր տարրերը սերտորեն կապակցված են միմյանց. դա պատկերների, պատկերացումների համակարգ է, որոնք հասարակական ֆորմացիա կազմող տարրեր խմբերում կամ խավերում համակցվում են տարրեր կերպերով, բայց մշտապես ընկած են աշխարհի և այդ աշխարհում իր տեղի մասին մարդու պատկերացումների հիմքում և, հետևաբար, որոշարկում են մարդկանց վարքն ու վարմունքը»¹⁰¹:

Արդյունքում մտայնությունների ըմբռնումը հիմնովին ձևափոխվեց: Հատկապես երբ պարզ դարձավ, որ այս կամ այն անհատի, այս կամ այն հասարակության մտայնությունը որոշարկվում է ոչ թե պարզապես որևէ այլ անհատի կամ հասարակության հետ նրանց հարաբերությամբ, այլ հատկապես որոշակի կարգի մեջ ներառվածությամբ: Դյուբրի բնորոշմամբ՝ «մարդկանց վարքը ձևավորվում է պայմանավորված ոչ այնքան նրանց իրական վիճակով, որքան այդ վիճակի, ամենօրյա մոդելների մասին նրանց սովորական թյուրըմբռնումներով, որոնք միայն մասնակիորեն նյութական իրականությունը հիշեցնող մշակույթի արդյունք են»¹⁰²: Ըստ այսմ՝ մտայնությունների պատմության համատեքստում փոխազդում և աստիճանակարգված կերպով ինքնակազմակերպվում են սոցիալական հարաբերություններն ու մտային միջոցները (ressources mentales)՝ «աշխարհը, մարդկանց և Աստծուն վերլուծելու, նկարագրելու և մեկնաբանելու համար»¹⁰³: Ընդ որում՝ սոցիալական հարաբերություններն ու մտային միջոցները ենթադրում են փոխհարաբերությունների մի այնպիսի ամբողջություն, որը ներառում է «բնախոսականից մինչև հոգևորը, հանապազօրյա հացից մինչև միստիկան»¹⁰⁴, ինչպես նաև

¹⁰¹ Там же, с. 52.

¹⁰² DUBY G., Ideologies in social history, in Le Goff J., Nora P. (eds.), Constructing the Past: Essays in Historical Methodology, Cambridge: Cambridge University Press, 1985, p. 151.

¹⁰³ Мандру Р., указ. соч., с. 99.

¹⁰⁴ Mandrou R., Introduction à la France moderne. Essai de psychologie

«խմբերի կամ համընդգրկուն հասարակության (société globale) կողմից ընդունված պատկերացումներն ու երևակայությունները, առասպելներն ու արժեքները, որոնք կազմում են հավաքական հոգեբանությունների բովանդակությունը»¹⁰⁵: Նման ընդգրկման շնորհիվ հնարավոր է դառնում խոսել մտայնությունների պատմության իբրև համակարգի ու գործընթացի մասին: Ըստ այդմ՝ մտայնությունների պատմությանը հատուկ է ներքին մի կազմակերպվածություն, շնորհիվ որի՝ այն դրսևորվում է իբրև կառուցվածքային ամբողջություն: Մտայնությունների պատմության նպատակն է «վերականգնել վերաբերմունքները, արտահայտություններն ու լուծությունները, որոնք թարգմանում են աշխարհատեսություններն ու հավաքական զգացմունքները»¹⁰⁶: Այստեղից էլ՝ մտայնությունների պատմության գործառական միասնականությունը համապատասխանում է այդ ոլորտի ամբողջական համակարգային կազմակերպմանը:

Մտայնությունների պատմության աննալական մեկ այլ ուղղություն էր մտայնությունների շարային կամ քանակային պատմությունը, որի վառ ներկայացուցիչներից էին, ինչպես վերն ասացինք, Պիեռ Ծոնյուն, Միշել Վոլվելը, Լը Ռուա Լադյուրին, Ֆրանսուա Ֆյուրեն, Ֆիլիպ Արիեսը և այլք¹⁰⁷: Նկատենք, որ այս ուղղության ներկայացուցիչների մոտեցումները ևս տարբերվում են միմյանցից՝ կազմելով առանձին ենթաուղղություններ: Չնայած նման տարաբաժանմանը՝ այդ ենթաուղղությունները կազմում են մեկ ամբողջություն: Ինքնօրինակ մի ամբողջություն, որի համատեքստում բացահայտվում են հետազոտական նոր տիրույթներ՝ ըստ տնտեսական փորձառության և ժողովրդա-

historique, Paris: Albin Michel, 1961, p. XIII.

¹⁰⁵ Mandrou R., L'histoire des mentalités, Encyclopaedia Universalis, vol. 8, 1977, p. 436.

¹⁰⁶ Ibid., p. 436.

¹⁰⁷ Տես Հովհաննիսյան Ս., Ֆեռնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վէմ» համահայկական հանդես, 1 (2011), էջ 98–119:

գրության (Շոնյու, Լադյուրի)¹⁰⁸, կյանքի և մահվան (Արիես, Վովել)¹⁰⁹, հեղափոխությունների (Ֆյուրե)¹¹⁰ և այլնի նկատմամբ վերաբերմունքի: Ընդհանուր առմամբ, այս համատեքստում մտայնությունների պատմությունը հոգ է տանում նախ և առաջ մեծ «գոյութենականի (Existenziale)» մասին, ինչպես հիվանդության և մահվան, սեռականություն և սիրո¹¹¹:

Ինչպես անվանումն է հուշում, մտայնությունների պատմության վերոհիշյալ ուղղությունը զարգանում էր շարային և քանակային պատմությունների հղացք(ներ)ի համաձիրում: Այսու որքանով վավեր է «կրկնվող, շարային, քանակայնացվող (quantifiable) փաստերին» տրվող առաջնությունը, նույնքան վավեր է մտայնին (mental) տրվող առաջ-

¹⁰⁸ Տն՝ Chaunu P., *Séville et l'Atlantique (1504-1650)*, Paris: SEVPEN, 12 volumes, 1955-1960: **Idem**: *La Civilisation de l'Europe classique*, Paris: Arthaud, 1966. **Idem**: *Démographie historique et système de civilisation*, Rome: EFR, 1974. **Ladurie E. Le Roy**, *Les Paysans de Languedoc* (thèse), Paris: SEVPEN, 1966. **Idem**: *Histoire du climat depuis l'an mil*, Paris: Flammarion, 1967. **Idem**: *Montaillou, village occitan de 1294 à 1324*, Paris: Gallimard, 1975. **Idem**: *Le Carnaval de Romans: de la Chandeleur au Mercredi des cendres (1579-1580)*, Paris: Gallimard, 1979.

¹⁰⁹ Տն՝ Ariès Ph., *L'Enfant et la vie familiale sous l'Ancien Régime*, Plon, 1960: **Idem**: *L'Homme devant la mort*, Paris: Seuil, 1977. **Idem**: *Images de l'homme devant la mort*, Paris: Seuil, 1983. **Vovelle M.**, *Vision de la mort et de l'au-delà en Provence du XV^e au XIX^e siècle d'après les autels des âmes du purgatoire*, (Gaby Vovelle-ի հետ միասին), Paris: A. Colin, 1970. **Idem**: *Piété baroque et déchristianisation en Provence au XVIII^e siècle. Les attitudes devant la mort d'après les clauses de testaments*, Paris: Seuil, 1973. **Idem**: *Mourir autrefois*, Paris: Gallimard & Julliard, 1974.

¹¹⁰ **Furet F.**, *La Révolution* (Denis Richet-ի հետ միասին), Paris: Librairie Arthème Fayard, 1965: **Idem**: *Penser la Révolution française*, Paris: Éditions Gallimard, coll. «Bibliothèque des histoires», 1978.

¹¹¹ Տն՝ Raulff U., Die Annales E. S. C. und die Geschichte der Mentalitäten, in **Jüttemann G.** (Hrsg.), *Die Geschichtlichkeit des Seelischen. Der historische Zugang zum Gegenstand der Psychologie*. Weinheim, Beltz Verlag, 1986, s. 159; **Chaunu P.**, *L'économie: Dépassement et prospective*, in **Le Goff J., Nora P.** (eds.), *Faire de l'histoire*, 3 vols., V.2: *Nouvelles approches*, Paris: Éditions Gallimard, 1974, p.51-73:

նությունը¹¹²: Եվ խորքային առումով մտայնությունների «շարային» կամ «քանակային» պատմությունը ևս կրում էր էլոնես Լաբրուսի տեսության ազդեցությունը¹¹³: Սա նկատելի դարձավ հատկապես այն ժամանակ, երբ 1965 թ. Լաբրուսը Սենտ-Կլոուզի համաժողովում հայտարարեց, որ «քանակային [մեթոդը] հաղթող է սոցիալական պատմության մեջ»¹¹⁴: Համաձայն լաբրուսյան մոտեցման՝ քանակային և հատկապես շարային մեթոդների միջոցով մտայնությունների հետազոտությամբ է հնարավոր յուրացնել այսպես կոչված պատմության երրորդ մակարդակը (troisième niveau de l'histoire), այն է՝ աննալական տնտեսական, սոցիալական և քաղաքակրթական մակարդակներից վերջինը՝ քաղաքակրթականը¹¹⁵, Շոնյուի ձևակերպմամբ՝ «քանակայինը երրորդ մակարդակում»¹¹⁶: Կարելի է եզրակացնել, որ այդպիսով տրոհված երեք մակարդակներն ավելի բարձր (թերևս չորրորդ) մակարդակում վերամիավորվելու հնարավորություն են ստանում: Սա այն փոխակերպվող և փոխակերպող շեմն է, որտեղ բոլոր այդ երեք մակարդակների վերլուծություն-համադրությունն իրականացվում է ավելի բարձր մակարդակից, թեպետ երրորդ մակարդակի գիտական նվաճումը դեռ ընթացքի մեջ էր, քանի որ, ըստ Շոնյուի, հավաքական միտքը պատմաբանները

¹¹² **Ricœur P.**, *La Mémoire, l'Histoire, l'Oubli*, Paris: Le Seuil 2000, p. 245.

¹¹³ Տն՝ **Агуппе Рохас К. А.**, Критический подход к истории французских «Анналов», Москва: Кругъ, 2006, с. 151:

¹¹⁴ Տն՝ **Perrot M.**, The Strengths and Weaknesses of French Social History, *JSH*, Vol. 10, No. 2, 10th Anniversary Issue: Social History Today and Tomorrow? (Winter, 1976), p. 172:

¹¹⁵ Տն՝ **Labrousse E.**, *La Crise de l'économie française à la fin de l'Ancien Régime et au début de la Révolution*, Paris: PUF, 1944. **Delanty G., Isin E. F.**, *Handbook of Historical Sociology*, London: Sage Publications Ltd 2003, p. 171. **Burke P.**, *op. cit.*, p. 74:

¹¹⁶ **Chaunu P.**, Un nouveau Champ pour l'histoire sérielle: Le quantitatif au troisième niveau, dans **Braudel F.**, *Mélanges en l'honneur de Fernand Braudel*, Vol. 2 (Méthodologie de l'histoire et des sciences humaines), Toulouse: Privat, 1972, p. 105-125.

գրության (Շոնյու, Լադյուրի)¹⁰⁸, կյանքի և մահվան (Արիես, Վոպել)¹⁰⁹, հեղափոխությունների (Ֆյուրբե)¹¹⁰ և այլնի նկատմամբ վերաբերմունքի: Ընդհանուր առմամբ, այս համատեքստում մտայնությունների պատմությունը հոգ է տանում նախ և առաջ մեծ «գոյութենականի (Existentziale)» մասին, ինչպես հիվանդության և մահվան, սեռականությունից և սիրո¹¹¹:

Ինչպես անվանումն է հուշում, մտայնությունների պատմության վերահիշյալ ուղղությունը զարգանում էր շարային և քանակային պատմությունների հղացք(ներ)ի համաձիբում: Այսու՝ որքանով վավեր է «կրկնվող, շարային, քանակայինացվող (quantifiable) փաստերին» տրվող առաջնությունը, նույնքան վավեր է մտայինին (mental) տրվող առաջ-

¹⁰⁸ Sté Chaunu P., *Séville et l'Atlantique (1504-1650)*, Paris: SEVPEN, 12 volumes, 1955-1960: **Idem**: *La Civilisation de l'Europe classique*, Paris: Arthaud, 1966. **Idem**: *Démographie historique et système de civilisation*, Rome: EFR, 1974. **Ladurie E. Le Roy**, *Les Paysans de Languedoc* (thèse), Paris: SEVPEN, 1966. **Idem**: *Histoire du climat depuis l'an mil*, Paris: Flammarion, 1967. **Idem**: *Montaillou, village occitan de 1294 à 1324*, Paris: Gallimard, 1975. **Idem**: *Le Carnaval de Romans: de la Chandeleur au Mercredi des cendres (1579-1580)*, Paris: Gallimard, 1979.

¹⁰⁹ Sté Ariès Ph., *L'Enfant et la vie familiale sous l'Ancien Régime*, Plon, 1960: **Idem**: *L'Homme devant la mort*, Paris: Seuil, 1977. **Idem**: *Images de l'homme devant la mort*, Paris: Seuil, 1983. **Vovelle M.**, *Vision de la mort et de l'au-delà en Provence du XV^e au XIX^e siècle d'après les autels des âmes du purgatoire*, (Gaby Vovelle-ի հետ միասին), Paris: A. Colin, 1970. **Idem**: *Piété baroque et déchristianisation en Provence au XVIII^e siècle. Les attitudes devant la mort d'après les clauses de testaments*, Paris: Seuil, 1973. **Idem**: *Mourir autrefois*, Paris: Gallimard & Julliard, 1974.

¹¹⁰ Furet F., *La Révolution* (Denis Richet-ի հետ միասին), Paris: Librairie Arthème Fayard, 1965; **Idem**: *Penser la Révolution française*, Paris: Éditions Gallimard, coll. «Bibliothèque des histoires», 1978.

¹¹¹ Sté Raulff U., Die Annales E. S. C. und die Geschichte der Mentalitäten, in Jüttemann G. (Hrsg.), *Die Geschichtlichkeit des Seelischen. Der historische Zugang zum Gegenstand der Psychologie*. Weinheim, Beltz Verlag, 1986, s. 159; **Chaunu P.**, *L'économie: Dépassement et prospective*, in **Le Goff J., Nora P.** (eds.), *Faire de l'histoire*, 3 vols., V.2: *Nouvelles approches*, Paris: Éditions Gallimard, 1974, p.51-73:

նությունը¹¹²: Եվ խորքային առումով մտայնությունների «շարային» կամ «քանակային» պատմությունը ևս կրում էր էոնես Լաբրուսի տեսության ազդեցությունը¹¹³: Սա նկատելի դարձավ հատկապես այն ժամանակ, երբ 1965 թ. Լաբրուսը Սենտ-Կլոուդի համաժողովում հայտարարեց, որ «քանակային [մեթոդը] հաղթող է սոցիալական պատմության մեջ»¹¹⁴: Համաձայն լաբրուսյան մոտեցման՝ քանակային և հատկապես շարային մեթոդների միջոցով մտայնությունների հետազոտությամբ է հնարավոր յուրացնել այսպես կոչված պատմության երրորդ մակարդակը (troisième niveau de l'histoire), այն է՝ աննախական տնտեսական, սոցիալական և քաղաքակրթական մակարդակներից վերջինը՝ քաղաքակրթականը¹¹⁵, Շոնյուի ձևակերպմամբ՝ «քանակայինը երրորդ մակարդակում»¹¹⁶: Կարելի է եզրակացնել, որ այդպիսով տրոհված երեք մակարդակներն ավելի բարձր (թերևս չորրորդ) մակարդակում վերամիավորվելու հնարավորություն են ստանում: Սա այն փոխակերպվող և փոխակերպող շեմն է, որտեղ բոլոր այդ երեք մակարդակների վերլուծություն-համադրությունն իրականացվում է ավելի բարձր մակարդակից, թեպետ երրորդ մակարդակի գիտական նվաճումը դեռ ընթացքի մեջ էր, քանի որ, ըստ Շոնյուի, հավաքական միտքը պատմաբանները

¹¹² Ricœur P., *La Mémoire, l'Histoire, l'Oubli*, Paris: Le Seuil 2000, p. 245.

¹¹³ Sté Aruppe Poxac K. A., Критический подход к истории французских «Анналов», Москва: Круг, 2006, с. 151:

¹¹⁴ Sté Perrot M., The Strengths and Weaknesses of French Social History, *JSH*, Vol. 10, No. 2, 10th Anniversary Issue: *Social History Today and Tomorrow?* (Winter, 1976), p. 172:

¹¹⁵ Sté Labrousse E., *La Crise de l'économie française à la fin de l'Ancien Régime et au début de la Révolution*, Paris: PUF, 1944. **Delanty G., Isin E. F.**, *Handbook of Historical Sociology*, London: Sage Publications Ltd 2003, p. 171. **Burke P.**, *op. cit.*, p. 74:

¹¹⁶ **Chaunu P.**, Un nouveau Champ pour l'histoire sérielle: Le quantitatif au troisième niveau, dans **Braudel F.**, *Mélanges en l'honneur de Fernand Braudel*, Vol. 2 (Méthodologie de l'histoire et des sciences humaines), Toulouse: Privat, 1972, p. 105-125.

դեռ կամ վատ էին նույնացնում, կամ էլ վատ էին քանակայնացնում՝ էլ չսասած «Հավաքական Հուզականություն» մասին¹¹⁷:

Այդպիսով՝ հիմնական արդյունքներն առանձնացնելու համար պատմաբանը նախ, սովորելով մեխանիզմները, հետազոտում է խոշոր տնտեսական և ժողովրդագրական չափորոշիչները («միկրոտնտեսություն»), հետո հետազոտում է տնտեսության առանձին հատվածների սոցիալական կապերն ու արդյունաբերական հարաբերությունները («միկրոմեքանիզմություն»), ապա «վերադարձ է կատարվում դիտարկվող ժամանակաշրջանի ժողովրդագրական և տնտեսական էվոլյուցիայի ժամանակագրությանը, և իրականացվում են անհրաժեշտ ճշտումներ»¹¹⁸: Միշել Վովելի բնորոշմամբ՝ «անցումը հասարակական կառույցներից հարաբերություններին և հավաքական ներկայացումներին ներառում է մարդկային իրական կյանքի և պատկերների բարդ միջնորդությունների ողջ հիմնախնդիրը, անգամ Փանտաստիկ պատկերացումները, որոնք ստեղծում են մարդիկ և որոնք էական են մտայնությունների պատմությանը դիմելու համար»¹¹⁹: Քանակային գործիքակազմն, ըստ Շոնյուեի, հենց այն միջնորդն է, որը բացահայտում է կառույցները՝ դրանց բաղադրամասն ու թիվը ենթարկելով ճշգրիտ կշռադատության: Հենց այդպես է քանակը փրկում որակը, բայց «տեսակավորված և միատարրացված որակը»¹²⁰: Մի բան,

¹¹⁷ Chaunu P., Les Entraves au changement dans les sociétés et les mentalités en Amérique Latine au XVIII^e siècle, *RHÉS*, Vol. 51, No. 1 (1973), p. 58.

¹¹⁸ Bois G., *Crise du féodalisme: économie rurale et démographie en Normandie du début du XIV^e siècle au milieu du XVI^e siècle*, Paris: FNSPEHESS, 1976, p. 387.

¹¹⁹ Vovelle M., *Ideologies and Mentalities*, Chicago: University of Chicago Press, 1990, p. 12.

¹²⁰ Chaunu P., Un nouveau Champ pour l'histoire sérielle: Le quantitatif au troisième niveau, dans Braudel F., *Mélanges en l'honneur de Fernand Braudel*, Vol. 2 (Méthodologie de l'histoire et des sciences humaines), Toulouse: Privat, 1972, p. 227.

որն անտեսվում էր պատմություն-խնդիր հղացքի կողմնակիցների կողմից, որոնք հափշտակված էին չափազանց երկար տևողության տեսությունը¹²¹: Այսուհետև (օրինակ՝ կտակների) զանգվածային հավաքագրման և շարային կամ քանակային մշակման դեպքում դրանք «գերազանց սկզբնաղբյուրներ են դառնում մտայնությունների պատմության» համար¹²², որոնք որպես այդպիսիք, մինչ այդ գոյություն չունեին: Ըստ այդմ՝ մտայնությունների շարային կամ քանակային պատմության ներկայացուցիչները հետազոտական տվյալները ենթարկում էին համակարգչային մշակման՝ կազմակերպելով դրանք ընդգրկուն շարքերի մեջ: Պատմաբանի համար «չարքի զուգակերպը միանմանությունն է, որը հնարավոր է մի քաղաքակրթությունից կամ դարաշրջանից մյուսն անցնելիս սովորությունների, համաձայնագրերի, տեսակների հարաբերական կայունության միջոցով»¹²³:

Հարց է առաջանում, թե ինչ արդյունքի կարող է հանգեցնել համակարգչային մշակմամբ փաստերի շարայնացումը: Պարզվում է, որ դա հնարավորություն է տալիս առանձնակի կամ անգամ բացառիկ ուշադրություն դարձնել «տիպական, կրկնվող, ընդհանուր միտումի կամ օրինաչափությունների տակ առբերվող փաստերին ու երևույթներին՝ անտեսելով եզակի և անկրկնելի փաստերն ու երևույթները»¹²⁴: Միևնույն ժամանակ մտայնությունների շարայնացմամբ կամ քանակայնացմամբ առավելագույնս

¹²¹ Сын Гуревич А. Я., *Исторический синтез и Школа «Анналов»*, Москва: Центр гуманитарных инициатив, Университетская книга, 2014, с. 163:

¹²² Chaunu P., Documents traditionnels pour une histoire nouvelle (à propos d'un nouveau volume des Instructions aux ambassadeurs) L'Espagne au tournant du XVIII^e siècle, *RHÉS*, Vol. 39, 3 (1961), p. 388.

¹²³ Ricœur P., *Temps et récit*. Tome I: L'intrigue et le récit historique, Le Seuil, 1983, p. 243.

¹²⁴ Гуревич А. Я., *Исторический синтез и Школа «Анналов»*, Москва: Центр гуманитарных инициатив, Университетская книга, 2014, с. 163.

են բացահայտվում նաև [մարդկանց] կախվածությունները (օրինակ՝ «կահույքի, եկեղեցիների և գյուղացիական կացարանների շարային վերլուծության դեպքում»)»¹²⁵, պայմանով, որ միավորիչ հատկանիշների ֆոնին չստվերվեն տարբերակիչ հատկանիշները: Այսու՝ մտայնությունների պատմությունը որոշարկվում է իբրև «մարդկային կյանքի և դրա ձևի օբյեկտիվ պայմանների միջնորդությունների և տրամախոսական կապերի հետազոտություն, որում մարդիկ պատմում են իրենց պատմություններն ու վերապրում դրանք»¹²⁶:

Իսկ մինչ այդ գործնականում պատմությունից բացառված լուռ մեծամասնությունը ոչ միայն ընդունակ է դառնում խոսելու «խորհրդանիշների, ծեսերի, ժեստերի, սովորույթների, հավատալիքների և սնահավատությունների լեզվով»՝ պատմաբաններին հասցնելով «իր հոգևոր համընդհանուրի թեկուզ մասնիկները»¹²⁷, այլև դրանց համադրական հեռանկարում բացահայտելու տվյալ ժամանակաշրջանին հատուկ մտայնությունը: Նման սեեռման արդյունքում փոփոխականը, ակնթարթայինը կամ անցողիկը ներկայանում է անփոփոխ, տևականի կամ անանցի ծիրում, և այդ մշտականությունն է, որ թույլ է «տալիս ընդհանուր գծերով հասկանալ, թե ինչ կարելի է սպասել այս կամ այն դարաշրջանի մարդկանցից»¹²⁸: Այդպիսով նաև փորձ էր արվում վերականգնել կարճ կամ իրադարձային, այն է՝ մարդկային ժամանակահատվածի¹²⁹, որը հարաբե-

¹²⁵ Chaunu P., *L'économie: Dépassement et prospective*, dans Le Goff J., Nora P. (eds.), *Faire de l'histoire*, 3 vols., V. 2: Nouvelles approches, Paris: Éditions Gallimard, 1974, p. 69.

¹²⁶ Vovelle M., *Ideologies and Mentalities*, Chicago: University of Chicago Press, 1990, p. 12.

¹²⁷ Гуревич А. Я., *Исторический синтез и Школа «Анналов»*, Москва: Центр гуманитарных инициатив, Университетская книга, 2014, с. 267.

¹²⁸ Ricœur P., *Temps et récit*. Tome I: L'intrigue et le récit historique, Le Seuil, 1983, p. 243.

¹²⁹ Glénisson J., *Uma História entre duas erudições* (Notas sobre

րակցվում է կարճ ժամանակում (դիցուք՝ «մեկ տասնամյակում») մարդկանց, հետևաբար՝ մտայնությունների փոխակերպման հույժ կարևոր հարցադրման հետ»¹³⁰:

Վերոհիշյալ դիտարկումներում մտայնությունների պատմությունը վերցվում էր թե՛ ներժամանակյա, թե՛ «արտա»ժամանակյա պարապմունքային: Ուստի հետադոտական սեեռումի հիմնական խնդիրն էր վեր հանել մտայնությունների տևականությունն ու անփոփոխությունը: Սա մտայնությունների պատմության ընդունելի տարբերակներից մեկն է, բայց ոչ միակ հնարավորը: Ուստի մտայնությունների քանակային պատմության ներմուծմամբ մտայնությունների ընդհանրական, անփոփոխ տեսակին հակադրվում-համալրում է մասնակի, փոփոխական կերպը: Այլ խոսքով՝ մտային կառույցներն իրենց մշտականության, փոխաշրջումի, մասնատման ժամանակավոր որակների շնորհիվ ներառվում են պատմության դաշտի մեջ¹³¹, իսկ ընդհանրական (անփոփոխ) և մասնակի (փոփոխական) բեեռացումների միջև եղած հեռավորությունը հարստանում է բազմաթիվ անցումների ու միտումների աստիճանականությամբ: Ըստ այդմ՝ բուն պատմությունն արտաբերվում է այս երկու պայմանական բեեռացումներից: Մասնավորապես՝ մտայնությունների փոխակերպումների և այլացումների սահմանը դուրս է բերվում թե՛ անհատական, թե՛ հավաքական մտայնություններից: Նպատակն է որսալ մտայնության առավել թաքուն և առավել խորքային փոփոխությունները (ազգաբնակչության ծնելիության, երկարակեցության, խտությունների տեղաբաշխվածության և այլնի)¹³²:

algumas práticas e alguns dogmas da atual historiografia), *Revista de história*, CX. Goubert, P., 1960, p. 451.

¹³⁰ Vovelle M., *La Mentalité Révolutionnaire*, *HSM*, Special Issue, 2012, p. 234.

¹³¹ Stü Ricœur P., *Temps et récit*. Tome I: L'intrigue et le récit historique, Le Seuil, 1983, p. 158:

¹³² Stü Ariès Ph., *Histoire des populations françaises et de leurs*

Անտուան Պրոստի բնորոշմամբ՝ «սա պատմությունն է, որը թույլ է տալիս փորփրելով հասնել մինչև կառույցներ և համեմատել դրանք միմյանց հետ»¹³³:

Ուշագրավն այստեղ այն է, որ մտայնությունների քանակային պատմության կողմնակիցներից նրանք, ովքեր հետազոտության համար վերցնում են ժամանակի «երկար տևողությունը» (Լադյուրի, Արիես, Շոնյու և այլք), ամենաշատը ուշադրություն են դարձնում մտայնությունների «անշարժությանը», ամենաքիչը՝ փոփոխությունների ենթակա մակարդակին¹³⁴ և չեն դիտարկում դրանց անփոփոխության, պահպանման, տևականության պատճառները (Լադյուրիի դիպուկ բնորոշմամբ՝ «մտայնությունները քվեարկում են ընդդեմ պատմական ժամանակի»¹³⁵): Դրան հակառակ՝ հետազոտողներից նրանք, ովքեր իրենց ուշադրությունը սեռում են փոփոխականի, կարճատևության վրա (Վովել, Ֆյուրե և այլք), կարևորում են նաև փոփոխությունների պատճառները: Այլ կերպ ասած՝ մտայնությունների միասնականության մեջ կարևորում են «միտքը փաստերի պարզ հանրագումարին հանգեցնող մտային ատմիզմը»¹³⁶: Այն է՝ մտայնությունների քանակային պատմության մեջ անհրաժեշտություն է դառնում իրադարձությունների՝ իբրև իրականությունը բացահայտելու միջոցի ներմուծումը, շնորհիվ որի՝ «իրադարձությունը դառնում է «այլ կերպ անհասար-

attitudes devant la vie depuis le XVIII^e siècle, Seuil: Points Histoire, 1971, p. 13:

¹³³ Տե՛ս *Про А.*, указ. соч., с. 220:

¹³⁴ Տե՛ս *Дюби Ж.*, История ментальностей, *История ментальностей, историческая антропология*: [зарубежные исследования в обзорах и рефератах]. М., 1996, с. 20–21:

¹³⁵ Տե՛ս, *Ладюри Э. Ле Руа, Монтайю, окситанская деревня (1294–1324)* / Пер. с фр. В. А. Бабинцева и Я. Ю. Старцева, Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2001, с. 345:

¹³⁶ *Шоню П.*, *Цивилизация Просвещения*, Екатеринбург; Москва: У-Фактория; АСТ, 2008, с. 201.

նելի իրականության բացահայտիչ», և նյութական կառույցներից անցնում ենք մտայնություններին»¹³⁷:

Մտայնությունների պատմությունը կարող է ծավալվել ոչ միայն հորիզոնական ուղղությամբ՝ մտայնության տվյալ տարատեսակի սահմաններում, այլև ուղղահայաց ձևով՝ նրա տարբեր մակարդակների (մարդու բնույթի, իր իսկ մարմնի նկատմամբ վերաբերմունքի, սիրո պատմության, անձնական կյանքի և այլնի) միջև՝ ի հայտ բերելով պատմամշակութային սկզբնաղբյուրների անսպառ պաշարներ¹³⁸: Խորքային առումով մտայնությունների պատմության քանակայնացմամբ «հորիզոնական» և «ուղղահայաց» շարժումները վերածվում են առավել համադրական, կենսականորեն հագեցած պատմության: Նման համադրմամբ, ըստ Վովելի, լավագույնս կարելի է վերծանել «ճգնաժամի շրջափուլերը, առավել արմատական սոցիալական փոփոխությունները, ավելի խորքային տեկտոնական տեղաշարժերը»¹³⁹: Հարկավ, նկատի ունենալով և այն, որ ի տարբերություն հասարակությունների՝ մտայնություններն ավելի դանդաղ են փոփոխվում: Եվ պատահական չէ, որ մտայնությունների քանակայնացման կամ շարայնացման կողմնակիցները (օր.՝ Արիեսը), ի տարբերություն Դյուրիի և Մանդրուի, առանձնակի ուշադրություն են դարձնում տարածաշրջանային, այլ ոչ թե սոցիալական տարբերություններին¹⁴⁰:

Մտայնությունների քանակային և շարային պատմությունը գտնվում է ժամանակի թե՛ կարճատև, թե՛ միջին և թե՛ երկար տևողությունների փոխլրացական հարաբերությունների մեջ, երբ քանակայնացմամբ կամ շարայնացմամբ

¹³⁷ *Prost A.*, *Douze leçons sur l'histoire*, Paris: Le Seuil, 2014, p. 55.

¹³⁸ *Ariès Ph.*, *Un Historien du dimanche*, p. 91.

¹³⁹ Տե՛ս *Dosse F.*, *L'histoire en miettes. Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 2005, p. 208. *Delacroix Ch.*, *Dosse F.*, *Garcia P.*, *op. cit.*, p. 241:

¹⁴⁰ *Delacroix Ch.*, *Dosse F.*, *Garcia P.*, *op. cit.*, p. 241.

պատմութիւնը միավորվում-ներհշուսվում է թե՛ տեղու-թյուններից յուրաքանչյուրին, թե՛ համադրական ամբողջին: Սակայն, անդրադառնալով տեղութիւնների միավորմանը, հարկ է նշել, որ հետազոտողը կարող է ընկնել «սխեմատիկութեան ծուղակը», որի արդյունքում սխեման կամ սխեմաները կարող են մշուշել իրականութիւնը: Արդյունքում մարդկութեան հարուստ իրականութիւնը կարող է հատվել «միջինացված մտային հորիզոնի պրոկրուստյան մահճում», քանի որ այն «զետեղվում է միջոցների մակարդակում, այլ ոչ թե պատկերացումների, գործողութիւնների եղանակների մակարդակում, այլ ոչ թե կեցութեան ձևերի»¹⁴¹: Այնինչ սոցիալական պատմութիւնը, դրա ներքին կազմակերպումը չափազանց բարդ և առանձին դիտարկման արժանի տիրույթ է, և չի կարելի այն ներկայացնել միայն քանակային-համադրական մեթոդի կիրառման համատեքստում¹⁴²: Արիեսի դիպուկ ձևակերպմամբ՝ «մտայնութիւնների պատմութիւնը չի կազմվում ինչպես առևտրային հաշվապահութիւնը: Հարկավոր են պատճառներ և կիրք»¹⁴³:

Հետազոտական մեկ այլ ծուղակ է միտումնավորութիւնը, երբ սկզբնաղբյուրների քանակայնացմամբ-շարայնացմամբ հետազոտողը ստեղծում է սեփական սկզբնաղբյուրը, որն «ամբողջովին հարմարեցվում է նրա հետազոտական խնդրին»¹⁴⁴: Ուստի մտայնութիւնների քանակային-շարային պատմութիւնը, ունենալով բազմաթիվ նրբերանգներ, պահանջում է համարժեք նուրբ աշխատանք, հատկապես երբ նկատի ունենանք այն, որ այդ նրբութիւնները «հնարավոր չէ որսալ թեկուզ և հուսալի, բայց կոպիտ մաթեմատիկական մոդելավորումների օգնութեամբ»¹⁴⁵:

¹⁴¹ Шоню П., *Цивилизация классической Европы*, Екатеринбург: У-Фактория, 2005, с. 183.

¹⁴² Տե՛ս Սիւ Սոն Բրո Ա., *указ. соч.*, с. 219:

¹⁴³ Ariès Ph., *Une interpretation tendancieuse de l'histoire des mentalités, Anthinèa*, 3 (1973), p. 8.

¹⁴⁴ Гуревич А. Я. (2014), *указ. соч.*, с. 163.

¹⁴⁵ Տե՛ս Սիւ Սոն Բրո Ա., *указ. соч.*, с. 218:

Իր ճկունութեամբ և համընդգրկունութեամբ առանձնանում էր Ժակ Լը Գոֆֆի տեսութիւնը, որը կարելի է վերագրել մտայնութիւնների պատմութեան համաբերական ուղղութեանը¹⁴⁶: Այն ուշագրավ էր նրանով, որ պատմութեան բրոդելյան համընդգրկուն հարացույցի ուղղակի մերժումը չէր: Ճիշտ հակառակը՝ միտված էր լրացնելու այն և հաղթահարելու առաջացած սահմանափակութիւնը: Բացի դրանից, աչքի էր ընկնում իր բազմակենտրոնութեամբ՝ ի տարբերութիւն բրոդելյան «համընդգրկուն» հարացույցի կենտրոնամիտութեան: Ընդհանրացման և որոշակիացման ձգտումն այս հայեցակարգի կողմից մերժվում էր, քանի որ անհատը կամ հասարակութիւնը միշտ չէ, որ ապրում են երկշարք կամ երկբևեռ հարաբերութիւններով կամ դրանցից մեկով, այլ դրանց տարատեսակ խաչաձևումների ու համադրութիւնների հարաբերութիւններով:

Նկատենք, որ Ժակ Լը Գոֆֆի հետազոտութեան կիզակետում սկզբից ևեթ առկա էր միջնադարյան մարդու աշխարհի պատկերը (image du monde): Ըստ այդմ բխեցվում էր և հետազոտութեան հիմնական առարկան՝ տարածութեան ու ժամանակի, աշխատանքի և հարստութեան, գիտնականների ու ժողովրդական մշակույթների փոխհարաբերութիւնների ըմբռնման հիմնախնդիրը: Ընդ որում՝ կարևորելով ոչ թե պատմութեան հետազոտութեան ուղղակի «ինչպես»-ը, այլ, ու հատկապես, նոր հիմնախնդիրների առաջադրումը և դրանց հիման վրա նոր սկզբնաղբյուրների և դրանց հետազոտութեան մեթոդների բացահայտումը¹⁴⁷: Վերոնշյալն իրականութիւն դարձնելու համար Լը Գոֆֆը դիմում է ոչ միայն սոցիալական գիտութիւնների, այլև բնական գիտութիւնների մեթոդաբանութեանը՝ կիզակետում պահելով հատկապես հնագիտութիւնը,

¹⁴⁶ Տե՛ս Հովհաննիսյան Ս., Ժակ Լը Գոֆֆի կյանքն ու գործը, «Վէմ» համահայկական հանդես, 2 (2014), էջ 178–186:

¹⁴⁷ Гуревич А. Я., (2014), *указ. соч.*, с. 226.

կլիմայագիտությունն ու ծառածամանակագիտությունը (dendrochronologie)¹⁴⁸: Այդ կերպ, թերևս, Լը Գոֆֆը փորձում է վերականգնել պատմության «երկար տևողության» ընթացքը, որը հրեթացս աստիճանաբար բեկորվել էր: Խոսքը նախ և առաջ պատմության քանակայնացման կամ շարայնացման մասին է, որոնք, չնայած ժամանակին ունեցած օգտակարությունը, այժմ արդեն բացահայտել են իրենց հնարավորությունների սահմանափակությունը¹⁴⁹:

Այսու՛ էլ իր հետազոտությունը սկսելով ցանկացած հասարակության և յուրաքանչյուր մշակույթի ընդ որոշ տարածածամանակային կառույցների քննարկումից՝ Լը Գոֆֆը հետազոտում է ինչպես տարածության ու ժամանակի նյութական դիտանկյունները, այնպես էլ այն պատկերացումները, որոնց միջոցով միջնադարյան մարդիկ ընկալում էին պատմական իրականությունը: Նման մոտեցումը հեղինակին հնարավորություն է տվել ավանդական թեմաները քննարկել բոլորովին այլ հարթության մեջ, որպիսիք են տարածության և ժամանակի կառույցները (Միջնադարում), նյութական պայմաններն ու առտնին պատմությունը, հասարակության միջնադարյան ըմբռնումը, մտայնությունները, տարբեր դասակարգերի զգայություններն ու հարաբերությունները, կլիման, կանանց աշխատանքի շահագործումը և այլն: Այս ոչ ավանդական թեմաների համաթիրումը բացվում է իրականության բոլորովին այլ՝ ուրիշ պատմությունը (autre histoire):

¹⁴⁸ Ծառածամանակագիտություն (dendrochronologie – հին հուն. δένδρον, dendron, «ծառ», χρόνος, khronos, «ժամանակ» և – λογία, – logie, «բան») – գիտակարգ՝ իրադարձությունների, բնական երևույթների, հնագիտական գտածոների և հին առարկաների թվագրման մեթոդների մասին, որը հիմնված է ծառի օղակների ուսումնասիրության վրա: Այդ մեթոդներով հնարավոր է նաև վերականգնել կլիմայական և էկոլոգիական փոփոխությունները:

¹⁴⁹ Shtu Le Goff Ж., С небес на землю (Перемены в системе ценностных ориентаций на христианском Западе XII–XIII вв), *Одиссей. Человек в истории*, 1991, с. 25:

Այդպես քայլ առ քայլ և բավականին զգուշորեն Լը Գոֆֆը մոտեցել է մտայնությունների պատմությանը, «որը միաժամանակ վերադարձնում է նյութական քաղաքակրթությունն ու մշակույթը»¹⁵⁰: Եվ այստեղ է, որ նա առաջին անգամ քննարկման թեմա է դարձնում մտայնությունների ու զգայությունների և կրոնների ու գաղափարների պատմությունների տարբերակման խնդիրը՝ նշելով. «Հարկ է նկատել, որ քաղաքակրթագետ-պատմաբանի հայացքը մտայնությունների և զգայությունների փոփոխություններին անխուսափելիորեն տարբեր է կրոնների և գաղափարների պատմաբանի հայացքից, որն այդ փոխակերպումների մեջ փնտրում է կայուն հաստատություն հավատքի համար»¹⁵¹:

Ընդ որում, այս տարբերակման մեջ Լը Գոֆֆը ներառում է նաև երևակայությունն (imagination) ու արժեքները (valeurs), որոնց հիմքի վրա էլ վերլուծության թեմա է դարձնում խորհրդանշական մտածողությունը, գաղափարները, գույները, գեղեցկությունն ու ուժը, փախուստներն ու երազանքները, սերն ու կեղծիքը, ժեստերն ու հագուստները, սնունդն ու տան կառույցը և այլն: Նա ուժեղացնում է մտայնությունների պատմությունը «գաղափարաբանություն, երևակայության պատմություն և արժեքների պատմություն»¹⁵²: Ընդամին՝ այստեղ հարկ է նկատի ունենալ մտայնությունների և գաղափարների տարբերությունը, որտեղ «մտայնությունների պատմությունը գաղափարների պատմության մեջ այն է, ինչ նյութական մշակույթի պատմությունը տնտեսական պատմության մեջ»¹⁵³:

¹⁵⁰ Dosse F., *op. cit.*, p. 209.

¹⁵¹ Le Goff J., *Medieval Civilization 400–1500* / Trans. Julia Barrow, Oxford, U. K.: Blackwell, 1992, p. 344.

¹⁵² Shtu Гуревич А. Я. (2014), *указ. соч.*, с. 339:

¹⁵³ Le Goff J., *Les mentalités. Une histoire ambiguë, dans Le Goff J., op. cit.*, p. 111.

Այսու՝ կարծեք թե հաղթահարվում է եզրույթների կիրառման «անհետևողականությունը», բայց մնում է անորոշությունը, քանի որ Լը Գոֆֆը, խոսելով մտայնությունների մասին, որոշ դեպքերում նախընտրում է երևակայություն, զգացմունքայնություն, խորհրդանշանայնություն, արժեքային համակարգեր և անգամ գաղափարաբանություն եզրույթները¹⁵⁴: Բանն այն է, որ «մտայնությունն ամենուր է, այն ներթափանցում է մարդկային կյանք՝ ներկա լինելով մարդկանց գիտակցության և վարքի բոլոր մակարդակներում, այդ պատճառով էլ այդպես դժվար է բնորոշել այն, ինչ-որ շրջանակների մեջ ամփոփել»¹⁵⁵: Ուստի ձևակերպումներից յուրաքանչյուրը ներկայացնում էր մտայնության ըմբռնման մի տարակերպը կամ նրբերանգը, բայց ոչ ամբողջությունը: Մի բան, որը հատուկ էր նաև մյուս հետազոտողներին:

Եզրույթի այդ տարտամության արդյունքում անգամ մտայնության հետազոտության նորարարները (ինչպես Դյուբին) երբեմն հրաժարվում են օգտագործել այս հղացքը դրա չափազանց անորոշության, ինչպես նաև այն պատմության մեջ պատճառականության կարևորագույն հղացքի վերածելու մտադրության առկայության պատճառով (արհամարհելով տնտեսությունը, սոցիալական հարաբերությունները, քաղաքականությունը և այլն)¹⁵⁶: Մտայնությունների սահմանման անորոշությունը բացատրվում է նրա՝ այլ գիտակարգերի հետ ունեցած հարաբերություններով: Հարաբերություններ, որոնք ուղղված են «պատմության ընդլայնմանը, որը տնտեսականի փոխարեն ուղղվում է լինել սոցիալական»¹⁵⁷, քանի որ «հասարակականի (social) և մտայինի հարաբերություններն ավելի բարդ են, քան

տնտեսականի և հասարակության (société)»¹⁵⁸: Այդպիսի տարանջատումը հնարավորություն է տալիս ի հայտ բերել ոչ միայն ուղղակի մտայնությունների, այլև մեկնությունների բազմազանություն: Իբրև օրինակ՝ Լը Գոֆֆը վկայակոչում է խաչակրաց արշավանքների «մեծ արկածախնդրությունը», որի պատճառներից հետազոտողները նշում են ժողովրդագրական աճը և գերբնակեցման սկիզբը, իտալական քաղաքների առևտրային ազահությունը, պապականության քաղաքականությունը, որոնք, ճշմարիտ լինելով հանդերձ, այդուամենայնիվ չեն բացատրում գլխավորը: Ի տարբերություն սոցիալ-տնտեսական մտայնությամբ մեկնաբանության՝ նա շեշտադրում է կրոնական մտայնությունը՝ հարցարկելով, թե «ի՞նչ է խաչակրաց արշավանքն առանց որոշակի կրոնական մտայնության»¹⁵⁹:

Բայց և հարկ է նկատի ունենալ, որ մտայնությունների պատմությունը որոշարկվում է ոչ միայն այլ հումանիտար գիտությունների հետ շփումով և ավանդական պատմության կողմից զսպված տիրույթի հայտնությամբ: Այն նմանապես հակադիր պահանջների հանգուցակետ է և երկխոսությունների մղող ուժականություն (dynamique). «Այն տեղակայվում է այնպես, որ միավորի անհատականը և հավաքականը, երկարատևը և կարճատևը, գիտակցվածը և չգիտակցվածը, կառուցվածքայինը և ընթացիկը, լուսանցքայինը և համընդհանուրը»¹⁶⁰:

Այսու՝ մտայնությունների պատմությունն իր «խաչմերուկայնությամբ» ձեռք է բերում նաև որոշակիություն, քանի որ հավասարապես պատկանում է բազմաթիվ այլ գիտակարգերի, շնորհիվ որոնց մտայնությունը հանգեցվում է այնպիսի տարբերակված ամբողջության, որտեղ մասերն

¹⁵⁴ Տե՛ս Гуревич А. Я. (2014), *указ. соч.*, с. 224:

¹⁵⁵ Տե՛ս Там же, с. 225:

¹⁵⁶ Տե՛ս Гуревич А. Я., Интервью с Жаком Ле Гоффом, в Гуревич А. Я. (2014), *указ. соч.*, с. 339:

¹⁵⁷ Righi N., L'héritage du fondateur? L'histoire des mentalités dans l'École des «Annales», *Le Philosophoire*, 1 (2003), p. 173.

¹⁵⁸ Dosse F., *op. cit.*, p. 209.

¹⁵⁹ Le Goff J., Les mentalités. Une histoire ambiguë, dans Le Goff J., Nora P. (dir.), *Faire de l'histoire III. Nouveaux objets*, Paris: Gallimard, 1974, p. 107.

¹⁶⁰ Le Goff J., Les mentalités, p. 107.

արտացոլվում են ամբողջի, իսկ ամբողջը՝ մանրամասների մեջ: Նույն կերպ մտայնությունն եզրույթը «պարառում է պատմության այն կողմնայինը»¹⁶¹: Այստեղից էլ, ըստ Լը Գոֆֆի, այդ տարտամությունը հենց «մտայնությունների պատմության գրավիչ կողմն է»¹⁶², քանի որ պատմաբանին թույլ է տալիս մերձենալ բազմաթիվ այլ գիտակարգերի, որպիսիք անհրաժեշտ են պատմագիտությունը՝ «գերիշխանական հավակնություններն» ու «բարձր ռազմավարական հետաքրքրություններն» ապահովելու համար¹⁶³:

Մյուս կողմից՝ մտայնությունների կոչումը մյուս գիտությունների կողմից բաց թողնվող «մնացորդները (residues)» որսալու, նրանցից սպրդող որևէ բան հայտնաբերելու» մեջ է¹⁶⁴, որտեղ մտայնությունները, սակայն, սոսկ արտացոլանք (reflet) չեն¹⁶⁵: Այդ մնացորդները կազմում են հետազոտության թեպետ զանցառված, բայց և հույժ կարևոր մի ոլորտ, քանի որ «մտայնությունների պատմության մակարդակն առտնին և ինքնաշարժ մակարդակն է, այն, ինչ խուսափում է պատմության առանձին թեմաներից (sujets individuels)»¹⁶⁶: Այսու՝ մտայնությունների պատմությունը թույլ է տալիս պատմության մեջ ներառվող դիպվածները մտածել իբրև հավաքական հասկացություն¹⁶⁷, որտեղ միասին կարող են վերցվել «կեսարը և նրա լեգեոնների վերջին զինվորը, Սուրբ Լուին և նրա տիրույթների գյուղացին, Քրիստափոր Կոլումբոսն ու նրա քառակայմ նավերի (caravels) նավաստին»¹⁶⁸: Այստեղից էլ մտայնությունների պատմության՝ Լը Գոֆֆի

մեկ այլ սահմանումը. «Ցանկացած պատմական անհատականության մտայնությունը, անկախ նրա նշանակալիությունից, իրենից ներկայացնում է այն ընդհանուրը, որ այդ անհատը կիսում է իր ժամանակի այլ մարդկանց հետ»¹⁶⁹: Այսպես, թերևս, ինչպես Ռոժե Շարտինեն է նկատում, գիտակցություն և մտածողության հարաբերություններն այլ կերպ են հաստատվում՝ «մերձենալով դյուրկհայմյան ավանդույթի սոցիոլոգների մոտեցմանը, որոնք շեշտադրում էին մտածողության սխեմաները կամ բովանդակությունները»¹⁷⁰:

Մյուս կողմից՝ ընդունելով, որ «մտայնությունը հասարակության և քաղաքակրթության մի կողմն է»¹⁷¹, Լը Գոֆֆը, ի տարբերություն Լադյուրիի, ձգտում է վեր հանել հատկապես դրա թեկուզ դանդաղընթաց փոփոխությունները. «Մտայնությունները, որպես օրենք, փոփոխվում են չափազանց դանդաղ և աննկատ, և այդ տեղաշարժերը, որոնք արհամարհված են հենց պատմական գործընթացի մասնակիցների կողմից, կարող են հետազոտության առարկա դառնալ միայն ժամանակի մեծ մասշտաբի մեջ դիտարկելու դեպքում»¹⁷²: Ընդ որում՝ փոփոխությունները զարգացող տնտեսական փոխակերպություններն են, որոնք հանգեցնում են մտածելակերպերի ավել կամ պակաս արմատական, ավել կամ պակաս արագ փոփոխության¹⁷³:

¹⁶⁹ Ibid., p. 108.

¹⁷⁰ Chartier R., Intellectual History and the History of Mentalities, in La Capra D., Kaplan S. L. (ed.), *Modern European Intellectual History. Reappraisals and New Perspectives*, Cornell University Press, 1982, p. 22–23.

¹⁷¹ Ле Гофф Ж., *Другое средневековье: время, труд и культура Запада*, Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2002, с. 63.

¹⁷² Гуревич А. Я., Филипп Арьес: смерть как проблема исторической антропологии, в Арьес Ф., *Человек перед лицом смерти*, Пер. с фр./ Общ. ред. Оболенской Св.; Предисл. Гуревича А. Я., Москва: Издательская группа Прогресс, Прогресс-Академия, 1992, с. 12.

¹⁷³ Св'я Ле Гофф Ж., *Другое средневековье*, с. 66, 71. Ле Гофф Ж., С небес на землю (Перемены в системе ценностных ориентаций на христианском Западе XII–XIII вв)» *Одиссей. Человек в истории*, М., 1991, с. 29:

¹⁶¹ Ibidem.

¹⁶² Ibid., p. 106.

¹⁶³ Ch. Delacroix, F. Dosse, P. Garcia, *op. cit.*, p. 239.

¹⁶⁴ Le Goff J., Les mentalités. Une histoire ambiguë, p. 106.

¹⁶⁵ Le Goff J., Les mentalités, p. 123.

¹⁶⁶ Ibid., p. 111.

¹⁶⁷ Копосов Н. Е., *Как думают историки*, Москва: Новое литературное обозрение, 2001, с. 170.

¹⁶⁸ Le Goff J., Les mentalités, p. 111.

Ուստի Լը Գոֆֆը կարևոր նշանակություն է տալիս փոփոխությունների արժեքականական կողմնորոշմանը, որն այլ բան չէ, քան «պատմության ռացիոնալ մեթոդաբանություն» ընդունում¹⁷⁴: Մտտեցման նման զարգացումը, թերևս, նրա համարելիքն էր տեսության ամենակարևոր դիտանկյունն է, քանի որ վեր է հանում մտայնությունների հետազոտության հումանիտար բնույթը: Այսու՝ շնորհիվ մտայնությունների հետազոտության՝ ոչ միայն պատմաբանը, այլև արդի քաղաքակրթությունները կսովորեն «ճանաչել (և հարգել) ուրիշին» (ընդգծումը՝ Լը Գոֆֆի)¹⁷⁵:

Վերջում նշենք, որ մտայնությունների պատմության աննալական ըմբռնումները միանշանակորեն չընդունվեցին գիտական աշխարհում: Առաջին քննադատական սլաքներն ուղղվեցին Իտալիայից¹⁷⁶: 1970-ական թվականներից Ֆրանկո Վենտուրին հայտարարեց նոր գաղափարների ստեղծագործական ուժերի անհետացման մասին՝ հոգուտ առանց դինամիզմի և ինքնատիպության (originalité) հասարակ մտայնությունների կառույցների¹⁷⁷: Մի քանի տարի անց Կառլո Գինզբուրգն ընդլայնեց քննադատությունը: Նա մերժում էր մտայնություն հասկացությունը երեք պատճառով: Նախ՝ դրա բացառիկ հաստատականությունը աշխարհընկալման անգործուն (inerte), աղոտ և անգիտակից տարրերի նկատմամբ, ինչը հանգեցնում է խելամտորեն և գիտակցաբար արտահայտած գաղափարների նշանակալիության թերազնահատմանը: Այնուհետև՝ քանի որ այն անտեղի հնարավոր է

համարում բոլոր հասարակական միջավայրերի բաժանումը միևնույն ստորոգությունների և ներկայացումների միջև: Եվ վերջապես, քանակային և շարային մտեցման հետ նրա դաշինքը, որի դեպքում (միասին վերցված) նյութականանում է մտքի բովանդակությունը, հակված է առավել կրկնվող ձևակերպումների և ժխտում է առանձնահատուկը¹⁷⁸:

1990 թվականին արդեն Ջեֆրի Լլոյդն է՛լ ավելի ամրապնդեց մեղադրանքը: Քննադատությունը վերաբերում էր մտայնությունների պատմության երկու հիմնարար ստորոգություններին. մի կողմից՝ ողջ հասարակությանը գաղափարների և համոզմունքների կայուն և միօրինակ ամբողջականություն վերագրելը, մյուս կողմից՝ անհատների բոլոր մտքերի ու արարքների՝ միասնական մտայնությունների համակարգի կողմից կառավարվելու ընդունումը¹⁷⁹:

Իսկ Միշել դը Սերտոն և Պոլ Վեյնը¹⁸⁰ գտնում էին, որ մտայնությունների պատմությամբ խանդավառվելն ավելի շատ փոփոխություններ է բերում պատմաբանների հանրությունը, քան ձեռքբերումներ՝ նրանց գիտակարգին:

Անկախ Աննալների կողմից առաջադրված «մտայնությունների պատմությանն» ուղղված քննադատություններից, որոնց առավել հանգամանալի քննությունը թողնում ենք մեկ այլ առիթի, կասկած չի հարուցում, որ շնորհիվ այդ ուղղության՝ պատմագիտության մեջ բացվում է հետազոտական նոր մի տիրույթ, որն ուղեկցվում է նաև մտածական նոր կառույցների և մշակութային

¹⁷⁴ Տե՛ս Լե Գոֆֆ Ջ., С небес на землю, 1991, с. 44:

¹⁷⁵ Տե՛ս Լե Գոֆֆ Ջ., Другое средневековье, с. 210, 71. Լե Գոֆֆ Ջ., С небес на землю, с. 29:

¹⁷⁶ Ավիլի մանրամասն տե՛ս Hwulak F., En avons-nous fini avec l'histoire des mentalités? *Philonsorbonne*, 2 (2008), URL://http://philonsorbonne.revues.org/173 (13.11.2015). Chartier R., La nouvelle histoire culturelle existe-t-elle? *CCRH*, 31 (2003), URL://http://ccrh.revues.org/291?lang=en (13.11.2015):

¹⁷⁷ Տե՛ս Venturi F., *Utopia e riforma nell'illuminismo*, Turin, Einaudi editore, 1970:

¹⁷⁸ Տե՛ս Ginzburg C., *The Cheese and the Worms: The Cosmos of a Sixteenth-Century Miller*, Baltimore: Johns Hopkins University Press, 1992, p. xxiii:

¹⁷⁹ Տե՛ս Lloyd G., *Demystifying Mentalities*, Cambridge: Cambridge University Press, 1990:

¹⁸⁰ Տե՛ս Histoire des mentalités, URL://http://lichistoioredijon.forum-perso.com/t27-l-histoire-des-mentalites (04.03.2015):

պրակտիկաների վերհանմամբ ու վերարժեքմամբ: Վոլֆելի դիպուկ ձևակերպմամբ՝ «այս նոր (կամ վերագտնված) օբյեկտների վրա կարելի էր փորձարկել մշակման միանգամայն նոր մեթոդներ՝ փոխառված մերձավոր գիտակարգերից, ինչպիսիք են լեզվաբանական և իմաստաբանական վերլուծության եղանակները, սոցիոլոգիայի վիճակագրական գործիքները կամ մարդաբանության որոշ մոդելներ»¹⁸¹: Արդյունքում Աննալների նոր սերնդին հաջողվում է վերականգնել մի կողմից՝ Դպրոցի հոգեմտավոր միասնությունը, մյուս կողմից՝ պատմության և/կամ պատմագիտության «արտոնյալ դիրքը»՝ ներկայացնելով պատմության «գիտական օրինավորման (լեգիտիմության) նոր ապացույցներ»¹⁸²:

Ամփոփելով նշենք, որ եթե Երրորդ սերնդի ներկայացուցիչների մոտ սկզբնապես նկատելի էր հեռացումը մարդու հիմնախնդրից, և տիրական էր դարձել առանց մարդկանց պատմությունը, ապա այժմ կրկին փորձ էր արվում վերականգնել նախկին մարդակենտրոն պատմության համաչափելիությունը: Իբրև համարժեք պատասխան մարտահրավերին՝ Աննալների Երրորդ սերնդի ներկայացուցիչները կրկին կյանքի կոչեցին մտայնությունների պատմությունը¹⁸³: Հընթացս ժամանակի՝ վերջինիս համապատկերում կազմավորվում է պատմության տեսություն մի նոր համալիր, որտեղ մասնավորապես առանձնանում են պատմության երեք՝ մտայնությունների, մարդաբանական և հիշողությունից հեռանկարները: Ուշագրավ է, որ դրանք շուտով լայն կիրառություն են ստանում ոչ միայն ֆրանսիական միջավայրում, այլև ձեռք են բերում համաշխարհային նշանակություն:

¹⁸¹ Chartier R., Le monde comme representation, *Annales. ESC*, 6 (1989), p. 1506.

¹⁸² Про А., *указ. соч.*, с. 46.

¹⁸³ Стів Про А., *указ. соч.*, с. 45:

Այսպիսով՝ մտայնությունների պատմությունը, ունենալով հավաքական, ընդհանրական տեղականության միտում, միևնույն ժամանակ հեռու է հավաքական կամ ընդհանրական բովանդակությունից: Ըստ այդմ՝ մտայնությունները համասեռ միավորներ չեն, որոնք հակադրվում կամ համադրվում են այլ համասեռ միավոր(ներ)ի: Դրանք ենթադրում են հարաբերությունների մի բազմազանություն, որի համաժիրում մտայնությունների տարբերություն(ներ)ը կառուցվում են հույժ յուրօրինակ ձևերով: Այդ տարբերությունները հատկապես ակնհայտ են դառնում, երբ դիտարկվում են ժամանակի և տարածության տարբեր հարթություններում:

Հատկանշական է և այն, որ մտայնությունների պատմությունը, որոշակի կայունությամբ հանդերձ, անընդհատ այլակերպման ընթացքի մեջ է: Խոսքն այստեղ կոնկրետ ժամանակաշրջանի առանձնահատկությունների մասին է, որոնք ժամանակակիցների կողմից կարող են անտեսվել կամ չնկատվել, բայց որոնք Հընթացս ժամանակի կարող են դառնալ նշանակալի: Ենթահիվ մտայնությունների տրամապատկան՝ հաղթահարվում է սոցիալ-պատմական վերլուծության սոցիոլոգիական վերացականությունը, և նրա առարկան՝ հասարակական խմբերը, լցվում են մարդկային բովանդակությամբ:

Այսու «մտայնություն» հղացքը, որը ոչ այնքան պատմագիտական հետազոտությունների յուրահատուկ ոլորտ է, որքան համադրորեն ընդգրկուն և, հնարավոր է, գիտական հետաքրքրությունների և նախասիրությունների «տարասեռ տիրույթ», նշանակալիորեն ընդլայնեց և խորություն հաղորդեց պատմագիտական հետազոտություններին: Եվ բոլոր այս երեք հայեցակարգերը (կառուցվածքային, շարային կամ քանակային և համարբանական) համադրվելով կազմում են մտայնությունների պատմության Աննալների դպրոցի հարացույցը, որն իր հետ բերեց պատմագիտական նոր ճաշակ և զարգացման նոր խթաններ:

ի վերջո, աննալականների Երրորդ սերունդը, որ սկզբնապես քանակային պատմության էնտոլոգիաստների մի ողջ բանակ էր ասպարեզ բերել, աստիճանաբար հեռանում է բեմից, և աննալականների մի մասը (Լը Ռուա Լադյուրի, Լը Գոֆֆ և այլք) իր ուշադրությունը սեռում է պատմական մարդաբանության ուղղությունը:

Փլուխ երրորդ

ԱՆՆԱԼԱՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ԱՅԼԱՑՈՒՄԸ.

«ՆՈՐ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

(Մաս երկրորդ)

Արդեն նշել ենք, որ 1960-ական թթ. կեսերից Աննալների դպրոցի տեսական դաշտի ընդլայնմանը զուգընթաց (չարային և/կամ քանակային պատմություն, մտայնությունների պատմություն) խորքային առումով խախտվել էր դպրոցի ինքնաբավ հավասարակշռությունը: Մի կողմից համընդգրկուն պատմության մերժման կամ մասնատման միտումն էր, մյուս կողմից՝ նոր ամբողջականության ձգտումը: Առաջադրվել էին այնպիսի տեսական խնդիրներ, որոնք անըմբռնելի կամ անլուծելի էին նախորդ բրոդելյան հարացույցի ծիրում:

Պատահական չէ, որ այսպիսի խզման և հարցականումի համատեքստում էլ մտայնությունների պատմության հետ գրեթե միաժամանակ աննալական նոր սերունդն իր համար բացահայտեց նաև մշակութային գործընթացների ինքնուրույնությունն ու դրանց որոշակի ազդեցությունը փոխակերպությունների վրա¹: Որպես արդյունք՝ առաջադրվում են ոչ միայն նոր թեմաներ, այլև վերլուծության նոր եղանակներ, որոնցից էին պատմական մարդաբանությունն ու

¹ Տե՛ս Бюргер А., От серийной к комплексной истории: генезис исторической антропологии, в Чубарьян А. О. (ред.), *Homo Historicus: К 80-летию со дня рождения Ю. Л. Бессмертного*, В 2 кн., Кн. 1, Москва: Наука, 2003, с. 194:

Հիշողության պատմությունը, որոնք թեպետ վեր էին հանում նույն թեմաները, բայց «արդեն ավելի ընդգրկուն համատեքստում»²: Այդ տեղաշարժերի հետևանքով էլ, ինչպես նշում է Արոն Գուրևիչը, «հաղթահարվում է սոցիալ-պատմական վերլուծության սոցիոլոգիական վերացականությունը, և նրա առարկան՝ հասարակական խմբերը, լցվում են մարդկային բովանդակությամբ»³: Ըստ այդմ՝ պատմությունը կրկին մերձենում է մարդուն, դառնում «մարդու մասին գիտություն»⁴:

Գ. Պատմական մարդաբանություն

Պատմական մարդաբանությունը դառնում է մի կողմից՝ մտայնությունների, քանակային և/կամ շարային պատմությունների տրամաբանական ամփոփումը, մյուս կողմից՝ հետազոտական ևս մի նոր արդյունական գործակցություն: Այն «ձգտում է պատմական հեռավորության միջոցով հասնել հեռանկարի ինքնօրինակ թարմացման» և «գիտական» մշակույթից վերանվանել «սովորույթը, ժեստը, երևակայությունը, կարճ՝ ժողովրդական մշակույթը»⁵, ավելի ստույգ՝ «մարդկության տարրական իրավիճակներն ու հիմնարար փորձառությունները»⁶:

² Burguiere A., The Fate of the History of Mentalities in the Annales, *CSSH*, Vol. 24, 3 (1982), p. 426–427.

³ Гуревич А. Я., Жак Ле Гофф и «Новая историческая наука» во Франции, в Ж. Ле Гофф, *Цивилизация средневекового Запада*, Екатеринбург: У-Фактория, 2005, с. 543.

⁴ Տնն Հովհաննիսյան Ս., Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս երրորդ: «Մարդաբանական պատմություն» և «Հիշողության պատմություն» հոդվածները, «Վէճ» համահայկական հանդես, 4 (2020), էջ 70–103:

⁵ Рикёр П., *Время и рассказ, т. 1, Интрига и исторический рассказ*, Москва, Санкт-Петербург, Университетская книга, 2000, с. 128.

⁶ Вульф К., *Антропология: история, культура, философия* /Пер. с нем. Г. Хайдаровой, Санкт-Петербург, Изд-во С.-Петербур. ун-та, 2008, с. 53.

Այսու՝ պատմական մարդաբանությունը մեկնարկում է այն գաղափարից, որ շարժումը և էվոլյուցիան կարելի է գտնել «բոլոր սոցիալական գիտությունների բոլոր առարկաների մեջ, քանի որ դրանց ընդհանուր առարկան մարդկային հասարակությունն է»⁷: Արդյունքում էականորեն ընդլայնվում է պատմաբանի տարածքը՝ պատմագիտության հետազոտական տիրույթը. հետազոտական թեմաներ են դառնում մարմինը, սեռը, սեռականությունը, մանկությունը, ամուսնությունը, ընտանիքը, ծերությունը, հիվանդությունը, մահը, երազը, հավատքի ձևերը և այլն⁸: Խորքային առումով պատմական մարդաբանությունը նախորդ փուլերին հատուկ մարդակենտրոնության նոր դրսևորում էր:

Այսպիսով՝ մարդաբանական պատմությունը կամ, ինչպես երրորդ սերնդի ներկայացուցիչներն էին երբեմն կոչում, էթնոպատմությունը⁹ XX դարի ֆրանսիական պատմագրության մեջ միջգիտակարգային համադրության «երկրորդ շնչառությունն» էր ստանում¹⁰: Եվ

⁷ Le Goff J., *History and Memory* /Trans. S. Rendall and E. Claman, New York: Columbia University Press, 1992, p. xxii.

⁸ Տնն Ревель Ж., История и социальные науки во Франции: на примере эволюции школы «Анналов», «Новая и новейшая история», 6 (1998), с. 73, Le Goff J., *op. cit.*, p. 201–202:

⁹ Հարկ է նշել, որ չնայած Աննալների դպրոցի երրորդ սերնդի ներկայացուցիչների կողմից «պատմական մարդաբանություն» եզրույթի լայն կիրառմանը՝ այդուամենայնիվ հստակ չսահմանվեց ոչ միայն եզրույթը, այլև հոդվածը: Այսպես, օրինակ, Լը Գոֆֆը կիրառում է «պատմական մարդաբանություն» կամ «պատմության մարդաբանական կողմնորոշում», անգամ «էթնոպատմություն» եզրույթները: Մի երկվություն, որը բնորոշ է նաև այլ հետազոտողների, ինչպես, օրինակ, ռուս պատմագետ Գուրևիչին, որն էլ իր հերթին այդ ուղղությունն անվանում է «սոցիալ-պատմական մարդաբանություն»: Ավելի մանրամասն տնն Гуревич А. Я., Жак Ле Гофф и «Новая историческая наука» во Франции, в Ж. Ле Гофф Ж., *Цивилизация средневекового Запада*, с. 530–558:

¹⁰ Տնն Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France (19^e–20^e siècle)*, Paris: Armand Colin, 2005, p. 244: Նախորդն

պատահական չէ, որ Հանդեսի էջերում աստիճանաբար մեծ տեղ էր հատկացվում պատմական մարդաբանությունից թեմաներին¹¹ «Կենսաբանական պատմություն և հասարակություն» (1969), «Պատմություն և կառույց» (1971), «Ընտանիք և հասարակություն» (1972), «Ունի-գրավոր պատմություն» (1973), «Պատմություն և սեռականություն» (1974), «Մարդաբանական պատմության համար» (1974), «Սպառման պատմություն» (1975), «Մահվան շուրջ», «Ֆրանսիայի մարդաբանություն» (1976) և այլն¹²: Միաժամանակ նշենք, որ նման համադրական ընդլայնումը նորություն էր մեթոդական առումով, բայց նորություն էր ընդգրկման նոր տիրույթներով (ազգագրություն, լեզվաբանություն, նշանագիտություն և այլն): Պատմական մարդաբանությունն ի հայտ գալը, սակայն, պայմանավորված էր բացառապես միջգիտակարգային շփումներով ու փոխառություններով: Մանավանդ երբ, ինչպես ժամանա-

ընդգրկում էր 1900–1950-ական թթ. երկու ենթադրություններով: նախ 1900–1910-ական թթ., ապա 1920–1950-ական թթ.: Ընդամենի մեր պարբերացումը քիչ տարբերվում է Ֆիլիպ Մինարի պարբերացումից: Sté Minard Ph., Histoire et anthropologie, nouvelles convergences? *RHMC*, 5 (2002), p. 82): Sté նաև Кром М. М., Историческая антропология. Учебное пособие, Санкт-Петербург, Москва: Издательство Европейского университета в Санкт-Петербурге, «Квадрига», 2010, с. 28–29:

¹¹ Ավելի մանրամասն տես Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 245. Burguière A., The New Annales: A Redefinition of the Late 1960's, *RFBC*, Vol. 1, 3/4, (1978), p. 195–196. Marin R., *La nouvelle histoire et Lévi Strauss, Caravelle. Cahiers du monde hispanique et luso-brésilien*, Presses Universitaires du Mirail, 2011, p. 6:

¹² Sté **Histoire biologique et société** (Editorial), *Annales. ÉSC*, 6 (1969), p. 1. Burguière A., Présentation: Histoire et structure, *Annales. ÉSC*, 3/4 (1971), p. 1–7. Burguière A., Présentation: Famille et société, *Annales. ÉSC*, 4/5 (1972), p. 799–801. Ferro M., Présentation: Histoire non écrite, *Annales. ÉSC*, 1 (1973), p. 3. Burguière A., Présentation: Histoire et sexualité, *Annales. ÉSC*, 4 (1974), p. 973–974. **Pour une histoire anthropologique: la notion de réciprocité**, *Annales. ÉSC*, 6 (1974), p. 1309–1310. **Dossier: Histoire de la consommation**, *Annales. ÉSC*, 2/3 (1975), p. 402–631. **Autour de la mort**, *Annales. ÉSC*, 1 (1976), p. 3–132. *Anthropologie de la France*, *Annales. ÉSC*, 4 (1976), p. 661–845, և այլք:

կին Ֆեռնան Բրոդելն էր նկատել, «բոլոր հումանիտար գիտությունները, այդ թվում և պատմությունը, վարակված են միմյանցով» և «խոսում են կամ կարող են խոսել միևնույն լեզվով»¹³: Այն ուներ կազմավորման այլ պատճառներ, որոնցից մի քանիսը կառանձնացնենք ստորև:

Նախ և առաջ, ինչպես արդեն առիթ ունեցել ենք ասելու¹⁴, պատմական մարդաբանությունը մի կողմից՝ 1968 թվականին տեղի ունեցած մշակութային աննախադեպ հեղաբեկման, մյուս կողմից՝ սպառողական մշակույթի արմատական քննադատության արդյունք էր: Այսու՝ մշակութային կյանքի կառույցների ստեղծման և վերարտադրության հիմնական մեխանիզմների մեջ (դպրոց, ընտանիք, զանգվածային տեղեկատվամիջոցներ և այլն) ի հայտ են բերվում բազմաթիվ սահմանափակումներ: Կտրուկ փոփոխությունների են ենթարկվում նախկինում անխախտ համարվող այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ընտանեկան և դպրոցական կառույցների, ամուսնության և գենդերային դերերի, մայրության և սեռականության, երեխաների և մեծահասակների, կրոնական և քաղաքական կուսակցությունների, աշխատավորների և ձեռնարկատերերի, ուսանողների և դասախոսների փոխհարաբերությունների մասին պատկերացումները¹⁵: Պատմական տրամասությունը արձագանքում է հասարակության որոշակի կերպափոխությանը և այդ ճշգրիտ չափումներին տալիս ժամանակավոր թանձրություն՝ Հարցականի տակ դնելով բոլոր այդ

¹³ Braude F., Histoire et Sciences sociales: La longue durée, *Annales. ÉSC*, 4 (1958), p. 734.

¹⁴ Sté **Հովհաննիսյան Ս.**, Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն», Մաս առաջին: Հետկառուցաբանական Հայեցակարգը և պատմության «բանակային» կամ «չարային» ըմբռնումը, «Վէժ» Համահայկական հանդես, 1 (2012), էջ 62:

¹⁵ Sté **Агирре Рохас К. А.**, *Критический подход к истории французских «Анналов»*, М.: Круг, 2006, с. 129–132, **Уваров П. Ю.**, **Трубникова Н. В.**, Школа «Анналов» и историческая антропология, в **Крадин Н. Н. и др.**, *Теория и методология истории: учебник для вузов*, Волгоград: Учитель, 2014, с. 275:

Հաստատուն արժեքների գործառույթները: Մի բան, որ հանգեցնում է, այսպես կոչված, «մարդաբանական ճգնաժամի»¹⁶: Եվ պատահական չէ, որ մշակութային կառույցների պատմությանն առնչվող հետազոտական խնդիրների առանցքում գրվում է պատմության հիմնարար կողմնորոշիչների վերանայման խնդիրը¹⁷: Այդ վերանայումների համաձիռում էլ ծեսերի, խորհրդանիշների, հավատալիքների և բանահյուսության համալիր հետազոտությունը վերաուրվազեց այն ուղին, «որով հետագայում անցավ պատմական մարդաբանությունը»¹⁸: Այսու պատմական մարդաբանությունը խորքային առումով արդյունք էր «պատմագիտության մեթոդաբանության և խնդրի բարեփոխման ներքին պահանջի»¹⁹:

Մեկ այլ կարևոր պատճառ էր մտայնություն և պատմական մարդաբանություն հղացքների տարրորոշման խնդիրը, քանի որ հետազոտողներից ոմանք կարծում էին, որ դրանք նույնական են, և հարկ չկա զատել միմյանցից, կամ էլ սոցիալական պատմության բաղկացուցիչներ են²⁰: Դրան հակառակ ուրիշները կարծում էին, որ դրանք տարբեր հետազոտական ոլորտներ են և փոխհատվելով չեն նույնանում,

¹⁶ Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 166.

¹⁷ Տե՛ս Le Goff J., Roussellier N., Preface, dans Bedarida F. (dir.), *L'Histoire et le métier d'historien en France 1945–1995*, Paris: Éditions de la Maison des sciences de l'homme, 1995, էջ 12, Агирре Рохас К. А., *указ. соч.*, 132:

¹⁸ Гуревич А. Я., *Исторический синтез и Школа «Анналов»*, М., Центр гуманитарных инициатив, «Университетская книга», 2014, с. 91.

¹⁹ Кром М. М., *указ. соч.*, с. 28.

²⁰ Տե՛ս Агирре Рохас К. А., *указ. соч.*, с. 128–152, Aguirre Rojas C. A., *L'histoire conquérante: un regard sur l'historiographie française*, L'Harmattan, 2000, p. 107–133, Burke P., *History and Social Theory*, Ithaca, New York: Cornell University Press, 1993, p. 91–96, Tilly Ch., *Anthropology, History, and the Annales*, *RFBC*, I, 3/4 (1978), p. 207–213, և այլք: Ընդամին նույնացումը կարող է լինել կամ հօգուտ պատմական մարդաբանության, կամ հօգուտ մտայնությունների:

այլ հակառակը՝ փոխըացնում են միմյանց²¹: Ավելին՝ «մարդաբանական պատմության» անհրաժեշտությունը ծագել է հենց այդ տարբերության առկայության արդյունքում²²: Արոն Գուրեևիչի հետ հարցազրույցի ժամանակ Լը Գոֆֆն ուղղակի նշում էր, որ «մտայնությունների պատմությունը և պատմական մարդաբանությունը երբեք չեն միախառնվում: Դրանք կազմավորվել են գրեթե միաժամանակ, բայց համապատասխանում են տարբեր նպատակների և հետազոտական առարկաների: Պատմական մարդաբանությունը պատմության համընդգրկուն հղացք է»²³: Հետևաբար մարդաբանական պատմությունն ավելի շուտ ներառում-համադրում է ինչպես «նոր պատմագիտության» բոլոր ձեռքբերումները (միավորելով մտայնությունների, նյութական կյանքի, առօրեականության հետազոտությունները), այդպես և հետազոտական բոլոր նոր ոլորտները (ինչպես մարմինը, ժեստերը, բանավոր խոսքը, ծեսը, խորհրդանշանները և այլն), մինչդեռ «մտայնությունը սահմանափակված է գիտակցության և վարքի ինքնաբերական ձևերի ոլորտով»²⁴: Այսպիսով՝ Աննալների դպրոցի ներկայացուցիչների համար մտայնությունների պատմությունը մի կողմից՝ տարբերվում էր պատմական մարդա-

²¹ Տե՛ս Гуревич А. Я., *указ. соч.*, с. 338, Le Goff J., Les mentalités. Une histoire ambiguë, dans Le Goff J., Nora P. (dir.), *Faire de l'histoire III. Nouveaux objets*, Paris: Gallimard, 1974, p. 106–129, Burguière A., Anthropologie historique, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *La Nouvelle Histoire*, Paris: Retz, 1978, p. 137–164, Ariès Ph., L'Histoire des mentalités, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *La Nouvelle Histoire*, Paris: Retz, 1978, p. 167–189, Burguière A., Anthropologie historique, dans Burguière A. (éd.), *Dictionnaire des sciences historiques*, Paris: P. U. F., 1986, p. 52–60, Revel J., Mentalités, dans Burguière A. (éd.), *op. cit.*, p. 450–456, Ricœur P., *Temps et récit, Tome I: L'Intrigue et le récit historique*, Le Seuil, 1983, p. 157:

²² Տե՛ս Schmitt J.-C., Anthropologie historique, *BCÉMA* (BUCEMA), 2 (2008), p. 3, Hulak F., En avons-nous fini avec l'histoire des mentalités? *Philonsorbonne*, 2 (2008), p. 96:

²³ Гуревич А. Я., *указ. соч.*, с. 338.

²⁴ Там же, с. 338.

բանությունից՝ մյուս կողմից՝ մարդաբանական պատմության ձևավորման և կայացման համար պատմաբանների վերապատրաստման հարթակ էր հանդիսանում²⁵: Նկատենք, որ մտայնության և մարդաբանական պատմության հակադրումը կամ դրանցից մեկին նախապատվություն տալը հատկանշական էր բրիտանական դպրոցին. այն է՝ բրիտանացի հետազոտողները կասկածանքով էին վերաբերվում «մտայնություն» հղացքին և նախապատվությունը տալիս էին պատմական մարդաբանությանը: Մի բան, որի հետևանքով պատմական մարդաբանությունը Բրիտանիայում ավելի շուտ կայացավ, քան Ֆրանսիայում²⁶: Միևնույն ժամանակ նշենք նաև, որ պատմական մարդաբանությունն եզրույթն աննալակականների գրության մեջ հստակ սահմանում այդպես էլ չստացավ. եզրույթի բովանդակության մասին կարելի էր կռահել միայն համատեքստից: Այսու՝ եզրույթն ավելի շատ «ժամանակակից պատմագիտության միտումների արտացոլումն էր»²⁷, քան հստակ սահմանադատում, և դա չընդհատվող քննարկումների տեղիք է տվել²⁸:

²⁵ Տե՛ս Schmitt J.-C., *Anthropologie historique, BCÉMA (BUCEMA)*, 2 (2008), p. 3:

²⁶ Տե՛ս Кром М. М., *указ. соч.*, с. 43:

²⁷ Там же, с. 71.

²⁸ Տե՛ս Boureau A., *Propositions pour une histoire restreinte des mentalités, Annales. Economies, sociétés, civilisations*, 6 (1989), p. 1491–1504, Burke P., *History and Social Theory*, Cambridge: Cornell University Press, 1993, Burke P., *Varieties of Cultural History*, Cambridge: Cornell University Press, 1997, Rauzduel R., *Sociologie historique des «Annales»*, Paris: Lettres du monde, 1999, Clark E., *History, Theory, Text: Historians and the Linguistic Turn*, Cambridge, MA: Harvard University Press, 2004, Ким С. Г., *Основные тенденции исторической антропологии в Германии 1960–80-х гг.*, в Могильницкий Б. Г. (ред.), *К новому пониманию человека в истории: Очерки развития современной западной исторической мысли*, Томск, 1994, с. 130–190, Ким С. Г., *Историческая антропология в Германии: методологические искания и историографическая практика*, Томск, 2002, Агирре Роас К. А., *указ. соч.*, 2006, և այլք:

Վերոբերյալ խնդիրն առկա է նաև քանակային և/կամ շարային պատմության դեպքում. մշակույթի թեմային առաջնություն տալը բոլորովին էլ չէր նշանակում քանակային պատմությունից կամ շարային տվյալների կիրառումից հրաժարում: Բյուրգիերի դիպուկ բնորոշմամբ՝ «մարդաբանական պատմությունը քանակային պատմության շարունակությունն էր այլ միջոցներով»²⁹: Եվ պատահական չէր, որ սննդամթերքի սպառման քանակային պատմությունը հընթացս վերածվեց սննդի և համի պատմության, իսկ ժողովրդագրական պատմությունը՝ ընտանիքի պատմության: Ժակ Ռեյլի բնորոշմամբ՝ «իրականում լայն տարածում գտավ այն զգացողությունը, թե այժմ կարելի է «չափել» վարքը, գաղափարներն ու առարկաներն այնպես, ինչպես մինչ այդ սովորել էին «չափել» գներն ու աշխատանքի արտադրողականությունը»³⁰: Առավել ևս, որ ինչպես դեռ XIX դարում Ֆրանսիական պատմագրության մեջ ժողովրդագրության հիմնադիրներից Մարսել Ռայնարն էր գրում, «բնակչության պատմությունը զուտ քանակային չէ, այն ներառում է կյանքի պայմանների ... և պատմության ամբողջ ոլորտին վերաբերող գործոնների պատմությունը»³¹: Խորքային առումով նման փոխակերպությունն առնչվում էր նաև 1973–1974 թվականների տնտեսական ճգնաժամին, որի հետևանքով տնտեսական և սոցիալական առաջընթացի պատկերացումները ևս հարցականի տակ դրվեցին. տնտեսական հետազոտություններն այլևս առաջնային չէին որպես այդպիսին: Ավելին՝ նկատվում էր, որ քանակային վերլուծությունը թեպետ կարող է վերահանել երևույթների ու կարևոր փոփոխությունների ինչ-ինչ խոր-

²⁹ Burguière A., *From the History of Mentalities to Anthropological History*, in Yengoyan A. (ed.), *Modes of Comparison: Theory and Practice* (The CSSH Book Series), Ann Arbor: University of Michigan Press, 2006, p. 41.

³⁰ Տե՛ս Ревель Ж., *указ. соч.*, с. 74:

³¹ Reinhard M., *L'Institut d'Histoire de la Révolution française, Revue historique*, 85^e année, t. 226 (1961), p. 155.

քային կողմեր, բայց և անկարող է դրանք բացատրել սեփական հետազոտական տիրույթում³²:

Մյուս՝ ոչ պակաս կարևոր իրողությունը այլ քաղաքակրթությունների նկատմամբ հետաքրքրությունն աճն էր, հատկապես այդ քաղաքակրթական «ուրիշությունների» արևմտյան հասարակությունների կառույցներին ու գաղափարախոսություններին հակադրվելու միտումը: Նման հետաքրքրությունը պայմանավորված էր նախ և առաջ ազգաբանություն ու ազգագրության ակտիվացմամբ, մասնավորապես երբ ազգաբաններն ու ազգագրագետները, վերադառնալով մայր երկիր, արևմտյան հասարակությունների գիտակցության մեջ և կենցաղում զարմանքով բացահայտում են փոփոխությունների չենթարկվող իրենց «ներքին գաղութներն» (*colonies intérieures*) ու «վայրենության կղզյակները», որոնք վերագրվում էին միայն «սառը հասարակություններին»³³: Հարցերին, որոնք ազգաբաններն առաջադրել էին ոչ-գրային, ավանդական հասարակությունների նյութերի հիման վրա, պատմական մարդաբանները փորձում էին պատասխանել Եվրոպայի և Ասիայի անցյալի քաղաքակրթությունների հետազոտմամբ: Ուստի ազգագրական մոտեցումը պատմաբանին հնարավորություն էր ընձեռում հետազոտվող հասարակության մեջ տեսնելու «ուրիշը», «տարօրինակը»³⁴ հնարավոր դարձնելով ինչպես առանձնացնել սեփական «ուրիշությունն» ու «տարօրինակությունը», այնպես էլ հասկանալ և գնահատել դրանք:

³² Shu Burguière A., From the History of Mentalities to Anthropological History, in Yengoyan A. (ed.), *op. cit.*, p. 42:

³³ Shu Dosse F., *op. cit.*, p. 16. Трубникова Н. В., Французская историческая школа «Анналов», М., Квадрига, 2016, с. 134. Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, *Одиссей. Человек в истории – 1991*, М., 1991, с. 53–55. Эмар М., Аграрная история: от изучения экономики к исторической антропологии, в Бессмертный Ю. Л. (ред.), *Споры о главном: Дискуссии о настоящем и будущем исторической науки вокруг французской школы «Анналов»*, М., 1993, с. 135:

³⁴ Shu Гуревич А. Я., *указ. соч.*, с. 380:

ի հայտ եկան միջգիտակարգային, ավելի ճիշտ՝ բազմագիտակարգային նախագծեր, որոնցից հատկապես արգասաբեր եղան պատմություն, բանահյուսություն, ազգաբանություն ու ազգագրության տեսական-մեթոդական փոխառությունները: Դրանց համադրման արդյունք էր նաև պատմական մարդաբանությունը³⁵: Համադրությունը թույլ էր տալիս հրաժարվել անցյալի արդիականացումից, ինչի մասին դեռ Բլոկն էր զգուշացնում՝ քննադատելով ավանդական քաղաքական պատմությունը: Ուշագրավ է նաև այն, որ պատմական մարդաբանությունը, որքան էլ տարօրինակ թվա, պատասխանն էր Լևի-Ստրոսսի կառուցվածքային մարդաբանության (*anthropologie structurelle*) մարտահրավերի: Այսու լինելով պատմության և մարդաբանության ինքնօրինակ համադրություն՝ այդուհանդերձ այն ոչ թե ազգագրությանն արված հավելում էր, այլ ազգագրության այլընտրանքը³⁶, որի համապատկերում հնարավոր է դիտել «Ֆրանսիական պատմագրության չընդհատվող պայքարն ընդդեմ սեփական պատմության և, հետևաբար, ընդդեմ պատմության գրության ուղղակի պատմության (նարատիվային) միջոցների»³⁷:

Ի վերջո պատահական չէր, որ այդ տարիներին (1970-ական թթ.) ի հայտ եկավ պատմագիտության նոր ճգնաժամը, որը, հարկավ, ոչ այնքան պատմագիտության սպառնալուծ էր, որքան ընդհանրապես հումանիտար գիտությունների և մասնավորապես պատմագիտության «գերլարվածություն» արդյունք էր: Բանն այն է, որ հումանիտար գիտություններն ի վիճակի չեղան ընդհանրացնելու հաճախ ներհակ բազմաթիվ հայեցակարգեր և ըստ այդմ կազմակերպելու հումանիտար գիտելիքների զարգացման միասնական

³⁵ Shu Burguière A., L'anthropologie historique et l'école des Annales, *CCRH*, 22 (1999), p. 5. Rogers S. C., Anthropology in France, *ARA*, 30 (2001), p. 489–490:

³⁶ Shu Tilly Ch., Anthropology, History, and the Annales, *RFBC*, 1, 3/4 (1978), p. 213:

³⁷ Рикёр П., *указ. соч.*, с. 128.

հեռանկար, ինչի հետևանքով խոտորվեց և հեռապատկերը. սոցիալական հայացքը փոխադրվեց դեպի սոցիալական համակարգերի արգելակումները (*blocages*), անշարժություններն ու անփոփոխությունները³⁸:

Ակնհայտ է, որ պատմական մարդաբանություն հետազոտության թեմատիկան ևս, իր կազմավորման եղանակների բազմազանությունը համապատասխան, պետք է լիներ շատ բազմազան, մանավանդ երբ թե՛ հընթացս իր կազմավորման և թե՛ հետադարձում այն այդպես էլ չուենեցավ իրեն հատուկ հետազոտական դաշտ կամ խնդիր: Ինչպես Անդրե Բյուրգիերն էր գրում, «պատմական մարդաբանությունը չունի սեփական տիրույթ», և այն նախ և առաջ պատմագիտության տարբեր ճյուղերի «էվոլյուցիան միավորելու ջանք է»³⁹: Ըստ այդմ՝ պատմական մարդաբանությունը հետազոտական մոտեցումների մի ամբողջություն էր, որը ներառում էր առավելագույն ճանաչողական տարբեր ընթացակարգեր և տեսամեթոդական ուղղություններ: Ուստի մարդաբանական «համաբերական հարացույցի» կիրառումը ևս տարբեր ընթացակարգեր ու տեսամեթոդական ուղղություններ էր ենթադրում. պատմաբաններից ոմանք փոխառում էին հղացական հիմնամասը (ինչպես ընտանիքի և ազգակցական կապերի հետազոտողները, այդպես էլ պատմական տնտեսության գործառնական եղանակը Կառլ Փոլանյիի և Մարշալ Սալինզի տեսությունների լույսի ներքո վերամտածողները), իսկ ոմանք էլ փոխառում էին միայն «վերլուծական գործիքակազմը» կամ «առասպելների կառուցվածքային վերլուծությունը» (Ժան-Պիեռ Վեռնան, Վիդալ-Նաևե, Լը Գոֆֆե և այլք): Այստեղից էլ, ինչպես նկատում է Ժակ Ռեյլը, «փաստացի բացահայտումների մի շարք, որոնք վերաձևել են պատմագրությունից ամբողջական ոլորտներ»⁴⁰:

Անդրե Բյուրգիերը, ընդհանրացնելով Աննալների դպրոցի պատմաբանների մարդաբանական որոնումները, առանձնացնում է չորս մեծ ոլորտ⁴¹՝ ա) նյութական և կենսաբանական մարդաբանություն (սննդին վերաբերող ավանդույթների պատմություն, կացարանների (բնակավայրերի) ձևերի պատմություն, մարմնի և կենսաբանական միջավայրի նկատմամբ վերաբերմունքի պատմություն, կյանքի և մահվան ընկալման պատմություն, սեռականությունից պատմություն և այլն), բ) տնտեսական մարդաբանություն (տնտեսական սովորույթների պատմություն, գյուղատնտեսական տեխնիկայի տարածման պատմություն, գյուղական տնտեսության կառուցվածքի պատմություն և այլն), գ) սոցիալական մարդաբանություն (ընտանեկան վարքի և կառույցի պատմություն, ազգակցական հարաբերությունների կազմակերպման պատմություն և այլն), դ) մշակութային և քաղաքական մարդաբանություն (կրոնի և դավանանքի ձևերի պատմություն, բանահյուսական մշակույթի պատմություն, քաղաքական մշակույթի պատմություն և այլն)⁴²:

Ուշագրավ է, որ պատմական մարդաբանությունը, իր բոլոր այդ ճյուղավորումներով հանդերձ, խորքային առու-

⁴¹ Հարկավ, պատմական մարդաբանության այս տարբաժանումն ինչ-որ տեղ արհեստական է, մանավանդ որ Բյուրգիերը դա կատարել է դեռևս գիտակարգի կազմավորման փուլում, և այսօր արդեն առկա են բաշխման այլ մոտեցումներ: Դիցուք՝ այսօր արդեն համարվում են պատմական մարդաբանության ոչ թե մշակութային և քաղաքական դիտանկյունները, այլ սոցիալականը և մշակութայինը, կամ նյութական և կենսաբանական մարդաբանությունը կոչվում է ֆիզիկական (կենսաբանական) մարդաբանություն:

Միացյալ Նահանգներում մարդաբանությունը բաժանում են չորս գիտակարգերի՝ ֆիզիկական, հնագիտական, մշակութային և լեզվաբանական մարդաբանություններ, մինչդեռ Մեծ Բրիտանիայում երեք գիտակարգերի՝ ֆիզիկական, հնագիտական և սոցիալական մարդաբանություններ:

⁴² Տե՛ս Burguière A., *Anthropologie historique, dans Burguière A. (éd), Dictionnaire des Sciences Historiques*, Paris: P. U. F., 1986, p. 52–60:

³⁸ Տե՛ս Dosse F., *op. cit.*, p. 167:

³⁹ Burguière A., *Anthropologie historique, dans Burguière A. (éd), Dictionnaire des sciences historiques*, p. 59.

⁴⁰ Տե՛ս Ревель Ж., *указ. соч.*, с. 73:

մով նորություն չէր Աննալների դպրոցի հետազոտական հետաքրքրությունների շրջանակում: Հիմնադիր-հայրերը, ինչպես նաև Երկրորդ սերնդի ներկայացուցիչներն իրենց հետազոտություններում քիչ թե շատ մոտեցել էին պատմական մարդաբանության հայեցակարգին, բայց նրանց տեքստերում այն մնացել էր ավելի շատ ուրվագծումի ծիրում: Իրավիճակն ավելի դյուրընկալելի դարձնելու համար ստորև ընդհանուր գծերով ներկայացնենք այդ ուղղություններից յուրաքանչյուրն առանձին:

Ա) Նյութական և կենսաբանական մարդաբանություն⁴³: Այս ուղղության առանձնահատկություններից է այն, որ «համաբերական հարացույցի» մեջ, բացի այլ հումանիտար գիտակարգերի հետ պատմության ակտիվ փոխհարաբերությունից, ներառված էին նաև բնական գիտությունները, մասնավորապես կենսաբանությունն ու բժշկագիտությունը (որից և՛ անվանումը): Ուշագրավ է, որ այս ուղղությամբ առաջին և նախադեպային հետազոտություններ էին կատարել հիմնադիր հայրերը՝ Լյուսիեն Ֆևրը՝ իր «Կերակուրներ և խմիչքներ», «Կենսաբանություն, սոցիոլոգիա և սնունդ», «Հետազոտություններ և խնդիրներ. սովորական խոհանոցային ճարպեր»⁴⁴, և Մարկ Բլոխը՝ իր «Ֆրանսիական սնունդ», «Մենդային խտրականությունը հին Ֆրանսիայում» հոդվածներում⁴⁵:

⁴³ Այժմ այս ուղղությունը հայտնի է ֆիզիկական մարդաբանություն (Anthropologie physique) ընդհանուր անվամբ և ավելի ընդլայն սահմաններով՝ հիմնականում բնական գիտությունների համադրությամբ:

⁴⁴ Տե՛ս Febvre L., Biologie, sociologie et alimentation, *MHS*, 6 (1944), p. 38–40. Febvre L., Nourritures et boissons, *MHS*, 5 (1944), p. 75–78. Febvre L., Enquêtes et problèmes. Les graisses de cuisine usuelles, dans Febvre L. (dir.), *L'Encyclopédie française*, t. XIV, Paris: Société de l'Encyclopédie française, 1954, p. 14–40:

⁴⁵ Տե՛ս Bloch M., Les aliments des Français, dans Berger G. (ed.), *L'Encyclopédie française*, t. XIV, Paris: Société de l'Encyclopédie française, 1954, chapt. V, no. 1, 14.42.7–14.42.10, նույնը նաև՝ Hémarquiner J.-J. (éd.), *Pour une histoire de l'alimentation*, Paris: Armand Colin, 1970, p. 231–235,

Այսու՝ պատմական մարդաբանության այս ուղղությունը «ֆիզիկական, ժեստային, սենդային, մտային սովորությունների պատմությունն է»⁴⁶, որը նախ և առաջ նպատակ ունի հետազոտելու ժողովրդական սպառողականության պատմությունը: Նախապատմությունը տալով շարային սկզբնաղբյուրներին (*sources sérielles*), ինչպիսիք են, օրինակ, նավերի, հիվանդանոցների օրապահակների կամ աշխատավարձերի վճարումների վերաբերյալ տվյալները և այլն, հետազոտողները կարողացան ցույց տալ սննդի քանակի և որակի կապը տնտեսական և ժողովրդագրական տատանումների հետ, այստեղից էլ՝ այդ ամենի սոցիալ-պատմական դիտանկյունները: Իսկ նման տատանումներն էլ իրենց հերթին ազդում են նաև ճաշակի կայունության, ինչպես նաև խոհարարական հիմունքների քարտեզի վրա (տվյալ ժամանակի, տվյալ վայրի), իսկ մեկուսացվածության արդյունքում այն կրկին ծնունդ է տալիս անհետացած գույնատնտեսական աշխարհագրությանը (որը, սակայն, պահպանվել էր սննդային սովորություններում)⁴⁷: Այսպես՝ մինչ Արդյունաբերական դարաշրջանի առաջին փուլը, երբ սնունդը կենսամակարդակի հիմնարար ցուցանիշն էր, ճաշակը, որպես այդպիսին, «կարող էր արտացոլել սոցիալական անհավասարությունը կա՛մ չարաչահումների միջոցով (գերիշխանության նշան), կա՛մ որոշակի ապրանքատեսակներից ձեռնպահ մնալով (կախյալության նշան)»⁴⁸:

Bloch M., La ségrégation alimentaire dans l'ancienne France, dans Berger G. (dir.), *L'Encyclopédie française*, t. XIV, Paris: Société de l'Encyclopédie française, 1955, chapt. IV, no. 3, 14.40.2–14.40.3:

⁴⁶ Burguière A., Anthropologie historique, dans Burguière A. (éd), *Dictionnaire des sciences historiques*, Paris: P. U. F., 1986, p. 59.

⁴⁷ Տե՛ս Burguière A., Anthropologie historique, dans Burguière A. (éd), *op. cit.*, p. 54–55. Burguière A., Anthropologie historique, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *La Nouvelle Histoire*, Paris: Retz, 1978, p. 145–146. Кром М. М., *указ. соч.*, 2010, с. 121:

⁴⁸ Տե՛ս Burguière A., Anthropologie historique, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *op. cit.*, p. 147:

Աննդի (և ընդհանրապես նյութական մշակույթի) նման դիտարկմամբ պայմանավորված՝ այժմ հետազոտություն թեմա է դառնում ոչ թե նյութական և մշակութային առարկաներ արտադրող, այլ դրանք սպառող մարդը⁴⁹, մինչդեռ նախկինում «ցորենի գներն ուսումնասիրելիս մոռանում էին նրանց մասին, ովքեր օգտագործում էին այն»⁵⁰: Այսպիսով՝ սննդային նախասիրություններն անգամ մշակութային ինքնության հիմնասյուներից են, ինչպես նաև սոցիալական դատումի արդյունք⁵¹, և դրանց հաղորդած տեղեկություններն անուրանալի են:

Մարդաբանական պատմության նյութական և կենսաբանական ուղղության առանցքային թեմաներից էր նաև «մարմնի պատմությունը»⁵², ինչը, հարկավ, պատահական չէր, քանի որ «երբ պատմությունը դիմում է մարմնին, վերականգնման թեման դառնում է նյութական քաղաքակրթության բուն էությունը, գործողությունների և զգացմունքների ձևը»⁵³, ուստի հետազոտության կիզակետում են հայտնվում բոլոր այն մանրամասնությունները, որոնք թույլ են տալիս հասկանալ, թե մարդիկ տարբեր ժամանակներում, աշխարհագրական տարբեր վայրերում ինչպես են ընկալել իրենց մարմինը և/կամ ինչպես են օգտագործել այն (ժեստեր, կեցվածքներ, նիստուկաց, սեռական վարքի մոդելներ և այլն)⁵⁴: Բանն այն է, որ վաղ մանկության և պատա-

⁴⁹ Ավելի մանրամասն տե՛ս Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 249, Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 170:

⁵⁰ Pesetz J. M., *Histoire de la culture matérielle, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), op. cit.*, p. 130.

⁵¹ Տե՛ս Burguière A., *Anthropologie historique, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), op. cit.*, p. 147:

⁵² Տե՛ս Кром М. М., *указ. соч.*, с. 121:

⁵³ Корбен А., Куртин Ж.-Ж., Вигарелло Ж. (ред.), *История тела*, В 3-х томах, том I, М., Новое литературное обозрение, 2012, с. 5.

⁵⁴ Տե՛ս Кром М. М., *указ. соч.*, с. 121, *История ментальностей, историческая антропология. Зарубежные исследования в обзорах и рефератах* /Сост. Е. М. Михина, М., 1996, с. 119–128:

նեկություն սննդակարգը, ինչպես նաև կենսակերպի այն բոլոր տարրերը, որոնք անհատն իր աճի տարիներին զգացել է (ներառյալ կրթությունը), կարող են խաթարել կամ խթանել նրա ֆիզիկական զարգացումը: Իսկ վիճակագրության միջոցով հեշտությունը կարելի է հաստատել հասակի և բարեկեցության համատեղ զարգացումը: Այստեղից էլ՝ պատմական հետազոտության տիրույթն ընդլայնող հիմնարար հարցադրումը՝ «արդյո՞ք կենսաբանության ներկայիս կողմնորոշումը, որը ժխտում է շրջակա միջավայրի ազդեցությունը ժառանգական նշանների փոխանցման վրա, համապատասխանում է պատմաբանի բացատրություններին, որը բնակչության ֆիզիկական տեսքի բոլոր փոփոխությունների համար պատասխանատու է համարում սոցիալ-տնտեսական միջավայրը»⁵⁵:

Նյութական և կենսաբանական ուղղության ոչ պակաս կարևոր թեմա էր նաև մահվան վերաբերյալ պատկերացումների պատմությունը: Պարզվեց, որ դրանք պատմագիտության համար ծայրաստիճան կարևոր խնդիրներ են, և դրանց դիտարկման շնորհիվ նոր լույս է սփռվում հասարակության աշխարհայացքի և արժեքների համակարգերի վրա⁵⁶: Պիեռ Շոնյուի դիպուկ ձևակերպմամբ՝ «մշակույթը, քաղաքակրթությունը լավագույնս տրվում են մահվան վերաբերյալ իրենց արտահայտություններում (խոսք, ժեստ, գրություն): Այնտեղ, միայն այնտեղ է, որ չեն խարդախում»⁵⁷: Մահվան թեմայով բազմաթիվ հետազոտությունների⁵⁸ մեջ առանձնանում են Ֆրիլիպ Արիեսի «Մարդը մահ-

⁵⁵ Տե՛ս Burguière A., *Anthropologie historique, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), La Nouvelle Histoire*, Paris: Retz, 1978, p. 149:

⁵⁶ Տե՛ս Гуревич А. Я., Филипп Арьес: Смерть как проблема исторической антропологии, в Арьес Ф., *Человек перед лицом смерти* /Пер. с фр., общ. ред. Оболенской С.В.; Предисл. Гуревича А. Я., М., Издательская группа «Прогресс» – «Прогресс-Академия», 1992, с. 5:

⁵⁷ Chaunu P., Mourir à Paris (XVI^e-XVII^e-XVIII^e siècles), *Annales. Economies, sociétés, civilisations*, 1 (1976), p. 34.

⁵⁸ Տե՛ս Ariès Ph., *Attitudes devant la vie et devant la mort du xvii^e au xix^e*

վան Հանդիման»⁵⁹ և Միշել Վովելի «Մահը և Արևմուտքը»⁶⁰ կոմթոզային աշխատությունները, որոնցում հեղինակներն ուսումնասիրում են մահվան վերաբերյալ պատկերացումների նուրբ և դժվարընկալելի փոփոխություններն ու էվոլյուցիան: Հարկավ, մահվան թեման նորություն չէր ո՛չ փրիսոփայության, ո՛չ ազգաբանության, ո՛չ էլ գրականության համար, սակայն գրեթե անտեսված էր մնացել մահվան պատմությունը՝ պատմական դիտանկյունը: Ժամանակի ընթացքում «պարզ դարձավ, որ մահը միայն պատմական ժողովրդագրության կամ աստվածաբանության և եկեղեցական դիդակտիկայի թեմա չէ»⁶¹: Ըստ Արիեսի՝

siècle, quelques aspects de leurs variations, INED, 1949. **Ariès Ph.**, *Essais sur l'histoire de la mort en Occident: du Moyen Âge à nos jours*, Seuil, 1975. **Lebrun F.**, *Les hommes et la mort en Anjou aux 17^e et 18^e siècles. Essai de démographie et de psychologie historiques*, Paris: La Haye, 1971. **Vovelle M.**, *Pieté baroque et déchristianisation, les attitudes devant la mort en Provence au XVIII^e siècle*, Pans, 1973. **Vovelle M., Vovelle G.**, *Vision de la mort et de l'au-delà en Provence du XV^e au XX^e siècle d'après les autels des âmes du Purgatoire*, Paris: Armand Colin, 1970 (Cahiers des Annales n° 29). **Chiffoleau J.**, *La comptabilité de l'au-delà Les hommes, la mort et la religion dans la region d'Avignon à la fin du Moyen Age (vers 1320-vers 1480)*, Rome, 1980 (Collection de l'Ecole française de Rome, 47). **Le Goff J.**, *La naissance du purgatoire*, Paris: Gallimard, 1981. **Favre R.**, *La Mort dans la littérature et la pensée françaises au Siècle des lumières*, Lyon: Presses Universitaires de Lyon, 1978. **Croix A.**, *La Bretagne aux 16^e et 17^e siècles La vie, la mort, la foi*, Paris: Maloine, 1981. **Chaunu P.**, *La mort à Pans, 16^e, 17^e, 18^e siècles*, Paris: Fayard, 1978. **Thibaut-Payen J.**, *Les morts, l'Eglise et l'État Recherches d'histoire administrative sur la sepulture et les cimetières dans le ressort du parlement de Pans aux XVII^e et XVIII^e siècles*, Paris: Fernand Lanore, 1977, և այլք:

⁵⁹ **Ariès Ph.**, *L'Homme devant la mort*, Paris: Le Seuil, 1977. Մինչ այդ Ֆրիլիպ Արիեսը Հանդես էր եկել մահվան մասին ոչ պակաս կարևոր մեկ այլ «Ակնարկներ Արևմուտքում մահվան պատմության մասին» Հետազոտությանը (տե՛ս **Ariès Ph.**, *Essais sur l'histoire de la mort en Occident: du Moyen Âge à nos jours*, Paris: Le Seuil, 1975):

⁶⁰ **Vovelle M.**, *La mort et l'Occident: De 1300 à nos jours*, Paris: Gallimard, 1983.

⁶¹ **Гуревич А. Я.**, *Смерть как проблема исторической антропологии: о новом направлении в зарубежной историографии*, **Одиссей: Человек в истории**, Исследования по социальной истории и истории

տվյալ հասարակության զարգացման որոշակի փուլում մահվան նկատմամբ մարդու վերաբերմունքի և անհատի ինքնագիտակցության, անհատականության միջև տվյալ հասարակությանը բնորոշ կապ գոյություն ունի: Իսկ «Հավաքական անգիտակցականի» մեջ մահվան կերպափոխության բացահայտմամբ Հնարավոր կլինի նաև լույս սփռել մարդու անհատականության կառույցի և դրա վերակազմության վրա⁶²: Բոլորովին այլ մոտեցում ունենր Միշել Վովելը, որի գիրքը, խորքային առումով, Արիեսի գրքի գիտական «հակակշիռն» էր⁶³: Վովելը մերժում է Արիեսի կրթա-

культуры – 1989, М., Наука, 1989, с. 114.

⁶² Տե՛ս **Ariès Ph.**, *L'Homme devant la mort*, t. 1, Le temps des gisatns, Paris: Le Seuil, 1985, p. 287: Իր գրքում Արիեսը զատում է մահվան նկատմամբ վերաբերմունքի դանդաղ այլակերպման հինգ փուլ. 1) «բոլորս մեռնելու ենք» (nous mourrons tous), որն ընդգրկում է անտիկ ժամանակաշրջանն ու վաղ Միջնադարը, 2) «սեփական մահը» (la mort de soi), որն ընդգրկում է միջին և ուշ Միջնադարը, 3) «Հեռու և մոտ մահը» (la mort longue et proche), որն ընդգրկում է Նոր դարերը, 4) «քո (ուրիշի) մահը» (la mort de toi), որն ընդգրկում է XIX դարն ու XX դարի սկիզբը, 5) «շրջված մահը» (la mort inversée), որն ընդգրկում է XX դարի երկրորդ կեսը, որոնց և նվիրված էր Հետազոտությունը: Ընդամենի այդ փոխակերպությունները տեղի են ունեցել չորս հիմնական «չափումների» ազդեցության ներքո՝ 1) անհատական ինքնագիտակցություն, 2) պաշտպանական մեխանիզմներ բնության ուժերի դեմ, որոնք մշտապես սպառնալիք են սոցիալական կարգի համար (մասնավորապես սեքսը և մահը), 3) անդրշխրիմյան կյանքի նկատմամբ հավատք, 4) չարի գոյության, մեղքի, տառապանքի և մահվան սերտ կապի նկատմամբ հավատք:

⁶³ Տե՛ս **Гуревич А. Я.**, *Смерть как проблема исторической антропологии: о новом направлении в зарубежной историографии*, **Одиссей: Человек в истории**, Исследования по социальной истории и истории культуры – 1989, М.: Наука, 1989, с. 25: Ի տարբերություն Արիեսի՝ ուսումնասիրելով մահվան Հանդիման մարդու վարքի էվոլյուցիան՝ Վովելը բոլորովին այլ մեթոդ է ընտրում. իր Հետազոտության մեջ «մահվան պատմությունը» բաժանում է երեք փուլերի՝ «սպասվող մահ», «մահվան փորձառություն» և «մահվան մասին տրամադրություն»: Ընդամենի՝ Վովելը մահվան նկատմամբ վերաբերմունքի այլակերպման այլ փուլեր էր առաջարկում (նա իր Հետազոտությունը սկսում է 1300 թվականից). 1) «մահվան երկու մոդել

ուած «Հավաքական անգիտակցական» հասկացութիւնը, որը կենսաբանականի և մշակութայինի սահմաններում է ծավալվում: Մինչդեռ Վովելը չի սահմանափակվում կենսաբանականով ու մշակութայինով և միշտ հաշվի է առնում ժողովրդագրական ու սոցիալ-տնտեսական գործոնները և համաձայն դրանց էլ վերականգնում է մահվան վերաբերյալ պատկերացումներին լծորդված գաղափարախոսութիւններին, եկեղեցական հաստատութեան և աշխարհիկ իշխանութեան պատմութիւնը: Ըստ Վովելի՝ մահվան նկատմամբ վերաբերմունքի վերլուծութիւնն պետք է կատարվի մի քանի մակարդակներում (թեկուզ միահշուտված), որտեղ «Հավաքական անգիտակցականից» ոչ պակաս կարևոր է հենց գիտակցականը⁶⁴:

Բ) Տնտեսական մարդաբանութիւն: Պատմական մարդաբանութեան այս ուղղութեան մեջ Բյուրգիերը ներառում է բոլոր այն հետազոտութիւնները, որոնք ձգտում են հասկանալ տնտեսական հարաբերութիւնների ծագումն ու կերպագիտութիւնը⁶⁵, ընդամենը՝ նկատի ունենալով այն, որ «սոցիալական և տնտեսական պատմութեան խնդիրները սերտորեն միահշուտված են մշակույթի և հավաքական հոգեբանութեան խնդիրներին»⁶⁶: Տնտեսական մարդաբանների հետազոտութեան թիրախում էր անցյալում մարդկանց պահվածքի տնտեսական դրդապատճառների և տնտեսական աճի, զարգացման ընթաց-

Միջնադարի սրտում» (deux modèles de la mort dans le cœur du moyen Âge), 2) «մահվան հաղթարշավ» (le triomphe de la mort), 3) «կյանքի հաղթարշավ մահվան նկատմամբ» (triomphe de la vie sur la mort), 4) «մահվան մեծ ծիսակատարութիւն» (le grand cérémonial de la mort), 5) «քննարկելի մահ» (la mort en question), 6) «բուրժուական մահ» (la mort bourgeoise), 7) «մեռնելն այսօր» (mourir aujourd'hui):

⁶⁴ Տե՛ս Vovelle M., *La mort et l'Occident: De 1300 à nos jours*, Paris: Gallimard, 1983:

⁶⁵ Տե՛ս Burguière A., *Anthropologie historique*, dans Burguière A. (éd), *Dictionnaire des Sciences Historiques*, Paris: P. U. F., 1986, p. 55:

⁶⁶ Гуревич А. Я., *указ. соч.*, с. 381.

քում տեխնիկական նորարարութիւններին ու տնտեսական «թուխքներին» խոչընդոտող մշակութային արգելանքների վերհանումը⁶⁷: Այս ուղղութեան կազմավորման վրա կարևոր ազդեցութիւն ունեցան Մարսել Մոսսի նվիրատվութեան տեսութիւնը (théorie du don) և Մարչալ Սալինգի ցուցադրական ծախսերի (dépense ostentatoire) հայեցակարգը, Ալեքսանդր Չայանովի և Կառլ Փոլանյիի գյուղական տնտեսութիւն (économie paysanne) հղացքը, Էդվարդ Էվանս-Փրիթչարդի Հատվածական Հասարակութիւնը (société segmentaire), Ինչպես նաև Կառլ Մարքսի ավատատիրական Համակարգի տնտեսական տեսութիւնը (économique du système féodal)⁶⁸:

Տնտեսական մարդաբանութեան հիմնարար տարրերից էր տնտեսական սովորույթը (habitude économique), համաձայն որի՝ ավանդական Հասարակութիւններում տնտեսական հարաբերութիւնների հասկացմանը չի կարելի մոտենալ դասական կապիտալիզմի չափանիշներով, քանի որ ավանդական Հասարակութիւնների մեծ մասը ձևավորվում է կամ ձևավորված է ոչ տնտեսական, անգամ հակատնտեսական տրամաբանութեամբ⁶⁹: Մանավանդ որ ավանդական Հասարակութիւններում հարստութիւնը մեծ մասամբ խորհրդանշական էր և ոչ թե նյութական: Այստեղից էլ՝ տնտեսական մարդաբանութեան կենտրոնական մեկ այլ խնդիր՝ անցյալում տնտեսական գործունեութեան ռացիոնալութեան տարբեր եղանակների հետազոտու-

⁶⁷ Տե՛ս Burguière A., *Anthropologie historique*, dans Burguière A. (éd), *op. cit.*, p. 55, Кром М. М., *указ. соч.*, с. 121:

⁶⁸ Այս տեսութիւնների հիման վրա գրված Հայտնի աշխատութիւններից են DUBY G., *Guerriers et paysans*, VII^e-XII^e siècle, Paris: Gallimard, 1973. Patlagean E., *Pauvreté économique et pauvreté sociale à Byzance, IV^e-VII^e siècle*, Paris: La Haye, 1977. Valensi L., *Fellah tunisiens. L'économie rurale et la vie des campagnes aux XVIII^e et XIX^e siècles*, Paris: La Haye, 1977. Kula W., *Théorie économique du système féodal. Pour un modèle de l'économie polonaise, trad. du polonais*, Paris: La Haye, 1977, և այլք:

⁶⁹ Տե՛ս Burguière A., *Anthropologie historique*, dans Burguière A. (éd), *Dictionnaire des Sciences Historiques*, Paris: P. U. F., 1986, p. 55:

թյունը: Ըստ տնտեսական մարդաբանություն՝ ավանդականությունը և ռացիոնալության տարրերը միշտ էլ առկա են ցանկացած տնտեսության մեջ, բայց դրանց համամասնությունն ու հարաբերակցությունը, միևնույն ժամանակ, տարբեր են տարբեր դարաշրջաններում⁷⁰:

Գ) Սոցիալական մարդաբանություն⁷¹: Պատմաբանները, շնորհիվ ժողովրդագրություն մեթոդաբանություն և հղացքների, կրկին բացահայտեցին ընտանիքի՝ իբրև կենսաբանական վերարտադրության բջջի կարևորությունը, իսկ արդեն կառուցվածքային մարդաբանություն և զարգացող սոցիալական մարդաբանություն շնորհիվ ազգակցության աշխարհը կրկին ներառվեց սոցիալական վերլուծության դաշտում⁷²: Աննալական հետազոտողները ցույց տվեցին, թե ինչպես է պետական համակարգի և սոցիալական կառույցի անկումը վերակտիվացնում «ազգակցական կապերը»⁷³: Այս առումով կրկին հատկանշական է հիմնադիր-հայրերից Մարկ Բլոկի «Ավատատիրական հասարակություն» կոթողային աշխատության «Արյունակցական

կապեր» գլխի⁷⁴ թեմատիկան, որտեղ նա ցույց տվեց, թե ինչպես են ավատատիրական համակարգում սոցիալական և իշխանական հարաբերությունները բխում մարմնական կապից: Հետազոտական ուշադրավ տիրույթ, որն իր ուրույն զարգացումն ստացավ արդեն հետագա հետազոտություններում⁷⁵, որոնց շարքում առանձնահատուկ է էմմանյուել Լը Ռուա Լադյուրիի «Մոնտայու. օկսիտանական գյուղ (1294–1324)» հանրահայտ մենագրությունը⁷⁶, որում հեղինակը ցույց է տալիս, որ օկսիտանական այդ գյուղում մարդիկ չէին պատկերացնում սոցիալական մի կապ, որը արտահայտված և օրինավորված չլիներ մարմնական կապով: Նրանք պատկանում էին ազգակցության մշտական մարմնին՝ «տանը (maison)», և ամուսնությունների կամ հովանավորչության միջոցով ձգտում էին ընդլայնել ընտանեկան կլանը⁷⁷: Այսու Լը Ռուա Լադյուրին հավատաքննական արձանագրությունների հիմամբ կարողանում է մանրամասն հետազոտել օկսիտանական Մոնտայուի գյուղացիական համակցությունը, վեր հանել գյուղացիների մտայնության, առտին կյանքի, ժամանակի և տարածության զգացողության, մանկության և մահվան, սեռականության, Աստծո և բնության վերաբերյալ պատկերացումները: Թեև Լը Ռուա Լադյուրիի աշխատությունը սոցիալական և մշակութային պատմության հավակնոտ հետազո-

⁷⁰ Տե՛ս Krom M. M., *указ. соч.*, с. 123:

⁷¹ Նկատենք, որ մինչ օրս պատմագիտության մեջ վեճ կա սոցիալական մարդաբանության (բրիտանական ուղղություն) և մշակութային մարդաբանության (ամերիկյան (ԱՄՆ) ուղղություն) նույնականության շուրջ, չնայած մարդաբանական որոշ ուղղություններ այդ երկվությունը հաղթահարելու համար նախընտրում են կիրառել «սոցիալ-մշակութային մարդաբանություն» եզրույթը: Ավիլի մանրամասն տե՛ս Dianteill E., *Anthropologie culturelle ou anthropologie sociale ? Une dispute transatlantique, L'Année sociologique*, 1 (2012), p. 93–122:

⁷² Տե՛ս Burguière A., *Anthropologie historique, dans Burguière A. (éd), Dictionnaire des Sciences Historiques*, Paris: P. U. F., 1986, p. 55:

⁷³ Տե՛ս Duby G., *La société aux XI^e et XII^e siècles dans la région Mâconnaise*, Paris: A. Colin, 1953 (nouv. éd., Paris, 1971), Toubert P., *Les structures du Latium médiéval. Le Latium méridional et la Sabine du IX^e à la fin du XII^e siècle*, 2 vol., Rome, École française, 1973, Roy Ladurie E. Le, *Les paysans de Languedoc*, Paris: S.E.V.P.E.N., 1966, Erlih D. et Klapisch Chr., *Les Toscans et leurs familles. Le catasto florentin de 1427*, Paris: Presses de la Fondation Nationale des Sciences Politiques/École des Hautes Études en Sciences Sociales, 1978, և այլն:

⁷⁴ Տե՛ս Bloch M., *op. cit.*, p. 183:

⁷⁵ Տե՛ս Burguière A., *Bretons de Plozevet*, Paris: Flammarion, 1975, Zonabend F., *La Mémoire longue. Temps et histoires au village*, Paris: P. U. F., 1980, Claverie E., Lamaison P., *L'impossible mariage: Violence et parenté en Gévaudan: XVII^e, XVIII^e et XIX^e siècles*, Paris: Hachette, 1982, Collomb A., *La maison du père: famille et village en Haute-Provence aux XVII^e et XVIII^e siècles*, Paris: Presses Universitaires de France, 1983, Segalen M., *Quinze générations de Bas-Bretons. Parenté et société dans le pays bigouden Sud, 1720–1980*, Paris: P. U. F., 1985, և այլն:

⁷⁶ Տե՛ս Roy Ladurie E. Le, *Montaillou, village occitan de 1294 à 1324*, Paris: Galimard, 1975:

⁷⁷ Տե՛ս Burguière A., *Anthropologie historique, dans Burguière A. (éd), Dictionnaire des Sciences Historiques*, Paris: P. U. F., 1986, p. 56:

տուրթյուն էր, դրա ինքնատիպությունը, այդուամենայնիվ, առաջադրված հարցերով էլ էր պայմանավորված, այլ գյուղացիների խոսքերի (հարցաքննությունների) հիման վրա գյուղի աշխարհ-պատկերի վերհանումով, այն է՝ ոչ միայն տվյալ գյուղի, այլև ավելի մեծ հասարակության՝ գյուղական բնակչության պատմությունը⁷⁸: Չնայած իր որոշ թերություններին⁷⁹, Ջեֆրի Բոուլմանի դիպուկ ձևակերպմամբ՝ «Մոնտայուն գուցե լիակատար հրաժարում էր ժամանակակից պատմագիտության որոշ ուղենշային սկզբունքներից, բայց առնվազն ազդեցիկ հիշեցում էր, որ մինչարդիական գյուղական աշխարհի պատմաբանները (*historians of the premodern rural world*) կարող էին անել ավելին, քան Բեզիերի (*Béziers*) տասանորդի համեմատումն է Բովիի (*Beauvais*) տասանորդի հետ»⁸⁰: Այսպիսով սոցիալական մարդաբանությունը պատմական մարդաբանության հնարավորությունների ուղազրավ տարբերակներից մեկն էր՝ «պատմական երևակայություն» բացահայտվող:

Դ) Մշակութային և քաղաքական մարդաբանություն: Այս ուղղությունը, որն ի հայտ եկավ մանավանդ իշխանության և հպատակության փոխհարաբերությունների մարդաբանականացման արդյունքում, փորձում էր պատմությունը «նվաճել ներքևից»՝ մշակութային կյանքի «առավել անվտանգ», «նվազ ձևակերպված (*moins formulées*)» արտահայտությունների միջոցով⁸¹: Կրկին

⁷⁸ Տե՛ս *Burke P.*, *op. cit.*, p. 82:

⁷⁹ Գրքի քննադատության մասին տե՛ս *Boyle L. E.*, *Montaillou Revisited: Mentalité and Methodologie*, in *Raftis J. A.* (dir.), *Pathways to Medieval Peasants*, Toronto, Pontifical Institute of Medieval Studies (Papers in medieval studies – 2), Pontifical Institute of Medieval Studies, 1981, p. 119–140:

⁸⁰ Տե՛ս *Bowman Jeffrey A.*, *Emmanuel Le Roy Ladurie*, in *Daileader Ph.*, *Whalen Ph.* (eds.), *French Historians 1900–2000: New Historical Writing in Twentieth-Century France*, Chichester, 2010, p. 402:

⁸¹ Տե՛ս *Burguière A.*, *op. cit.*, p. 56, *Кром М. М.*, *указ. соч.*, с. 126:

առաջին պլան է մղվում հետաքրքրությունն առ կոնկրետ (քաղաքական) իրադարձություններն ու անցքերը: Սկսում են հետազոտել դիպվածների պատմությունը, որոնցից յուրաքանչյուրում հետազոտողները ձգտում էին առանձնացնել ընդհանրականը: Անշուշտ, խոսքը հին քաղաքական պատմության վերադարձի մասին է: Ժակ Լը Գոֆֆն արդեն այդպիսի հարցադրում արել էր. հնարավո՞ր է արդյոք արդի պատմագիտության վերադարձն առ քաղաքական պատմությունը, և եթե հնարավոր է, ապա ի՞նչ կերպ: Ըստ նրա՝ քաղաքական պատմությունը հնարավոր է որպես «քաղաքական մարդաբանություն», որպես պատմություն, որը բացահայտում է կոնկրետ իրադարձությունների իմաստային խորքերը՝ շնորհիվ «խորհրդանիշների, ծեսերի, իշխանական արարողակարգերի համակողմանի հետազոտության»⁸²: Այստեղ ուղազրավ է այն, որ, ինչպես իր մահվանից առաջ Մարկ Բլոկն էր նշել, «կարելի էր շատ բան ասել «քաղաքականություն» բառի շուրջ: Բայց ինչո՞ւ այն անխուսափելիորեն վերածել մակերեսայնության հոմանիշի: Ընդհակառակը՝ մի՞թե պատմությունը, միանգամայն օրինականորեն կենտրոնանալով կառավարման միջոցների էվոլյուցիայի և կառավարելի խմբերի ճակատագրի վրա, չպետք է փորձի (որպեսզի ավելի լիարժեքորեն համապատասխանի իր առաքելությունը) ներսից հասկանալ փաստերը, որոնք ընտրել է որպես իր դիտարկումների առարկաներ»⁸³: Իսկ քաղաքական պատմության հանդեպ պատմագիտության

⁸² Տե՛ս *Гуревич А. Я.*, «Новая историческая наука» во Франции: Достижения и трудности (критические заметки медиевиста), в *История и историки – 1981*, М., 1985, с. 121:

⁸³ *Guenée B.*, *L'histoire de l'État en France à la fin du Moyen Age vue par les historiens français depuis cent ans.*, *RH*, T. 232, 2 (1964), p. 345. Տե՛ս նաև *Ле Гофф Ж.*, Является ли все же политическая история становым хребтом истории?, *THESIS. Теория и история экономических и социальных институтов и систем*, вып. 4., 2 (1994), с. 182:

հետաքրքրությունն անդրադառնալով՝ ժորժ Դյուբին բացատրում է, որ դա բոլորովին էլ չի նշանակում վերադարձ առ այն, ինչ եղել է Հանդեսի հիմնադիրներից առաջ. «Այսօր Ֆրանսիական պատմաբանները վերադառնում են իրադարձությունը՝ Հարստացած իրենց կեսդարյա փորձառությունը»⁸⁴: Քաղաքական պատմության նկատմամբ հետաքրքրություն մեծացումը պայմանավորված էր նաև «իրադարձությունները պատմելու նկատմամբ հետաքրքրությունը»⁸⁵: Բանն այն է, որ 1960-ական թվականներին Եվրոպայի հասարակական կյանքում իշխանական կառույցների դերն անհամեմատ ակտիվացել էր⁸⁶:

Այս համատեքստում ուշադրավ էր ժորժ Դյուբիի գիրքը՝ «Բուվինյան կիրակին», որը լույս տեսավ 1973 թվականին⁸⁷: Ինչպես հեղինակն է նշում, գիրքը նվիրված է «Ֆրանսիան ձևավորած օրերին (*jours qui ont fait la France*)»՝ մասնավորապես 1214 թ. հուլիսի 27-ի Բուվինյան վճռորոշ ճակատամարտին: Իրադարձություն, որի միջոցով հեղինակը հնարավոր է համարում ներկայացնել ինչպես պատերազմի սոցիոլոգիան, այդպես և ավատատիրական հասարակության ամենատարբեր կողմերը՝ ասպետական էթիկայից մինչև հավաքական հիշողություն: Մյուս կողմից՝ Դյուբին քննարկման թեմա է դարձնում Բուվինյան ճակատամարտի վերաբերյալ առավել ուշ շրջանի պատկերացումները՝ ղիտարկելով դրանք իբրև «առասպելներ», որոնք ավելի շուտ վկայում են պատմիչների, քան թե նրանց կողմից նկարագրվող ճակատամարտի մասին: Այսու՝ գրքում իրադարձային պատմությունն

⁸⁴ Дюби Ж., Развитие исторических исследований во Франции после 1950 года, *Одиссей. Человек в истории* – 1991, М., 1991, с. 55.

⁸⁵ Տե՛ս Burke P., *op. cit.*, p. 89:

⁸⁶ Այս հիմնախնդիրներին են նվիրված Միշել Ֆուկոյի գրեթե բոլոր աշխատությունները, որոնք լայն ճանաչման են արժանանում փարիզյան գիտական շրջանակներում, այնուհետև աշխարհում:

⁸⁷ Տե՛ս Duby G., *Le Dimanche de Bouvines: 27 juillet 1214*, Paris: Gallimard, 1973:

ամբողջովին միաձուլվում է աշխարհատեսության պատմությանը՝ միևնույն ժամանակ վերլուծության առարկան պահելով կիզակետում՝ իբրև պատմական ամբողջ⁸⁸: Նման մոտեցման շնորհիվ ավանդական քաղաքական պատմությունը վերածվում էր քաղաքական և մշակութային մարդաբանության՝ ի հայտ բերելով համադրությունների և հետազոտության նոր հարթակներ ու «խոստումնալից ճանապարհներ»⁸⁹: Ինչպես Լը Գոֆֆն է նկատում, «փոխաբերության լեզվով ասած՝ մեր դարաշրջանը դադարել է անատոմիայի դարաշրջան լինելուց, այն դարձել է ատոմի դարաշրջան, և քաղաքական պատմությունն այլևս «Ստանկովյան լեռնաշղթա» չէ, այլ պատմության «առանցք»⁹⁰: Ըստ այսմ՝ քաղաքական պատմությունից պահանջն այն էր, որ հետազոտողներն այդուհետ քաղաքական իրողությունները խնդրարկեն իբրև սոցիալական և մշակութային երևույթներ, որի արդյունքում անգամ կենսազրական ժանրի պատմագիտություն տիրույթի ընդլայնումն աննախադեպ կլինի:

Ինչպես ցույց տվեց պատմության հետագա ընթացքը, սուբյեկտի կամ մարդու անտեսումն իբրև պատմագիտական հետազոտության խնդիր չգիտարկելն այդքան էլ հեռանկարային չէր: Չնայած դրան՝ պատմական մարդաբանությունը վստահաբար կարող ենք գիտարկել իբրև պատմագիտական հեռանկարի նոր հնարավորություն: Այն է՝ պատմությունը, ինչպիսին էլ այն ընդունենք, ինչպիսին էլ այն ըմբռնենք, գրելու կամ մեկնաբանելու համար ինչ միջոցների էլ դիմենք, ինչ մեթոդաբանություն էլ որդեգրենք, չի կարող անմասն մնալ կամ շրջանցել այն «վարկածը», որ

⁸⁸ Տե՛ս Бессмертный Ю., Школа «Анналов»: весна 1989 г., *Европейский альманах. История. Традиции. Культура*, М., 1991, с. 145:

⁸⁹ Տե՛ս Bernard G., Georges Duby, *Le dimanche de Bouvines. 27 juillet 1214, Annales. ESC*, 6 (1974), p. 1526:

⁹⁰ Le Goff J., *L'histoire politique est-elle toujours l'épine dorsale de l'histoire? dans Le Goff J., L'imaginaire médiéval*, Paris: Gallimard, 1985, p. 349.

նրա հիմնական ազդակը մնում են մարդիկ, որոնք գործում և փոխներգործում են իրենց գիտակցականի և անգիտակցականի ողջ ծավալով և ինքնին պատմութայն «կտավը» հյուսում որպես այդպիսին:

Դ. Պատմություն և Հիշողություն. Հիշողութայն պատմություն

Պատմագիտութայն ներքին էվոլյուցիայի և մտայնությունների պատմութայն բազմակերպութայն շնորհիվ արդեն 1980-ական թվականներին ուրվագծվեց Հիշողութայն պատմութայն թեման: Մանավանդ երբ պատմագիտութայն մեջ, աստիճանաբար ստվերվելով, գրեթե մերժվել էր ազգային պատմութայն և քաղաքական պատմութայն ավանդական Հայեցակարգը⁹¹: Սկիզբ առավ «Փրանսիական ազգային վեպի (roman national français)» ճգնաժամը, որին Հավելվեց մեծ պատումների (grand récits) քայքայումը, երբ քննադատությունը վեր Հանեց դրանց գաղափարախոսական բնույթը⁹²: Պատմագիտութայն դիրքերն ուժգին սասանվել էին:

Ճգնաժամը Հաղթահարելու լավագույն միջոցներից մեկը դարձավ «բանավոր պատմութայնը» պատմութայնը «ներքևից նայելու (vue d'en bas)» Հայեցակարգին դիմելը⁹³: Այսպիսով՝ դեռ 1960-ական թվականներին նախ Բրիտանիայում և Իտալիայում, իսկ ապա Գերմանիայում թափ

⁹¹ Տե՛ս Delacroix Ch., Dosse F., Garcia P., *op. cit.*, p. 307–308:

⁹² Տե՛ս Lyotard J.-F., *La Condition postmoderne: Rapport sur le savoir*, Paris: Minuit, 1979 (Հայերեն թարգմանությունը՝ Լիոտար Ժ.-Ֆ., *Հետադիական կացություն. Զեկույց գիտելիքի մասին* /Փրանս. թարգմ. Մ. Մակարյան, առաջարան և հիմնական հասկացությունների բառարան՝ Հ. Բայադյան, ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Ակունակ արվեստ, 2022):

⁹³ Տե՛ս Joutard Ph., *Ces voix qui nous viennent du passé*, Paris: Hachette, 1983:

առած բանավոր պատմությունը զարգանալով արդեն 1970-ական թվականներին պահանջում էր այլընտրանքային մի պատմություն, որը կկարևորեր ներքևից նայելու մոտեցումը, մոռացված պատմությունը⁹⁴: Հիշողութայն մասին քննարկումները նոր թափ ստացան, և սկիզբ առավ անցյալի Հավաքական Հիշողությունների միջոցով պատմութայնը մարտահրավեր նետելու մի գործընթաց, որն անտեսված կամ չարաչափված էր գերիշխող պատմութայն կողմից, և որից չէր կարող անմասն մնալ Փրանսիական պատմագիտությունը⁹⁵: Գործընթաց, որն արդեն պետք է Հաշվի նստեր միմյանց Հետ մրցակցող և հակասական տեսակետների ու ընկալումների Հետ ներառելով հետազոտություններում և տրամասություններում առկա համադրման և հակադրման միտումները⁹⁶:

Այսպիսով՝ Հիշողութայն խնդիրը Հասարակական կյանքի և գիտական հետազոտությունների կարևորագույն խնդիրներից մեկը դարձավ, իսկ շուտով արդեն պատմագիտական հետազոտություններում և տրամասություններում առանցքային նշանակություն ձեռք բերեցին պատմական քաղաքականություն (politique historique), անցյալի քաղաքականություն (politiques du passé), ինքնություն

⁹⁴ Տե՛ս Joutard Ph., La collecte des témoignages oraux: retour sur quarante ans de pratique en France, *La Gazette des archives*, n°211, 2008–3, p. 10:

⁹⁵ Նկատենք, որ Հիշողությունը՝ իբրև մարդկային իմացութայն սկզբնաղբյուր, Հայտնի էր դեռ Հին Հունական առասպելաբանութայն մեջ՝ Մնեմոսինե անվամբ (մուսանների մայրը, գիտությունների և արվեստների հովանավորը): Պատոնը և Վերածննդի դարաշրջանի նոր-պլատոնականներն այն սահմանում էին իբրև արքետիպերի մասին գիտելիք, որը հիմնված է մարդկային երևակայութայն և անդրանցական (transcendental) տիեզերքի (կոսմոս) իդեալական ձևերի Համակերպութայն վրա (տե՛ս Yates F., *Selected Works. Volume III, The Art of Memory*, London and New York: Routledge, 1999, p. 36–37):

⁹⁶ Տե՛ս Հովհաննիսյան Ս., Պատմություն և Հիշողություն. Ցեղասպանությունների աստիճանակարգման հիմնախնդիրն ըստ Պիեռ Նոուայի, «Վէճ» Համահայկական Հանդես, 1 (2013), էջ 12–33:

քաղաքականություն (politique de l'identité) և Հիշողություն քաղաքականություն (politique de la mémoire) հղացքները⁹⁷: Ընդամին՝ հետարդիական (postmoderne) պատմագիտության համապատկերում Հիշողություն հղացքը ձեռք բերեց առանցքային նշանակություն. մասնավորապես Հիշողությունն արդեն գնահատվում էր իբրև «ընտրողական և մեկնողական գործընթաց» և ոչ թե պարզապես «տեղեկության պասիվ պահպանում»⁹⁸: Այլ կերպ ասած՝ պատմության առարկան այդուհետ ոչ թե պարզապես անցյալի իրադարձություններն են՝ իբրև այդպիսիք, այլ դրանց մասին Հիշողությունը⁹⁹: Հիշողություն հղացքը կիրառվում է

⁹⁷ Տե՛ս Halbwachs M., *Les Cadres Sociaux de la Mémoire*, Paris: Albin Michel, 1994, Halbwachs M., *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, Mémoire et Histoire: la Résistance, sous la direction de Jean-Marie Guillon et Pierre Laborie, Editions Privat, 1995, Baddeley A., *La mémoire humaine*, Presses Universitaires de Grenoble, Grenoble, 1993, Changeux J.-P., *L'Homme neuronal*, Paris: Fayard, 1985, Ricœur, *La Mémoire, l'Histoire, l'Oubli*, Paris: Le Seuil, 2000, Le Goff J., *Histoire et Mémoire*, Paris: Gallimard, 1988, Hartog F., Revel J., (dir.) *Les usages politiques du passé*, Paris: Éditions de l'EHESS, «Enquêtes», 2001, Andrieu Cl., Lavabre M.-Cl., Tartakowsky D., (dir.) *Usages politiques du passé dans la France contemporaine*, Aix-en-Provence: Publications de l'Université de Provence, 2006, Hutton P., *History as an Art of Memory*, Hanover and London: University Press of New England, 1993, Yates F., *The Art of Memory*, Chicago: University of Chicago Press, 1966, Tilmans K., Vree F. van, Winter J., (eds.) *Performing the Past: Memory, History, and Identity in Modern Europe*, Amsterdam: Amsterdam University Press, 2010, Nora P. (dir.), *Les Lieux de mémoire*, Gallimard (Bibliothèque illustrée des histoires), Paris: 3 tomes: t. 1, *La République* (1 vol., 1984), t. 2, *La Nation* (2 vol., 1986), t. 3, *Les France* (3 vol., 1992), Hodgkin K., Radstone S., (Eds.) *Contested Pasts: The Politics of Memory (Memory and Narrative)*, London and New York: Routledge, 2003, Gathercole P., Lowenthal D., (eds.) *The politics of the past (One World Archaeology)*, London and New York: Routledge, 2004, Копосов Н., *Память строгого режима: История и политика в России*, М., Новое литературное обозрение, 2011, և այլն:

⁹⁸ Տե՛ս Foster J., *Memory: A Very Short Introduction*, Oxford University Press, 2009, p. 6:

⁹⁹ Նկատենք, որ Հիշողության թեմայի ոչ դասական քննարկման հիմքերը դրել էր Ֆրիդրիխ Նիցշեն իր «Կյանքի համար պատմության օգուտի և վնասի մասին (1874)» հիմնարար ստեղծագործության մեջ,

իբրև «մարդկանց համատեղ ապրված ընդհանուր փորձառություն», իսկ պատմական Հիշողությունն էլ իր հերթին՝ հավաքական Հիշողություն¹⁰⁰:

Ուշագրավ է, սակայն, որ 1974 թվականին Ժակ Լը Գոֆֆի և Պիեռ Նորայի խմբագրությունամբ լույս տեսած «Կերտել պատմություն» եռահատոր ժողովածուի մեջ¹⁰¹, ինչպես նկատել է Ֆրանսուա Արտոգը¹⁰², Հիշողության պատմությունը տեղ էջր գտել հետազոտական նոր մոտեցումների կամ մեթոդների թվում: Միայն 1978 թվականին է, որ Պիեռ Նորան «Նոր պատմական գիտություն» գրքում կղեկավարի «Հավաքական Հիշողություն» վերնագրով հոդվածը¹⁰³:

Պատմության և Հիշողության նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունն ուղեկցվում էր նաև հետահայաց գնահատումով, այն է՝ կրկին հետազոտողների ուշադրության կիզակետում է հայտնվում Մորիս Ալբրակասի հայեցա-

որտեղ «Հիշողություն» և «ճանաչողություն» հղացքների լծորդմամբ կարևորեց «մոռացում» հղացքը, որը դադարում է ընկալվել միմիայն գիտելիքների մաքրման դիտանկյունից: Այն է՝ Նիցշեն մոռացումը ներկայացրեց իբրև պաշար, նորի ընկալման պայման: Տե՛ս Հովհաննիսյան Ս., Հիշողության հիմնախնդիրը Նիցշեի պատմագիտության ծիրում, Ֆրիդրիխ Նիցշե, Երկեր 5 հատորով, հատոր I, Ե., Անտարես, 2018, էջ 556–567:

¹⁰⁰ Հարցին այլ կողմից է մոտեցել Լյուսիեն Լեի-Բրյուլը: Հրատարակելով վերացական վերլուծությունից՝ նա հակադրել է «տրամաբանական Հարաբերություններ» և «միստիկական (mystique) մասնակցություն» հղացքները: Ըստ այդմ՝ անցյալի իրադարձությունների մասին Հիշողության փոխարեն Լեի-Բրյուլը նախընտրում է կիրառել «հավաքական պատկերացումներ» (représentations collectives) և «պրիմիտիվ մտայնություն» (mentalité primitive) հղացքները: Ավելի մանրամասն տե՛ս Lévy-Bruhl L., *Les fonctions mentales dans les sociétés inférieures*, Paris: Alcan, 1910, նույնի՝ *La mentalité primitive*, Paris: Alcan, 1922, և այլն:

¹⁰¹ Տե՛ս Le Goff J., Nora P. (dir.), *Faire de l'histoire*, 3 vol. (1. Nouveaux problèmes, 2. Nouvelles approches, 3. Nouveaux objets), Gallimard, 1974:

¹⁰² Տե՛ս Hartog F., Temps et histoire. «Comment écrire l'histoire de France? *Annales. HSS*, 6 (1995), p. 1227–1228:

¹⁰³ Տե՛ս Nora P., *La mémoire collective*, dans Le Goff J., Chartier R., Revel J. (dir.), *op. cit.*, p. 398–401:

կարգը: Եվ այդ ամենը՝ ոչ պատահականորեն, քանզի Ալբր-վական առաջիններից մեկն էր, որ հետազոտության խնդիր դարձրեց հավաքական հիշողությունը՝ դառնալով նաև «պատմական հիշողության» տեսության հիմնադիրը¹⁰⁴:

Այսպիսով՝ պատմության մեթոդաբանության և պատմական հիշողության մեթոդաբանության ներհակության շուրջ գոյացած լարումը մինչ 1970-ական թվականները ծավալվեց մի քանի հղացքների շուրջ: Դրանցից հատկապես առանձնանում է Մորիս Ալբրվակսի մոտեցումը, որի համատեքստում պատմությունն ու հիշողությունը հանդես են գալիս ուղղակի հակադրությամբ, երբ այդ հակադրությունը դեռ էջը հասցված խիստ տարանջատման: Ալբրվակսի տեսության առանցքային դրույթը, որն առկա է նրա բոլոր աշխատություններում, հիշողության սոցիալական բնույթն է: Այլ կերպ ասած՝ մարդկության ողջ հիշողությունը սոցիալական է, և անհատական հիշողության գործառուժն անհնար է առանց հավաքական հիշողության¹⁰⁵: Իր այս նոր մոտեցմամբ Ալբրվակսը փոխում էր հասարակության մասին գոյություն ունեցող պատկերացումները և թույլ էր տալիս միավորել խումբն (groupe) ու անհատին (individu)՝ տեղ ազատելով հավաքական ժամանակի (temps collectif) համար: Այսու՝ Ալբրվակսն ի սկզբանե գիտակցում էր «հավաքական հիշողության» թյուրըմբռնման հնարավորությունը և, որպեսզի կանխի հավանական թյուրըմբռնումը, «հավաքական հիշողություն» հղացքը լծորդեց մեկ այլ՝ «սոցիալական շրջանակ» հղացքին: Ըստ Ալբրվակսի՝ «հիշողությունը հնարավոր է այն շրջանակներից դուրս, որոնց օգնությամբ հասարակության մեջ ապրող մարդիկ ամրագրում և վերականգնում են իրենց հիշողությունները»¹⁰⁶:

¹⁰⁴ Տե՛ս Halbwachs M., *Les Cadres Sociaux de la Mémoire*, Paris: Félix Alcan, 1925, Rééd. Paris: Albin Michel, 1994, Halbwachs M., *La Mémoire collective*, 1950, Rééd. Paris: P. U. F., 1968:

¹⁰⁵ Տե՛ս Halbwachs M., *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 37:

¹⁰⁶ Halbwachs M., *Les Cadres sociaux de la mémoire*, Paris: Albin Michel, 1994, p. 79.

Ընդ որում՝ հավաքական հիշողությունը կառուցվում է անհատական հիշողության մեջ և չի կարող գոյություն ունենալ նրանից դուրս: Միևնույն ժամանակ պատմական հիշողությունը չի միախառնվում անհատական հիշողությանը¹⁰⁷: Այստեղից էլ բխում է Ալբրվակսի մյուս կարևոր տեսական դիրքորոշումը հիշողություն-պատմություն խնդրի շուրջ: Նա առաջադրում է հիշողության և պատմության սահմանային հակադրության՝ կենդանի հիշողությունը և պատմական հասկացությունների շրջանակը հակադրելու մոտեցումը: Նման հակադրմամբ Ալբրվակսն ընդգծում էր, որ իրադարձության մասին հասարակության կենդանի հիշողությունը տարբերվում է նույն այդ իրադարձության մասին «պատմական գիտելիքից». առաջին դեպքում իրադարձությունը պահպանվում է իբրև խմբի ինքնության բաղադրիչ, իսկ երկրորդ դեպքում՝ ոչ: Այստեղից էլ հետևյալ պնդումը. «Մեր հիշողությունը հենվում է ոչ թե սովորած (histoire apprise), այլ ապրված (histoire vécue) պատմության վրա»¹⁰⁸:

Ըստ այսմ՝ Ալբրվակսի դիրքորոշումը հավաքական հիշողության և պատմական գիտակցության փոխհարաբերությունների մասին պարունակում է մի շատ էական նրբերանգ: Ըստ նրա՝ ակնհայտ է, «որ հավաքական հիշողությունը չի համընկնում պատմության հետ, և «պատմական հիշողություն» արտահայտությունը շատ անհաջող է ընտրված, քանի որ այն կապակցում է երկու եզրույթներ, որոնք շատ հարաբերություններում հակադրվում են ավելի քան մեկ կետում»¹⁰⁹: Ավելի ստույգ՝ «պատմությունը սովորաբար սկսվում է այն կետում, որտեղ ավարտվում է

¹⁰⁷ Տե՛ս Halbwachs M., *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 36: Տե՛ս նաև Llobera J. R., Halbwachs, Nora and 'history' versus 'collective memory', *Durkheimian Studies /Études Durkheimiennes*, 1995, New Series, Vol. 1 (1995), p. 37, Wachtel N., Introduction, *History and Anthropology*, 2 (1986), p. 211:

¹⁰⁸ *Ibid.*, p. 43.

¹⁰⁹ *Ibid.*, p. 68.

ավանդույթները, այն պահին, երբ մարում կամ քայքայվում է սոցիալական հիշողությունը»¹¹⁰: Այլ կերպ ասած հավաքական հիշողությունը ստեղծում է անցյալի և ներկայի կապը, այն դեպքում, երբ պատմությունը քանդում է տվյալ ժառանգականությունը: Եթե հիշողությունը հաստատում է անցյալի և ներկայի նմանությունը, ապա պատմությունը, ընդհակառակը, հաստատում է անցյալի և ներկայի տարբերությունը: Ըստ այդմ՝ պատմությունը պատկերանում է իբրև փոփոխությունների շարան, և «քանի որ պատմության համար ամեն ինչ կապակցված է, այդ փոխակերպումներից յուրաքանչյուրը պետք է հակազդի սոցիալական մարմնի մյուս մասերին և նախապատրաստի, այստեղ կամ այնտեղ, նոր փոխակերպումները»: Իսկ հավաքական հիշողությունը պատկերանում է իբրև նմանությունների շարան, և «քանի որ խումբը միշտ նույնն է, անհրաժեշտ է, որ փոփոխությունը լինի ակնհայտ. փոփոխությունները, այն է՝ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել խմբի մեջ, լուծվում են նմանությունների մեջ այնպես, կարծես դրանց դերը ինքնության բովանդակության տարբեր դիտանկյունների ինքնին խմբի տարբեր արմատական գծերի զարգացումն է»¹¹¹:

Ընդհանուր առմամբ, ինչպես նկատում է և Պոլ Ռիկյորը, Ալբրակսն ընդգծում է պատմության երկու տարբերակիչ առանձնահատկություններ: Առաջին՝ «կենդանի հիշողության շարունակականությունը (*continuité*)» հակադրվում է պատմական գիտակցությանը հատուկ՝ «պարբերականացման աշխատանքով եզրափակված ընդհատությունը (*discontinuité*)»: Ըստ այսմ՝ պատմության կիզակետում միայն տարբերություններն ու հակադրություններն են, իսկ հավաքական հիշողության կիզակետում՝ նոր սոցիալական հաստատությունների ամրապնդման խնդիրը: Երկրորդ՝ գոյություն ունեն բազ-

¹¹⁰ Ibid., p. 69.

¹¹¹ Ibid., p. 78.

մաթիվ հավաքական հիշողություններ, այն դեպքում, երբ «պատմությունը մեկն է»¹¹²: Եվ քանի որ Ալբրակսի տեսության մեջ ավելի ակտիվ էր տարբերակման հատկանիշը, ուստի «պատմություն» և «հիշողություն» հղացքները ներքուստ հատկորոշվում և հակադրվում են միմյանց՝ աչքաթող անելով փոխառնչությունների խնդիրը: Փիթր Հաթթոնի դիպուկ բնորոշմամբ՝ քանի որ Ալբրակսը հավատում էր, «որ պատմությունն սկսվում է այնտեղ, որտեղ ավարտվում է կենդանի հիշողությունը», երբեք «բավականաչափ չի խորհել դրանց փոխկապակցվածության շուրջ»¹¹³: Այսպիսով՝ «պատմության» և «հիշողության» արժեքային տեսությունը կարելի է ներկայացնել իբրև հիշողության և պատմական ոլորտների տարանջատ իրականություն, որը բնորոշվում է իրական լինելու հատկանիշի պակաս խտությամբ:

Հարկավ, սա չի նշանակում, որ պատմագիտության մեջ պատմության և հիշողության ներհակության բացարձակացումն անվերապահորեն ընդունվեց: Բնավ, կարելի է հիշատակել Մարկ Բլոկի՝ դեռ 1925 թվականին հրատարակած «Հավաքական հիշողություն, ավանդություն և սովորություն: Խոսք նորերս լույս տեսած գրքի մասին»¹¹⁴ գրախոսականը, որը նվիրված էր Մորիս Ալբրակսի «Հիշողության սոցիալական շրջանակները» գրքին: Գրախոսականում Բլոկը քննարկում էր, թե որքան զժվար է մի կողմից՝ հավաքական հիշողության անվան ներքո մտածել «միևնույն իրողությունների» մասին, ինչ անհատական հիշողության անվան ներքո, մյուս կողմից՝ մտածել «կեղծ հիշողությունների» և «հավաքական հիշողության սխալների» մասին: Եթե Ալբրակսը փորձում էր

¹¹² Stéa Ricœur P., *La Mémoire, l'Histoire, l'Oubli*, Paris: Le Seuil, 2000, p. 516:

¹¹³ Hutton P., *op. cit.*, p. 77.

¹¹⁴ Bloch M., *Mémoire collective, tradition et coutume. A propos d'un livre récent*, RSH, Tome XL (nouvelle série, Tome XIV), 1925, p. 73–83.

ապացուցել, որ «Հավաքական հիշողությունը փոխաբերությունն է», ապա Բլոխն արդարացիորեն հարց էր բարձրացնում, թե կարո՞ղ ենք խմբի, տվյալ դեպքում՝ հասարակության կամ սոցիալական խմբի նկատմամբ կիրառել անհատի հատկանիշներ, որը մտածում է և հիշում¹¹⁵: Քննադատելով Ալբրակսի «Հավաքական հիշողության» հայեցակարգի մարդակերպությունը՝ Բլոխը պնդում էր, որ բանն այն է, որ խմբի (խմբային) հիշողությունը նման է անհատականին, այլ որ բոլոր հուշային գործընթացները պարզապես «հաղորդակցական փաստեր» են¹¹⁶: Թերևս մոտեցման այս հակադրության հիմքում բանական և առասպելաբանական մտածողությունների հակադրությունն է, որտեղ հավաքական հիշողությունը ձևավորվում է առասպելաբանական մտքի հիմամբ¹¹⁷:

Անկախ հավաքական հիշողության նկատմամբ ցուցաբերված քննադատական, զուսպ, զգուշավոր կամ ջերմ վերաբերմունքից՝ Ալբրակսի տեսությունը դարձավ ելակետային հասկացություն, հասարակության կենսակերպն ու շարժունությունն ընդգրկող հղացք¹¹⁸, որին արդեն կհաջորդի մյուս՝ ոչ պակաս կարևոր գիրքավորումը՝ Հան-ձին Աննալների դպրոցի Երրորդ սերնդի ընդհանրապես և Պիեռ Նորայի մասնավորապես, որի տեսության համատեքստում պատմությունն ու հիշողությունը հանդես էին գալիս արդեն անվերապահ հակադրությամբ:

¹¹⁵ **Sté Bloch M.**, *Mémoire collective, tradition et coutume. A propos d'un livre récent*, dans **Bloch M.**, *Histoire et Historiens*, Paris: Armand Colin, 1995, p. 195:

¹¹⁶ **Sté Bloch M.**, *Mémoire collective, tradition et coutume. A propos d'un livre récent*, p. 196:

¹¹⁷ Ավիլի մանրամասն տես **Степанян А.**, *Развитие исторической мысли в Древней Армении: миф, рационализм, историописание*, Ереван: Издательство АН Армении, 1991, с. 7–17:

¹¹⁸ **Sté Halbwachs M.**, *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 36, **Hartog F.**, *Histoire et mémoire*, dans **Garavaglia J. C.**, **Poloni-Simard J.**, **Rivière G.** (dir.), *Au miroir de l'anthropologie historique: mélanges offerts à Nathan Wachtel*, p. 107–116:

Այսպիսով՝ արդեն 1980-ական թվականների հետազոտություններում ավելի ու ավելի են ընդգծվում պատմության և հիշողության տարբերություններն իբրև խիստ հակադրություններ¹¹⁹: Դրանց սոսկ սահմանազատումը կարող էր վերացական լինել: Ուստի պատահական է, որ Ֆրանսիացի պատմաբան և սոցիոլոգ Պիեռ Նորան, Ալբրակսի հետքերով սահմանազատելով պատմությունն ու հիշողությունը, շեշտում է դրանց «արմատական հակադրության» փաստը¹²⁰: Այն է՝ ընդգծում է դրանց բախման իրողությունը¹²¹: Հղացականացնելով պատմություն/հիշողություն խնդիրը՝ նա նորազույն պատմությունը գետնից է բանավոր ավանդույթի և հետարդիական պատմագրության միջև¹²²: Ըստ այդմ՝ Պիեռ Նորան պնդում է, որ նորազույն պատմությունը փորձել է տիրանալ հավաքական հիշողությանը: Արդյունքում փոխվել է ոչ միայն հիշողությունը, այլև պատմությունը: Հետազոտական այս ընթացքն «արմատական վերամշակման» է ենթարկում Ալբրակսի տեսությունը և առաջադրում նորը¹²³:

¹¹⁹ Նկատենք, որ այս ամենի հիմքը Արիստոտելի «Պոետիկան» է, ուր պոեզիան (ընդհանրականը) հակադրվում է պատմությանը (եզակիին): **Sté Aristotle**, *The Poetics* /Translated by J. Sachs/, Newburyport, MA: Focus Publishing/R. Pullins Co, 2006, p. 32: Ըստ Արիստոտելի՝ հիշողությունը գոյություն ունի, երբ «ժամանակն է հոսում», և ունի զարգացման ուշագրավ շղթա՝ զգայություն-մտապատկեր-անհատական վերապրում-հավաքական հիշողություն: **Sté Рикёр П.**, *Время и рассказ, т. 1, Интрига и исторический рассказ* /Пер. Т. В. Славко, Москва, Санкт-Петербург: Культурная инициатива: Унивсрситетская книга, 2000, с. 36–43:

¹²⁰ **Sté Halbwachs M.**, *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 36, **Nora P.**, *Entre la mémoire et l'histoire: Les Lieux de Mémoire*, dans **Nora P.** (dir.), *Les lieux de mémoire. La République*, Paris: Gallimard, 1984, p. XVII:

¹²¹ **Sté Kreyling M.**, *The South that Wasn't There: Postsouthern Memory and History*, Baton Rouge: Louisiana State University Press, 2010, p. 19:

¹²² **Sté Halbwachs M.**, *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 36, **Hutton P.**, *op. cit.*, p. 150:

¹²³ **Sté Halbwachs M.**, *op. cit.*, p. 36, **Wood N.**, *Vectors of Memory: Legacies of Trauma in Postwar Europe*, Oxford and New York: Berg, 1999, p. 17:

Իսկ արդեն 1984 թվականին Պիեռ Նորայի խմբագրությամբ հրատարակվում է «Հիշողության վայրեր» հետազոտությունների ժողովածուի առաջին հատորը¹²⁴, որում զետեղված իր «Պատմության և Հիշողության միջև. վայրերի խնդիրը»¹²⁵ հոդվածում Նորան փորձում է պատմությունը գրելու նոր ուղիներ գտնել, որոնք կենտրոնացած կլինեն ոչ թե որոշակի իրադարձությունների, այլ դրանց մեկնաբանությունների ու տարբերությունների վերհանման վրա: Սկսելով Հիշատակումից (commemoration) նա աստիճանաբար հանգում է Հիշողությանը, ապա՝ Հիշողության և պատմության փոխհարաբերությունների խնդրին: Ինչպես Ռիկյորն է նկատել¹²⁶, ընդհանուր առմամբ Նորայի տեսության մեջ պատմության և Հիշողության փոխհարաբերություններն առանձնանում են թեմատիկ երեք ութմով. առաջին՝ Հիշողության և պատմության միջև ի հայտ եկած խզումը. Հիշողությունը, որ «միայն պատմություն, հետք և ընտրություն» է, կորցրել է «պատմության ու Հիշողության համապատասխանությունը»¹²⁷, երկրորդ՝ պատմություն-Հիշողության կորուստը. «Հիշողության մասին խոսում են, որովհետև այն այլևս գոյություն չունի»¹²⁸, երրորդ՝ պատմության և Հիշողության միջև առաջացած խզումից և պատմության/

¹²⁴ Տե՛ս Nora P. (dir.), *Les lieux de mémoire, tome 1, La République*, Paris: Gallimard, 1984:

¹²⁵ Տե՛ս Halbwachs M., *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 36, Nora P., «Entre mémoire et histoire: la problématique des lieux», dans Nora P. (ed.), *Les lieux de mémoire (Bibliothèque illustrée des histoires), tome 1, La République chapitre sur les monuments aux morts*, Paris: Gallimard, 1984:

¹²⁶ Տե՛ս Halbwachs M., *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p. 36, Ricœur P., *op. cit.*, p. 523–525: «Խզումը, որի մասին խոսում ենք, Հիշողության և պատմության խզումն է: Կորուստն այն է, ինչը կոչվում է «պատմություն-Հիշողություն»: Նոր երևույթը «պատմության զավթած Հիշողության» փուն է» (Ricœur P., *op. cit.*, p. 523):

¹²⁷ Nora P. (dir.), *op. cit.*, I, p. XVIII.

¹²⁸ *Ibid.*, p. XVII.

Հիշողության կորստից հետո ի հայտ է գալիս Հիշողության մի նոր տարատեսակ՝ «պատմությամբ կալանված Հիշողությունը»¹²⁹:

Նորայի համար Հիշողությունն անձամբ ապրած փորձառությունն է: Կենդանի Հիշողությունն այլացման մեջ է, բաց է վերհիշման և մոռացման տրամախոսության առաջ և գոյություն ունի ներկայում: Պատմությունը, ճիշտ հակառակը, միշտ խնդրահարույց և անլիարժեք վերակառուցումն է այն բանի, որն արդեն անցյալում է. «Հիշողությունը միշտ արդիական Փենոմեն է, հավերժ ներկայի հետ վերապրվող կապ: Իսկ պատմությունն անցյալի ներկայացումն է: Հիշողությունն իր զգայուն և մոգական բնույթի բերումով գոյակցում է միայն այն մանրամասների հետ, որոնք իրեն հարմար են: [...] Պատմությունը՝ որպես ինտելեկտուալ և աշխարհիկ գործողություն, հետազոտման և քննադատական տրամասության է կոչում»¹³⁰:

Այստեղից էլ՝ «ոչնչացված կամ հափշտակված անցյալի հետքերով» եղելության վերականգնումն այսպես կոչված Հիշողության վայրերի (lieux de mémoire) միջոցով. «Հիշողությունից դեպի պատմություն տատանումը, [...] անցումը տոտեմական պատմությունից քննադատական պատմության. սա Հիշողության վայրերի ժամանակն է: Արդեն չեն փառաբանում ազգը, այլ ուսումնասիրում են նրա փառաբանումները»¹³¹: Ընդ որում՝ «Հիշողության վայրերն» ի հայտ են գալիս ի հակադրություն Հիշողության պատմական շրջափուլերի, ինչպես նաև փոխարինելով իսկական և անմիջական «հավաքական Հիշողությանը»: Ավելին՝ «Հիշողության վայրերը մնացորդն են, [...] որում Հիշատակի գիտակցությունը գոյություն ունի պատմության մեջ»¹³²:

¹²⁹ *Ibid.*, p. XXV.

¹³⁰ *Ibid.*, p. XVII.

¹³¹ *Ibid.*, p. XXV.

¹³² *Ibid.*, p. XVII.

Ակնհայտ է, որ նման փոխաբերությունների արվածքը Նորան փորձում է տարանջատել պատմությունն ու Հիշողությունը՝ հիմնադրել համար դրանց շղկապվածությունն արմատները¹³³: Այս առումով «Հիշողության վայրերն» ի հայտ են գալիս իբրև խզում և կորուստ. «Հետաքրքրությունը Հիշողության վայրերի նկատմամբ, որոնցում Հիշողությունը բյուրեղանում և գտնում է իր ապաստարանը, կապված է [...] անցյալի հետ խզումի գիտակցման [...], բզկտված Հիշողության զգացողությունը ...: Բայց այդ խզումն ունակ է առաջադրելու որոշակի տեղանքում նրա մարմնացման մասին հարցը, որտեղ ներկա է պատմության անխզելիության զգացողությունը»¹³⁴: Ընդ որում՝ եթե «Հիշողության վայրերի» միջոցով հնարավոր էր հաղորդակցությունը «կենդանի ավանդույթների» հետ, ապա այժմ դրանք սոսկ ակնարկներ են առ այն, թե ինչ կարող էին լինել այդ ավանդույթները: Այն է՝ Հիշողությունը, որը «միայն պատմություն, հետք և ընտրություն» է, կորցրել է «պատմության ու Հիշողության համապատասխանությունը»¹³⁵: Իսկ երբ «հայտնվում է հետքը, հեռավորությունը, միջնորդությունը, մենք այլևս ոչ թե իսկական Հիշողության, այլ պատմության մեջ ենք»¹³⁶: Այլ կերպ ասած՝ «տիրանալով Հիշողությանը՝ պատմությունը նյութականացրել է այն»¹³⁷: Արդյունքում՝ «Հիշողության վայրեր գոյություն ունեն, քանի որ այլևս չկան Հիշողության սոցիալական շրջանակները»¹³⁸:

¹³³ Sté Nora P. (dir.), *op. cit.*, I, p. XVII:

¹³⁴ Nora P., Comment écrire l'histoire de France, dans Nora P., (dir.), *Les lieux de mémoire, t. III, Les France*, vol. 1, Conflits et partages, Paris: Gallimard, 1992, p. 24.

¹³⁵ Nora P. (dir.), *op. cit.*, I, p. XVIII.

¹³⁶ *Ibid.*, p. XIX.

¹³⁷ Sté Halbwachs M., *La Mémoire collective*, Paris: P. U. F., 1968, p.

36. Hutton P., *op. cit.*, p. 150:

¹³⁸ Nora P. (dir.), *op. cit.*, I, p. XVII.

Պատմության և Հիշողության հակադրության՝ Նորայի տեսական կառույցի մեջ, ինչպես դիպուկ նկատել է Հաթթոնը, ուշագրավ է այն, որ «Հիշողության ուժն այսօր [...] ոչ թե բարոյական ազդեցության մեջ է, այլ դրա նյութական մնացորդների»¹³⁹: Ընդ որում՝ համաձայն «Հիշողության վայրերի» նախագծի՝ հետազոտվող առարկաները պետք է «կառուցվեն» իբրև վայրեր: Այն է՝ պատմաբանը պետք է մեկնարկի առարկայի արտապատմական իրականություններից և գտնի «խորհրդանշական իրականությունն ու վերադարձնի Հիշողությունը»: Հաջողությունը կախված է հեղինակի՝ «խորհրդանշական ամբողջը խորհրդանշական բեկորներին կապակցելու» ունակությունից: Այլ կերպ ասած՝ արդի Հիշողությունը, որը կերպափոխվել է պատմության միջոցով, կապակցված է գրությունը, որն արդեն «արխիվի» Հիշողությունն է: Ընդ որում՝ «Հիշողության թատրոնը» (արխիվը) դարձել է շոշափելի իրականություն, որում «պատմաբանները մարմնավորել են այն անցյալը, որը ցանկացել են հիշել»¹⁴⁰:

Այսպիսով՝ Նորայի տեսության մեջ թեպետ ավելի ակտիվ է դրսևորվում պատմության և Հիշողության հակադրության, բախման հատկանիշը, միևնույն ժամանակ Հիշողության և պատմական ոլորտների համադրման կիզակետում «Հիշողության վայրերը» հանդես են գալիս իբրև միջուկորտային լծորդման հանգույց: Հանգույցը, սակայն, մեկնաբանվում է որպես հակադրության գործոն՝ իր կալանաված-վերակերպված բնույթով:

Քիչ այլ դիտանկյունից էր մոտենում Ժակ Լը Գոֆֆը: Ուշագրավն այն է, որ Լը Գոֆֆը երևակայության հետազոտության մեջ էր մոտեցել Հիշողության հիմնախնդրին, ըստ այդմ էլ՝ «պատմության և Հիշողության» քաղաքականացման կամ ձեռնածության հիմնախնդրին: Գիտախնդիր, որը 1980-ական թվականներին արդեն հայտնվել էր ակադե-

¹³⁹ Hutton P., *op. cit.*, p. 150.

¹⁴⁰ *Ibidem.*

միական տրամասությունների առանցքում՝ մասնավորապես պատմության հոետորական մեկնաբանությունների քննարկման համաձիրում: Իսկ արդեն 1990-ական թվականներին այն դառնում է պատմագրության կարևորագույն թեմաներից մեկը:

Ի մի բերելով այդ թեմայով իր հայտնի հոգվածները՝ 1988 թվականին Ժակ Լը Գոֆֆը հրատարակում է մենագրության բոլոր հատկանիշներով օժտված «Պատմություն և հիշողություն»¹⁴¹ հոգվածների ժողովածուն: Համադրական մեթոդաբանությամբ նա այստեղ վերլուծում է ինչպես հիշողության և պատմության փոխհարաբերության հիմնախնդիրը, այնպես էլ ուղիները, որոնցով մարդիկ կամ հաստատությունները գիտակցաբար թե անգիտակցաբար կառավարում են անցյալը: Ուստի «պատմության և հիշողության հարաբերությունները» վեր հանելու համար Լը Գոֆֆը կարևորում է ինչպես այդ երկուսը (հիշողություն և պատմություն) չնույնականացնելու, այդպես և միմյանց չստորադասելու խնդիրը՝ նկատի ունենալով մասնավորապես այն դեպքը, երբ պատմությունը ստորադասում են հիշողությանը և վերջինս ընդունում իբրև ավելի «ճշմարիտ» պատճառաբանելով, որ պատմությունն «ավելի արհեստական» է, անգամ «ձեռնածական»¹⁴²: Միևնույն ժամանակ Լը Գոֆֆը կարևորում է քննադատական պատմությունը, որը հիշողության գերապատմության համատեքստում կարծես երկրորդական և անգամ երրորդական պլան էր մղվել: Ուստի, ընդունելով հիշողության հրահրող (*incitation*) դերը պատմության նկատմամբ, կրկին առաջին պլան է բերում քննադատական պատմության գործառույթը, որի խնդիրն է թույլ չտալ հիշողության հավատաքննական (*inquisitoriale*) կամ ծիսական (*ritualisante*) շեղումը, քանի որ «պատմության,

ինչպես և բոլոր գիտությունների նորմը ճշմարտությունն է»¹⁴³, հետևաբար՝ ճշմարտության բացահայտումը, սրբազնացված փաստերի կամ հիշողության ապաստարանացումը: Հարկ է նշել սակայն, որ պատմագիտության մեջ «օբյեկտիվության հաստատումը չի նշանակում լիակատար հպատակեցում փաստերին»¹⁴⁴, իսկ «պատմաբանը պատմության չարաչահումներով զբաղվում է միայն այնժամ, երբ դառնում է ինչ-որ քաղաքական իշխանության կողմնակից, ներկայացուցիչ կամ ծառա»¹⁴⁵:

Այսու՝ Լը Գոֆֆը հիշողության սրբազնացմանը հակադրում է քննադատական պատմությունը, որը հնարավորություն է տալիս սպրդելու «հիշողության ուստայններից», որոնք ընկած են հիշողության քաղաքականացման հիմքում: Այս առումով հիշողության և պատմության գործակցումն անհնար է դիտարկել ժամանակից դուրս: Դրանք մեծ մասամբ հատվում են ժամանակի՝ իբրև կառավարման հատուկ տարածքի և անցյալ/ներկա/ապագա փորձի յուրացման ոլորտի ծիրում, քանի որ «ըստ ինչ-որ «մինչ»-ի ու «հետո»-ի ժամանակի բաժանման իրականությունը չի սահմանափակվում «ներկա/անցյալ» հակադրությամբ ինչպես անհատական, այդպես էլ հավաքական մակարդակում: Այստեղ հարկ է հավելել և երրորդ չափումը՝ ապագան»¹⁴⁶: Ըստ այդմ՝ անցյալ/ներկա տարբերակումից անցումն անցյալ/ներկա/ապագա տարբերակմանը հույժ կարևոր է, քանի որ հենց այդ տարբերակումների վրա է հիմնված հիշողության և պատմության իբրև գիտության գործառույթը¹⁴⁷: Բացի այդ՝ ժամանակի նման բաժանումը «երեք ուղղություններով համակարգի» կարևոր է այն առումով, որ հնարավոր է դարձնում

¹⁴³ Le Goff J., *op. cit.*, p. 114.

¹⁴⁴ Le Goff J., *op. cit.*, p. 113.

¹⁴⁵ Le Goff J., *op. cit.*, p. 114.

¹⁴⁶ Le Goff J., *op. cit.*, p. 2.

¹⁴⁷ St'u Le Goff J., *op. cit.*, p. xi:

¹⁴¹ St'u Le Goff J., *Histoire et mémoire*, Paris: Gallimard, 1988:

¹⁴² Le Goff J., *History and Memory* /Trans. Steven Rendall and Elizabeth Claman, New York: Columbia University Press, 1992, p. xi.

այդ երեքի «Հավասարակշռության» գիտակցման պահպանումը¹⁴⁸: Այդպիսի տարբերակումը թույլ է տալիս վերհանել այն, «ինչ գոյություն ունի Հավաքական գիտակցության մեջ, մասնավորապես Հասարակական-պատմական գիտակցության մեջ»¹⁴⁹: Իսկ քանի որ «այդ տարբերությունը հատուկ է Հավաքական իմացության պատմությանը»¹⁵⁰, հարկավոր է «ներկա/անցյալ» (և ապագա) հակադրական գույգը (եռյակը) դիտարկել Հավաքական Հիշողությանն ու պատմությանը հատուկ դիտանկյունից դուրս, ինչը թույլ կտա նաև «ձերբազատվել ներկայից, ինչը ենթադրում է [...] նաև Հավաքական Հիշողության գոյություն անհատական Հիշողությունից դուրս և դրանից վաղ»¹⁵¹: Ժամանակի և պատմության խնդիրների հետազոտություններում իր ուրույն տեղն ունի սոցիալական Հիշողությունը, որն «ընկրկում է, մերթ էլ լեփլեցուն է դառնում» նույն այդ ժամանակի և պատմության առաջ¹⁵²:

Իսկ քանի որ «սոցիալական պատմական Հիշողությունը ձևավորվում է ավանդույթով և ուսուցմամբ»¹⁵³, ակնհայտ է նաև դրա ձեռնածությունը: Բանն այն է, որ Հավաքական Հիշողություն կոչվածը սովորաբար մի գործընթաց է, որը ձևավորվում է բանավոր և ոչ բանավոր տրամասությունների արդյունքում, այն է՝ «միջնորդավորված տեքստերով»: Ուստի Հավաքական վերհիշումը հիմնված է հենց այդ «միջնորդավորված տեքստերի» վրա և ձևավորվում է դրանց շուրջ: Եվ պատահական չէ, որ Հավաքական Հիշողությունն արդեն Հանդես է գալիս իբրև «իշխանության համար Հասարակական ուժերի պայ-

¹⁴⁸ Le Goff J., *op. cit.*, p. 2.

¹⁴⁹ Le Goff J., *op. cit.*, p. 2.

¹⁵⁰ Le Goff J., *op. cit.*, p. xi.

¹⁵¹ Le Goff J., *op. cit.*, p. 3.

¹⁵² Le Goff J., *op. cit.*, p. 54.

¹⁵³ Le Goff J., *op. cit.*, p. 3.

քարի կարևոր նպատակ», քանի որ «պատմության մոռացումը, լուռության մատնումը բացահայտում են Հավաքական Հիշողության ձեռնածման մեխանիզմների գոյությունը»¹⁵⁴: Մի բան, որը Հանդեսում է արտատեքստային իրականությունից տեքստի խզմանը, որն ուղեկցվում է իրականության փոխարինմամբ, այն է՝ տեղի է ունենում պայմանականության աննախադեպ ընդլայնում, որի համապատկերում բուն իրականությունը շրջափոխվում է պայմանական իրականության: Արտահայտման պլանն անջատելու և ցանկացած այլ բովանդակության միացնելու Հնարավորությունը ասույթը դարձնում է վտանգավոր գործիք, հարմար կուտակիչ սոցիալական ստի Համար¹⁵⁵: Ըստ այդմ՝ միևնույն իրադարձությունը կարող է ձեռք բերել տարբեր նշանակություններ՝ կախված այն բանից, թե ինչ սյուսետային կառույցի մեջ է ներառվել, և քանի որ ավելի հաճախ պատմական Հիշողությունն անգիտակցական բնույթ ունի, «իրականում շատ ավելի մեծ վտանգ կա, որ ժամանակի ընթացքում մտածող Հասարակություններում ձեռնածություն կենթարկվի ավելի շուտ պատմական Հիշողությունը, քան թե պատմությունը՝ իբրև գիտելիքի ճյուղ»¹⁵⁶:

Այստեղից էլ՝ պատմական տրամասության հետևողական «կառուցումը», որն է՛լ ավելի դժվար է, երբ մի «ճշմարտությունը» հակադրվում է մեկ այլ «ճշմարտության», ինչպես «անհատական Հիշողությունը»՝ «վկայի» կամ «իրականությունը վերապրածի» և «Հավաքական Հիշողությանը»: Այս հակադրությունը, այդուամենայնիվ, հաղթահարելի է քննադատության միջոցով: Ուստի Հիշողության և պատմության հակա-

¹⁵⁴ Le Goff J., *op. cit.*, p. 54.

¹⁵⁵ Տես Հովհաննիսյան Ս., Պատմություն և Հիշողություն. Ցեղասպանությունների աստիճանակարգման Հիմնախնդիրն ըստ Պիեռ Նորայի, «Վէժ» Համահայկական Հանդես, 1 (2013), էջ 12–33:

¹⁵⁶ Le Goff J., *History and Memory*, p. xi.

դրուեմը սահմանափակում է իրականություն մեր ընկալման տիրույթը, մինչդեռ դրանց երկխոսայնացմամբ հնարավոր է ընդլայնել ընկալման հորիզոնները: Այստեղից էլ՝ հիշողության դրական գործառույթը պատմության համար. հիշողության և պատմության քննադատական համագործակցությամբ է, որ հնարավոր կլինի հաղթահարել անցյալի հիշողության գուտ հետահայաց պատկերացումը և «անցյալը վերադարձնել իբրև ներկա»: Պատմության ճշմարտության և հիշողության ճշմարտության համադրման աշխատանքն էլ պատմագիտության գործառույթներից է, որով հնարավոր է վերականգնել անցյալի ամբողջական պատկերը. «պատմությունը պետք է հստակեցնի հիշողությունը և օգնի շտկել նրա սխալները»¹⁵⁷: Ուստի ըմբռնել հիշողության և պատմության փոխհարաբերությունը՝ նշանակում է ինչ-որ չափով բացահայտել ոչ միայն դրանց տարբերությունն ու հակադրությունը, այլև ու հատկապես համադրական-երկխոսային հեռանկար(ներ)ը¹⁵⁸:

Հիշողության և պատմության պարզ հարաբերության մեջ արդեն իսկ նշմարվող ներուճակությունների տարբերությունները թեպետ իրականությունը փոխանցում են տարբեր ուղղություններով, այդուամենայնիվ, հակադրումը կամ բախումը հաղթահարելի է երկխոսության միջոցով: Ծնորհիվ դրա՝ հիշողությունն ու պատմությունը հանդես են գալիս իբրև իրականության փոխադարձ փոխանակող՝ ամբողջի մեջ միասնական ներառվածություն:

Ամփոփելով վերասացյալը՝ կարող ենք ամրագրել, որ եթե դրապաշտական պատմագիտության կարևորագույն տեսլականներից մեկն անցյալի մեջ ժամանակակից երևույթների ակունքների որոնումն էր (Հանրահայտ

«սկզբնաղբյուրների կուռքը»), որով հետազոտողի հայացքը սահմանափակվում էր այն ֆենոմեններով, որոնց համանմանը նա տեսնում էր իրեն ժամանակակից հասարակությունների մեջ, ապա պատմական մարդաբանությունը գնահատում էր ավելի շատ այն տարբերությունները, որոնք օգնում են մեզ հասկանալ անցյալը՝ չստորագասելով անցյալի ըմբռնումը ներկային:

Կարևոր է նշել նաև, որ եթե Աննալների հիմնադիր-հայրերի համար ավանդույթների պատմության հետազոտությունը լոկ միջոց էր տնտեսական և սոցիալական պատմությունների ավելի խորքային հասկացման համար, ապա երրորդ սերնդի ներկայացուցիչների համար այդ սյուլետները ձեռք են բերում ինքնուրույն արժեք: Ընդամին՝ պատմական մարդաբանությունը, զարգանալով մտայնությունների, շարային և/կամ քանակային պատմություններին՝ գուգահեռ, ինչը համադրությունների նոր հարթակներ էր ապահովում, այդպես էլ հստակորեն չսահմանազատվեց հիշյալ հետազոտական ուղղություններից:

Մյուս կողմից՝ կրկին կարևորվեց հիշողության և պատմության թեման, և պարզ դարձավ, որ սոսկ հակադրումը չի կարող սպառիչ կերպով ներկայացնել պատմության վիթխարի տիրույթը: Հետևաբար ըմբռնել հիշողության և պատմության փոխհարաբերությունը՝ նշանակում է ինչ-որ չափով բացահայտել ոչ միայն դրանց տարբերությունն ու հակադրությունը, այլև ու հատկապես՝ համադրական-երկխոսային հեռանկար(ներ)ը: Իսկ նախքան այդ հեռանկարների ուղղագծումը հույժ անհրաժեշտ էր, որ հիշողությունը, մինչև պատմության վերածվելը, անցնի ինքնահաղթահարման մի շրջափուլ, հընթացս որի պետք է ստանա պատմագիտական կառույց:

Իսկ ընդհանուր առմամբ՝ իր ողջ բազմազանությունը հիշողության/պատմական ներկայացումը պետք է հան-

¹⁵⁷ Le Goff J., *op. cit.*, p. 111.

¹⁵⁸ Տե՛ս Le Goff J., *op. cit.*, p. 97-98:

դես գա այն հանգույցում, որում կենտրոնացված են պատմագիտության համար հնարավոր բոլոր կապերն ու անցումները:

Այսպիսով՝ ստեղծվում է պատմագիտական ընդգրկուն համադրության հիմքն ու ներունակությունը, որոնք ներառում են միմյանց մեջ ներթափանցած և միմյանց անդրադարձնող, անգամ միմյանց ներհակ հարացույցներն ու հայեցակարգերը:

Իբրև վերջաբան

«ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ», ԹԵ՞ ՃԱԿԱՏԱՅԻՆ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄԵՐ

Պատմագիտական փոխակերպումների ծիրում ուշագրավ է Աննալների դպրոցի Չորրորդ սերնդի խնդրականը: Աննալների այս շրջանը պատմաբանները հաճախ անվանում են «բեկումնային ժամանակաշրջան»¹, «անորոշությունների ժամանակաշրջան», «պատմական գիտելիքների ճգնաժամ», «իմացաբանական անիշխանություն» և այլն²: Ճգնաժամը, խորքային առումով, արդյունք էր կողմնորոշումների և հետազոտական հարացույցների հետարդիական (պոստմոդեռնիստական) քննադատության³, միևնույն ժամանակ նաև Դպրոցի ներքին վերադասավորումների, երբ խախտվել էր նախկին հավասարակշռությունը: Ըստ Ֆրանսիացի պատմաբան Ժերար Նուարիելի՝ հավասար

¹ Տե՛ս Бессмертный Ю., Школа «Анналов»: весна 1989 г., *Европейский альманах*, М., 1991, с. 139:

² Տե՛ս Delacroix Ch., Dosse F., Garcia P., *Les courants historiques en France (19^e-20^e siècle)*, Paris: Armand Colin, 2005, p. 166. Noiriel G., *Sur la "crise" de l'histoire*, Paris: Belin, 1996, p. 33. Delacroix Ch., La falaise et le rivage. Histoire du tournant critique, *Espaces Temps*, 59-61 (1995), p. 88-89:

³ Ավելի մանրամասն տե՛ս Lyotard J.-F., *La Condition postmoderne: Rapport sur le savoir*, Paris: Minuit, 1979 (հայերեն թարգմանությունը՝ Լիոտար Ժ.-Ֆ., *Հետարդիական կացություն. Զեկույց գիտելիքի մասին* /Ֆրանս. թարգմ. Շ. Մակարյան, առաջաբան և հիմնական հավացությունների բառարան՝ Հ. Բայադյան, ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Ակտուալ արվեստ, 2022):

րակչուության նման խախտման գլխավոր դրոժոնը դեռ 1960-ական թվականներին բարձրագույն կրթության ժողովրդավարացման արդյունքում համայնարանականների զանգվածային հավաքագրումն էր: Արդյունքում Ֆրանսիացի պատմաբանների մասնագիտական համայնքը, որը XIX դարի վերջից մինչև Երկրորդ աշխարհամարտ չէր գերազանցում 100 անդամը, մի քանի տարում տասնապատկվեց. նախորդ տասնամյակներում ձեռք բերված փխրուն հավասարակշռությունը փլուզվեց⁴: Այդ փլուզման մեջ մեծ դեր խաղացին նաև միջգիտակարգայնության առաջընթացը, գիտական հետազոտությունների միջազգայնացումն ու ՋԼՄ-ների հետ կապի ամրագրումը: Դրանց զուգահեռ ոչ պակաս կարևոր էր նաև 1984 թվականին պետական ատենախոսության (thèse d'Etat) վերացումը, որից հետո մնաց միայն մեկ դոկտորական (doctorat) աստիճան (Ֆրանսիական կառավարությունն այս քայլին գնաց, որպեսզի համապատասխանեցնի դոկտորական աստիճանը միջազգային չափանիշներին): Հետազոտողների գնահատմամբ պատմության (և ոչ միայն) գիտակարգի «ատոմականացումը» պատրաստ էր⁵:

Աննալականների դեպքում այս ամենին գումարվեց նաև այսպես կոչված «սերունդների բեկվածքը», որն ի հայտ եկավ մանավանդ 1980-ական թվականներին. նախկին սերունդին փոխարինելու էր եկել նորը, որն, ի տարբերություն նախորդների, ավելի տարասեռ էր: Իսկ քանի որ սովորաբար նոր տեսությունների առաջացմանը, ինչպես նկատել է Թոմաս Կունը, «նախորդում է մասնագիտական ընդգծված անհուսալիությունը»⁶, պատահական չէր և

⁴ Noiriel G., A propos de la "crise" de l'histoire en France, FPS, 1 (1997), p. 47.

⁵ Տե՛ս Հովհաննիսյան Ս., «Քննադատական շրջադարձ», Թե՞ ճակատային վերադասավորում, «Վէմ» համահայկական հանդես, 2 (2022), էջ 62–80:

⁶ Kuhn Th. S., *The structure of scientific revolutions*, The University of Chicago Press, 1996, p. 67–68.

Դպրոցի՝ այս ժառանգորդության արդյունքում դրսևորված «ինքնության ճգնաժամը (crise d'identité)»: Այսպես դեռ 1980 թվականին Պիեռ Նորան հեռացավ և Մարսել Գոչեի հետ հիմնեց «Բանավեճ» (*Le Débat*) երկամսյա պարբերականը, որով կրկին պատմական տրամասության ոլորտ էր ներմուծում քաղաքական հեռանկարը: Պիեռ Շոնյուն իր հերթին վկայակոչում էր «եկամտաբերության անկումը», իսկ Ֆրանսուա Յուրբեն դեռ 1982 թվականին (Տուրինի միջազգային գիտաժողովի ժամանակ) ուղղակի նշում էր, որ Աննալների դպրոցը զրկվել է «ոգու և մոտեցումների միասնականությունից»⁷, և արդեն 1985 թվականին (իր իսկ ցանկությամբ) թողեց Բարձրագույն դպրոցի սոցիալական գիտությունների (EHESS) նախագահի պաշտոնը, որպեսզի գլխավորի պատմաբանների ու փիլիսոփաների բոլորովին այլ մի ցանց՝ Ռայմոն Արոնի ինստիտուտի շրջանակներում: Ինչ վերաբերում է Ժորժ Դյուբեին, ապա նա արդեն 1987 թվականին նշում էր «չնչահեղձության զգացողության» մասին և հավելում, որ «հարցին, թե գոյություն ունի՞ ալսոր Աննալների միասնական դպրոց, հարկ է վճռականորեն պատասխանել ո՛չ»⁸:

Ճգնաժամի կամ Աննալների դպրոցի չգոյության մասին դատողությունները ձեռք բերեցին բոլորովին այլ բովանդակություն և իմաստ: Սակայն ոչ բոլոր աննալականները հրաժարվեցին պատմագիտության դաշտի այս քայքայման պատասխանատվությունից: Հանգեսում տարվող աշխատանքները ցույց տվեցին, որ պատմագիտությունը, այդուամենայնիվ, դեռ կարող է հարստանալ հասարակական գիտությունների մեթոդներով առանց ընթացակարգերի մեխանիկական փոխանցման: Մի բան, որով հնարա-

⁷ Ավելի մանրամասն տե՛ս Furet Fr., *Les Méthodes des Sciences sociales dans les recherches historiques et l'«Histoire totale»*, in Furet Fr., *L'Atelier de l'Histoire*, Paris: Flammarion, 1982, p. 2–17.

⁸ Duby G., *Le plaisir de l'historien*, in Pierre N. (dir.), *Essais d'ego-histoire*, Paris: Gallimard 1987, p. 132.

վոր կյիներ նաև պահպանել «պատմագիտություն հավակնությունները համադրության, իրականության տարբեր մակարդակների հոդավորման, ժամանակի կարճ և երկար տևողությունների տրամախոսության նկատմամբ»⁹:

«Ճշգնաժամը», որքանով այն վերաբերում է հին հարացույցների բեկանմանը, վերարժևորմանը, նույնքան էլ վերաբերում է նոր հարացույցների առաջացմանը: Թերևս հարկ է խոսել աննալականների նոր փուլի սաղմնավորման մասին, քանի որ Հանդեսի էջերում շարունակում են արտահայտվել անցյալի վերարժևորման մեթոդների, հին ու նոր հարացույցների համադրման, հետազոտական մոտեցումների վերանայման անհրաժեշտության մասին: Խոսքը, հարկավ, առավելաբար պատմագիտության նոր հնարավորությունների դաշտի ձևավորման մասին է. անհրաժեշտ էր վերակազմակերպել սոցիալականի և սոցիալական մտքի բնագավառում առկա քննադատական հարացույցները¹⁰: Ուստի աննալականների նոր սերունդը, տոգորված պատմագիտության նոր հիմնախնդիրների և հետազոտական մեթոդների մշակման ձգտումով, փորձեց առաջացած տարբեր ուղղությունները նորովի միավորել և լիովին գիտակցաբար նոր նախագիծը մասամբ կառուցեց իբրև պատասխան ծավալուն և ուժգին քննադատության: Բայց և հարկ է նշել, որ ուրվագծվող աննալական Չորրորդ սերունդը «սկզբունքային մտավոր խզում» ուներ անմիջապես իրեն նախորդող երրորդ սերնդից՝ ընդհուպ Հանդեսի 1968–1989 թվականներին որոշարկված զարգացման հեռանկարից հրաժարումը¹¹:

1988–1989 թվականներին Հանդեսը որդեգրեց միջգիտակարգայնության կառավարման մեկ այլ եղանակ, որը,

⁹ Sté. Dosse F., *L'Histoire en miettes: Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 1987, p. 251:

¹⁰ Агирре Рохас К. А., *Критический подход к истории французских «Анналов»*, М.: Кругъ, 2006, с. 171.

¹¹ Агирре Рохас К. А., *указ. соч.*, с. 174.

Թերևս, կարելի է անվանել անդրգիտակարգայնություն (transdisciplinarité), որն արդեն ենթադրում էր ոչ թե հարակից գիտությունների կողմից կիրառվող հղացքների բուն յուրացում, այլ այդ հղացքների փոխառում իրենց գործունակությունների (opérationnalité) սահմանում՝ այն գիտակարգի ներսում, որը միասնացնում է դրանք: Փնտրտուքների մի շարան, որն արտահայտվեց նախ Հանդեսի 1988 թվականի «Պատմությունը և հասարակական գիտությունները: Քննադատական շրջադարձ»¹², հետո նաև 1989 թվականի «Փորձեք փորձառությունը»¹³ խմբագրականներում, որոնք, ըստ էության, հետազոտական նոր նախագիծ էին: Այսու՝ աննալականների նոր սերունդն ընդունում էր առկա մարտահրավերը և փորձում լուծում տալ դրան, թեև վաղուց հրաժարվել էր առաջնորդական հավակնություններից, անգամ պնդում էր, որ Աննայների դպրոց, որպես այդպիսին, գոյություն չունի, Թերևս կան միայն բազմաթիվ «իրարահաջորդ հարացույցներ»¹⁴:

Աննալականների՝ պատմության խնդիրների «նոր լեզուն և նոր մոտեցումն» արդեն իսկ դրսևորվեց Հանդեսի 1988 թվականի առաջին համարում, որը նվիրված էր պատմության մոդելավորմանը: Այստեղ խմբագրության քարտուղար Բեռնար Լըպտին ուշադրություն էր հրավիրում պատմագիտության մեջ քանակային մեթոդների կիրառման նկատմամբ աճող դժգոհության վրա, նշում դեպի պատումն ու հերմենևտիկան վերադարձի մասին և հավա-

¹² Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales: ÉSC*, 2 (1988), p. 291–293.

¹³ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1317–1323. Ի դեպ՝ 1989 թվականի վերջին (6) համարի ընդհանուր թեմատիկ վերնագիրը 1988 թվականի խմբագրականի վերնագիրն է՝ առանց հարցականի. «Պատմությունը և հասարակական գիտությունները. քննադատական շրջադարձ»:

¹⁴ Wislitz T., The «Annales» School and the Challenge of the Late 20th Century. Criticism and Tentative Reforms, *APH*, XCII (2005), p. 214.

նություն տալիս նկարագրական վիճակագրության քննադատությունը՝ Հակադրելով դրան նմանարկումը (simulation) վարկածային մոդելների միջոցով¹⁵, ինչը «Հնարավորություն տվեց կամուրջ ստեղծել լեզվի տեսաբանների և էմպիրիկ տվյալների միջև»¹⁶:

Հաջորդ կարևոր քայլն այս ուղղությամբ եղավ արդեն Հանդեսի նույն 1988 թվականի երկրորդ Համարում հրատարակված խմբագրականը՝ «Պատմությունը և Հասարակական գիտությունները: Քննադատական շրջադարձ»¹⁷: Նախագիծը կոչված էր շրջանցելու և մերժելու «պատմության ճգնաժամ» եզրույթն այն Համատեքստում, որտեղ Աննալների պատմագիտական Հարացույցը (ինչպես նաև դրա Հաջորդական կերպափոխումները) 1980-ական թվականների վերջերին լայն քննադատության ենթարկվեց և կասկածի տակ դրվեց սոցիալական պատմության «ճգնաժամի» ավելի լայն շրջանակներում¹⁸: Մյուս կողմից, սակայն, նրանք չէին ժխտում, որ մասնակցում են մի «նոր, դեռևս խճճված գործընթացի», որն «ապագայում պատմաբանի մասնագիտության սահմանման խնդիրն է»¹⁹: Ինչպես Դելակրուան է նկատում, «ինքնութենական պաշտպանությունն» արմատավորվեց նախ իբրև «հրաժարում ճգնաժամից», իբրև ճգնաժամի ժխտում²⁰: Ըստ խմբագրականի՝ «անվստահության ժամանակով» պայմանավորված վիճակն արդյունք էր գերակայող մարքսականության և կառուցաբանության, ինչպես նաև քանակային պատմու-

¹⁵ Lepetit B., Histoire et modélisation. Présentation, *Annales ÉSC*, 1 (1988), p. 3.

¹⁶ Wislicz T., *op. cit.*, p. 214.

¹⁷ Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales: ÉSC*, 2 (1988), p. 291–293.

¹⁸ Մի բան, որի արդյունքում անգամ աննալականների ներսում էին կասկածները շատացել:

¹⁹ Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales: ÉSC*, 2 (1988), p. 293.

²⁰ Delacroix Ch., La falaise et le rivage. Histoire du «tournant critique», *Espaces Temps*, 59–60–61 (1995), p. 89.

թյան նկատմամբ ի Հայտ եկած անվստահության, քանի որ դրանք «կորցրել էին իրենց կառուցավորելու կարողությունը»²¹: Ուստի պատահական չէր, որ պատմությունը, որի շարժունությունը հիմնվում էր «միասնացնող Հավակնություն» վրա (իսկ Աննալների դպրոցի ծաղկումն ինքնին պատմագիտության և սոցիալական գիտությունների Համարման Հնարավորություն էր, որը թույլ էր տալիս բարեփոխել նրա Հետազոտության առարկան, հիմնախնդիրն ու ընթացակարգը), բնականաբար չէր կարող անմասն մնալ սոցիալական գիտություններում տիրող Համընդհանուր ճգնաժամից: Մյուս կողմից՝ ակնհայտ է նաև «ալարկոտ լուծումների» (*solutions paresseuses*) գերակայությունը, երբ գիտակարգի փոփոխվող մտավոր բնապատկերի անհստակության արդյունքում անհնար է դառնում նաև նոր դաշինքների ու նոր Հարացույցների ստեղծումը: Այս ամենից ելնելով էլ աննալականները գտնում էին, որ ժամանակն է «քարտերը վերադասավորելու», բայց շեշտելով նաև, որ խոսքը չի վերաբերում «փոփոխվող իրավիճակի մասին Հաշվետվությանը», այլ «ձեռք բերված և ընթացիկ փորձի հիման վրա որոշ կողմնորոշիչների բացահայտմանը, անորոշության ժամանակ խիստ և նորարարական պրակտիկաների որոշ ուղեցույցների սահմանմանը»²²:

Այդուամենայնիվ, ուրվագծվող Չորրորդ սերնդի ներկայացուցիչները չէին գնում ինչ-որ ամփոփիչ ընդհանրացումների, այլ միայն առանձնացնում էին երկու հիմնարար հեռանկարային Հարցադրումներ, որոնց շուրջ պետք է ծավալվեին Հետագա քննարկումները: Դրանք էին նոր մեթոդներն ու նոր դաշինքները: Նոր մեթոդների դեպքում նրանք

²¹ Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales: ÉSC*, 2 (1988), p. 291.

²² Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales: ÉSC*, 2 (1988), p. 292. См. также Лепти Б., Гренье Ж.-И., О некоторых изменениях в журнале «Анналы» в 1994 г. (Ответы на вопросы Ю. Л. Бессмертного), *Одиссей: Человек в истории*, РАН, Ин-т всеобщ. истории, М., 1994, с. 316:

առանձնացնում էին վերլուծություն մասշտաբների և պատմության գրություն խնդիրները՝ հատուկ կարևորելով վարկածի բնույթի և դրա ստուգման տարրերի հարաբերությունները: Իսկ նոր դաշինքների դեպքում՝ շեշտադրում «ուրիշ վկայություններ և ուրիշ հետազոտություններ ծայրամասերից», քանի որ պատմության ծայրամասերում դեռ մնում էին գիտակարգային այնպիսի ոլորտներ (ինչպես արվեստի պատմությունը, գիտության պատմությունը և այլն), որոնց ձգտում էր պատմությունը²³:

Այսպիսի նախապատրաստական հարցարկումներից հետո միայն 1989 թվականի վերջին համարում աննալական նոր ձևավորվող սերունդն արդեն հանդես եկավ «Փորձենք փորձառությունը» խորագրով տեսական նոր խմբագրականով, որն իր հարցարկումներով և ընդհանրացումներով ավելի վճռական էր և ավելի կողմնորոշված: Ինչպես հետագայում խոստովանում է Բեռնար Լըպտին, «1989-ի վերջին համարը կարելի է կարգալ որպես ամսագրի աշխատանքի փոփոխության նշան»²⁴: Այստեղ խմբագրականի հեղինակներն առաջադրում էին նոր բաժանումների, մասնատումների խնդիրը, որոնք աստիճանաբար ստեղծվել էին գիտակարգային ապանջատման (déclouisonnement) արդյունքում: Հանդեսի 60-ամյակին նվիրված համարի խմբագրականն, ինչ խոսք, վճռականորեն ինքնաքննադատական էր: Ավելին՝ նվիրված էր այն չափանիշների վերականգնմանը, որոնց վրա Դպրոցը կառուցել էր իր հաջողությունն ավելի քան կես դար: Դրանցից էր միջգիտակարգայնությունը (interdisciplinarité), որը միաժամանակ ինքնօրինակ «մեթոդաբանական մանիֆեստ» էր, ինչպես բնորոշում է ոուս պատմաբան Յու. Բեսսմերտին²⁵: Թերևս ավելի դիպուկ է

²³ Histoire et sciences sociales. Un tournant critique? *Annales: ÉSC*, 2 (1988), p. 293.

²⁴ Lepetit B., Les Annales aujourd'hui, *RFBC*, 2 (1995), p. 329.

²⁵ Бессмертный Ю., «Анналы»: переломный этап? *Одиссей. Человек в истории. Культурно-антропологическая история сегодня*, М., 1991, с. 9.

աննալականներից Դելակրուայի դիտարկումը, համաձայն որի՝ այս նախաձեռնությունն «ինքնություն վերապահովագրության (réassurance identitaire)» ռազմավարություն էր²⁶, որը ենթադրում էր նաև սոցիալական այլ գիտությունների հետ երկխոսության ակտիվացում, այն է՝ սահմանափակ միջգիտակարգային պրակտիկայի ընդլայնում:

Խմբագրականի ներածական հատվածում աննալականները, կարևորելով նորարարությունը ոչ թե իբրև ժառանգականության խնդիր, այլ «ուժերի դաշտում մշտական վերասահմանման գործընթաց», հստակ նշում էին, որ իրենց նպատակը քարացման և տարրալուծման միջև ընտրություն անելը չէ, ոչ էլ ջանքերի ցրումը կամ դպրոց հիմնելու (որը հղի է մատուռի կամ հաստատության վերածվելու վտանգով) կամ էլ փոստարկղ դառնալու հավակնությունը, այլ միայն փորձերի համար բաց տարածք դառնալը, որտեղ նոր հետազոտական հարցադրումներն ու նոր մեթոդները կբախվեն և կբյուրեղանան՝ հիմք դնելով սոցիալական գիտությունների հետ պատմության երկխոսության նորացմանը²⁷: Այստեղից՝ առաջնային առանցքների ուրվագծման անհրաժեշտությունը, որոնք ուղղություն կտային Հանդեսին և որոնք կլինեին խմբագրական քաղաքականության տարրերը: Այդպիսի առանցքային խնդիրներից էր, ըստ խմբագրականի, պատմության ինքնատիպությունը, որով այն կտարբերվեր տնտեսագիտությունից, մարդաբանությունից և սոցիոլոգիայից, քանի որ «նորարարության տարածումը ենթադրում է ներուժի տարբերություններ»²⁸: Այդպիսի նոր մոտեցման պատճառները հարկ է փնտրել ձևերի, կառույցների և գործառույթների անհամար տեղաշարժերում, և այդ բազմակի ձեռնարկումներում առանձնահատուկ է ժամանակային մեխանիզմների հետազոտությունը: Նկատենք, որ աննալականներն առաջինն էին, որ

²⁶ Delacroix Ch., *op. cit.*, p. 86–111.

²⁷ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1317–1318.

²⁸ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1318.

Հակառակ տարեգրությունների և դրապաշտական պատմության գծային ժամանակի՝ ընդգծեցին սոցիալական ժամանակի բարդությունը և հավանություն տվեցին երկար տևողությանը (*longue durée*): Բայց ժամանակի ընթացքում երկար տևողության, գրեթե անշարժ երևույթների վրա աննախնայանքների կենտրոնացման արդյունքում պատմությունը զրկվել էր այն բանից, ինչը հատուկ էր իրեն՝ ժամանակային մեխանիզմների փոփոխությունների շուրջ մտորելուց: Ուստի պատահական չէր, որ խմբագրականի հեղինակներն այդ մոտեցումից բավականին հեռու էին մնացել, քանի որ, ըստ նրանց, «սխալ է կարծել, թե ժամանակը պատմության միակ իրական առարկան է»²⁹: Հարկավ, սա չէր նշանակում գծային, դրապաշտական, պատճառահետևանքային պատմության աննախնայանքային ոճով վերադարձ³⁰: Բանն այն էր, որ պատմության հարթությունների «չերտավորման փոխաբերությունը (*métaphore*) և ավելի երկար տևողությամբ երևույթների մասին առանձնահատուկ մտահոգությունն իրենց հետ բերում են մոռանալու այն գործընթացները, որոնցով առաջանում է նորը»³¹: Չնայած այս ամենին ուշագրավ է, որ Հանդեսի խմբագիրները չէին հրաժարվում «Համընդգրկուն պատմության» հղացքից, ավելի շուտ, վերակերպում էին այն՝ ակտիվացնելով նրա ոչ թե ընդգրկունությունը, այլ վերլուծության-համադրության հնարավորությունները: Ըստ նրանց՝ ինչպիսին էլ լինի ծավալը, պատմական հետազոտության խնդիրը միշտ էլ ընկերային փոխազդեցությունների (որպես ամբողջի) հետազոտությունն է: Եվ պատմական հետազոտության խնդիրը տեղաշարժելով միկրոպատմության տարածք՝ այդուամենայնիվ, անհրաժեշտ է այն դիտարկել «ժամանակի երկար տևողության» համապատկերում³²:

²⁹ Ibidem.

³⁰ Wiślicz T., *op. cit.*, p. 216.

³¹ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1318.

³² Агирре Роас К. А., *указ. соч.*, с. 180.

Այս համատեքստում արդեն հեղինակները քննադատության են ենթարկում պատմության քանակային մոտեցումը, որը, վերասահմանելով հետազոտական ստորոգությունները, չափազանց մեծ նշանակություն էր տալիս որոշ երևույթների զուտ դրանց հաշվելի լինելու պատճառով՝ մոռանալով, որ «հասարակությունը իր չէ»³³: Ավելին՝ «սոցիալական առարկաները հատկություններով օժտված իրեր չեն, այլ փոխկապակցված փոխհարաբերությունների ամբողջություն՝ փոխդասավորությունների (*configurations*) մեջ մշտապես հարմարվող», և «սոցիալական ինքնությունները պետք է ընկալվեն իբրև դինամիկ իրողություններ»³⁴, քանի որ մարդկության պատմությունը ոչ միայն տեխնիկայի և տնտեսության պատմություն է, այլև հուզական վարքագծի և մարդկանց միջև հուզական կապերի պատմություն: Որից՝ սոցիալ-տնտեսական պատմության կողքին մշակույթի երկրորդային լինելու բացառումը և պատմության կամ պատմական գործընթացի ոչ միանշանակ լինելը, որտեղ հույժ կարևորվում է պատմաբանի անհատականությունը, որն իմաստավորում է այն: Ըստ այդմ՝ պատմությունն իբրև գիտություն զարգանում է ոչ թե սովյալների կուտակմամբ կամ սովյալների ամբողջարկմամբ (*totalisation*), այլ, օգտվելով լուսանկարչական փոխաբերությունից, ինչպես հեղինակներն են նշում, «ոսպնյակի տեղաշարժմամբ և կիզակետային երկայնության փոփոխմամբ (*variation de la focale*)»³⁵: Այստեղից էլ՝ միկրո- և մակրովերլուծությունների հակադրության բացառումը և դրանց փոխլրացականության ընդունումը, քանի որ վերլուծության տարբեր մասշտաբները տարբեր դիտանկյուններ են բացահայտում³⁶: Խմբագիրները կողմ էին պատմական բարդ մոդելավորմանը, քանի որ իրական աշխարհի բազ-

³³ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1319.

³⁴ Ibidem.

³⁵ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1321.

³⁶ Si'u Wiślicz T., *op. cit.*, p. 217:

մաշափությունն անհնար է ներկայացնել՝ իջեցնելով այն մի քանի վարկածային պարզ սկզբունքների մակարդակի:

Հաջորդ քայլն այս ուղղությամբ միջգիտակարգայնության վերասահմանումն էր, որի դեպքում հեղինակները թեպետ ընդգծում էին, որ մտադիր չեն խախտել 60-ամյա ավանդույթը, բայց և հարկ էին համարում նշել այն վտանգները, որոնք բխում են պատմության կողմից սոցիալական այլ գիտությունների մեթոդների որոնքորում: Վտանգներից առաջինն «անհատական, մեկուսացված փորձառությունների անվերջ բազմապատկումն է», որտեղ յուրաքանչյուր հետազոտող «ինքնիշխանորեն սահմանում է իր անձնական ալքիմիայի կանոնները», իսկ երկրորդ վտանգն այն է, որ «միջգիտակարգային խնդիրների այս էմպիրիկ լուծումը» կարող է սովորական համարվել, և «երկարաժամկետ հեռանկարում հղացքների ու մեթոդների այս շրջանառությունը բավարար կլինի փաստացի զուգամիտությունը (convergence) երաշխավորելու համար»³⁷: Միևնույն ժամանակ, ինչպես ամփոփում են մանիֆեստի հեղինակներն իրենց դիտարկումները, միջգիտակարգայնությունը, քանի որ բազմապատկում է հայացքները, քննադատական հեռվություն է ապահովում իրականության պատկերման յուրաքանչյուր ձևից, հնարավոր է «թույլ է տալիս գերի չմնալ որևէ մեկին»: Մի բան, որը կարող է օգնել «այլ կերպ մտածելու»³⁸:

Ուշագրավ է, որ Հանդեսի նույն այս համարում ներկայացվում են նաև «իմացաբանական անիշխանությունը» հաղթահարելուն միտված զանազան տեսական հոգվածներ³⁹, որոնցում քննարկվում էին այնպիսի խնդիրներ,

³⁷ Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1322.

³⁸ Տե՛ս Tentons l'expérience, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1323:

³⁹ Տե՛ս Levi G., Les usages de la biographie, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1325–1336. Grenier J.-Y., Lepetit B., L'expérience historique. À propos de C.-E. Labrousse, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1337–1360. Boyer R., Économie et histoire: vers de nouvelles alliances, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1397–1426. Roncaloyo M., Histoire et géographie: les fondements d'une

որոնք, ընդհանուր առմամբ, համապատասխանում էին Հանդեսի նոր «քննադատական շրջաբեկման» հայեցակարգի ընդհանուր սկզբունքներին, բայց և վկայում էին հետազոտական ուղիների հեռահար անհատականացման մասին: Այդ հետազոտությունների մեջ աչքի ընկնող երեք հոգվածներից (Ժան-Իվ Գրընիեի և Բեռնար Լըպտիի, Ալեն Բուերոյի, Ռոժե Շարտիեի հեղինակությամբ) հատկապես ուշագրավ էր Գրընիեի և Լըպտիի համահեղինակած հոգվածը՝ աննալական սերունդների խզման և շարունակականության վերաբերյալ: Այսպես՝ Գրընիեն և Լըպտին համատեղ հոգվածում, ձգտելով վերականգնել պատմություն գիտակարգի իմացաբանական ներդաշնությունը, որը 1980-ականների Ֆրանսիայում անընդատ «մասնատվում» էր, խզում են կապերը էռնստ Լաբրուսի շարային և քանակային պատմության օբյեկտիվիզմի հետ (քանի որ լաբրուսյան հայեցակարգը հակված էր վերլուծելու անցյալի հասարակությունները նախապես կառուցված ստորոգությունների օգնությամբ): Ըստ Գրընիեի և Լըպտիի՝ նման մոտեցումը «տափակ դրապաշտության (positivisme plat)» դրսևորում է, քանի որ վերկայացումները միայն կրկնօրինակում են իրականությունը, ինչպես նաև հոետորական պատմության (histoire rhétorique) դրսևորում է⁴⁰, որի համար վավերականության չափանիշները վերաբերում են միայն «լեզվական կազմություններին (agencements linguistiques)»⁴¹:

complémentarité, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1427–1434. Noiriel G., Pour une approche subjectiviste du social, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1435–1459. Fridenson P., Les organisations: un nouvel objet, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1461–1477. Hoock J., Dimensions analytiques et herméneutiques d'une histoire historique du droit, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1479–1490. Boureau A., Propositions pour une histoire restreinte des mentalités, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1491–1504. Chartier R., Le monde comme représentation, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1505–1520:

⁴⁰ Grenier J.-Y., Lepetit B., L'expérience historique. À propos de C.-E. Labrousse, *Annales: ÉSC*, 6 (1989), p. 1357.

⁴¹ Delacroix Ch., Bernard Lepetit Carnets de croquis. Sur la connaissance historique, *Annales: ÉSC*, 1 (2002), p. 204.

Ծանրության կենտրոնի փոփոխությունը պատմատնտեսական խնդիրներից դեպի պատմա-մշակութային խնդիրներ, հարկավ, ինքնանպատակ չէր, քանի որ հեղինակներին հետաքրքրում էին պատմական ճանաչողության հարացույցի մեջ տեղի ունեցող տեղաշարժերը⁴²: Իրենց վերոհիշյալ դիտարկումները Լըպտին փորձում է հիմնավորել «Փորձի ձևերը: Ուրիշ սոցիալական պատմություն»⁴³ մենագրություն մեջ, որն, ըստ էության, պրագմատիկ սոցիալական պատմության «քննադատական շրջադարձի» նախագծի իրականացման փորձ էր և կենտրոնանում էր դերակատարների հմտությունների (compétences des acteurs) վրա՝ ուշադրություն դարձնելով գործողությունների համաձայնության պայմաններին: Այդու՝ «քողազերծման» և «խորքային կարգի հարկադրանքների հաղթահարման» քննադատական հարացույցը տեղը գիջում էր «գիտակցության վերադարձին» և «գործողությունների հստակ ու մտածված հատվածին», որի արդյունքում՝ «անհատ դերակատարի դերի վերագնահատմանը»⁴⁴:

Ընդհանուր առմամբ՝ 1988–1990 թվականների փնտրտուքային-հետազոտական տեքստերը ներառում էին երկու հիմնական ուղղություն՝ համակցային (conjoncturelle) վերլուծություն և պատմաբանի մասնագիտության համար «նորացված հիմքեր ստեղծելու» առաջարկներ: Այս առումով ուշագրավ է մանավանդ համակցային վերլուծությունը, որը նախ և առաջ նշանակում էր հրաժարում (եթե ոչ ժխտում) ստեղծված իրավիճակի մասին իբրև «պատմագիտական ճգնաժամ» կամ «գերիշող անկարողություն» (1970-ականների աննալականները) մտածելուց: Ուստի վերաիմաստավորման հիմնական բնութագրիչը դառնում

⁴² Бессмертный Ю., «Анналы»: переломный этап? *Одиссей. Человек в истории. Культурно-антропологическая история сегодня*, М., 1991, с. 11.

⁴³ Lepetit B., *Les Formes de l'expérience. Une autre histoire sociale*, Paris: Albin Michel, 1995.

⁴⁴ Delacroix Ch., *op. cit.*, p. 90.

է «անցումային իմացարանությունը (épistémologie de transition)»:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է ասել, որ աննալական այս նոր սերունդը, Ռոխասի դիպուկ բնորոշմամբ, խորքային առումով որդեգրել էր իր անմիջական նախորդ երրորդ սերնդից «սկզբունքային մտավոր խզման դիրքորոշում»⁴⁵: Այս ընդհատումն, ընդհանուր գծերով, ունեւ հետևյալ պատկերը. (ա) մտայնությունների պատմությունը փոխարինեցին սոցիալական նոր մշակութային պատմությամբ կամ տարբեր մշակութային պրակտիկաների սոցիալական պատմությամբ, (բ) փորձեցին նոր հայացք առաջադրել մարդաբանական պատմության հին խնդիրների նկատմամբ՝ համատեղելով պատմագետի գործիքակազմը մարդաբանության հասկացությունների, տեխնիկայի և ընթացակարգերի հետ, (գ) մերժեցին նախորդ՝ տնտեսական պատմության որոշ ենթադրություններ (քանակային և/կամ շարային)՝ ավելի շատ մտահոգվելով տարասեռ իրողությունների փորձարկման հնարավորությունների ուսումնասիրությամբ (որոնք անհնար է բացատրել քանակային կամ շարային եղանակներով), (դ) հարցականի տակ դրեցին սոցիալական պատմության օբյեկտիվությունը՝ փոխարինելով այն դերակատարների խնդրով, (ե) վերաձևակերպեցին համընդգրկուն պատմություն և երկար տևողություն հղացքները՝ կարևորելով հասարակության (նաև սոցիալականի) ամբողջականությունն ու մակրո- և միկրո-մակարդակների փոխընթացականությունը, (զ) վերասահմանեցին միջգիտակարգայնությունը՝ զատելով այն «վայրի փոխառություններից» և առանձին գիտակարգերի գերիշխանական հավակնություններից⁴⁶:

⁴⁵ Агирре Рохас К. А., *указ. соч.*, с. 174.

⁴⁶ Այս մասին տե՛ս նաև Ревель Ж., *История и социальные науки во Франции: на примере эволюции школы «Анналов», Новая и новейшая история*, 6 (1998), с. 85–87. Агирре Рохас К. А., *указ. соч.*, с. 174–183. Трубникова Н. В., *Французская историческая школа Анналов*, Москва: Квадрига, 2016, с. 227–229.

Աննալական վերոհիշյալ նոր նախագծի կարծես տրամաբանական արտահայտիչը եղավ 1994 թվականին Հանդեսի նոր՝ «Պատմություն, սոցիալական գիտություններ» ենթախորագիրը, ինչպես նաև խմբագրականում Հինգ նոր անդամների ընդգրկումը (Ժան-Իվ Գրենիե, Ժոսլին Դակլիա, Միշել Վերներ, Լորան Տեենո, Անդրե Օպեան): Հատկանշական էր Հատկապես այն, որ Հանդեսի ենթախորագրի մեջ «վերջապես» հայտնվել էր «պատմություն»-ը, որը նախորդ դեպքերում սոսկ ենթադրվում էր: Ըստ խմբագիրների մեկնաբանության փոփոխությունն անհրաժեշտ էր գիտական պատմության և դրա հիմնական հետազոտական մեթոդների ինքնությունը պահպանելու համար. «Եռակողմ՝ «Տնտեսություններ, հասարակություններ, քաղաքակրթություններ» բաժանումն այլևս համարժեք չէր. այն լավ չէր համապատասխանում վերլուծության մակարդակների դասավորության ճկունությանը և մոտեցումների բազմազանությանը, որն այսօր մենք ցանկանում ենք և որը նոր՝ «Պատմություն, սոցիալական գիտություններ» ենթախորագիրը լավագույնս է ակնարկում»⁴⁷: Իսկ ենթախորագրի փոփոխության վերաբերյալ ուսու պատմագետ Յուրի Բեսսամերտնիի հարցումին Լըպտին պատասխանեց, որ կարծում է, թե այդ փոփոխությունը «համապատասխանում է ամսագրի հիմնարար սկզբունքներին, որոնց գիտական մոտեցումների ողջ շարունակականությունը հիմնված է նորարարությունների մտածված և համառ որոնման վրա»⁴⁸: Խմբագիրներն ընդգծում էին պատմության տարժամանակյա իմաստն ու Հանդեսի պատմականությունն իր ներքին տարբերակումներով հետազոտելու հավակնությունը:

Ընդհանուր առմամբ փոփոխությունները, հարկավ, ազդարարում էին «նոր» Հայեցակարգի կառուցման նախագծի մասին, որը, թերևս, կվերածվեր աննալականների Չորրորդ սերնդի հարացուցային կայունացման տարածքի և

կկարողանար վերադարձնել աննալականների նախկին առաջատար դիրքը համաշխարհային պատմագիտություն ծիրում: Բայց, ինչպես ժամանակը ցույց տվեց, «քննադատական շրջադարձը», որը ենթադրում էր թե՛ մասնագիտական ինքնությունը պաշտպանելու և թե՛ նոր գիտակարգային հարացույց կառուցելու «փաստարկների և հիմնավորումների ճանապարհորդություն», մնաց անավարտ, թեպետ տեսական քննարկումը շարունակվեց ամսագրի նաև հաջորդ համարներում⁴⁹:

Ընդհանրացնելով աննալական նոր սերնդի ուղիվածման գործընթացը՝ անհնար է այսօր հստակ ասել, թե որն է 1994 թվականից հետո եկած աննալականների Հայեցակարգը, մանավանդ որ նոր աննալականները բազմիցս են փոփոխել իրենց դիրքորոշումները և ինչ-որ հստակ կամ ամբողջական դիրքորոշում դեռ չեն որդեգրել: Անտուան դը Բեկն, ավելի ուշ անդրադառնալով քննադատական շրջադարձի վերականգնողական ազդակին, նշում է, որ այս նախագիծն, ըստ էության, չընդունվեց, իսկ այդ Հայեցակարգին հետամուտ պատմաբանները սակավաթիվ էին և մեկուսացած⁵⁰: Այս նախագծի անավարտության ոչ պակաս կարևոր պատճառներից էր և 1996 թվականին Բեռնար Լըպտիի անժամանակ մահը, որի հետևանքով աննալականները ոչ միայն չշարունակեցին «քննադատական շրջադարձի» նախագիծը, այլև արդեն 1998 թվականին հստակեցրին,

⁴⁹ Դիյուլը տե՛ս Burguière A., De la compréhension en histoire, *Annales: ÉSC*, 1 (1990), p. 123–136. Milo D. S., Pour une histoire expérimentale, ou la gaie histoire, *Annales: ÉSC*, 3 (1990), p. 717–734. Guilhaumou J., L'argument philosophique en histoire. Le laboratoire Révolution française, *Annales: ÉSC*, 1 (1992), p. 150–161 և այլն:

⁵⁰ Baecque A. de, Où est passé le «tournant critique»? *Le Débat*, 2 (1999), p.162–170. Նկատենք նաև, որ դեռ 1994 թվականին նորացված խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված որոշ նոր անդամներ այդպես էլ ամբողջությամբ չներգրավվեցին ամենօրյա աշխատանքում, որը նրանց Հնարավորություն կտար մասնակցելու վերոհիշյալ այլընտրանքային նախագծի կառուցմանը: Տե՛ս Arpette Poxac K. A., *ուկազ. соч.*, с. 185:

⁴⁷ Histoire, sciences sociales, *Annales. HSS*, 1 (1994), p. 3.

⁴⁸ Лепети Б., Гренье Ж.-И., *указ. соч.*, с. 317.

որ Բեռնար Լըպտիի պաշտպանած պրագմատիկ կողմնորոշումները չեն ներկայացնում ամսագրի նոր ինտելեկտուալ գիծը, մինչդեռ 2013 թվականին կրկին (և բացահայտորեն) հղում էին անում 1990-ականների «քննադատական շրջադարձի» պրագմատիկ հայեցակարգին⁵¹:

Վերոշարադրյալից ելնելով՝ կարող ենք ասել, որ 1980-ական թվականներին ի հայտ եկան աննալականների Չորրորդ սերնդի միայն նախանշանները, և թերևս ճիշտ են հետազոտողներից ոմանք, որ կարծում են, թե այդպիսի սերունդ այդպես էլ չձևավորվեց⁵², քանի որ նոր պատմաբանները չձևակերպեցին իրենց միասնական պատասխանը պատմության առջև ծառայած մարտահրավերներին՝ «փոփոխելով պատմությանն ուղղված իրենց հարցերի բնույթն ու իմաստը»⁵³: Այսօր էլ տակավին չեն հաղթահարվել այն հսկայական դժվարությունները, որոնք խոչընդոտում են նոր այլընտրանքային մտավոր ծրագրի շուրջ համախմբվելուն⁵⁴: Նոր աննալականներն այլընտրանքային հարացույցի բացակայության պայմաններում բավարարվել են վիճարկվող մոդելների ի տեղի վերադասավորումներով, իսկ Դպրոցի ինքնուրույն պաշտպանության գործում ներգրավված հետազոտողների թե՛ գիտական մոտեցումը և թե՛ վերաբերմունքն անհամաչափ են: Այսպիսով՝ այլանալու բոլոր նախադրյալներն ունեցող աննալականները մնացին նախնական իմացաբանական վերակազմավորման մեջ՝ կարոտ նոր հարացույցի: Եվ պատահական չէ, որ վեր-

⁵¹ Anheim É. et al., Repenser les statuts sociaux, *Annales: ÉSC*, 4 (2013), p. 949–953.

⁵² Són Barros C., La escuela de Annales y la historia que viene, URL://http://www.h-debate.com/cbarros/spanish/articulos/historiografia_inmediata/escueladeannales.htm (07.05.2007). F. Dosse., *L'histoire en miettes. Des Annales à la «Nouvelle histoire»*, Paris: La Découverte, 2005, p. 255:

⁵³ Ստեփանյան Ա., Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրության հնարավորություն), *Պատմություն և կրթություն*, 1–2, (2005), էջ 19:

⁵⁴ Són Gruppe Poxac K. A., *указ. соч.*, с. 185:

ջին շրջանում աննալականների նոր սերունդը Հանդեսին տվել է թեմատիկ բնույթ, դիցուք՝ «Երկար տևողությունը բանավեճերում: Գիտությունների պատմություն»⁵⁵, «Բանակային պատմություն»⁵⁶ կամ «Հանդեսի ինքնանկար»⁵⁷ և այլն: Ըստ այսմ՝ թերևս այսօր էլ ուժի մեջ են մնում դեռ 1990-ականներին Դպրոցի կարգավիճակին տրված «անորոշ» և «կասկածելի» բնորոշումները:

Չնայած այդ ամենին՝ «քննադատական շրջաբեկումն» ու դրա պատմությունը ցայժմ չեն կորցրել իրենց արդիականությունը, մանավանդ հղացական կամ հայեցակարգային նորարարությունների, ինչպես նաև խզումի և շարունակականության հետազոտման դիտանկյունից:

Աննալներն այլևս տեղական՝ Ֆրանսիական բնույթ չեն կրում, ուստի կարիք չկա Դպրոցի Չորրորդ սերունդը փնտրել Ֆրանսիայում. այն այլևս «առանց հայրերի հանրույթ»⁵⁸ է և վերտեղային բնույթ ունի:

⁵⁵ La longue durée en débat – Histoire des sciences, *Annales: ÉSC*, 2 (2015).

⁵⁶ Histoire quantitative, *Annales: ÉSC*, 4 (2018).

⁵⁷ Autoportrait d'une revue, *Annales: ÉSC*, 3/4 (2021).

⁵⁸ Baecque A. de, *op. cit.*, p.167.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ

AG	Annales de Géographie
AHR	American Historical Review
AJS	American Journal of Sociology
Annales. ÉSC	Annales. Économies, Sociétés, Civilisations
Annales. HÉS	Annales d'histoire économique et sociale
Annales. HS	Annales d'histoire sociale
Annales. HSS	Annales. Histoire, Sciences Sociales
APH	Acta Poloniae Historica
ARA	Annual Review of Anthropology
BCÉMA	Bulletin du centre d'études médiévales d'Auxerre
CCRH	Les Cahiers du Centre de Recherches Historiques
CHC	Contributions to the History of Concepts
CSSH	Comparative Studies in Society and History
FPS	French Politics and Society
HEI	History of Economic Ideas
HSM	Historyka. Studia Metodologiczne
HT	History and Theory
ISS	Information sur les sciences sociales
JEEH	Journal of European Economic History
JEH	The Journal of Economic History
JMH	The Journal of Modern History
JSH	Journal of Social History
MHS	Mélanges d'histoire sociale
PG	Political Geography
RFBC	Review (Fernand Braudel Center)
RH	Revue Historique
RHÉS	Revue d'histoire économique et sociale
RHMC	Revue d'histoire moderne et contemporaine
RSH	Revue de synthèse historique
SRIQ	Social Research: An International Quarterly
ВИ	Вопросы истории
ННИ	Новая и новейшая история

Սկզբնաղբյուրներ և հետազոտություններ

- Բլոկ Մ.**, *Պատմություն պաշտպանական, կամ Պատմաբանի արհեստը* /Յրանս. թարգմ. Ե. Մակարյան, հոդված և ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Երևան, Սարգիս Խաչենց, Փրինթինգո, Անտարես, 2018:
- Դյուրկհայմ Է.**, *Սոցիոլոգիական մեթոդի կանոնները*, Երևան, Սարգիս Խաչենց, 2006:
- Թելուց Ա.**, Իմամնուլիլ Կանտը և Նորկանտականության Բաղենյան դպրոցը (Հ. Ռիկկերտի և Վ. Վինդելբանդի պատմատիրության արժեքանությունը), **Ստեփանյան Ա.** (խմբ.), *Պատմության հարցեր 2*, Երևան, Զանգակ, 2013, էջ 212–224:
- Լիտտար Ժ.-Ֆ.**, Հետարդիական կացություն. Զեկույց գիտելիքի մասին /Յրանս. թարգմ. Ե. Մակարյան, առաջաբան և հիմնական հասկացությունների բառարան՝ Հ. Բայադյան, ծանոթագրություններ՝ Ս. Հովհաննիսյան, Եր., Ակտուալ արվեստ, 2022:
- Կարապետյան Մ.**, Ժուռնալիստական ժամանակ և քաղաքակրթական ժամանակ, **Ստեփանյան Ա.** (խմբ.), *Պատմության հարցեր 2*, Երևան, Զանգակ, 2013, էջ 172–180:
- Հովհաննիսյան Ս.**, «Աննալների» պատմագիտական դպրոցը և դրա կերպարներին շրջափոխերը, **Ստեփանյան Ա.** (խմբ.), *Պատմության հարցեր 1*, Երևան, Զանգակ–97, 2009, էջ 123–134:
- Հովհաննիսյան Ս.**, «Քննադատական շրջադարձ», թե՞ ճակատային վերադասավորում, «Վէմ» Համահայկական Հանդես, 2 (2022), էջ 62–80:
- Հովհաննիսյան Ս.**, Ֆեռնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վէմ» Համահայկական Հանդես, 1 (2011), էջ 98–119:
- Հովհաննիսյան Ս.**, Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս առաջին: Հետկառուցաբանական հայեցակարգը և պատմության «քանակային» կամ «չարային» ըմբռնումը, «Վէմ» Համահայկական Հանդես, 1 (2012), էջ 62–83:

- Հովհաննիսյան Ս.**, Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս երկրորդ: Մտակեցվածքների պատմություն. երեք հարացույց (կառուցվածքային, շարային կամ քանակային և համարեական), «Վէմ» Համահայկական Հանդես, 2 (2016), էջ 27–48:
- Հովհաննիսյան Ս.**, Աննալների դպրոցի այլացումը. «Նոր պատմագիտություն»: Մաս երրորդ: «Մարդաբանական պատմություն» և «Հիշողության պատմություն» Հղացքները, «Վէմ» Համահայկական Հանդես, 4 (2020), էջ 70–103:
- Հովհաննիսյան Ս.**, Աննալների դպրոցի հետպատերազմյան փորձառությունը (1945–1975), «Վէմ» Համահայկական Հանդես, 1 (2022), էջ 67–78:
- Հովհաննիսյան Ս.**, Աննալների պատմագիտական դպրոցը. Լյուսիեն Ֆեռի և Մարկ Բլոկի պատմության տեսությունը, «Վէմ» Համահայկական Հանդես, 2 (2011), էջ 95–118:
- Հովհաննիսյան Ս.**, Ժակ Լը Գոֆֆի կյանքն ու գործը, «Վէմ» Համահայկական Հանդես, 2 (2014), էջ 178–186:
- Հովհաննիսյան Ս.**, Լյուսիեն Ֆեռ. «Կենդանի պատմության» տեսությունը, **Ստեփանյան Ա.** (խմբ.), *Պատմության հարցեր 2*, Երևան, Զանգակ–97, 2013, էջ 225–238:
- Հովհաննիսյան Ս.**, Համընդգրկուն պատմության և քանակային պատմության հիմնախնդիրը Ֆրանսիական «Աննալների» դպրոցի կերպարներին համատեքստում, *Կանթեղ*, 1 (2008), էջ 103–109:
- Հովհաննիսյան Ս.**, Հիշողության հիմնախնդիրը Նիցշեի պատմատիրության ծիրում, *Ֆրեդրիխ Նիցշե, Երկեր 5 Հատորով, Հատոր 1*, Երևան, Անտարես, 2018, էջ 556–567:
- Հովհաննիսյան Ս.**, Մարկ Բլոկը և Աննալների դպրոցը. Մարդաբանական և համադրական պատմության մեթոդաբանությունը, **Բլոկ Մ.**, *Պատմության պաշտպանական, կամ Պատմաբանի արհեստը*, Ե., Սարգիս Խաչենց, Փրինթինգո, Անտարես, 2018, էջ V–XXXVIII:
- Հովհաննիսյան Ս.**, Պատմություն և Հիշողություն. Ցեղասպանությունների աստիճանակարգման հիմնախնդիրն ըստ Պիեռ Նոռայի, «Վէմ» Համահայկական Հանդես, 1 (2013), էջ 12–33:
- Հովհաննիսյան Ս.**, Ֆեռնան Բրոդելի պատմության տեսությունը, «Վէմ» Համահայկական Հանդես, 1 (2011), էջ 98–119:

- Ոսկանյան Ա.**, Հասկացման անխուսափելիությունը: Դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաքանդման պատմությունից, Երևան, ԵՊՀ հրատ., 2015:
- Ստեփանյան Ա., Մարգարյան Ե.**, Ժամանակի կառույցը Բրոդելի պատմահայեցողության ծիրում, *Պատմություն և կրթություն*, 1–2 (2005), էջ 33–42:
- Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, *Գիրք Ա, Արտաշեսյան դարաշրջան*, Երևան, Սարգիս Խաչենց, Փրինթինգո, 2012:
- Ստեփանյան Ա.**, Պատմությունն իբրև տեքստ (Մեկնություն և գրություն հնարավորություն), *Պատմություն և կրթություն*, 1–2, (2005), էջ 9–22:
- Ստեփանյան Ա.** (խմբ.), *Պատմության հարցեր 1*, Երևան, Զանգակ–97, 2009:
- Ստեփանյան Ա.** (խմբ.), *Պատմության հարցեր 2*, Երևան, Զանգակ–97, 2013:
- Քոչարյան Ռ.**, «Բաց հերմենևտիկայի» խնդրակարգը և Վ. Դիլթայի հերմենևտիկայի հայեցակարգը, «Վէժ» համահայկական հանդես, 1 (2015), էջ 9–35:
- Ֆեր Լ.**, Հանուն ուղղորդված պատմության. Համատեղ հետազոտությունները և պատմության ապագան /Ֆր. թրգմ.՝ Ս. Հովհաննիսյան, «Վէժ» համահայկական հանդես, 4 (2012), էջ I–XII:
- Ֆոսիլոն Ա.**, *Ձեռքի կյանքը: Գովք ձեռքին* /Ֆր. թարգմ.՝ Ս. Խաչատրյան, Երևան, Սարգիս Խաչենց, 1999:

- Aguirre Rojas C. A.**, Braudel in Latin America and the U.S.: A Different Reception, *RFBC*, 1 (2001), p. 25–46.
- Aguirre Rojas C. A.**, L'histoire conquérante: un regard sur l'historiographie française, *L'Harmattan*, 2000, p. 107–133.
- Andrews R. M.**, Implications of Annales for U.S. History, *RFBC*, 1 (1978), p. 165–180.
- Andrieu Cl., Lavabre M.-Cl., Tartakowsky D.**, (dir.) *Usages politiques du passé dans la France contemporaine*, Aix-en-Provence: Publications de l'Université de Provence, 2006.
- Anheim É. et al.**, Repenser les statuts sociaux, *Annales. ÉSC*, 4 (2013), p. 949–953.
- Ankersmit F.**, Historiography and Postmodernism, *HT*, 2 (1989), p. 137–153.

- Anthropologie de la France, Annales. ÉSC**, 4 (1976), p. 661–845.
